

ԶԱՐԵՆ ՄԵԼՔՈՆԵԱՆ

ԳՈՐԾՆԱԿԱՆ
ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
ԱՐԴԻ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

ՄԻՋԻՆ ԵՒ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ

Դ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՊԷՏՐՈՒԹ

1978

ԶԱՐԵՂ ՄԵԼՔՈՆԵԱՆ

**ԳՈՐԾՆԱԿԱՆ
ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ**

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

**ՄԻՋԻՆ ԵՒ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ
ԴԱՍԸՆԹԱՑՔ**

Դ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ
ԼՈՒԾՈՒՄ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ, ՏՐԱՄԱՔԱՆԱԿԱՆ
ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԾԱՆՅՈՒՄԻՆՆԵՐ
ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Պ Է Յ Բ Ո Ւ Թ

1973

Ա. ՄԱՍ

ՔԵՐԱԿԱՆ ՈՒԹԻՒՆ

ԴԱՍ 1

ԼԵԶՈՒ, ԽՕՍՔ, ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ, ԲԱՌ

1.- Լեզուն բերանացի կամ դրանոր արտայայտութեան միջոցն է՝ որով մարդիկ իրարու կը հաղորդեն իրենց մտածումներն ու զգացումները :

2.- Քերականութիւնը այն դասն է, որ կը սորվեցնէ լեզուն ճիշդ գրելու, ճիշդ կարդալու եւ ճիշդ խօսելու կանոնները :

3.- Մայրենի լեզուն ժողովուրդի մը գործածած լեզուն է :

4.- Լեզուն կը բաղկանայ խօսքերէ, նախադասութիւններէ, քառերէ :

5.- Նախադասութիւնը միտք մը, իմաստ մը արտայայտող քառերու խումբ մըն է, ուր կայ մէկ բայ : Այսպէս՝ նախադասութիւններ են - 1) «Արեւը ծագեցաւ», 2) «Ժիրայրին հօրեղբորը փոքր տղան առջի օր նորէն Եւրոպա մեկնելի է օդանաւով» :

6.- Միասին գործածուած նախադասութիւններ երբ իմաստի լրիւ շղթայ մը արտայայտեն՝ կը կազմեն խօսք մը : Այսպէս՝ հետեւեալ երեք նախադասութիւնները միասին կը կազմեն խօսք մը, - «Երէկ դրագարան գացինք», «Հոն գիրք կարդացինք աւելի քան երկու ժամ» եւ «տուն դարձանք ճիշդ կէսօրին» : Եւ այնպէս՝ հետեւեալ երկու նախադասութիւնները կը կազմեն խօսք մը, - «Իրեն ըսի» «որ տուն երթայ» :

7.- Պարբերութիւնը նոր-տողէ մը մինչեւ յաջորդ նոր-տողը երկարող մասն է գրութեան մը : Պարբերութիւնը կը շարժուի բովանդակել մէկ կամ մէկէ աւելի նախադասութիւններ կամ խօսքեր :

8.- Բառը զիր մը կամ զիրերու խումբ մըն է, որ իմաստ մը ունի: Այսպէս. «է», «օղ», «քաջութիւն»:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.- Ի՞նչ է լեզուն: Ի՞նչու կը սորվենք քերականութիւն: Ի՞նչ է բառը, նախադասութիւնը, խօսքը, պարբերութիւնը:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

1.- Կարգացէ՛ք «Մեր Կատուն», ընդդէմէ՛ք բայերը եւ դատեցէ՛ք նախադասութիւնները: (Երբ բայի մը Անցեալ Ընդունելութիւնը (-ած, -եր) զործածուած ըլլայ էական Բայի մը հետ՝ Անցեալ Ընդունելութիւնը եւ էական Բայը միասին կը կազմեն մէկ բայ: Այսպէս. «Սօսած է», «չէ խօսած», «խօսեր էր», եւայլն):

Մ Ե Ր Կ Ա Տ Ո Ւ Ն

Մուշտակավաճառի ֆով բնաւ գացած չէ մեր կատուն, բայց տարին տասնը-երկու ամիս մուշտակ կը հագնի: Մուշտակը սեւ է միշտ, գիշերի պէս սեւ է, մետաքսի ֆնֆշուքիւն ունի ու բնաւ չի հիւնար:

Օրակաւն տասը անգամ կը լուացուի մեր կատուն եւ վրանգուլիսը այնչա՛փ կոկիկ ու մաքուր կը պահէ, որ բոլորին հիացում կը պատնասէ:

Ամառ առեմ կ'երկարի շուֆին մէջ, իսկ ձմեռ առեմ վառարանին մօտը կը կծկտի եւ կը ֆնանայ: Եւ ամէն անգամ որ դանակի ձայն լսէ, մէկ ոտտումով մօրս դէմը կը կանգնի եւ իր բաժինը կ'ուզէ միսէն: Երբ փորը կշտացնէ՝ անկիւն մը կը ֆաշուի, կը լուացուի երկարօրէն եւ յետոյ կը ֆնանա՛յ:

«Իր գործը լա՛ւ գիտէ մեր կատուն...», կ'ըսէ մայրս:

Ես շատ կը սիրեմ մեր կատուն:

2.- Ըսէ՛ք թէ «Մեր Կատուն» գրութիւնը քանի՛ պարբերութիւն ունի, իւրաքանչիւր պարբերութիւն քանի՛ խօսքէ կազմուած է, իւրաքանչիւր խօսք քանի՛ նախադասութիւն կը բովանդակէ եւ իւրաքանչիւր նախադասութիւն՝ քանի՛ բառ:

3.- Կարճ նախադասութիւն մը ըսէ՛ք՝ հետեւեալ բառերէն երկուքական հատ գործածելով ամէն անգամ:

Օրինակ. Գնդակ եւ գրպան: «Գնդակը դրի գրպանս մէջ»:

Գնդակ եւ գրպան, սանտր եւ մագ, ծով եւ լողակ, ծաղիկ եւ ջուր, արդուկ եւ շապիկ, հանրակառք եւ իյնակ, անձեռոց եւ երես, զինուոր եւ պատերազմ, ձմեռ եւ վերարկու:

4.- Մէկական բառ աւելցնելով նախադասութիւններ շինեցէ՛ք: Օրինակ.- Ես պատուհանէն դուրս (նայեցայ):

Ես պատուհանէն դուրս ...: Ընկերներով տանիք ... ֆիչ առաջ: Մեմֆ այսօր երկու ժամ ...: Առոնֆ վաղը պտոյտի ...: Երէկ հինգ անգամ ... իմ դասս: Շաբաթը ... եօթը օր: Ան ...: Առջի օր, մեծ-հայրիկս, մեծ-մայրիկս, երկու մօրեղբայրներս, քեռիս, հայրս, մայրս եւ ես հանդէսի ...: Ինչո՛ւ դուռ այդ նոր գիրքը ...: Ծուռ ֆանակով շիտակ գիծ ...: Հիմա արդէն կէսօր ...:

5.- Ըսէ՛ք թէ ի՞նչ է հետեւեալ ժողովուրդներէն իւրաքանչիւրին մայրենի լեզուն: Օրինակ.- Արաբներու մայրենի լեզուն է արաբերէնը:

Արաբ, Յոյն, Իտալացի, Գերման, Ռուս, Ֆրանսացի, Չարնցի, Անգլիացի, Շուեդացի, Սլաւացի, Թուրք, Հնդիկ, Ասորի, Ալպանացի, Հունգարացի, Բուլղարացի, Չինացի, Պարսիկ, Վրացի:

6.- Երկուքական նախադասութիւն պարունակող խօսքեր կազմեցէ՛ք:

ԴԱՍ 2

ՁԱՅՆ, ԳԻՐ, ԳԻՐԵՐՈՒՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ

9.- Բառերը կազմուած են ձայներէ: Այսպէս. «Հիմա» բառը կազմուած է չորս ձայնէ. — հը, ի, մը, ա:

10.- Ձայները գրելու համար կը գործածենք նշաններ, որոնք կը կոչուին գիր կամ տառ: Այսպէս. «Հը» ձայնը գրելու համար կը գործածենք «Հ» գիրը, «ի» ձայնը գրելու համար կը գործածենք «ի» գիրը:

11.- Իւրաքանչիւր գիր ունի իր անունը: Հայերէն լեզուին այբուբենը կազմուած է 38 գիրէ:

| Գիրը | Անունը | Ձայնը | Գիրը | Անունը | Ձայնը |
|------|--------|---------|------|--------|-------|
| ա Ա | այբ | ա | մ Մ | մեն | մը |
| բ Բ | բեն | բը | յ Յ | յի | հը-եր |
| գ Գ | գիմ | գը | ն Ն | նու | նը |
| դ Դ | դա | դը | ո Օ | զա | ըը |
| ե Ե | եչ | եչ-եր-է | ո Ո | ո | ո-օ |
| զ Ձ | զա | զը | չ Չ | չա | չը |
| է Է | է | է | պ Պ | պէ | պը |
| ը Ը | ըթ | ը | ղ Ղ | ղէ | ղը |
| թ Թ | թօ | թը | ռ Ր | ռա | ռը |
| ժ Ժ | ժէ | ժը | ս Ս | սէ | սը |
| ի Ի | ինի | ի | վ Վ | վեւ | վը |
| լ Լ | լիւն | լը | Տ Տ | տիւն | տը |
| խ Խ | խէ | խը | ր Ր | րէ | րը |
| ծ Ծ | ծա | ծը | ց Ց | ցօ | ցը |
| կ Կ | կեն | կը | ւ Ի | հիւն | վը |
| հ Ը | հօ | հը | փ Փ | փիւր | փը |
| ձ Ձ | ձա | ձը | ֆ Ք | ֆէ | ֆը |
| ղ Ղ | ղաա | ղը | օ Օ | օ | օ |
| ն Ն | նէ | նը | ֆ Ֆ | ֆէ | ֆը |

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

7.- Մէկական բառ գտէք հայերէնի իւրաքանչիւր գիրով սկսող. (հիւն գիրով սկսող բառ չունինք):

Օրինակ. — Ա — ապակի, Բ — բերրի, եւայլն:

8.- Ըսէ՛ք թէ քանի՛ ձայնէ կազմուած են հետեւեալ բառերը:

Օրինակ. — Մուր՝ երեք ձայնէ — մը, ու, րը:

Առաւօտ, մար, մինչեւ, բարձր, ծծել, գետ, հիւղ, խաղող, զամբիւղ, կազմ, պարտէզ, քիթ, սիւնագարդ, մօտիկ, ծաղիկ, հայելի, կայարան, կափարիչ, ուժեղ, արագաշարժ, հիւքեղ, նու, քունաւոր, խօսք, անիւ, ձի, չափ:

9.- Տուէ՛ք հետեւեալ բառերը կազմող գիրերուն անունները:

Օրինակ. — Շապիկ — շա, այբ, պէ, ինի, կեն:

Շապիկ, ձուկ, լուսաւոր, արեւոտ, խաւար, յաղթել, փափաք, փշշալ, օղակ, ցամաք, ճմեռ, ջերմ, աղիւս, բոյս, փաշ, նաւակ, շարունակութիւն, քիթեռնիկ, դոնապան, դոմ, լալ, խաղող, ժամացոյց, գեղեցիկ, գանազան, դասընկեր, ընծայ:

10.- Գտէ՛ք հինգ հատ բառ, ուր «ե» գիրը «է» հնչումը ունենայ, հինգ հատ ուր՝ «եր» հնչումը: Օրինակ. — ձեղք, երէկ:

11.- Գտէ՛ք տասը հատ բառ ուր «ո» գիրը «օ» հնչուի, եւ տասը բառ՝ ուր «վօ» հնչուի: Օրինակ. — Ձող, ռաք:

12.- Գտէ՛ք հինգ հատ բառ, ուր «յ» գիրը «եր» հնչուի, հինգ հատ բառ՝ ուր «հը» հնչուի, եւ հինգ հատ բառ՝ ուր անձայն ըլլայ: Օրինակ. — Այս, յտակ, հսկայ:

13.- Հետեւեալ բառերուն շարքը փոխելով՝ նախադասութիւնները գտէ՛ք:

Օրինակ. — Մը այսօր գիրք կարդացի աղուր:

Աղուր գիրք մը կարդացի այսօր:

Մը այսօր գիրք կարդացի աղուր: Երկու որսաց քոչուն ան: Երբեք եւ դպրոց պիտի: Անձրեւ հինգ երկ տեղաց ժամ: Քոչրս շրջանաւարտ մեծ եղաւ տարի այս: Տարի երկրորդ պիտի գալ ըլլամ դասարան: Արեւին կը դառնայ երկիրը շուրջ: Բոլոր կը քափին ծով գետերը: Զանգու Երեւանէն գետը կ'անցնի: Պետրոս մեծ բանաստեղծ Դուրեան մըն է: Կարդացի գիրք երկու տարի այս երկար:

ԴԱՍ 3

ԳԼԽԱԳԻՐՆԵՐՈՒ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

12.- Գրելու ատեն եւ գիրքերու մէջ կը զործածուին երկու տեսակի գիրեր. Ա.- Պարզ-գիրը՝ որ սովորական գիրն է, եւ Բ.- Գլխագիրը, որ սովորական գիրէն աւելի խոշոր է եւ քիչ մը տարբեր:

Պարզ-գիր են հետեւեալները - ս, դ, յ, օ...:

Գլխագիր են հետեւեալները - Ս, Դ, Յ, Օ...:

13.- ԳԼԽԱԳԻՐՈՎ ԿԸ ՍԿՍԻՆՔ.

ա) Որեւէ գրութեան մը առաջին բառը:

բ) Յատուկ անունները: Այսպէս. Զաւէն, Հայաստան, Պէյրութ, Միջերկրական, Արաբս, Սեւան, Արագած, Սեւուկ, (կենդանի անուն)...:

գ) Վերնագիրները:

դ) Նոր-տողերու առաջին բառերը:

ե) Ոտանաւորներու բոլոր տողերուն առաջին բառերը:

զ) Վերջակէտէն ետք եկող բառը:

է) Զակերտէն ետք եկող բառը: Այսպէս. Ուսուցիչը ըսաւ. «Այսօր գոհ եմ քեզմէ»:

ը) Օրերուն եւ ամիսներուն անունները: Այսպէս.

Այս երկուշաբթի օդը անձրեւոտ եղաւ:

Հայրս Փետրուարին պիտի մեկնի:

թ) Բառի մը տեղ զրուած գիրերը կը գրենք գլխագիրով: Այսպէս. Մ.Ա.Կ. (Միացեալ Ազգերու Կազմակերպութիւն):

ժ) Անձնաւորուած առարկաներու, կենդանիներու, բոյսերու անունները: Այսպէս. «Օր մը, Սեզանը ըսաւ Պահարանին...», կամ՝ «Օր մը, ճայը եւ Զղջիկը սրուչեցին առեւարական դառնալ...»:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.- Ե՛րբ գլխագիր կը զործածենք:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

14.- Սրբագրեցէ՛ք հետեւեալ բառերը, պարզ-գիրերը վերածելով գլխագիրի՝ հոն ուր պէտք է:

Արամ, դաշտ, գոհրապ, սուրիա, լեռնագագաթ, Հրաչ, դամակոս, Արովեան, միսաֆ, հաղադական, պտուղ, նեղոս, ամուշեղէն, Ռեֆս, Սիփան, ձոր, մրջիւն, աշխէն, գոգնոց, հայկ, չորեքշաբթի, Վրոյր, սեպտեմբեր, Ուրբաթ:

15.- Սրբագրեցէ՛ք հետեւեալ բառերը, գլխագիրները վերածելով պարզ-գիրի, պարզերը՝ գլխագիրի՝ հոն ուր պէտք է:

Հրայր, Դերձան, Նաւ, իտալիա, պոլիս, մարմարա, Զաւէն, սոնա, եփրատ, արարատ, դուռ, անտառ, մեֆենայ, հոտմ, Լուլու, Ռումանիա, մահնակալ, Բարձր, ալիս, վերմակ, սեւան, Արա, Տանիֆ, Շրքունիֆ, Յունուար, Ապագայ, հինգշաբթի:

16.- Սրբագրեցէ՛ք հետեւեալ գրութիւնը հոն ուր պէտք է, գլխագիրները վերածելով պարզ-գիրի, եւ պարզ-գիրերը՝ գլխագիրի: Բացատրութիւն տուէք իւրաքանչիւր սրբագրութեան համար:

Մ Ե Ր Մ Ի Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Ընկերներս՝ Վահէն եւ սօսին, յանախ մեզի կու գան. Անմիջապէս մեր բոլոր դասերը կը սորվինք եւ ապա կը խաղանք, կը խօսակցինք ու կը Կարդանք: Հայրս միշտ կ'ըսէ. «ապրի՛ք, գաւակներս»:

Ընկերներս եւ ես լաւապէս կ'օգտուինք հօրս գրադարանէն Որ կը պարունակէ շուրջ երկու-հազար գրական, գիտական, Պատմական գիրքեր՝ հայերէն Թէ՛ այլ լեզուներով: հայրս կը փաշակերէ մեզ որ կարդանք նաեւ օրաթերթեր, Գրական հանդէսներ, պարբերագիրքեր, տարեցոյցներ:

Երեքս կազմած ենք միութիւն մը՝ Հայ աշխատասէր Տղոց Միութիւնը՝ հ. ա. Տ. մ.-ը: Այս է մեր փայլերգը.

Մեր Գայերգը

շատ չենք բէել, թիւով՝ երեք,
Բայց միասին ուժով ենք մենք,
Զի ծուլութեան դէմ անդադար
Կը պայքարինք միասնաբար:

Ամէն մէկ դաս որ կը գրենք
Մեծ խնամքով՝ սուր է ու գէնք,
ու լաւ բտուած ամէն մէկ դաս՝
Յաղթանակի դրօշ մ'է բաց:

Ծուլութեան սել գորքերն արդէն,
Տեսէ՛ք, ահա՛ կը նահանջեն.
Հ. Ա. տ. Մ. նոր միութեան
անդամներն ենք մենք յայրական:

Սօսին երաժշտական տաղանդ ունի եւ եղանակ պիտի դնէ
Այս ֆայլերգին: Վստահ ենք թէ Շատե՛ր պիտի Միանան մեր միու-
թեան, որ Պիտի գորանայ շուտով: Իսկ երբ Գայ ամառուան ար-
ձակուրդը՝ Ո՛չ միայն պիտի չճրուինք, այլ ընդհակառակը՝ Աւե-
լի՛ պիտի ընդարձակենք Հ. Ա. Տ. Մ. -ի գործունէութիւնը. ու երբ
Վերաբացուին դպրոցները՝ Գայրոցական նոր տարին պիտի Դիմա-
ւորենք ինքնավստահօրէն եւ խանդավառութեամբ:

Լուսաւո՛ր է ապագան մեր միութեան, Որովհետեւ ուսումի
սէրը մեր ուղեցոյցն է, աշխատասիրութիւնը՝ մեր ո՛ւժն է, ու մեր
նպատակը տկարութիւն Զի ճանչնար:

17.- Ընդգծեցէ՛ք «Մեր Միութիւնը» գրութեան բայերը եւ
դատեցէ՛ք նախադասութիւնները:

18.- Նախադասութիւն մը ըսէ՛ք՝ հետեւեալ բառերէն երե-
քական հաս դործածելով ամէն անգամ: Օրինակ. — Տուն, մէջ,
աթոս. «Այս տունին մէջ բնաւ արքոս չկայ այսօր»:

Տուն, արքոս, մէջ: Գիրք, պատուհան, դուրս: Դրամ, շահ,
շատ: Տղայ, հիւանդ, երէկ: Փողոց, լեցուն, մարդ: Տուփ, մա-
տիտ, գունաւոր: Գիրք, գնել, խանութ:

ԴԱՍ 4

ԶԱՅՆԱԻՈՐ, ԲԱՂԱԶԱՅՆ, ՎԱՆԿ

14.- Հայկական այբուբենին 38 գիրերէն եօթը (ա, ե, է, ը, ը, ի, ո, օ) կը կոչուին ձայնաւոր: Մնացեալ 31 գիրերը կը կոչուին բաղաձայն:

15.- Բաղաձայններէն «յ» գիրը ունի երեք տեսակ հնչում: Երբ հնչուի «հը»՝ բաղաձայն է («յուշ»), երբ հնչուի «եր»՝ կիսա-
ձայն է («կայան»), եւ երբ հնչուի՝ անձայն է («ծառայ»):

16.- «Յ» գիրը անձայն է բառերուն վերջը, բայց միալանկ բառերէն: Այսպէս. Հայ, բայ, ճայ, խոյ, թէյ. բայց՝ ծառայ:

- 17.- «Ու»ն, «իւ»ն, եւ «էօ»ն ալ կը կոչուին ձայնաւոր:
 - «Ու»ն ձայնաւոր է երբ հնչուի որպէս «ՕՍ» (լուր)
 - «իւ»ն ձայնաւոր է երբ հնչուի որպէս «Ա» (հիւր)
 - «էօ»ն ձայնաւոր է երբ հնչուի որպէս «ԵՍ» (էօժեն)

ՅԱՆՕԹ.- 1. «Օս», «ս» եւ «ես» ձայնիք նկատի առնուած են փրան-
սական հնչումով:

2. «Իւ»ը «իվ» կը կարգացուի երբ բառին վերջն է եւ կամ իրմէ ետք
ձայնաւոր գիր մը կու գայ: Օրինակ.- Անիւ, հիւանդ:

18.- Ու, իւ եւ էօ ձայնաւորները կը կոչուին բաղադրեալ
ձայնաւորներ: Միւս ձայնաւորները (ա, ե, է, ը, ը, ի, ո, օ) կը
կոչուին պարզ ձայնաւորներ:

Ու, իւ, էօ բաղադրեալ ձայնաւորները կը հաշուուին մէկա-
կան գիր եւ ո՛չ թէ երկուքական գիր: Այսպէս. «Տուն» բառին մէջ
կայ երեք գիր. — տ-ու-ն: «Հիւթեղ» բառին մէջ կայ հինգ գիր. —
հ-իւ-թ-ե-ղ:

19.- Հայերէնը ունի տասը ձայնաւոր, եօթը հատը՝ պարզ,
երեքը՝ բաղադրեալ:

20.- Ինչ որ մէկ հնչումով (բերանի մէկ շարժումով) կ'ար-
տասանենք՝ կը կոչուի վանկ: Այսպէս. «Լուսաւոր» բառը ունի ե-
րեք վանկ, — լու-սա-ւոր: «Հաց» բառը ունի մէկ վանկ, — հաց:

21.- Իւրաքանչիւր վանկ մէկ ձայնաւոր զիր կը պարունակէ :

22.- Վանկը մէկ հնչումով արտասանուող զիր մը, կամ զիւրերու խումբ մըն է՝ ուր կայ մէկ ձայնաւոր :

23.- Մէկ վանկէ բաղկացող բառերը կը կոչուին միավանկ. երկվանկ կը կոչուին երկու վանկէ բաղկացող բառերը, եռավանկ՝ երեք վանկէ, քառավանկ՝ չորս վանկէ, եւ այլն : Մէկէ աւելի վանկ ունեցող բառերը կը կոչուին բազմավանկ :

24.- «Ը» ձայնը յաճախ չի գրուիր : Այսպէս. կ'արտասանենք Մը-կըր-տիչ, բայց կը գրենք՝ Մ-կըր-տիչ. կ'արտասանենք ըգ-գալ, բայց կը գրենք՝ գ-գալ :

25.- Չգրուող բայց հնչուող «ը» կը կոչուի անգիր «ը» :

Օրինակ.- Բնկրկիլ (ըն-կըր-կիլ) բառին առաջին զիրը՝ «ը»ը, անգիր չէ՝ որովհետեւ գրուած է, մինչ երկրորդ վանկին (կըր) «ը»ը, անգիր է, որովհետեւ չէ գրուած բայց կը հնչուի :

26.- Եթէ վանկ մը անգիր «ը» պարունակէ, բայց որպէս լման վանկ չհնչուի, այլ հնչուի որպէս կէս վանկ՝ կը կոչուի սուղ վանկ : Այսպէս. վագր, աստղ բառերը ունին մէկուկէսական վանկ : Չենք ըսեր՝ վա-գըր, աս-տըղ. «գր», «տղ» վանկերը միացած կ'արտասանենք նախորդ վանկերուն հետ : «Գր», «տղ» վանկերը կէս վանկեր են. դանոնք կը կոչենք սուղ վանկ :

Սուղ վանկի մը մէջ գտնուող անգիր «ը» կը կոչուի սուղ «ը» :

27.- «Յ» եւ «ե» զիրերը կը կոչուին կիսաձայն, երբ հնչուին որպէս «եր» : Օրինակ.- Այս, երկու :

28.- Երբ երկու «ձայնաւոր» զիրեր, կամ՝ ձայնաւոր մը եւ կիսաձայն մը նոյն վանկին մէջ գտնուին՝ կը կազմեն երկբարբառ մը : Հայերէնի զլիսաւոր երկբարբառներն են.- Եա (սեն-եակ), եայ (աօր-եայ), եօ (եօ-թը, իա (Աս-իա), այ ((«ա» հնչումով) այ-սօր), ոյ ((«ու» հնչումով) խա-րոյկ), իյ (իյ-նալ), էյ (թէյ) :

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.- Քանի՛ հատ են բաղաձայնները : Որո՞նք են : Քանի՛ տե-սակ ձայնաւոր կայ. որո՞նք են : Ե՛րբ ձայնաւոր են «ու»ն, «իւ»ն եւ «էօ»ն : Ի՞նչ է վանկը : Ի՞նչ է անգիր «ը»ը. ի՞նչ է սուղ «ը»ը, սուղ վանկը : Որո՞նք են երկ-բարբառները :

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

19.- Ըսէք թէ քանիական վանկ ունին հետեւեալները .

Առաւօտ, նախաճաշ, մագ, գնդակ, գիշեր, զգացում, նա-յսպէս, մութ, տագր, նակատ, չամիչ, փոքորիկ, նաւահանգիստ, օձիք, տպագրութիւն, վագր, կմկմալ, մանկապարտիզպանուէի, տնօրէնութիւն, վտակ, կոյր, արեւելիցի, աստղագէտ, անբացատ-րելի, մեղք, մեղր, կողմնացոյց, հիւղ, սկսիլ :

20.- Հետեւեալ բաղաձայն զիրերուն միջեւ մէկական ձայ-նաւոր գրէք եւ կազմեցէք բառեր, միայն երեքական անգամ գոր-ծածելով ա, ե, է, ի, ո, օ, ու, իւ ձայնաւորները :

Ձ-ը, հ-ը, մ-տ, ձ-ը, մ-ք, ս-ը, կ-ը, հ-ը, ծ-ը, տ-ը, ն-ը, մ-ջ, ջ-ը, մ-տ, մ-ս, գ-ը, կ-ք, վ-ը, վ-գ, հ-տ, տ-ք, ձ-գ, ք-ք, լ-ն :

21.- Հետեւեալներուն վերջաւորութեան մէկական բաղա-ձայն զիր աւելցնեցէք ու կազմեցէք բառեր :

Օրինակ.- Մեղ... - մեղք :

Մեղ-, իս-, օ-, հիւ-, վի-, քո-, կա-, կող-, օրէն-, պե-, միշ-, ձայ-, տաւ-, խաւ-, սիր-, նա-, վեր-, ցե-, գոյ-, ուղ-, մէջ-, սիւ-, չոր-, ֆի-, նեղ-, կեղ-, ար-, քաւ- :

22.- Հետեւեալ բառերուն առջեւ մէկական բաղաձայն աւել-ցնելով նոր բառեր շինեցէք : Օրինակ.- Ակ - խակ :

Ակ, ան, աղ, ռխ, իւղ, էջ, այլ, ուշ, ուք, ուր, աջ, այտ, որ, ահ, եփ, ուռ, իր, առ, էր, ախ, էգ, եղծ, եգ, օղ, էշ :

23.- Գտէք հինգ հատ այնպիսի եռավանկ բառեր, որոնցմէ իւրաքանչիւրին առաջին վանկը ունենայ մէկ զիր, երկրորդ վան-կը՝ երկու զիր, երրորդ վանկը՝ երեք զիր :

Օրինակ.- Արեգակ - ա-րե-գակ :

24.- Գտէք հինգ հատ այնպիսի երկվանկ բառեր, որոնց ա-ռաջին վանկը եթէ վերջնէնք՝ մնացած մասերը իմաստ մը ունենան : Օրինակ.- Աշուն - ա-շուն, մեխակ - մե-խակ :

25.- Գտէք այնպիսի երեք բառեր, որոնք երկու ուղղութեամբ ալ կարգացուելով նոյնը ըլլան: Օրինակ. մոմ, կատակ:

26.- Գտէ՛ք այնպիսի բառեր, որոնք հակառակ ուղղութեամբ կարգացուելով տարբեր իմաստ ունենան: Օրինակ. մարդ - դրամ, մոզ - դոմ:

27.- Յոյց տուէ՛ք հետեւեալ բառերուն մէջ, իւրաքանչիւր վանկի պարունակած ձայնաւորը:

Վստահիլ, պատիւ, վոնտել, մրցում, մտնել, պգտիկնալ, անվնաս, տրտմութեմէն, մսկոտ, բգփտել, ասեղնագործ, օդասուն, բնկեր, դասընթացք, սկզբունք, զգացում, պտղաբեր, երաժշտութիւն, Աստղիկ, բժշկուհի:

28.- Գտէ՛ք իրենց առաջին վանկին մէջ անգիր «ը» ունեցող հինգ հաս բառ: Օրինակ. ձիուն - ճը-կուն:

29.- Գտէ՛ք հետեւեալ երկբարբառները պարունակող երկու-քական բառ - եա, եայ, եօ, իա, ոյ, այ, էյ:

30.- Յոյց տուէ՛ք հետեւեալ բառերուն սուղ վանկերը՝ եթէ կան. (սուղ վանկը չչփոթել անգիր «ը» պարունակող լման վանկին հետ):

Մշակոյթ, մեղր, մեղրահամ, բարձր, բարձրութիւն, արկղ, մտմտուք, անխտիր, կրակ, ծնունդ, յամր, հսկիչ, մկնիկ, հերք, անծպիտ, քաղցր, քանձրացեալ, կայսր, մեղք, համր, մանրուք, մանր, հաշտ, ծաղր, աստղ, գեղձ, փոքր:

ԴԱՍ 5

Տ Ո Ղ Ա Գ Ա Ր Ձ

29.- Գրելու ատեն երբ հասնինք տողի մը վերջաւորութեան եւ բաւարար տեղ չմնայ բառի մը համար՝ այդ բառին մէկ մասը կը գրենք յաջորդ տողին սկիզբը: Վերը մնացած մասին քով, զի՛սկն վրայ՝ կը գրենք ենթամնայ մը: Այսպէս.

Այս գիշեր հայրս դարձեալ նոր գիրք մը պիտի բերէ ինձի:

30.- Բառի մը մէկ մասը յաջորդ տողին վրայ գրել՝ կը նշանակէ այդ բառը տողադարձել:

31.- Տողադարձի ատեն չենք կրնար բառ մը որեւէ տեղէ կիսել: Ստիպուած ենք վանկերը զատել իրարմէ: Այսպէս. դասարան (դա-սա-րան) = դա-սարան կամ դասարան: Տողադարձը բառին իմաստին կամ կազմին հետ կապ չունի, այլ՝ վանկերուն բաժանումին հետ: Այսպէս. «Այլատեսակ» (այլ-ատեսակ) կ'ըլլայ՝ այ-լա-տեսակ:

32.- Երկվանկ բառերը կրնանք միայն մէկ ձեւով տողադարձել (բաժակ=բա-ժակ). եռվանկ բառերը՝ երկու ձեւով (ժամացոյց=ժա-մացոյց, ժամա-ցոյց). քառվանկ բառերը՝ երեք ձեւով (նորատեսակ=նո-րատեսակ, նորա-տեսակ, նորատեսակ). հնգվանկ բառերը՝ չորս ձեւով միայն (դասարանապետ=դասարանապետ, դասարանապետ, դասարանապետ, դասարանապետ), եւ այլն:

33.- Միվանկ բառերը կարելի չէ տողադարձել:

34.- Տողադարձի ատեն, բառի մը վերը մնացած մասին վերջին վանկին մէջ եթէ անգիր «ը» գտնուի՝ այդ «ը» կը գրենք: Այսպէս. Մտնել (մտ-նել) բառը տողադարձի ատեն կը գրենք «մըտ-նել», զգեստ (զ-գեստ) բառը՝ «ըզ-գեստ»:

ԵԱՆՕԹ.- Կարելի է բառի մը՝ յաջորդ տողին վրայ անցնող մասին առաջին վանկին անդիւր «ը»ը գրել ա՛յն ատեն միայն, երբ այդ բառին՝ վարէ տողին վրայ անցնող ամբողջ մասին մէջ ձայնաւոր գիր չկանուի: Օրինակ - բար-ձրը: Բայց պէտք չէ գրել, «թը-թըրալ», քանի որ երկրորդ տող անցնող մասին մէջ արդէն կայ ձայնաւոր մը՝ «այ»ը որ կը բաւէ այդ մասին ճիշտ կարոացուելուն: Կը գրենք, - թը-քրալ:

35.- Բառի մը մէջ եթէ մէկէ աւելի անդիւր «ը» գտնուի՝ միայն վերը մնացած մասին վերջին վանկին անդիւր «ը»ն է որ կը գրենք: Այսպէս. Մկրտիչ (Մը-կըր-տիչ) կ'ըլլայ - Մը-կրտիչ կամ Մկըր-տիչ: Սկսիլ (ըՍ-կը-սիլ) կ'ըլլայ - ըՍ-կսիլ կամ Սկը-սիլ:

36.- Տողադարձի ատեն, երբ բառին վար իջնող մասին առաջին գիրը «ու» ըլլայ՝ կրնանք «ու»ին «ո» գիրը ջնջել: Այսպէս. նուագ (նը-ուագ) տողադարձի ատեն կ'ըլլայ՝ նը-ագ:

37.- Տողադարձի ատեն պէտք է ջանալ որ վար իջնող մասը միայն մէկ գիր չըլլայ: Այսպէս. պէտք չէ գրել՝ կը շարունակէ-ի:

38.- Երբ կրնանք տողադարձ ընել՝ ստիպուած ենք ընել: Ժիշդ չէ տող մը չլեցուած՝ յաջորդ տողին վրայ գրելը:

39.- Երբ երկու ձայնաւորներու միջեւ բաղաձայն մը (կա-ւ-իճ) կամ կիսաձայն մը (կա-յ-ան) գայ՝ այդ բաղաձայնը կամ կիսաձայնը կը կարգացուի երկրորդ ձայնաւորին հետ: Օրինակ.- կա-ւիճ (եւ ոչ թէ՛ կաւ-իճ), կա-յան (եւ ոչ թէ՛ կայ-ան):

40.- Երբ երկու ձայնաւորներու միջեւ մէկէ աւելի բաղաձայն (ա-րժ-էք), կամ՝ բաղաձայն և կիսաձայն գտնուի (ա-յս-օր)՝ միայն վերջինն է որ կը միանայ երկրորդ ձայնաւորին: Այսպէս. ար-ժէք, այ-սօր, սեւ-եակ:

41.- Նմանապէս, երբ ձայնաւորէ մը առաջ մէկէ աւելի բաղաձայն գտնուի՝ վերջին բաղաձայնն է միայն որ կը միանայ այդ ձայնաւորին: Այսպէս. կրքարան - կր-քարան:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.- Ինչի՞ կը ծառայէ ենթամասն: Ո՛ւր կը դրուի: Քանի՞ ձեռով կրնանք տողադարձել բառ մը: Ի՞նչ կը նշանակէ «տողադարձել»: Ի՞նչ կը կոչուի չորս վանկնոց բառ մը: Ինչո՞ւ չենք կրնար տողադարձել միավանկ բառերը:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

31.- Տողադարձեցէք հետեւեալ երկվանկ բառերը:

Գրիչ, տուալ, կշիռ, անում, գգալ, կտաւ, հսկայ, նուէր, հրել, ծուէն, փրփուր, գայրոյթ, ստել, գգոյշ, գգեստ, սփռոց, սկիզբ, լսեց, լուացք, մրջիւն, գուարթ, դժուար, սգալ, շտապ, քմբուկ, դդում, սպայ, արձան:

32.- Ձատեցէք վանկերը հետեւեալ բառերուն եւ տողադարձեցէք երկուքական անգամ, մէյ մը մէկ վանկ ձգելով վերը, մէյ մը՝ երկու:

Օրինակ.- Գլգուլ - (չլ-գ-լուլ) - գըլ-գլուլ, գլլը-լուլ:

Գլգուլ, մտմտալ, յուսահատ, նօհանակ, իրիսնջել, նոհոց, կարգապահ, ուշադիր, մոնջիւն, դասընթացք, մրմնջել, դասընկեր, առատաղ, սփռիւն, պսպղուն, բրթոալ, ստուգել, կամրջակ:

33.- Տողադարձեցէք հետեւեալ բառերը կարելի բոլոր ձեւերով:

Երաժշտութիւն, դասընկերներ, անպատուել, չմրմնջեցիմ, նուագածու, քուարանագիտ, անմշակ, գգայնոտութիւն, սուիմ, սփիւտֆահայ, նոհոց, ազգանուէր, իրմտանք, երկրպագութիւն, անսկիզբ, միջամտեցէ՛ք, եմքամնայ, աստղարաշխ:

34.- Հետեւեալ բառերը իրենց բնական վիճակին վերածեցէ՛ք՝ կատարելով փոփոխութիւնները, հոն ուր պէտք են:

Օրինակ.- Նը-ւէր - նուէր:

Նը-ւէր, հագ-ւագիւտ, վըս-տահելի, փսփր-սուք, դասընկեր, իրզն-մտանք, յամրըն-քաց, ըս-քափիլ, ըն-կոյզ, կըզ-գի, փրկը-ւեցաւ, անսըր-տութիւն, ըն-ծայ, ըզ-գացում, պըզ-տիկ, ան-վերջ, իը-մել, ըզ-գոյշ, հետաքրք-րական, ընք-րիք, տեսը-ւեր են, կը դա-դար, մըշ-տատել, ըշ-տապեցէք, շը-փոք, ըշ-տեմարան, ը-բաւ, գը-րիչ, կըմ-կմալով, սարսը-նալ, բար-ձրը, սը-ւիմ, կար-ժըր, անըզ-գայ, նը-նի:

ԴԱՍ 6

ԿԷՏԱԴՐՈՒԹԵԱՆ ՆՇԱՆՆԵՐ

42.- Որպէսզի գրութիւն մը յտակօրէն հասկցուի՝ կը գործածենք կարգ մը նշաններ: Այդ նշանները կը կոչուին կետադրութեան նշաններ, որոնք են.- Ստորակէտ, բուք, միջակէտ, վերջակէտ, կախման կէտ:

ՍՏՈՐԱԿԷՏ (,) - Կը գործածենք փոքր դադարի մը համար: Այսպէս. Բացաւ դուռը, ետ գոցեց ու մեկնեցաւ: (Ստորակէտը ձայնը վեր կը սահէ):

Ստորակէտը կը գործածուի՝

ա) Իրարմէ զատելու համար նոյն սլաշտօնը ունեցող բառեր: Այսպէս. Շուշանը, մեխակը, յասմիկը գեղեցիկ ծաղիկներ են: («Շուշանը», «մեխակը», «յասմիկը» երեքն ալ տէր-բայի են):

բ) Իրարմէ զատելու համար նոյն տէր-բային ունեցող, կամ իրարու հետ անմիջական կապ ունեցող նախադասութիւնները: Այսպէս. Գնաց տուն, առաւ իր գիրքերը; վերադարձաւ դպրոց: (Երեք նախադասութիւններուն ալ տէր-բային նոյնն է - «ան»):

գ) Իրարմէ զատելու համար երկար նախադասութեան մը մասերը: Այսպէս. Երէկ կէսօրէ ետք, մեր խանութին առջեւ, մայքէն քէն քիչ մը անդին, խոշոր ինքնաշարժ մը տապալեցաւ:

դ) Քովի բառէն զատելու ձայնարկութիւններն ու կոչականները: Այսպէս. «Ա՛խ, գլուխս կը ցաւի». «Ընկերներ՛ր, վաղը պտոյտի պիտի երթանք»:

Ընդհանրապէս ստորակէտ չենք դնել «ու» եւ «եւ» շաղկապներով կապուած բառերու միջեւ: Այսպէս. Սեդան, Պետիկը եւ Սոնիկը մեզի եկան: («եւ»էն առաջ ստորակէտ չկայ):

ԲՈՒԹ (') - Այս նշանն ալ կը գործածենք փոքր դադարի մը համար: Այսպէս. Երեւան՝ Հայաստանի մայրաքաղաքը, կը գտնուի Արարատեան դաշտին մէջ: (Բուժն ալ ձայնը վեր կը սահէ):

Բուքը կը գործածուի՝

ա) Երբ զեղչեալ բառեր կան: Այսպէս. Քոյրս օշարակ խմեց, իսկ ես՝ ջուր. (խմեցի):

բ) Իրարմէ զատելու համար բառեր, որոնք թէեւ իրարու քով գրուած են՝ բայց իրարու չեն վերաբերիր: Այսպէս. Քու՛ քոյրս նուիրած գիրքդ հետաքրքրական էր: («Քու» բառը թէեւ գրուած է «քոյր» բառին քով, բայց իրականութեան մէջ կապուած է «գիրք» բառին, - քու գիրքդ):

գ) Երբ բառ մը իրմէ առաջ գտնուող բառի մը բացատրութիւնն է: Այսպէս. Ալեքը՝ եղբայրս, դեռ լուր չունի: (Հոս բուժը կը նշանակէ այսինքն: Ալեքը (այսինքն) եղբայրս):

ՄԻՋԱԿԷՏ (.) - Կը գործածենք աւելի երկար եւ կտրուկ դադարի մը համար: Այսպէս. «Ես չգացի հանդէսի. այս օրէն մարդ տունէն դուրս կ'ելլէ՞»:

Միջակէտ կը գործածուի՝

ա) Չակերտէն առաջ: Այսպէս. Ուսուցիչը ըսաւ. «Գոհ եմ ձեզմէ»:

բ) Կրճատուած բառերուն քով: Այսպէս. Պրն. Գրիգորը կը փանչնա՞ք: Ս. Մեսրոպ մեր մեծագոյն բարերարն է:

գ) Նախադասութիւններու միջեւ՝ մանաւանդ երբ տէր-բայիները տարբեր են: Այսպէս. «Զինք գտա՞ր. ես ձանձրացայ զինք փնտոնել»:

ՎԵՐՋԱԿԷՏ (:) - Կը գործածենք ա՛լ աւելի երկար դադարի մը համար՝ երբ խօսք մը վերջանայ: Այսպէս. Երկիրը արեւէն կը ստանայ իր լոյսը:

ԿԱԵՄԱՆ ԿԵՏ (․․․) - Կը գործածենք ընդհանրապէս խօսքի մը վերջը՝ երբ չուզենք ամբողջութեամբ արտայայտել մեր միտքը: Այսպէս. Եթէ գալ քննութեան ալ ձախողի՛ս․․․:

ՆԱՆՕԹ.- Կէտադրութեան նշանները շատ կարեւոր են: Կէտ մը սխալ դնելով կամ փոխելով՝ կրնանք խօսքի մը իմաստը ամբողջովին փոխել:

Այսպէս. Երբ գրենք.- «Գոհ եմ որ աշխատասէր ես, եղբորդ պէս ծոյլ չես», կը նշանակէ թէ գուն աշխատասէր ես, եղբորդ ծոյլ է: Բայց եթէ ստորակէտը վերցնենք «ես» բառին քովէն ու դնենք «պէս» բառին քով՝ կ'ունենանք հետեւեալը.- «Գոհ եմ որ աշխատասէր ես եղբորդ պէս, ծոյլ չես», որ կը նշանակէ թէ եղբորդ աշխատասէր է, դո՛ւն ալ աշխատասէր ես:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.- Որո՛նք են կէտադրութեան նշանները: Ինչո՛ւ եւ կ'ըրբ կը գործածենք դանտնք:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

35.- Ստորակէտ աւելցուցէք ուր որ պէտք է :

Ամէն առաւօտ կ'արթննայի ժամը 6-ին կը վազէի գրադարան ու կը կարդայի մինչեւ ժամը 9-ը : Գիրքերս տետրակներս եւ գրչատուփս սեղանին վրայ մնացեր են : Ընկերներուս ընկերուհիներուս բարեկամներուս եւ ծանօթներուս հրաւեր զրկեցի : Օհանն ու Կարպիսը Վահանն ու Ալիշանը դպրոցը չէին այսօր : Օ՛ֆ ա՛յ ճանաչացայ այս տունին մէջ ապրել : Փողոցը տունը դպրոցին մէջ եւ ամէն տեղ քաղաքավար եղէք : Եկայ տեսայ յաղթեցի : Կը խաղան կը պառկին կ'ուտեն ու յետոյ կը գարմանան թէ ինչու չեն յաջողիր ինչու չեն գնահատուիր : Տղա՛ք դուրս ելէք դասարանէն :

36.- Բուժ աւելցուցէք ուր որ պէտք է :

Անոնք տուն գացին, ես դպրոց : Իր եղբորդ նուիրած բառարանը կորսուեցաւ : Ես շատ կը հաւնիմ Այվագովսկին հայ նշանաւոր ծովանկարիչը : Պրն. Աւետիսը հօրեղբայրդ, մեզի եկած էր : Դուն երկու շնիկ ունիս, ան երկու փիսիկ : Աչքերուն մէջ արցունք պատուհանէն դուրս կը նայէր : Մենք զինք կը փնտռէինք, ինք ալ մեզ : Գրիգոր Նարեկացիին Նարեկի հեղինակին հանդէպ, մեծ յարգանք ունիմ : Քոյրս ջղայնացած դուռը բացաւ : Եղբայրդ ջղայնացած վագեց թոքոյի մեր շունին վրայ :

37.- Միջակէտ աւելցուցէք ուր որ պէտք է :

Հայրս ըսաւ «Հո՛ւս եկուր կ'ուզեմ հետդ խօսիլ» : Պրն Զոհրայը տեսնեմ երէկ Ս Գրիգոր եկեղեցիին մէջ : Ա շարքը ունի երկու մեքր երկայնք : Տիգրան Դ դասարան եղաւ : Վ Թէֆէեանը մեր մեծագոյն բանաստեղծներէն մէկն է : Ան ըսաւ «Թշնամիդ սիրէ անձիդ պէս» : Ա՛յ մեկնէ ժամը 10 եղաւ : Օդը ցրտեց ես չեմ ախորժիր ցուրտէն : Վագեցի սենեակ եղբայրս հոն չէր ետ վագեցի դուրս :

38.- Կէտադրութեան նշաններ աւելցուցէք ուր որ հարկ է :

Ոչխարը այժը կավը եւ էշը օգտակար կենդանիներ են : Յատկեց սահեցաւ ու գետին ինկաւ : «Տրտունջք» Դուրեանի գլուխգործոցը գոց գիտեմ : Իմ պուպրիկս ո՛չ կ'ուտէ ո՛չ կը խօսի եւ ո՛չ ալ կու լայ : Կեցած դասարանէն դուրս կը նայի : Այդ գիրքին ժ գլուխը միայն կարդացի : Առանց հացի առանց ջուրի առանց կօշիկի ֆայեց ամբողջ օրը : Քեզմէ հեռու սիրելի մայրիկ հանգիստ չու-

նիմ : Մեր եւ ձեր իր տղուն համար ըրած ծախքերը արդիւնք տրւին : Սամսոնի մօտ շոգեմարի մը մէջ ծնած է Ա Արփիարեանը : Դուք ծով պիտի երթաք անոնք անտառ : Ես ա՛յս կ'ուզեմ չեմ ուզեր գիտնալ թէ դո՛ւն ինչ կ'ուզես : Ռաֆֆի՛ ներս մտիր : Հսկիչը ըսաւ «Հեքի՛ք է դադրեցուցէք այս ազմուկը» : Գողը սարսափած ոստիկանին տուաւ գողօնը առանց մէջէն բան վերցնելու : Հայրս Պրն Վագգէնին Յասմիկին հօրը բացատրեց խնդիրը :

39.- Կարգացէք Հեռուեալ Հատուածը (առնուած Երուսանի «Լուացարարուհին» պատմուածքէն) եւ զրէք կէտադրութեան նշանները :

... Աստու մը նաւակայք գնաց Յուսէփին լուացուելիք լաքերը առնելու համար ծեր նաւավարը անդին կը խոկար Սուրբիկ գարմանեով տեսաւ թէ Յուսէփ իր ծիծաղկոտ դէմքով չէր դիմաւորեր զինք տեսաւ որ անոր անկողինը ուսած էր կամաց մը մօտեցաւ վեր առաւ վերմակը եւ ահագին կոծ մը արձակեց ծեր նաւավարը վեր ցատկեց Սուրբիկ անկողինին սնարին վերելը Յուսէփին անշարժ մարմինին մօտ կեցած կու լար

Նաւավարը ըսաւ յօրանջելով

- Յուսէփ երէկ գիշեր ծովը ինկեր է մինչեւ որ ագատեր են խեղդուեր է այս արեւստին վերջը ա՛ս է մի՛ լար աղջիկս դո՛ւն ալ մեղք ես

Ու վերմակը գլխուն ֆաշելով նորէն սկսաւ ֆնանալ

Սուրբիկ կէս ժամ անընդհատ լացաւ ծովամոյնին սնարին վերել ցած հեծկլտուեով

Յետոյ ծոնցաւ կամաց մը համբուրեց Յուսէփին սառ ֆակասը որ տծգունած էր առաւ սենեակին անկիւնէն ծրար մը ուր կը գտնուէին ձկնորսին առջի օր պատուած ադտոտները դուրս ելաւ խցիկը գնաց ջրալից թակոյկին առջեւ անցաւ ու սկսաւ լուալ կասաղի շարժումներով մոլեգնօրէն պատուելով շապիկը կտորներ ֆաշել-համելով փրփուրներուն մէջէն որոնք դուրս կը թափէին թակոյկէն

Յետոյ ժողվեց այդ բզմուած լաքերը պարտեց տարաւ չուաններուն վրայ փոնց արելին տակ եւ ինք ալ անոնց դիմացը նստաւ Ու մերթ խնդաց մերթ լացաւ մերթ հեծեծեց մերթ քրքջաց

ԴԱՍ 7

ԱՊԱԹԱՐՑ ԵՒ ԱՅԼ ՆՇԱՆՆԵՐ

43.- Որպէսզի մեր գրածը յտակ հասկցուի՝ կը գործածենք կարգ մը ուրիշ նշաններ ալ, - Չակերտ, փակադիծ, մեծ-զծիկ, զծիկ:

ա) ՉԱԿԵՐՏ « » . (Չակերտի մէջ կ'առնենք 1.- Անձի մը ըսած խօսքը՝ երբ զայն կրկնենք նոյնութեամբ, 2.- Արուեստի գործերու անունները, եւայլն): Այսպէս.

Հայրս ըսաւ. «Շատ գոհ եմ քեզմէ»:

Դանիէլ Վարուժանի «Հացին Երգը» հատորը չուսիմ:

Կոմիտասի «Կռուակ»ը շատ կը սիրեմ:

բ) ՓԱԿԱԳԻԾ () . (Փակադիծի մէջ կ'առնենք որպէս բացատրութիւն մէջըբերուած բառեր, խօսքեր): Այսպէս.

Սիւմանթօն (Ատոմ Եարմանեան) անուանի բանաստեղծ մըն է:

գ) ՄԵԾ ԳԾԻԿ — (Կը գործածուի խօսակցութեան մէջ՝ հարց ու պատասխանի ատեն մասնաւորաբար): Այսպէս.

— Արսէ՛ն, քանի՛ տարեկան է փոքր եղբայրդ:

— Չորս:

դ) ԳԾԻԿ — (Կը գործածուի երկու բառեր կցելու):

Այսպէս. կամաց-կամաց՝ բամպակը կ'ըլլայ մանած:

44.- Ապաքարքը (') գրուած կ'ըլլայ բայերու «կը»ին եւ «չի»ին «ը» եւ «ի» գիրերուն տեղ՝ երբ բայը ձայնաւորով սկսած է: Փոխանակ զրելու «կը այրէին», կը գրենք՝ «կ'այրէին»: Փոխանակ զրելու «չի ուզեր», կը գրենք՝ «չ'ուզեր»:

45.- Հոն ուր Ընչուած դիր չկայ՝ չկայ նաեւ ապաթարց:

46.- Բազմաձայնով սկսող բայ մը բնաւ ապաթարց չ'ունենար: Չայնաւորով սկսող բայ մը կ'ունենայ տասնը-երկու ապաթարց հաստատականին մէջ (Սահմանականի Ներկայ՝ վեց, եւ Անցեալ Անկատար՝ վեց), եւ ժխտականին մէջ միայն մէկ ապաթարց (Սահմանական Եղանակ Ներկայ եղակի Գ. դէմք): Այսպէս. Չեմ ուտեր, չես ուտեր, չ'ուտեր (=չի ուտեր):

ՉԱԿԵՐՏԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

(Ուղղակի խօսք կը կոչուի մէկու մը ըսած խօսքը երբ զայն կրկնենք նոյնութեամբ՝ այնպէս ինչպէս ելած է անոր բերնէն: Օրինակ. Հայրս ինծի ըսաւ. «Քեզ շատ կը սիրեմ» խօսքին երկրորդ նախադասութիւնը՝ «Քեզ շատ կը սիրեմ», ուղղակի է: Բայց եթէ հօրս ըսածը կրկնեմ իմ կողմէս եւ ըսեմ՝ Հայրս ինծի ըսաւ. քեզ շատ կը սիրէ, - Բ. նախադասութիւնը կ'ըլլայ անուղղակի խօսք):

Չակերտի մէջ կ'առնենք ուղղակի խօսքերը: Այսպէս.

Հայրս ինծի ըսաւ. «Քեզ շատ կը սիրեմ»:

Պրն. Տնօրէնը ըսաւ. «Գիրքդ ինծի բեր»:

Կարելի է չակերտուած խօսք մը չակերտէ տգատել: Այսպէս. Չակերտէն ատաջ գրուող միջակէտին տեղ կը դնենք «որ» կամ «թէ», կը վերցնենք չակերտը, առաջին դերը կը վերածենք պարզ դերի, եւ ապա խօսքը կը կրկնենք մե'ր կողմէ, այսինքն՝ զայն կը վերածենք անուղղակի խօսքի.

Հայրս ինծի ըսաւ քեզ շատ կը սիրէ:

Պրն. Տնօրէնը ըսաւ որ գիրքս իրեմ տանիմ:

47.- Չակերտին տեղ կարելի է նաեւ մեծ զծիկ դնել: Այսպէս.

— Քեզ շատ կը սիրեմ, — ըսաւ հայրս:

Պրն. Տնօրէնը ըսաւ, — Գիրքդ ինծի բեր:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.- Ապաթարցը մ'ը գիրերուն տեղ կը դրուի: Ե'րբ կը գործածենք չակերտ: Ինչ կ'ընենք խօսք մը չակերտէ ազատելու համար: Փակադիծը, մեծ-զծիկը, զծիկը ինչի՛ կը ծառայեն: Ինչ է ուղղակի խօսքը:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

40.- Ըսէք թէ հետեւեալ բառերուն մէջ ո՛ւր ապաթարց պէտք է, եւ ո՛ւր պէտք չէ, եւ ինչո՛ւ: Օրինակ.

«Կ'ողմկէր» - ապաթարց կ'ուղէ, որովհետեւ բայը ձայնաւորով կը սկսի. Ընչուած է «ը» դերը:

«Կանչեց» - չ'ուղեր. «կ»ը արմատական է. բային աներեւոյթն է «կանչել»: «Չ'երգեր» - ապաթարց կ'ուղէ. բայը ձայնաւորով կը սկսի եւ Սահմանական Եղանակ Ներկայ եղակի Գ. դէմք է:

«Չերգեց» - ապաթարց չ'ուղեր. թէեւ բայը ձայնաւորով կը սկսի, բայց Սահմանական Եղանակ Ներկայ եղակի Գ. դէմք չէ:

Կուտեց, կաղաչէր, պիտի չգրեմք, կարկաչեց, կապեցի, կիմանան, կուրախացնէինք, չըսաւ, չըսեր, թող չուտէր, պիտի չերթայ, չուտեր, չօգներ, չչարչարեց, չօրհնեց, կօզմէք, կուսանի, չե-

րագեց, պախեց, չէր, կերթան, կարէր, կագդարարէր, չամչցան, չեղաւ, կագդարուեցաւ, կարմրեցան, պիտի չըլլայի:

41.- *Չակերտէ ազատեցէք հետեւեալ խօսքերը:*

Արշալոյսը ըսաւ. «Քոյրդ աշխատասէր է»: Խանութպանը պատասխանեց. «Ես պարտքի ապրանք չեմ տար»: Եղբայրս պոռաց. «Ուժով եմ ես»: Ուսուցիչը հարցուց. «Ո՛ւր է գիրքդ»: Ոստիկանը մեզի հրահանգեց. «Ներս մտէ՛ք անմիջապէս»: Հերթապահը յայտարարեց. «Չմտնա՛՛ք մեր տետրակները միասին բերել»: Պատիկը իր մօրը ըսաւ. «Շատ կարօտցեր եմ քեզ»: Մարտիին ըսի. «Գոհ չեմ քեզմէ»: Պետիկը ըսաւ իր ընկերոջը. «Քեզի սպասեցի երկու ժամ»: Բժիշկը ըսաւ. «Գործածեցէ՛ք այս դեղերը եւ պիտի օգտուիք»: Սեպիկը ըսաւ. «Ես պիտի չերթամ տուն»:

42.- *Չակերտ գործածեցէք հետեւեալ խօսքերուն մէջ:*

Ատրիմէին ըսի թէ գինգ կը փնտռէի: Բժիշկը ըսաւ որ անկողին մտնեմ: Ընկերս ըսաւ թէ գիս կը սիրէ: Հերմինէն ըսաւ որ իրենց մաշեմք այսօր: Արան ըսաւ թէ իր եղբայրը լաւ հայերէն գիտէ: Շուշիկը ըսաւ թէ Անահիտը տեսեր է հանդէսին: Արիկը ըսաւ թէ մեզի պիտի գայ Կիրակի առաւօտուն: Ատեմապետը ինձի ըսաւ որ մեր ֆուէները տուփը նետեմք: Սիլվան ըսաւ թէ իմ շարադրութիւններս շատ կը հաւնի: Լեման ըսաւ Գոհարին թէ ինք Զաւէնին գծածները կը նախընտրէ: Խանութպանը ըսաւ թէ խնձոր չունի ծախու: Անոնք ըսին թէ իրենց գրիչները լաւագոյններն են: Ընկերուհիս խնդրեց որ շուտ վերադարձնեմ իր գիրքը:

43.- *Կարդացէք եւ ապա ընդօրինակեցէք հետեւեալները:*

Այգեպանը պոռաց. «Դո՛ւրս, այգիէն դո՛ւրս...»: Հինգ հարտ կերպաս գնեցի (եարտը ինքսուն-մէկ սանթիմ է): — Չե՛մ հասկնար թէ ինչո՛ւ ծոյլ աշակերտներ կան աշխարհի վրայ, — ըսաւ Հրայր:

Հինգ ժամէ ի վեր ան՛ուշ-անուշ կը ֆնանայ:
Փոխէ՛ այս ընթացքդ. եթէ ո՛չ...:
Լոխկ-մնջիկ նստած էր անկիւնը:
Յ. Թումանեանի «Սանտունցի Դաւիթ»ը կարդացե՞ր ես:
Փոխ-տնօրէնը դպրոց պիտի գայ ժամը 9-ին:
Միսաֆ Մեծարեցն մեռած է 1908-ին:

ԴԱՍ 8

ԱՌՈՒԱՆՈՒԹԵԱՆ ՆՇԱՆՆԵՐ

48.- Առողանութեան նշաններն են, — Եշտը ('), Պարսկը (°), Երկարը ('), որոնք կը գործածուին գրուածքի մը իմաստը ճշդօրէն արտայայտելու համար:

49.- ԵՆՇՏԸ (') կը գրուի բառի մը վրայ՝ դայն գօրաւոր հնչելու համար: Այսպէս. Դուն պէտք է աշխատի՛ս. քեզի՛ կ'ըսեմ:

50.- ՊԱՐՈՅԿԸ (°) կը գրուի բառի մը վրայ՝ դայն հարցական ընելու համար: Այսպէս. Անոք բացատրեցի՞ր: Հո՞ն էր:

51.- ԵՐԿԱՐԸ (') կը գրուի բառի մը վրայ՝ դայն երկար հնչելու համար: Այսպէս. Ու կը խնդա՛ր, կը խնդա՛ր...

52.- Առողանութեան նշանները սովորաբար կը գրուին բաներուն վերջին ձայնաւորին վրայ: Այսպէս. կ'ըսենք. — «Դասարա՛ն մտաւ», եւ ոչ թէ՛ «դասարան մտաւ» կամ «դասարան մտաւ»:

53.- Երբ բառի մը վերջին ձայնաւորը «ը» մըն է՝ առողանութեան նշանը կը գրուի վերջնիւթեր ձայնաւորին վրայ: Այսպէս. Հա՛յրը, հա՞յր, հա՛յրը...

54.- Առողանութեան նշանները կը գրուին բառին վերջին ձայնաւորին վերեւ՝ թէ մը դէպի աջ:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.- Որոնք են առողանութեան նշանները: Ինչո՛ւ կը գործածուին: Ո՛ւր կը գրուին:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

44.- Հետեւեալ բառերը գրեցէ՛ք երեքական անգամ, իւրաքանչիւր անգամի առողանութեան երեք նշաններէն մէկը գործածելով: (Ուշադիր եղէ՛ք նշաններուն դիրքին): Օրինակ. — Եկաւ, — Եկա՛ւ, Եկա՞ւ, Եկա՛ւ:

Եկաւ, պտոյտի, շատունց, մարդը, երեք, պիտի չվճարէ, խնդաց, ով, այո, միասին, քոյրը, այդպէս, նորէն, չգացին, չեղաւ:

45.- Հետեւեալ նախադասութիւնը ընդօրինակեցէք գրաստիտակին վրայ, եւ կարդացէք եօթը անգամ, իւրաքանչիւր ընթերցումի՝ շեշտը յաջորդ բառին վրայ դնելով: Յոյց տուէք իւրաքանչիւր նախադասութեան մէջ յտուաջ եկող իմաստի փոփոխութիւնները

- Օրինակ.- Յակոբի՛ն մե՛ծ եղբայրը երէկ ինձի երկու գրիչ տուաւ: (Այսինքն՝ Յակոբի՛ն եւ ո՛չ թէ ուրիշի մը):
- Յակոբին մե՛ծ եղբայրը երէկ ինձի երկու գրիչ տուաւ: (Այսինքն՝ մե՛ծ եղբայրը եւ ո՛չ թէ փոքրը):

46.- Կարդացէք Հետեւեալները, ուշադրութիւն դարձնելով առողանութեան նշաններուն:

Պիտի տա՞ս այդ գիրքը: Ըրածդ ա՛յ չափը անցաւ...: Ինչո՞ւ ծոյլ ես դուն: Ինչո՞ւ ծոյլ ես դուն: Հասէ՛՛ք, հասէ՛՛ք, գո՛ղ կայ...: Տասն անգամ չըսի՞՞ քեզի: Լո՛յսը բեր հոս: Լոյսը բե՛ր հոս: Անո՞ր քսիք: Անոր քսի՞ր: Առաջնութիւնը դո՞ւն շահեցար: Պատրա՛ստ. քայլ առա՛ջ, օ՛ն: Չճանճրացա՞ր տակաւին...: Ինչո՞ւ չեմ խաղար մեզի հետ: Ուտել չյոգնեցա՞ւ. կերա՞ւ ու կերա՞ւ: Դրկած նամակս ստացա՞ր: Քանի՞ ոսկի ունի: Քանի՞ ոսկի ունի:

47.- Կարդացէք Հետեւեալները, մասնաւոր ուշադրութիւն դարձնելով առողանութեան նշաններուն:

ՄՐԱՄԻՏ ԽԱՆՈՒԹՊԱՆԸ

- Հոս խանութք բացիք, Պրն. Մարտիրոս:
- Այո՛, մահնակալ կը ծախեմ, ի՛նչ ընեմ:
- Շա՛տ աղէկ էք ըրեր. կարելոք գործ ունենալն է: Բայց այսօր կիրակի է. ինչո՞ւ բացեր էք խանութք. այսօր հանգիստի՛ օր է:
- Ես ալ հանգիստի՛ ապրանք կը ծախեմ արդէն:

«ԵՆԼԱՑԻ» ՀԱՐՅՈՒՄ ՄԸ

- Հայերէն բառարան մը կու տա՞ք ինձի:
- Հրամանեցէ՛ք, պարոն:
- Բայց այս բառարանը ցանկ չունի՛ ետեւը:
- Բառարանը ցանկ կ'ունենա՞յ:
- Հայա ուզած բառս ինչպէ՛ս պիտի գտնեմ մէջը...:

ԴԱՍ 9

ԲԱՌԵՐՈՒ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

55.- Բարդ կը կոչուի այն բառը, որ կազմուած է երկու (կամ աւելի) բառերու միացումով: Այսպէս. Այնտեղ (=այն-տեղ), Հայագործ (=Հայ-ագործ):

56.- «Հացագործ» բառին երկու մասերը՝ «Հաց» եւ «գործ» իրարու միացած են «ա» գիրով: Այս «ա» գիրը կը կոչուի յօդակապ: Բարդ բառերը ընդհանրապէս յօդակապ կ'ունենան: Հայերէնի յօդակապերն են «ա» եւ «ե»: Այսպէս. ջր-ա-ներկ, ծաղկ-ե-փունջ:

57.- Որպէս յօդակապ կը դործածուին նաեւ Հետեւեալները — Ու (առուտուր), Եւ (երթեւեկ), Զ (դոյնգոյն), Ի (հերհեւ), Ընդ (մերթընդերթ), ԱՌ (միառմի):

58.- «Ու»ն եւ «Եւ»ը շաղկապ են: «Զ»ն, «Ի»ն, «Ընդ»ը եւ «առ»ը կը կոչուին կապ:

59.- Երբ բարդ բառի մը երկրորդ մասը ձայնաւորով սկսի՛ յօդակապը կը ջնջուի: Այսպէս. Ներկաման, շնչերակ, միջօրէ:

60.- Բարդ բառերը երբեմն կազմուած կ'ըլլան երեք բառէ: Այսպէս. Գր-ա-դարսն-ա-պետ:

61.- Բառի մը վրայ գիր մը կամ գիրեր աւելցնելով կրնանք նոր բառեր կազմել: Այսպէս. Գութ — ան-գութ, ջուր — ջրային, բախտ — դժբախտութիւն:

62.- Բառերուն վրայ աւելցուող այս գիրերը կը կոչուին ւծանց: Ածանցը գիր մը կամ գիրերու խումբ մըն է, որ առանձին իմաստ չունի, բայց երբ աւելցուի բառի մը վրայ՝ անոր իմաստին սեսակը կը փոխէ:

63.- Ածանցի յաւելումով շինուած բառ մը կը կոչուի ւծանցեալ բառ: Այսպէս. անգութ, ջրային, դժբախտութիւն:

64.- Կրկնածանց կը կոչուին այն բառերը, որոնց կազմութեան մէջ մէկէ աւելի ածանց կայ: Այսպէս. Անխելութիւն:

65.- Երբ բառի մը վրայ ուրիշ բառ մը կամ ածանց մը չէ աւելցուած՝ կը կոչուի պարզ բառ: Այսպէս. փայտ, օդ, դէտ:

66.- Երբ բարդ բառի մը վրայ ածանց աւելցուի՝ կը կոչուի բարդածանց: Այսպէս. հացագործութիւն:

67.- Բառ մը կը կոչուի կրկնաւոր՝ երբ կազմուած է նոյն արմատին կրկնումով: Այսպէս. չար-ա-չար, փո-փո-ալ:

68.- Ամփոփելով՝ Բառերը իրենց կազմութեամբ կրնան ըլլալ — պարզ, ածանցեալ, կրկնածանց, բարդ, բարդածանց, կրկնաւոր:

69.- Երբ բառ մը ածանցուի կամ բարդուի՝ կրնայ ձայնա-կան փոփոխութիւններ կրել: Ձայնական այս փոփոխութիւնները սովորաբար հետեւեալ ձևերով տեղի կ'ունենան. 1) Գիր մը (ձայն մը) կը փոխուի ուրիշ գիրի մը: Օրինակ.— «Մէր» կ'ըլլայ «սիրել»: 2) Գիր մը կ'իյնայ, այսինքն՝ կը ջնջուի եւ տեղը անգիր «ը» մը կու գայ: Օրինակ.— «Միս» կ'ըլլայ «մսեղէն» (կը հնչուի՝ մը-սեղէն). 3) Գիր մը կը կորսուի, այսինքն՝ կը ջնջուի եւ իր տեղը ուրիշ ձայն մը չի գար, կամ միայն սուղ «ը» մը կու գայ: Օրինակ.— «Փոշի» կ'ըլլայ «փոշոտ» (փոշ-ոտ), «պարտադիր» կ'ըլլայ «պարտադրել» (կը հնչուի՝ «պարտադ-րել» կամ «պարտա-դրել» եւ ոչ թէ՛ «պարտադը-րել»):

ա) «է»ն կրնայ փոխուիլ «ի»ի, «ՈՅ»ն՝ «ու»ի, «ԵԱՅ»ն «է»ի, «ԵԱ»ը «ե»ի: Այսպէս. Մէր — սիրել, ըյս, — ըլսուոր, գործունեայ — գործունէութիւն, սենեակ — սենեկապետ:

բ) «ի»ը (իզ) կրնայ փոխուիլ «ու»ի: Այսպէս. Պատիւ — պատուական:

գ) «ի»ն եւ «ՈՒ»ն կրնան վերածուիլ «ը»ի: Այսպէս. Իզձ — ըզձալ, ումպ — ըմպել:

դ) «ՈՒ»ն եւ «ի»ն կրնան իյնալ: Այսպէս. Ջուր — ջրոտ, գիր — գրել:

ե) «ՈՒ»ն, «ի»ն, «Ք»ն, «Ա»ը կրնան կորսուիլ: Այսպէս. Ամուր — ամրութիւն, գինի — գինարբուք, մեղք — մեղաւոր, պակաս — պակսիլ:

զ) «ի»ով վերջացող բառ մը երբ «ա» յօդակապով կցուի ուրիշ բառի մը՝ ի եւ ա գիրերը միանալով կը վերածուին «ե»ի: Այսպէս. Շողի-ա-նաւ = շողենաւ:

Այս «ե»ը (ի+ա) պէտք չէ չփոթել «ե» յօդակապին հետ: Այսպէս. դպրեւանք = դպիր-ե-վանք, «ե»ը յօդակապ է. «դպիր» բառին վերջին գիրը «ի» չէ: Բայց՝ կաշեգործ (=կաշի-ա-գործ) բառին «ե»ը յօդակապը չէ. յառաջ եկած է «ի» գիրին եւ «ա» յօդակապին միացումով:

70.- Անկանոն խոնարհում ունեցող կարգ մը բայերու «բուն» արմատները (որոնք տարբեր են Աներեւոյթի արմատներէն) երեւան կու գան սովորաբար Անցեալ կատարեալին մէջ: Այսպէս. Ձարնել՝ կ'ըլլայ գարկ-ի Անցեալ կատարեալին մէջ: «Ձարնել» բային Աներեւոյթի արմատն է «զար», «բուն» արմատն է՝ «զարկ»:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ի՞նչ կը նշանակէ պարզ, բարդ, ածանցեալ, կրկնածանց, կրկնաւոր եւ բարդածանց: Ի՞նչ է ածանցը: Թուէ՛ ձայնական փոփոխութիւնները: Քանի՛ տեսակ «ե» կրնայ ըլլալ բառերու կազմութիւն մէջ: Ի՞նչ է բայի մը «բուն» արմատը:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

48.- Հետեւեալ բառերով մէկական ածանցեալ եւ բարդ բառ շինեցէ՛ք: Այսպէս. Գործ = գործաւոր, գործատուն:

Գործ, լոյս, մարդ, փայտ, արեւ, դաս, յոյս, ջուր, ազգ, օդ, գոյն, շունչ, միտք, գիր, կազմ, ոսկի:

49.- Ըսէ՛ք թէ ի՞նչ ձայնափոխութիւն կրած են հետեւեալները:

Վիրաւոր, բուսակեր, որդեգիր, պատանեկիկ, ֆրիստոնէական, հովուական, ըմպել, միջնեմատ, հրշեջ, մշտատեւ, կիզիչ, բնդեղէն, մտային, ապշիլ, ըզձանք, միջանցք, առաջնութիւն, ընկուզեմի, այցեստոս, հոգեւոր, հաշուակալ, ջրկիր, բարեպաշտ, սրտակցութիւն, մատենագիր, կռապաշտ:

50.- Ըսէ՛ք նախորդ հրահանգին բառերուն կազմը, ինչպէս նաեւ հետեւեալներուն, եւ ցոյց տուէ՛ք ձայնափոխութիւնները՝ եթէ կան:

Նրբամտութիւն, քարակոփ, կամար, կամարաշէն, անհարկի, ջախջախել, անկրթօրէն, սրտապնդել, աղի, գուրգուրանք, խնձորենի, ծաղկաման, ջրուղի, կտկտոց, արեւմտահայ, գրադարանապետութիւն, շոգեշարժ, տնակ, ընդմիջում, բուսայիւն, քազարական, տգիտաբար:

51.- Կցել մասերը, կազմել բառերը՝ կատարելով ձայնափոխութիւնները՝ ուր որ պէտք է:

Տարի-ա-շրջան, պատիւ-աւոր, բաժին-ե-քուղք, մարտ-ա-կոչ, մատեան-ա-դարան, քրիստոնեայ-ու-քիւն, գիր-իչ, բաժին-ե-կից, գինի-ա-մոլ, որդի-ա-գիր, սին-ա-միտ, ջահ-ա-կիր, ջուր-աման, գերի-ա-վախառ, չափ-չափ-ել, յոյս-ա-դիր-ու-իլ, վերք-աւոր, շուրջ-ա-պար, փոր-փոր-ել, գոյն-գ-գոյն, երկինք-ա-կամար:

52.- Գտէ՛ք երեք հատ կրկնաւոր-բարդածանց բառ, երեք հատ՝ կրկնածանց, հինգ հատ՝ պարզ:

53.- Գտէ՛ք «բուն» արմատները (Անցեալ կատարեալի արմատները) հետեւեալ բայերուն:

Դնել, գարնել, տալ, ընել, տանիլ, դառնալ, ըլլալ, իյնալ: Երթալ, ուտել, գալ, մնալ, լալ:

54.- Գտէ՛ք արմատները հետեւեալ բայերուն՝ կատարելով ձայնական յաւելումներն ու փոփոխութիւնները. (Մտ-նել=մուտ):

Մտնել, իջնել, բուսնիլ, գիտնալ, գտնել, ծնել, շտկել, ծնիլ, ծլիլ, շինել, նստիլ, մղել, փլիլ, գրկել, պակսիլ, ապրիլ, ըզձալ, հպիլ, լրանալ:

ԴԱՍ 10

ԱՄԱՆՑՆԵՐ, ԲԱՌԵՐՈՒ ԸՆՏԱՆԻՔ, ԱՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ

71.- Ածանցները երկու տեսակ են - նախադաս (անոնք որ աւելցուած են բառին սկիզբը) եւ յետադաս (անոնք որ աւելցուած են բառին ետեւը): Այսպէս.

ՆԱԽԱԳԱՍ .- ածանցներ .- Ան(ան-նման), տ(տ-դէտ), տծ(տծ-գոյն), դծ(դծ-բախտ), ընդ(ընդ-օրինակել), ենք(ենթ-ասպայ), չ(չ-տես), առ(առ-տնին), գ(գ-արդ), ստ(ստ-անձնել), ց(ց-արդ), յ(յ-տաջ), ապ(ապ-երջանիկ), արտ(արտ-սկարդ), հակ(հակ-աղարծ), գեր(գեր-բնական), մակ(մակ-երես), համ(համ-աձայն), եւայլն:

ՅԵՏԱԴԱՍ ածանցներ .- Արան(դաս-արան), երէն(հայ-երէն), արէն(յուն-արէն), անոց(հիւանդ-անոց), օնց(հաւ-ոնց), անք(տառապ-անք), առ(պոչ-ատ), ացի(քաղաք-ացի), եցի(Պոլս-եցի), ցի(Պէյրութ-ցի), անի(լիզու-անի), ացու(մս-ացու), ցու(հաս-դուստ-ցու), ալի(բաղձ-ալի), ելի(տեսան-ելի), ածոյ(հաւաք-ածոյ), ալի(մտ-ալի), ական(դարոց-ական), ան(իշխ-ան), իկ(ածոյ), ալի(մտ-ալի), ական(դարոց-ական), ան(իշխ-ան), իկ(ածոյ), երորդ(հիւանդ-երորդ), բորդ(երկ-որդ), ի(աղ-ի), եղէն(փայտ-եղէն), իա(Իտալ-իա), եղ(ու-ժեղ), եան(արեւմտ-եան), եայ(հօր-եայ), գոյն(լուս-գոյն), գին(ուժ-գին), բար(մեղմ-բար), աւէտ(լուս-աւէտ), աւոր(մեղ-աւոր), ուոր(հեծ-ուոր), որդ(որս-որդ), ոտ(ցեխ-ոտ), ովին(ամբողջ-ովին), ոյք(երեւ-ոյք), իք(գործ-իք), իւն(բարախ-իւն), իչ(ուսուց-իչ), ին(մթ-ին), ոց(դպր-ոց), ու(հատ-ու), ուն(սահ-ուն), ուկ(կամայ-ուկ), ում(բաժան-ում), ուիլ(ընկեր-ուիլ), ուծ(դիպ-ուծ), ուրդ(արձակ-ուրդ), ուրիւն(խաղաղ-ուրիւն), ուտ(աւազ-ուտ), պան(փոս-պան), պէս(վերջ-պէս), ստան(Հայաստան), օրէն(դանդաղ-օրէն), ք(լայն-ք), օն(թերթ-օն), ել(վազ-ել), իլ(խօս-իլ), ալ(հագ-ալ), ցնել(ցաւ-ցնել), ուիլ(կար-ուիլ), եակ(քառ-եակ), ող(կար-ող), եւայլն:

72.- Բառ մը ստուգարանել կը նշանակէ 1.- Ձատել բառին բաղկացուցիչ մասերը, 2.- Յոյց տալ, եթէ կան՝ ձայնափոխութիւնները, ինկած զիրերը, 3.- Ըսել իւրաքանչիւր բաղկացուցիչ մասին տեսակը, 4.- Ըսել բառին կազմը: Այսպէս.-

ՎԻՐԱԻՈՐ

- 1.- Վիր-աւոր
- 2.- Վէրք-աւոր
- 3.- Վէրք = արմատ
աւոր = յետ. ածանց
- 4.- Ածանցեալ

ԾԱՂԿԵՓՈՒՆՁ

- 1.- Ծաղկ-ե-փունջ
- 2.- Ծաղիկ-ե-փունջ
- 3.- Ծաղիկ = արմատ
ե = յօդակապ
փունջ = արմատ
- 4.- Բարդ

ԿԱՇԵԳՈՐԾ

- 1.- Կաշե-գործ
- 2.- Կաշի-ա-գործ
- 3.- Կաշի = արմատ
ա = յօդակապ
գործ = արմատ
- 4.- Բարդ

ԳՐԱՏՈՒՆ

- 1.- Գր-ա-տուն
- 2.- Գիրք-ա-տուն
- 3.- Գիրք = արմատ
ա = յօդակապ
տուն = արմատ
- 4.- Բարդ

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ

- 1.- Առ-ել-տր-ական
- 2.- Առ-ել-տուր-ական
- 3.- Առ = արմատ (առ-նել)
ել = շաղկապ
տուր = արմատ
ական = յետ. ածանց
- 4.- Բարդածանց

ԱՆՏԵՍԵԼ

- 1.- Ան-տես-ել
- 2.- Ան-տես-ել
- 3.- Ան = նախ. ածանց
տես = արմատ
ել = յետ. ածանց
- 4.- Կրկնածանց

ԳԼԳԼՈՒՔ

- 1.- Գլ-գլ-ուիք
- 2.- Գլ-գլ-ուիք
- 3.- Գլ = արմատ
գլ = արմատ
ուիք = յետ. ածանց
- 4.- Բարդածանց, կրկնաւոր

ՋՐԿԻՐ

- 1.- Ջր-կիր
- 2.- Ջուր-կիր
- 3.- Ջուր = արմատ
կիր = արմատ
- 4.- Բարդ

73.- Երբ բարդ կամ ածանցեալ բառի մը կազմումին մէջ մտած ըլլայ ոչ-պարզ բառ մը, այդ ոչ-պարզ բառին մասերը իրարմէ չենք զատեր ստուգարանելու ատեն: Այսպէս. «Համ-ա-կարծիք» բառին կազմին մէջ գտնուող «կարծիք» բառը, որ ինքնին ածանցեալ է, մասերու չենք բաժնէր՝ «Համակարծիք» բառը ստուգարանելու ատեն:

74.- Նոյն պարզ բառին գործածումով շինուած բոլոր բառերը միասին՝ կը կազմեն ընտանիք մը: Այսպէս. «Լոյս» բառին ընտանիքին կը պատկանին հետեւեալ բառերը.

ԼՈՅՍ — լուսաւոր, լուսաւորել, լուսաւորում, լուսաւորութիւն, լուսաւորիչ, լուսեղէն, անլոյս, լուսաշող, վերջալոյս, Լայլն: «Լուսաշող» բառը կը պատկանի թէ՛ «լոյս» եւ թէ՛ «շող» բառերուն ընտանիքին: «Վերջալոյս» բառը՝ թէ՛ «վերջ» եւ թէ՛ «լոյս» բառերուն ընտանիքին:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

55.- Գտէ՛ք այս ածանցները պարունակող մէկական բառ.

Ան, ընդ, ենթ, չ, առ, գ, ց, ապ, արտ, հակ, գեր, մակ, համ, արան, երէն, անոց, անք, ատ, աքի, եցի, անի, աքու, ալի, էլի, ածոյ, ալիւն, ական, ենի, եղէն, եղ, էայ, գոյն, բար, աւէտ, աւոր, որդ, ոտ, ովին, ոյթ, իք, իւն, իչ, ոց, ուն, ուկ, ոււ, պան, պէս, ստան, օրէն, ք, եակ, տ:

56.- Ստուգարանեցէ՛ք հետեւեալ բառերը:

Պարտիզպան, մսավաճառ, առաջին, շոգեմաւային, մանկիկ, մեծագոյն, մակերես, ծաղկաման, Յունաստան, ընտանեկան, հաշուեցոյց, բաժնեթուղթ, պատուիրել, պատանեկան, ըզմանք, ջրառատ, լուսարաց, վշտալի, մայրապետանոց, Վարդուհի, չարչարանք, բուրումնաւէտ, նրբութիւն, անկրօն, մատենադարանապետ, դժգոհ, իստադէմ, անկրթութիւն, կմկմալ, երթուղարձ, անբնական, երփներանգ, անկեանոց, ընչասիրութիւն, համակարծիք, առտնին, միջնեմատ, ենթադրութիւն, անընդմէջ, չափչփել, բարեկամաբար, ապերախտ, տմարդի, պէսպիսուն, մրտել, արտակարգ, չտեսօրէն:

57.- Գտէ՛ք հետեւեալ բառերուն ընտանիքին պատկանող տասնական բառ: Ջուր, յոյս, գիր, քար, ծով, թուղթ, տուն:

գրգռել (ջղայնացնել) : Ձոզ (ճաղ) . ցոզ (ջրաչոզի կաթիլ) : Յամբ (դանդաղ) . համբ (մունջ) : Բերդ (ամբոց) . փերք (կտոր) : Անձաւ (քարայր) . անցաւ (ցաւ չունեցող) : Բոբ (վէրքի տեսակ) . բոռ (մեծ ճանճ) . փոբ (որովայն) : Քամել (ջուրը հանել) . գամել (գամ գամել) : Քոզ (դէմքի ծածկոյթ) . գոզ (գողցող) : Դեռ (տակաւին) . դեր (պաշտօն) . քեր (ի նպաստ) : Դէմ (դիմաց) . քեմ (չբջան) : Գառ (դառնուկ) . քար (ժայռ) : Դուռ (տունի) . քուր (սուր) . դուր (փորագրելու դործիք) : Թաւ (խիտ) . դաւ (դաւադրութիւն) : Յանգ (վերջաւորութիւն) . հանգ (հանածոյ) : Որք (խաղողի տունկ) . որդ (փոքր սողուն) : Յախ (բոյսի տեսակ) . ձախ (ձախ կողմ) : Դի (դիակ) . քի (նաւի) : Հարկ (տուրք) . յարկ (տունի) : Յարդ (չոր ցողուն) . հարք (տափարակ) : Յոյլ (ծոյլ) . հոյլ (խումբ՝ աստղի) : Յոյգ (յուզում) . հոյգ (հիւթ) : Դար (հարկուր տարի) . քառ (կենսիք ճիւղ՝ թռչունի) : Թռչիլ (թռիլ) . քրջալիլ (ջուրի թաթխուելի) : Քեռի (մօրեղբայր) . գերի (ստրուկ) : Յամառ (պնդող) . համար (թիւ) : Թոյլ (տկար) . դոյլ (ջուր փոխադրելու աման) : Սեր (կաթի) . սէր (սիրոյ զգացում) . սեռ (տեսակ) : Գայլ (կենդանին) . քայլ (ոտքի) : Բուռ (ափ) . փուռ (հացադործի) : Փակ (դոց) . բակ (բաց տարածութիւն) : Թիւր (սխալ) . դիւր (հաճելի) : Կեր (ուտելիք) . կեռ (կէս-բոլորակաձեւ) : Յառել (սեւեռել) . յարել (ըսել) . հարել (հարուածել) : Կարգ (չարք) . կառք (փոխադրութեան միջոց) : Բարք (կենցաղ) . փառք (մեծ պատիւ) : Հարք (կովի ձագ) . յորք (առաս) : Առատ (չատ) . արատ (բիծ) : Ճառ (ճառախօսութիւն) . քար (միջոց) : Լուռ (անձայն) . լուր (տեղեկութիւն) :

62.- Ըսէ՛ք թէ հետեւեալ ընդդժուած բառերէն որոնք դորձածուած են փոխաբերական իմաստով եւ որոնք՝ սառացի :

Լուսաւոր սենեակ . հասուն տրամարանութիւն . հասուն խընձոր . բուք միտք . կակուղ ընաւորութիւն . ատելութեան փոքորիկ . աղտոտ սիրտ . կարօտի ծով . արիւնտ պատմութիւն . սիրոյ արշալոյս . բոցավառ բանախօսութիւն . փայլուն դանակ . հագուստին գինը . դպրոցական պայուսակ . անհամ կատակ . նախանձի քոյն . յոյսի փարոս . խակ պտուղ . տափակ դաշտագետին . տափակ պատասխան . խակ վարմունք . անփորձ տղայ . բուք դաշոյն . բոցավառ կրակ . կակուղ կերպաս . աղտոտ նկարագիր :

63.- Հետեւեալ բառերը դորձածեցէ՛ք երկուքական անգամ, մէյ մը սառացի առումով եւ մէյ մը՝ փոխաբերական :

Ծուռ, երկար, կարճ, գիշեր, քամբայ, խորունկ, սուր :

64.- Սորվեցէ՛ք իմաստը հետեւեալ բնաձայն բառերուն :

Մոնչիւն (առիւծի, վագրի) . բառաչ (եղի, կովի, ցուլի) . ինչիւն, կաղկանձ (չունի) . ոռնոց (գայլի) . քառանչ (եղջերուի) . ղողանջիւն (հնդկահաւի, գանգի) . բբիւն (ճուտիկներու) . սոյլ, սուլոց (օձի) . գոյթ (բուի) . բաբախում, տրոփում (սիրտի) . շառաչ (ապտակի, ալիքներու) . դոնչիւն (ականջը խօսելու) . մլալիւն (կատուի) . պապաչիւն (այծի, կապիկի) . վրնջիւն, խրիինջ (ձի) . գոինջ, գոոց (էշի) . կանչ (կռուկի) . կափկափիւն (արագիլի) . կառաչ (արծիւի) . կոկոոց (գորտի) . նոռոդիւն, դայլայլ, գեղգեղանք (թռչունի) . բգգիւն (միջատի) . հոնդիւն (հոգեվարքի) . խրոկոց (քնացողի) . դոփիւն (ոտքի) . կնրտում (ակուններու) . գգայոռում, քրքոց (ստամոքսի կաղի) . քրքմնջիւն (դժգոհութեան՝ ցած) . զլզլոց (համրի) . կափիւն (քար տաշելու) . բամբիւն (պայթումի) . սուսալիւն (մեղմ հոլի) . նոփիւն (ջուր ինկող առարկայի) . շկաիւն (նետի, սուրի) . քարքառում (վառող փայտի) . դորդիւն (փլուզումի) . սոսափ (կանաչ տերեւներու) . խարշափ (չոր տերեւի) . շրշիւն (մետաքսի) . քրքոռում (լարերու) . շաչիւն (մտրակի) :

65.- Գտէ՛ք եւ սորվեցէ՛ք հետեւեալ բառերուն իմաստը :

Մըշմոճ, պնեղ, քուրայ, աղանդեր, աղցան, յուղարկաւոր, չմնեղանք, լերկ, մեմմերիլ, արշիպեղագոս, մոզիլ, հիր, բիլ, ժանեակ, ժուժկալ, կնգուղ, շոզում, բաւիղ, տտիպ, կոտտալ, բով, քառանք, կշոռոյթ, մոզոպրիլ, խորել, ջայլ, կերկեր, լակել, պարքերարար, մարմաշ, կապտել, տմոյն, խխում, կրճիկ, կոռան, քմաեան, կարկամ, համաստեղութիւն, տարմ, ծեփծեփիլ, կարկառուն, կեմտ, քղանցք, սփոզել, շատրուան, ստր, գուպար, ծարիր, աշխար :

Բ. Մ Ա Ս

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄ

ԴԱՍ 1

ԲԱՅ, ՆԱԽԱԳԱՍՈՒԹԻՒՆ

82.- Բայ կը կոչուին այն բառերը, որոնք զործողութիւն (բան մը ընել) կամ վիճակ (բան մը ըլլալ) ցոյց կու տան: Այսպէս. «Գնեց» բառը բայ է, որովհետեւ «բան մը ընել»՝ գնել ցոյց կու տայ: «Առողջացան» եւ «էինք» բառերը բայեր են, որովհետեւ «բան մը ըլլալ» ցոյց կու տան:

83.- Առանց բայի նախադասութիւն չի կազմուիր: Բայը անհրաժեշտ մէկ անդամն է նախադասութեան: Իւրաքանչիւր նախադասութիւն կ'ունենայ միայն մէկ բայ:

84.- Սահմանական, Հրամայական, Ստորադասական եւ Ըղծական եղանակներուն բայերը կը կոչուին դիմաւոր բայ: Անորոշ եղանակի բայերը կը կոչուին անդէմ բայ: (Անդէմ են բայի մը Աներեւոյթը (վազ-ել, խօս-իլ, կարդ-ալ), Ներկայ Ընդունելութիւնը (վազ-ող, խօս-ող, կարդ-աց-ող), Անցեալ Ընդունելութիւնը (վազ-ած, վազ-եր. խօս-ած, խօս-եր. կարդ-աց-ած, կարդ-աց-եր) եւ Ապառնի Ընդունելութիւնը (վազ-ելիք, վազ-ելու. խօս-ելիք, խօս-ելու. կարդ-ալիք, կարդ-ալու)):

85.- Նախադասութիւն կարելի է կազմել միայն դիմաւոր բայերով: Անդէմ բայով նախադասութիւն չի կազմուիր: Այսպէս. Հետեւեալ խօսքը կը բաղկանայ միայն երկու նախադասութեանք, որովհետեւ միայն երկու հատ դիմաւոր բայ կայ հոն — «չտաւալ» եւ «խոստացաւ». «գնած» եւ «պատմել» բայերը անդէմ են եւ չեն հաշուուիր:

((«Իր նոր «գնած» գիրքը չտաւալ ինձի»), (բայց խոստացաւ անոր բովանդակութիւնը «պատմել»)):

86.- Նախադասութիւնը միտք մը, լմաստ մը արտայայտող բառերու խումբ մըն է, ուր կայ մէկ դիմաւոր բայ:

87.- Բայը «Ա.» բառն է նախադասութեան մը:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.- Ի՞նչ է բայը, նախադասութիւնը: Որո՞նք են դիմաւոր եւ անդէմ բայերը:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

66.- Ըսէ՛ք թէ հետեւեալ բառերէն որո՞նք բայ են:

Կտրեցի, կտոր, խմիչք, խմել, կը մտէր, կոշկակար, չկարեց, պիտի մեռնէր, մահ, գրպանեցիմք, գրպան, գանձ, գանձիչ, բող գանձեն, կարդա՛, կարդացեր է, դեղին, կը դեղնի, մաշիլ, գծել, գիծ, պտայտ, մի՛ պտուտիլ, չորութիւն, չոր, չի չորնար, եղաւ, ըլլամ, լուացք, լուացարարուի, պիտի խնդրեն, ժպտեցէ՛ք, ժպիտ, խնդրամք, խնդրեր էի, հաշտութիւն:

67.- Խոնարհեցէ՛ք գրել, ժպտիլ, լողալ եւ հասկնալ բայերուն Անորոշ եղանակը:

68.- Ըսէ՛ք թէ հետեւեալներէն որո՞նք դիմաւոր բայ են եւ որո՞նք՝ անդէմ:

Կը կարդար, կարդալ, կարդացողներ, կարդացած, վախցող, երգել, երգելով, երգած, խնդալէ, կ'երգէք, ընտրեցի, յոգնեցան, յոգներ են, չյոգնեցայ, է, հասկցող, ըլլալդ, պիտի հասնէր, եղածը, ըլլալիք, հագնելու, յոգնած, բող հագնին, գնա, չի քաղեր, եղեր էք, ըլլալու, ուտող, կատրած:

69.- Ըսէ՛ք թէ հետեւեալներէն որո՞նք նախադասութիւն են եւ որո՞նք չեն: Չեղողներուն վրայ աւելցուցէք դիմաւոր բայ մը եւ դանձք վերածեցէ՛ք նախադասութիւններու:

Մենք ալ մեծարժէք գրողներ: Նամակը հասաւ: Անոնք տար տարիէ ի վեր այս նոյն շէնքին մէջ: Լո՛ւ՛ դու: Ան իր եղբայրը եւ քոյրը շատ: Մայրս մինչեւ փողոց իջնելէ վերջ՝ ետ վեր ելլելով

տուն՝ իր հոն մոռցած պայուսակը: Մեր պարսեբերը պիտի վնասեմք շուտով: Իր գնդակը կորսնցուցեր վազգէնը: Եղբայրս ուսանող: Ես կարգալ, պարտիլ, խօսակցիլ: Սանիկը պարտեգը ծաղիկ քաղելու ատեն: Չվախցանք:

70.- Ընդգծեցէ՛ք հետեւեալ հատուածներուն անդէ՛մ բայերը մէկ գիծով, զիմաւոր բայերը՝ երկու գիծով, ապա գատեցէ՛ք նախադասութիւնները:

«Երկար լուսթեմ մը ետք դարձեալ կը սկսիմ գրելու. եթէ գրելը չ'ամոքեր իմ ցաւս, գոնէ կ'օրօրէ գայն, եւ արդէն սիրտս ամէնէն աւելի ննչող բանը անգործութիւնն է:

Արդեօք բարեգուշակ նշան մը չէ՞ ցաւս ամոքելու մասին խորհիլս... Յուսա՞մ արդեօք թէ պիտի գայ օր մը որ իմ փոքորկած հոգիս խաղաղի՞...» (Չ. Եսայեան):

«Երբ օրերը երկարիլ սկսին, օրավարձով աշխատող գրաշարին սիրտը կը սկսի դողալ. պիտի մնա՞յ, պիտի մամբուի՞: Ամէն տպարան մէկ-երկու բանուոր կ'արձակէ գործէ՛ աշխատանքը մնացողներուն վրայ բեռնցնելով՝ առանց վարձքը աւելցնելու...» (Ա. Արփիարեան):

«Նպարավաճառը թէեւ ոտամաուր չէր հասկնար, բայց քառասուն փարան արդէն տեսած ըլլալով եւ «հարիւր տրամ պանիր» բառերն ալ լսելով հասկցաւ որ Սիմոնիկ հարիւր տրամ պանիր կ'ուզէր գնել քառասուն փարայով, եւ որովհետեւ այդ գինով չէր կըրնար տալ՝ անոր ըսաւ որ հարիւր տրամ պանիրը վաքսուն փարա կ'ընէ: Նպարավաճառին այս պատասխանին վրայ Սիմոնիկ նորէն մտախօսեցաւ սկսաւ. ըսաւ թէ հայ ազգին չյառաջդիմելուն պատճառներէն մէկն ալ ազգին աղէկութեան համար խօսողները մեր մտիկ չընելն էր. եւ անհամաձայնութեան շատ վնասակար ըլլալը բացատրելէ ետք առաջարկեց նպարավաճառին, որ իր խօսքը մտիկ ընէ եւ պանիրը իր ուզած գինովը տայ ի սէր ազգային յառաջդիմութեան»: (Յ. Պարոնեան):

ԴԱՍ 2

Տ Է Ր - Բ Ա Յ Ի

88.- Բայը գործողութիւն մը (բան մը բնել) կամ վիճակ մը (բան մը ըլլալ) ցոյց կու տայ: Ա՛յն, որ բային ցոյց տուած գործը կը կատարէ, կամ ցոյց տուած վիճակին կ'ենթարկուի՝ կը կոչուի տէր-բայի: Այսպէս. «Եղբայրս ջուր կը խմէր» նախադասութեան բայն է «կը խմէր» բառը, տէր-բային է «եղբայրս» բառը, որովհետեւ եղբայրս էր որ կը կատարէր «խմելու» գործողութիւնը, եղբայրս էր խմողը:

«Եղբորդ կօշիկները մաշեցան» նախադասութեան բայն է «մաշեցան» բառը, տէր-բային է «կօշիկները» բառը, որովհետեւ «մաշեցան» բային ցոյց տուած վիճակին ենթարկուողները «կօշիկներն» են:

89.- Տէր-բային կ'ըսենք նաեւ ենթակայ:

90.- Բայի մը վրայ կ'ընենք «ո՛վ» կամ «որո՛նք» հարցումը՝ գտնելու համար տէր-բային՝ երբ տէր-բային անձ է կամ կենդանի: Երբ տէր-բային անձ կամ կենդանի չէ՛ կը գործածենք «ի՛նչ բան» կամ «ի՛նչ բաներ» հարցումը: Այսպէս.

«Ո՛վ» քննարկ — եղբայրս (անձ). «Որո՛նք քննարկ — եղբայրներս.

«Ո՛վ» երդեց — սոխակը (կենդանի). «Որո՛նք» երդեցին — սոխակները.

«Ի՛նչ բան» կոտորեցաւ — գամը (ստորակայ). «Ի՛նչ բաներ» կոտորեցան — գամերը:

ԾԱՆՕԹ.- Երբ բայ մը առաջին կամ երկրորդ դէմք է՝ այդ բայը մեր միտքին մէջ կը վերածենք երրորդ դէմքի եւ յետո՛յ կ'ընենք հարցումը՝ գտնելու համար տէր-բային: Այսպէս. «Ես դաս սորվեցայ» նախադասութեան տէր-բային գտնելու համար «սորվեցայ» բայը, որ առաջին դէմք է, կը վերածենք երրորդ դէմքի, կ'ըլլայ - սորվեցաւ. ապա կը հարցնենք՝ «ո՛վ սորվեցաւ», ու կը գտնենք թէ «ե՛ս» եմ սորվողը: «Ես»ը տէր-բային է «սորվեցայ» բային:

Երբ Հրամայական է բայը, գայն կը վերածենք Բղձականի՝ հարցումը բնելէ առաջ: Այսպէս. «Գրէ՛», - ո՛վ «Թող գրէ», - «գո՛ւն»:

91.- Կ'ըսենք թէ բայ մը երեք դէմք ունի: Առաջին դէմք է ա'յն, որ կը խօսի (ես), երկրորդ դէմք է ա'յն, որուն կ'ուզուի խօսքը (դուն), երրորդ դէմք է ա'յն, որուն մասին կը խօսուի (ինք կամ ան): Այսպէս. երբ ըսեմք «գրեցի»՝ կը հասկցուի «ես գրեցի», — «Գրեցի» առաջին դէմք է: Երբ ըսեմք «գրեցիր»՝ կը հասկցուի «դուն գրեցիր», — «Գրեցիր» երկրորդ դէմք է: Երբ ըսեմք «գրեց»՝ կը հասկցուի «ինք կամ ան գրեց», — «Գրեց» երրորդ դէմք է:

«Ես»ին յոգնակին է «մենք», «դուն»ին՝ «դուք», «ինք»ին՝ «իրենք», «ան»ին՝ «անոնք»:

92.- Ես-մենք, դուն-դուք, ինք-իրենք, ան-անոնք անձնակամ դերանուններ են:

93.- Բառի մը քիւր՝ իր եզակի կամ յոգնակի ըլլալն է:

94.- Եզակի բայի մը տէր-բային կ'ըլլայ եզակի, յոգնակի բայի մը տէր-բային կ'ըլլայ յոգնակի:

95.- Բայ մը կրնայ մէկէ աւելի տէր-բայի ունենալ: Այսպէս. «Հայրս, եղբայրս եւ Գուրգէնը զիւզ գացին» նախադասութեան բայը՝ «գացին»ը ունի երեք տէր-բայի — հայրս, եղբայրս, Գուրգէնը:

Մէկէ աւելի եզակի տէր-բայիներ ունեցող բայ մը կը գրուի յոգնակի. «Գացին» բայը յոգնակի է:

96.- Տէր-բային կապուած կ'ըլլայ բային: Տէր-բային «Բ.» բառն է նախադասութեան: Բային տակ կը դնենք «1», տէր-բայիին՝ «2»: Այսպէս.

Ընկերներս նամակ չգրեցին ինծի անցեալ ամիս:

2 1
Այսօր պիտի մեկնին անոնք:

97.- Եթէ բայ մը մէկէ աւելի տէր-բայի ունենայ՝ բոլոր տէր-բայիներուն ալ տակ «2» կը դնենք: Այսպէս.

Արմէնն ու Սուրէնը աշխատասէր են:

2 2 1

98.- Կան նախադասութիւններ, որոնց տէր-բային գրուած է ըլլար, բայց մենք բային իմաստէն կը հասկնանք նաեւ տէր-բային: Այսպէս. երբ ըսենք — «Տետրակ մը գնեց ինծի համար», կը հասկնանք — «(Ան) տետրակ մը գնեց ինծի համար»:

99.- Չգրուող բայց հասկցուող տէր-բայիին կ'ըսենք լռելի-եայն տէր-բայի: (Անձնական գերանուններն են որ կ'ըլլան լռելեայն տէր-բայի): Լռելեայն տէր-բային կ'ուսկցինք նախադասութեան սկիզբը՝ փակագիծի մէջ: Այսպէս. Առնենք այս նախադասութիւնը՝ «Ամիջապէս վազելով տուն մեկնեցան». կ'ըլլայ՝ (Անոնք) Անմիջապէս վազելով տուն մեկնեցան:

Բայց եթէ նախադասութիւնը արդէն պարունակած ըլլար «անոնք» բառը եւ սկիզբէն եղած ըլլար «Անոնք անմիջապէս վազելով տուն մեկնեցան», «անոնք»ը կ'ըլլար պարզապէս տէր-բայի (եւ ո'չ թէ լռելեայն տէր-բայի):

100.- Երբ նոյն տէր-բային ունեցող նախադասութիւններ իրարու յաջորդեն, բացի առաջինէն միւսներուն տէր-բայիները սովորաբար լռելեայն կ'ըլլան: Այսպէս. «Կատուն կտորեց պատուհանին ապակին», «եբաւ պատշգամ» եւ «ցատկեց փողոց» խօսքին երեք նախադասութիւններուն ալ տէր-բային «կատուն» է, սակայն զըրուած է միայն առաջինին մէջ. երկրորդ եւ երրորդ նախադասութիւններուն մէջ «կատուն» բառին տեղ կայ «ան» գերանունը, որ լռելեայն տէր-բային է անոնց:

101.- Անդէմ՝ բայերը տէր-բայի, դէմք, քիւ չեն ունենար:

ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐ.- Եզակի = եզ., յոգնակի = յոգ., տէր-բայի = տր., Առաջին = Ա., երկրորդ = Բ., երրորդ = Գ.:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.- Ինչպէ՞ս կը գտնենք տէր-բային: Ինչ է դէմքը, թիւը: Որո՞ւն կապուած կ'ըլլայ տէր-բային: Անդէմ՝ բայերը ինչ չեն ունենար: Որո՞նք են անձնական գերանունները: Ինչ է տարբերութիւնը տէր-բայիին եւ լռելեայն տէր-բայիին: Ո՞ր բառերը կ'ըլլան լռելեայն տէր-բայի:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

71.- Մէկական Անձնական Գերանուն տէր-բայի տուէ՛ք հետեւեալ բայերուն: Օրինակ.- «Մտան» — անոնք մտան:

Մտան, կը սահիմ, խնդա՛, կը մաշի, պիտի խնդրեմք, կը սրբեն, կ'երթայ, եփեցի, բոզ չորմայ, պիտի չիյնամք, խնամեք են, կտորեցան, կը լիզէք, կարգաց, չուզեցինք, չձակեցան, կրուած էին. հասէք, չես ցամաքեք, վախցար, բուսար, չի ծոխր,

եղեր էր, չէին հաւատար, պոռացիք, կը գանգատէի, կարօտցեր էի, չանօթեցանք, կը փայլէր, չէի, քանդուեցան, է, հասէ՛ք, քող գնէիք:

72.- Ըսէ՛ք զէ՛մքն ու թիւը նախորդ հրահանդին բայերուն: Օրինակ.- «Մտան», — Գ. զէ՛մք, յոգնակի:

73.- Գտէ՛ք բայերն ու տէր-բայիները հետեւեալ նախադասութիւններուն: Ուշադիր եզէ՛ք տէր-բայիներուն:

Տղաքը բնացեր էին ծառերուն տակ: Արեւը կեանքի աղբիւր է: Մեր տունէն շուկան կ'երեւի: Պարտէզ գացին Մարօն եւ Արուսը: Բոլոր ընկերներս ալ կարդացեր են Գրիգոր Զոհրապի «Ճիտին Պարտէր»: Առանց գիրքի չի կրնար ապրիլ հայրս: Աւետիսը տեսա՞ք: Սիպիլը մեր լաւագոյն կին գրողներէն մէկն է: Այդ լուրը ի՛նք տուաւ ինձի: Ան, դուն եւ Արտաւազը համաձայնեցէ՛ք: Աս ծուռ չէ: Իմս կորսուեցաւ: Պիտի խնդային բոլորն ալ: Զուրին մէջ ալ օդ կայ: Երէկ, իրենք, մենք եւ մեր դրացիները պտոյտի գացինք: Պիտի քարգմանէ՞ք այս գիրքը: Շատ ուրախացանք ձեզ տեսնելով: Չտառապեցաւ: Կարպիսին գնդակները կորսուեր են:

74.- Հետեւեալ բառերը դործածեցէ՛ք այնպէս մը, որ տէր-բայի ըլլան մէկական նախադասութեան մէջ:

Բծիշկ, լուցիկ, նախագահ, բնութիւն, նապաստակ, ընկեր, զարմիկ, գետ, Գոհարիկ:

75.- Գծիկներուն տեղ զըէ՛ք յարմար բայեր եւ ըսէ՛ք թէ ո՞րո՞նք են այդ բայերուն տէր-բայիները:

Ընկերներս մեզի — : Քաջն վարդան — հաւատքի եւ ազատութեան համար: Հայը գործունեայ եւ արուեստասէր — : Առանց աշխատանքի — մնայուն յաջողութիւն: Դուք — գիրն ու գրականութիւնը: Կովիտաս վարդապետ — հայ նոր երաժշտութիւնը: Արեւը կեանք — ամենուրեք: Գարունը ծառերուն — տերեւ: Նարեկացին հեղինակն — «Նարեկ» հոչակաւոր ազօրագիրքին:

76.- Հետեւեալ բայերով շինեցէ՛ք երկուքական տէր-բայի ունեցող նախադասութիւններ:

Օրինակ.- Սիրել. «Եղբայրս եւ ես կը սիրենք մեր մայրը»:

Սիրել, վիճիլ, հասնիլ, շահիլ. խնդացնել, մոռնալ, նուիրել:

77.- Ընդգծեցէ՛ք հետեւեալ զրութեան զիմաւոր բայերը երկու զիծով, անդէմ բայերը՝ մէկ զիծով, զատեցէ՛ք նախադասութիւնները եւ զտէ՛ք զիմաւոր բայերուն տէր-բայիները:

«Երեք օրէ ի վեր Սոփիկ Հանըմ իր տղուն անկողինին քով կը հսկէ. երիտասարդը պտոյտի մը ընթացքին պաղ առած է եւ հիմա ծանր քոֆատապէ կը տառապի: Բծիշկները կու գան, կ'երթան գլուխնին երեքցնելով...»

Հիւանդին քով կը ծածկէ իր տագնապները, որոնք ա՛լ յայտնօրէն կը գծագրուին իր դէմքին վրայ. մազերը կը ներմկին, եւ Սոփիկ Հանըմ առանց ուզելու, առանց գիտնալու սուեր հագնիլ կը սկսի:

Յետոյ գաւկին վիճակին ծանրանալուն հետ, փոխն ի փոխ Աստուծոյ կամ մարդոց ապաւինելու վարանումներ կ'ունենայ: Կը զգայ որ Աստուած կ'ուշանայ, եւ նոյնատեւ կը գոջայ այսպէս խորհելով մեղք գործելուն համար:

Մահը, իր միակ ապաւէնը եղողը այս գառնակն ալ պիտի խլէ արդեօք...» (Գ. Զոհրապ):

Կարծելով որ իրենց կրնանք երթալ երէկ՝ որոշեր է տունէն դուրս չելլել ամբողջ օրը, եւ իրապէս ալ տունը բանտարկուած մնացեր է մինչեւ իրիկուն՝ սպասելով մեր գալուն: Եւ երբ իրեն հարցուցի թէ ինչո՞ւ խորհեր է թէ կրնայինք իրենց երթալ՝ ըսաւ ժպտելով. «Թերեւս որովհետեւ այդպէ՛ս կը փափաքէի. մարդ երբեմն իր փափաքածն ու երազածը իրականութեան հետ կը շփոթէ... Ե՛ս ալ ունիմ այդ իրաւունքը եւ կ'ուզեմ օգտուիլ ատկէ...»:

ԴԱՍ 3

Ս Ե Ռ Ի Խ Ն Դ Ի Բ

102.- Եթէ նախադասութեան մը բայը (թիւ 1-ը) եւ տէր-բային (թիւ 2-ը) միասին կարգանք եւ ընենք «ի՛նչ» կամ «ինչե՛ր» հարցումը՝ կը գտնենք բառ մը, որ կը կոչուի սեռի խնդիր: Սեռի խնդիրը թիւ 3 կ'ըլլայ: Այսպէս. Եթէ անենք «ժիրայր խնձոր կ'ուտէր» նախադասութեան բայը եւ տէր-բային միասին, եւ հարցնենք — ժիրայր կ'ուտէր ի՛նչ, — կը գտնենք «խնձոր» բառը: «խնձոր» բառը սեռի խնդիր է:

103.- Սեռի խնդիրը այն բառն է, որուն վրայ կը կատարէ տէր-բային՝ բային ցոյց տուած գործը: Սեռի խնդիրը կը գտնենք «ի՛նչ» կամ «ինչե՛ր» հարցումով՝ եթէ անձ չէ. եթէ անձ է՝ կը գտնենք «գո՛ւլ» կամ «գորո՛նք» հարցումով՝ միշտ տէր-բային գրտնելէ ետք:

104.- Սեռի խնդիրը նախադասութեան «Գ.» բառն է: Սեռի խնդիրն ալ, ինչպէս տէր-բային, կապուած կ'ըլլայ բային:

Պատկերով ներկայացնենք այս նախադասութիւնները.

Ա.- Աշխէն հագուստ կը կարէ:


2 3 1

Բ.- Սոնան եւ Աշխէնը հագուստ կը կարեն:

2 2 3 1

Գ.- Աշխէն հագուստ եւ գլխարկ կը կարէ:

2 3 3 1



105.- Ամէն նախադասութիւն անպատճառ սեռի խնդիր չունենար: Կան նախադասութիւններ, որոնք սեռի խնդիր չունին: Այսպէս. Եթէ անենք «Երեխան այսօր չլացաւ» նախադասութեան բայը եւ տէր-բային միասին, եւ ընենք «ի՛նչ» հարցումը՝ պատասխան չենք ստանար. «Երեխան չլացաւ» ի՛նչ... (Այս հարցումին պատասխանող բառ չունի նախադասութիւնը, ուրեմն՝ սեռի խնդիր չունի):

106.- Սեռի խնդիր պարունակող նախադասութեան մը բայը կը կոչուի ներգործական բայ:


Ներգործական է այն բայը, որուն տէր-բային ուրիշի մը վրայ կը կատարէ բային գործողութիւնը: Այդ ուրիշը սեռի խնդիր է:

107.- Պատկերը զձեռք հետեւեալ նախադասութիւններուն, որոնք սեռի խնդիր չունին:

Ա.- Թռչունները փախան: Բ.- Թռչունները եւ գազանները

2 1 2 2

փախան:



108.- Երբ բառ մը տէր-բայի (թիւ 2) է՝ կ'ըսենք թէ ուղղական հոլով է, երբ սեռի խնդիր (թիւ 3) է՝ կ'ըսենք թէ հայցական հոլով է:

109.- Քննենք հետեւեալ երկու նախադասութիւնները:

Ա.- Շունը ոտքս իսածաւ:

2 3 1

Բ.- Սոնիկ ծեծեց շունը:

2 1 3

Կը տեսնենք թէ «չուն» բառը առաջին նախադասութեան մէջ տէր-բայի է, ուրեմն ուղղական է, երկրորդին մէջ սեռի խնդիր է, ուրեմն հայցական է: (Բառի մը հոլովը կախում ունի իր պաշտօնէն):

ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐ.- Լուեհայն = Լ., Սեռի խնդիր = Ս., Ներգործական = Ներգ.:

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ.- Ինչպէ՛ս կը դտնենք սեռի խնդիրը: Ո՛ր հարցումներով կը դտնենք սեռի խնդիրը՝ Եթէ անձ է: Որո՛ւն կապուած կ'ըլլայ սեռի խնդիրը: Ի՛նչ է ներգործական բայը:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

78.- Մէկական սեռի խնդիր աւելցուցէ՛ք կախման կէտերուն տեղ:

Արամ ծալեց ...: Ժիրայր կը փնտռէր ... եւ ...: Այս կատուն պիտի չուտէ այդ ...: ... շատ կը սիրեմ ես: Հայրը պատժեց իր ... եւ ...: Ծաղիկները ... ունին: ... թող խմեն: Ինչու ... ծախսեցիր: Տպագրիչը տպեր է ... մը եւ ... մը: Ջուրն տեսեր է ..., ... եւ ...: ... վառէ՛, Գոհարիկ: Պարտէզին մէջ տղաքը ... կը ֆաղէին: Մայրս արդուկեր էր ...: Ուսուցիչը ... կը բացատրէր: Որքան կարօտցած էի ...:

79.- Գտէ՛ք հետեւեալ նախադասութիւններուն բայը, տէր-բային եւ սեռի խնդիրը՝ ղնելով թիւերը:

Յանայտրդները դրամը վնարեցին: Ինքնաշարժը պիտի նորոգէ՞ր: Արծիւը քանն չի բռներ: Ձկնորսը ձուկ կ'որսար: Ծնիկն ու կատուն միւր կերան: Ուսուցիչը գովեց զինք եւ զիս: Գաւաթը լուացի: Խմորն ու մածուկը թափեցինք: Չուրե՛ց օշարակը: Ես՝ ֆեզ, զինք եւ կարպիսը տեսայ: Միքիանիկը, Սեդիկը եւ Յասմիկը օշարակ եւ թան խմեցին: Մրցանակը պիտի շահիմ: Հիւրերն ու տանտէրը անուշեղէն եւ պտուղ կ'ուտէին: Ձեռքերս եւ դէմքս օճառեցի: Ամպերը կը ծածկէին լեռներն ու հորիզոնը: Անոնք չհագա՞ն գուլպայ: Իրենք՝ ֆեզ, մայրդ, Արփիկն ու զիս չլիշեցին: Մի՛ պատուէ տետրակներն ու գիրքերը: Բա՛ց ամերդ: Վարուժանը, Մեծարեանը, Դուրեանը վէպ չեն գրած:

80.- Հետեւեալ բայերէն ամէն մէկուն տուէ՛ք տէր-բայի մը եւ սեռի խնդիր մը, եւ կազմեցէ՛ք նախադասութիւն մը:

Օրինակ.- Կանչեց՝ — Ուսուցիչը զիս կանչեց:

2 3 1

Կանչեց, պիտի օրհնէր, կազմեր է, կը լուայիմք, նետեցիք, ունէին. մի ծալեր, չեն լսեր, քոյ չուտեն, կ'աւարտէր:

81.- Գտէ՛ք թէ հետեւեալ նախադասութիւններուն բայերէն որո՛նք ներգործական են:

Այդ տղան գիրքեր գնեց: Այս տուփը երէկ կուտրեցաւ: Սենեակս միշտ լուսաւորուած է: Մշակը դեռ չհնձեց ցորենը: Երաժշտութիւնը շատ կը սիրենք մենք: Գարունը խանդավառութիւն կը բերէ մարդոց: Այդ միւս ծաղիկները սենեակին մէջ չեն ապրիր: Երկար ֆնացայ երէկ: Տուն քոյ երթան վագելով: Մեր շուները միշտ կը կուրսին: Քոյրս ազնիւ հոգի մը ունի: Զարմիկներս մեզի եկած էին: Պերճուհին եւ Մարին մեծ բառարան մը նուիրեցին ինձի: Զիրենք սենեակ կանչէ: Լուսինին շնիկը զիս պիտի խածնէր:

82.- Հետեւեալ բառերը սեռի խնդիրը ըրէ՛ք մէկական նախադասութեան մէջ:

Պայուսակ, մկրատ, դրամ, դեղ, հայրենիք, ակնոց:

83.- Հետեւեալ բառերը զործածեցէ՛ք երկուքական նախադասութեան մէջ, այնպէս մը, որ մէյ մը տէր-բայի ըլլան եւ մէյ մը՝ սեռի խնդիր: Օրինակ.-

«Քոյր» — «Քոյրս զսո սորվեցաւ». (Քոյրս = տէր-բայի).

«Ես կը սիրեմ քոյրս». («Քոյրս» = սեռի խնդիր):

Քոյր, պահակ, ընկեր, զինուորներ, գրիչ, յոյս:

84.- Հետեւեալ բայերով երկուքական սեռի խնդիր ունեցող նախադասութիւններ կազմեցէ՛ք:

Նուիրել, դրկել, կարդալ, ծախել, կարել:

85.- Ըսէ՛ք թէ հետեւեալ բայերէն որո՛նք ներգործական են՝ ձեր միտքին մէջ անոնցմով մէկական նախադասութիւն կազմելէ ետք:

Զափել, նիքարնալ, կարօտնալ, օրհնել, հալիլ, հագալ, տեսնել, ստել, հրել, վախնալ, առողջանալ, ներկել:

ԴԱՍ 4

Է Ա Վ Ա Ն Բ Ա Յ

110 - «ԸԼԼԸԸ» բայը կը կոչուի Էական բայ :

Ահա էԱՎԱՆ («ԸԼԼԱԱ») բային խոնարհումը .

Ա. - ՍԱՀՄԱՆԱՎԱՆ ԵՂԱՆԱԿ

«ՆԵՐԿԱՅ» ժամանակ

Ա. Ձե՛ր

- (Ես) եմ
- (դուն) ես
- (ան) է
- (մենք) ենք
- (դուք) էք
- (անոնք) են

Բ. Ձե՛ր

- (Ես) կ'ըլլամ
- (դուն) կ'ըլլաս
- (ան) կ'ըլլայ
- (մենք) կ'ըլլանք
- (դուք) կ'ըլլաք
- (անոնք) կ'ըլլան

«Անկատար ԱՆՅԵԱԼ» ժամանակ

Ա. Ձե՛ր

- (Ես) էի
- (դուն) էիր
- (ան) էր
- (մենք) էինք
- (դուք) էիք
- (անոնք) էին

Բ. Ձե՛ր

- (Ես) կ'ըլլայի
- (դուն) կ'ըլլայիր
- (ան) կ'ըլլար
- (մենք) կ'ըլլայինք
- (դուք) կ'ըլլայիք
- (անոնք) կ'ըլլային

«Կատարեալ ԱՆՅԵԱԼ» ժամանակ

- (Ես) եղայ
- (դուն) եղար
- (ան) եղաւ

- (Մենք) եղանք
- (դուք) եղաք
- (անոնք) եղան

«Յարակատար» ժամանակ

- (Ես) եղած եմ
- (դուն) եղած ես
- (ան) եղած է
- (մենք) եղած ենք
- (դուք) եղած էք
- (անոնք) եղած են

«Անորոշ Յարակատար» ժամանակ

- (Ես) եղեր եմ
- (դուն) եղեր ես
- (ան) եղեր է
- (մենք) եղեր ենք
- (դուք) եղեր էք
- (անոնք) եղեր են

«Գերակատար» ժամանակ

- (Ես) եղած էի
- (դուն) եղած էիր
- (ան) եղած էր
- (մենք) եղած էինք
- (դուք) եղած էիք
- (անոնք) եղած էին

«Անորոշ Գերակատար» ժամանակ

- (Ես) եղեր էի
- (դուն) եղեր էիր
- (ան) եղեր էր
- (մենք) եղեր էինք
- (դուք) եղեր էիք
- (անոնք) եղեր էին

«Քացորակ Ապտոնի» ժամանակ

- (Ես) պիտի ըլլամ
- (դուն) պիտի ըլլաս
- (ան) պիտի ըլլայ
- (մենք) պիտի ըլլանք
- (դուք) պիտի ըլլաք
- (անոնք) պիտի ըլլան

«Անկատար Ապտոնի» ժամանակ

- (Ես) պիտի ըլլայի
- (դուն) պիտի ըլլայիր
- (ան) պիտի ըլլար
- (մենք) պիտի ըլլայինք
- (դուք) պիտի ըլլայիք
- (անոնք) պիտի ըլլային

Բ. - ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

«Ներկայ» ժամանակ

(Դուն) եղի՛ր

(Դուք) եղէ՛ք

Գ. - ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

«Ներկայ» ժամանակ

- (Ես) ըլլամ
- (դուն) ըլլաս
- (ան) ըլլայ
- (մենք) ըլլանք
- (դուք) ըլլաք
- (անոնք) ըլլան

«Անկատար» ժամանակ

- (Ես) ըլլայի
- (դուն) ըլլայիր
- (ան) ըլլար
- (մենք) ըլլայինք
- (դուք) ըլլայիք
- (անոնք) ըլլային

Գ. - ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

«Ներկայ» ժամանակ

- (Ես) քոզ քլլամ
- (դուն) քոզ քլլաս
- (ան) քոզ քլլայ
- (մենք) քոզ քլլանք
- (դուք) քոզ քլլաք
- (անոնք) քոզ քլլանք

«Անկատար» ժամանակ

- (Ես) քոզ քլլայի
- (դուն) քոզ քլլայիր
- (ան) քոզ քլլար
- (մենք) քոզ քլլայինք
- (դուք) քոզ քլլայիք
- (անոնք) քոզ քլլայինք

Ե. - ԱՆՈՐՈՇ ԵՂԱՆԱԿ

«Աներեւոյք» -

Ըլլալ

«Ներկայ Ընդունելութիւն» - Եղող

«Անցեալ Ընդունելութիւն» - Եղած եւ Եղեր

«Ապառնի Ընդունելութիւն» - Ըլլալիք եւ Ըլլալու

111.- «Ըլլալ» բայը կը կոչուի օժանդակ բայ, երբ ծառայէ կազմելու բայերու Բաղադրեալ Ժամանակները (Յարակատարը, Անորոշ Յարակատարը, Գերակատարը, Անորոշ Գերակատարը) : Օրինակ - «Վաղած եմ», «գրեր էի», եւայլն :

Պէտք է մոռնալ թէ «վաղած եմ», «գրեր էի» մէկական բայ են, հակառակ որ երկուքական մաս ունին :

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.- Քանի՜ եղանակ կայ : Իւրաքանչիւր եղանակ ո՛ր ժամանակները կը սարունակէ : Ոոնարհեցէ՛ք էական բայը :

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

ՏԵ.- Ըսէ՛ք հետեւեալներուն եղանակը, ժամանակը, դէմքը, եւ թիւը (Անորոշ եղանակի բայերը թիւ եւ դէմք չեն ունենար) :

Եղաւ, էինք, քոզ քլլամ, քլլալու, եղեր էր, քլլալ, քլլանք, կ'քլլանք, կ'քլլայիր, քլլայիր, քոզ քլլանք, էք, եղած ես, եղանք, պիտի քլլար, կ'քլլանք, ենք, էիք, քլլալիք, կ'քլլաս, եմ, էիք, եղեր էիք, քլլայինք, եղող, է, եղած, պիտի չքլլայիք, քլլալ, չքլլալու, եղի՛ր, քոզ քլլաք, ես, եղեր, քլլայի, եղե՛ք, էր, եղած էին :

ԴԱՍ 5

ՍՏՈՐՈԳԵԼԻ ԵՒ ՍԵՌԻ ԽՆԴԻՐ

112.- Երբ նախադասութեան մը բայը էական քլլայ՝ թիւ 3-ը կը կոչուի ստորոգելի (եւ ոչ թէ «սեռի «խնդիր») :

113.- Քննենք հետեւեալ երկու նախադասութիւնները .

Եղբայրս «դերձակը» կանչեց : («Կանչեց»ը ներգործական է) :

2 3 1

Եղբայրս «դերձակ» եղաւ : («Եղաւ» բայը էական է) :

2 3 1

Առաջին նախադասութեան թիւ 3-ը՝ «դերձակը» սեռի խնդիր է, մինչ երկրորդ նախադասութեան թիւ 3-ը՝ «դերձակը», ստորոգելի է, որովհետեւ բայը էական է :

114.- Ուրեմն՝ թիւ 3-ը սեռի խնդիր կամ ստորոգելի է՝ նայած թէ բայը ներգործական է թէ էական :

115.- Երբ բառ մը ստորոգելի է՝ կ'ըսենք թէ ուղղական հոլով է, երբ սեռի խնդիր է՝ կ'ըսենք թէ հայցական հոլով է : (Վերի օրինակներուն մէջ՝ առաջին «դերձակը» հայցական է, երկրորդ «դերձակը»՝ ուղղական) :

116.- Ստորոգելին կապուած կ'ըլլայ տէր-բային : (Սեռի խնդիրը կապուած կ'ըլլայ բային) : էական բային տէր-բային կ'ըսենք ստորոգեալ .

117.- Ստորոգելին եւ տէր-բային կ'ըլլան ուղղական հոլով, սեռի խնդիրը՝ հայցական :

118.- Ամփոփենք սեռի խնդիրին եւ ստորոգելիին մասին մեր սորվածները .

| ՍԵՌԻ ԽՆԻԻՐ | Ս Տ Ո Ր Ո Գ Ե Լ Ի |
|---|--|
| 1.- Թիւ 3 է: | 1.- Թիւ 3 է: |
| 2.- Ներդրածական բային հետ կը դործածուի: | 2.- Կական բային հետ կը դործածուի: |
| 3.- Հայցական հոլով կ'ըլլայ: | 3.- Ուղղական հոլով կ'ըլլայ: |
| 4.- Կապուած կ'ըլլայ բային, թիւ 1-ին: | 4.- Կապուած կ'ըլլայ տէր-բային, թիւ 2-ին: |


119.- Հետեւեալ երկու նախադասութիւնները ներկայացնենք պատկերներով.

«Թռչունը կուտ կերաւ»

«Ան դերձակ չէր»

Ներգործական բայով
Նախադասութիւն

Կական բայով
Նախադասութիւն



ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐ.- Ստորոգելի = Ստորագ.:

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ.- Բաղդասեցէ՛ք սեռի խնդիրն ու ստորոգելին:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

87.- Ըսէ՛ք թէ շեղագիր բառերէն որո՛նք սեռի խնդիր են եւ որո՛նք՝ ստորոգելի:

Այս մարդը կօշկակար էր: Դուն կօշկակարը տեսա՞ր: Մեր դպրոցը նորոգեցինք: Այդ շէնքը դպրոց պիտի ըլլայ: Եղբայրս քիմիագէտ եղեր է: Կը գանչնամ այդ քիմիագէտը: «Ուղեւորին ժամանման սպասող հիւզն ըլլայի»: Պահակը հիւզ մը շինեց դաշտին եզրերը: Մարդ քող ըլլան: Մարդը չտեսա՞ր: Եղբայրս քա-

հանայ չեղաւ: Մեծ-հայրդ քահանայ եղա՞ծ է: Քահանայ մը տեսանք փողոցը: Հսկայ գրադարան մը շինեցին մեր տան դիմաց: Յամբիկը կանչեցէ՛ք: Ասիկա Յամբիկը չէ: Կը յիշե՞ս Յամբիկը: Կոկոնները ծաղիկ կ'ըլլան: Ծաղիկ քաղցեցինք: Ո՛ւր դիրք ծաղիկները: Այս միտը խորոված չ'ըլլար: Խորովածը չկերանք: Հացը մանրեցի: Գինին քացախ եղեր է: Քացախը լեցուցինք շիշին մէջ: Նախագահ կ'ըլլա՞ս: Նախագահը մեզի հրաւիրեցի: Ոստիկան էր անոր ընկերը: Ոստիկան քող ըլլար վարդգէսը: Կարճ մածուն չեղաւ: Մայրդ մածունը սառնարանէն հաներ է: Քոյրս իշխանուհի կամ թաղուհի պիտի ըլլայ: Մերոպն ու Ժիրայրը բարեկամներ են:

88.- Ըսէ՛ք թէ նախորդ հրահանգին շեղագիր բառերը որո՛նք կապուած են: (Եթէ սեռի խնդիր են՝ բային. եթէ ստորոգելի են՝ ստորոգելային, այսինքն՝ տէր-բային):

89.- Հետեւեալ բառերէն իւրաքանչիւրը դործածեցէ՛ք երկ-քական նախադասութեան մէջ, այնպէս մը որ առաջինին մէջ ըլլայ տէր-բայի, երկրորդին մէջ՝ սեռի խնդիր, երրորդին մէջ՝ ստորոգելի:

Արտո, ծաղիկ, հագուստ, եկեղեցի, Բնարիկ, երկրաչափ:

90.- Գտէ՛ք շեղագիր բառերուն պաշտօնը (տէր-բայի՞, սեռի խնդիր՞, ստորոգելի՞) եւ հոլովը: Ապա ըսէք թէ ո՛ր բայերը ներդրածական են եւ որոնք՝ կական:

Մեծ քոյրս չապիկներս արդուկեց: Մանուկները մտեցան: Մեր դրացին բժիշկ է: Չես գրած դասերդ: Մենք դուռը եւ պատուհանները կը գոցեցինք: Քացէ՛ք սնանկները: Հայրս բնաւ զինուոր չէ եղած: Վիրաւորներն ու հիւանդները չմեռան: Նամակը պիտի չուշացնեմք: Ան դաշտ կը տանէր իր ոչխարները: Գախարիկին գիրը գեղեցիկ չէ: Քե՞զ կը փնտռէին անոնք: Մօրաքրոջդ տղան եւ Սուրէնը դպրոց չգացին այսօր: Չինք, քեզ եւ իր փոքր քոյրը կը յիշեմ միշտ: Գնդակներս պատուհանէն փողոց ինկան: Ոսկոր չունի լեզուն: Այս կերպարը հազուստ կ'ըլլա՞յ:

ԴԱՍ 6

ԲԱՅ (ԱՐՄԱՏ, ՄԱՍՆԻԿ, ԽՈՆԱՐՀՈՒՄ)

120.- Բայ մը կը բաղկանայ երկու մասէ՝ արմատ եւ վերջաւորութիւն: Այսպէս. Գաղեւ=fաղ-եւ, նայել=նայ-ել, կարդալ=կարդ-ալ: «Գաղ», «նայ» եւ «կարդ» արմատներն են. «ել», «ել», եւ «ալ» վերջաւորութիւններն են («մասնիկ»ները):

121.- Այն բոլոր բայերը, որոնք «ել» մասնիկը ունին՝ կը կոչուին Առաջին Լծորդութեան բայեր (քալ-ել). «ել» մասնիկը ունեցողները կը կոչուին Երկրորդ Լծորդութեան բայեր (ժպտ-ել). «ալ» մասնիկը ունեցողները կը կոչուին Երրորդ Լծորդութեան բայեր (կարդ-ալ):(*)

122.- Արմատ (կամ բայարմատ) կը կոչուի այն բառը, որուն վրայ մասնիկ աւելցնելով բայ մը կազմած ենք: Այսպէս. «Մար-ել», «Քափ-ել», «կարդ-ալ» բայերուն մէջ «մար», «թափ», «կարդ» բայարմատներ են:

123.- Պօսքի մէջ, իմաստին համաձայն, բայերուն մասնիկները զանազան ձեւեր կ'առնեն, կը փոխուին: Այսպէս. «Գալել» կրնայ ըլլալ՝ քալ-եմ, քալ-եցի, քալ-է՛, եւայլն:

Բայերուն մասնիկներուն այսպէս փոխուելը կը կոչուի խոնարհում:

124.- Պոնորհումի ատեն բային արմատը յաճախ նոյնը կը մնայ եւ մասնիկն է որ փոփոխութիւն կը կրէ:

Այսպէս.- Գալ-եցի, քալ-եցիր, քալ-եց, եւայլն:

125.- Երբ բայ մը ցոյց կու տայ հիմա կատարուող բան մը՝ կ'ըսենք թէ այդ բայը ներկայ ժամանակ է. Այսպէս. Կը վագեմ:

*) Կան «ուլ» մասնիկով վերջացող կարգ մը բայեր.- գրօնուլ, ընթեռնուլ, հեղուլ, քաղուլ, գեղուլ, եւայլն, որոնք կը կազմեն Չորրորդ Լծորդութիւնը:

Երբ ցոյց կու տայ նախապէս կատարուած բան մը՝ կ'ըսենք թէ Անցեալ ժամանակ է. Այսպէս. Կը վագեի, վագեցի, վագեր եմ, վագած էի: Երբ ցոյց կու տայ յետոյ կատարուելիք բան մը՝ կ'ըսենք թէ Ապառնի ժամանակ է. Այսպէս. Պիտի վագեմ, պիտի վագեի:

126.- Բայի մը խոնարհումը ունի հինգ եղանակ, - Սահմանական, Հրամայական, Ստորադասական, Ընդական, Անորոշ: Իւրաքանչիւր եղանակ կը սրբունակէ ժամանակներ:

127.- «Վագել» բայը տիպարն է Ա. Լծորդութեան բայերուն, «Պօսել»ը՝ Բ. Լծորդութեան, «Կարդալ»ը՝ Գ.:

128.- Այն բայերը, որոնք կը խոնարհուին ճիշդ իրենց տիպարին պէս՝ կը կոչուին կանոնաւոր բայեր:

ԿԱՆՈՆԱԻՈՐ ԲԱՅԵՐՈՒ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ

(ՀԱՍՏԱՏԱՆԱԿԱՆ)

Ա. Լծորդութիւն

Բ. Լծորդութիւն

Գ. Լծորդութիւն

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| ՆԵՐԿԱՅ | ՆԵՐԿԱՅ | ՆԵՐԿԱՅ |
|----------------|----------------|----------------|
| Կը վագ-եմ | Կը խօս-իմ | Կը կարդ-ամ |
| Կը վագ-ես | Կը խօս-իս | Կը կարդ-աս |
| Կը վագ-է | Կը խօս-ի | Կը կարդ-այ |
| Կը վագ-ենք | Կը խօս-ինք | Կը կարդ-անք |
| Կը վագ-էք | Կը խօս-իք | Կը կարդ-աք |
| Կը վագ-են | Կը խօս-ին | Կը կարդ-ան |
| ԱՆՑԵԱԼ Անկատար | ԱՆՑԵԱԼ Անկատար | ԱՆՑԵԱԼ Անկատար |
| Կը վագ-էի | Կը խօս-էի | Կը կարդ-այի |
| Կը վագ-էիր | Կը խօս-էիր | Կը կարդ-այիր |
| Կը վագ-էր | Կը խօս-էր | Կը կարդ-ար |
| Կը վագ-էինք | Կը խօս-էինք | Կը կարդ-այինք |
| Կը վագ-էիք | Կը խօս-էիք | Կը կարդ-այիք |
| Կը վագ-էին | Կը խօս-էին | Կը կարդ-ային |

| | | |
|-----------------|-----------------|-----------------|
| Անցեալ կատարեալ | Անցեալ կատարեալ | Անցեալ կատարեալ |
| վագ-եցի | խօս-եցայ | կարդ-ացի |
| վագ-եցիր | խօս-եցար | կարդ-ացիր |
| վագ-եց | խօս-եցաւ | կարդ-աց |
| վագ-եցինք | խօս-եցանք | կարդ-ացինք |
| վագ-եցիք | խօս-եցաք | կարդ-ացիք |
| վագ-եցին | խօս-եցան | կարդ-ացին |

| | | |
|------------|------------|----------------|
| Յարակատար | Յարակատար | Յարակատար |
| վագ-ած եմ | խօս-ած եմ | կարդ-աց-ած եմ |
| վագ-ած ես | խօս-ած ես | կարդ-աց-ած ես |
| վագ-ած է | խօս-ած է | կարդ-աց-ած է |
| վագ-ած ենք | խօս-ած ենք | կարդ-աց-ած ենք |
| վագ-ած էք | խօս-ած էք | կարդ-աց-ած էք |
| վագ-ած են | խօս-ած են | կարդ-աց-ած են |

| | | |
|------------------|------------------|------------------|
| Անորոշ Յարակատար | Անորոշ Յարակատար | Անորոշ Յարակատար |
| վագ-եր եմ | խօս-եր եմ | կարդ-աց-եր եմ |
| վագ-եր ես | խօս-եր ես | կարդ-աց-եր ես |
| վագ-եր է | խօս-եր է | կարդ-աց-եր է |
| վագ-եր ենք | խօս-եր ենք | կարդ-աց-եր ենք |
| վագ-եր էք | խօս-եր էք | կարդ-աց-եր էք |
| վագ-եր են | խօս-եր են | կարդ-աց-եր են |

| | | |
|-------------|-------------|-----------------|
| Գերակատար | Գերակատար | Գերակատար |
| վագ-ած էի | խօս-ած էի | կարդ-աց-ած էի |
| վագ-ած էիր | խօս-ած էիր | կարդ-աց-ած էիր |
| վագ-ած էր | խօս-ած էր | կարդ-աց-ած էր |
| վագ-ած էինք | խօս-ած էինք | կարդ-աց-ած էինք |
| վագ-ած էիք | խօս-ած էիք | կարդ-աց-ած էիք |
| վագ-ած էին | խօս-ած էին | կարդ-աց-ած էին |

| | | |
|------------------|------------------|------------------|
| Անորոշ Գերակատար | Անորոշ Գերակատար | Անորոշ Գերակատար |
| վագ-եր էի | խօս-եր էի | կարդ-աց-եր էի |
| վագ-եր էիր | խօս-եր էիր | կարդ-աց-եր էիր |
| վագ-եր էր | խօս-եր էր | կարդ-աց-եր էր |
| վագ-եր էինք | խօս-եր էինք | կարդ-աց-եր էինք |
| վագ-եր էիք | խօս-եր էիք | կարդ-աց-եր էիք |
| վագ-եր էին | խօս-եր էին | կարդ-աց-եր էին |

| | | |
|-----------------|-----------------|-----------------|
| Բացարձակ ԱՊԱՌՆԻ | Բացարձակ ԱՊԱՌՆԻ | Բացարձակ ԱՊԱՌՆԻ |
| Պիտի վագ-եմ | Պիտի խօս-իմ | Պիտի կարդ-ամ |
| պիտի վագ-ես | պիտի խօս-իս | պիտի կարդ-աս |
| պիտի վագ-է | պիտի խօս-ի | պիտի կարդ-այ |
| Պիտի վագ-ենք | Պիտի խօս-ինք | Պիտի կարդ-անք |
| պիտի վագ-էք | պիտի խօս-իք | պիտի կարդ-աք |
| պիտի վագ-են | պիտի խօս-ին | պիտի կարդ-ան |

| | | |
|----------------|----------------|-----------------|
| Անկատար Ապառնի | Անկատար Ապառնի | Անկատար Ապառնի |
| Պիտի վագ-էի | Պիտի խօս-էի | Պիտի կարդ-այի |
| պիտի վագ-էիր | պիտի խօս-էիր | պիտի կարդ-այիր |
| պիտի վագ-էր | պիտի խօս-էր | պիտի կարդ-այր |
| Պիտի վագ-էինք | Պիտի խօս-էինք | Պիտի կարդ-այինք |
| պիտի վագ-էիք | պիտի խօս-էիք | պիտի կարդ-այիք |
| պիտի վագ-էին | պիտի խօս-էին | պիտի կարդ-ային |

Հ Ր Ա Մ Ա Յ Ա Վ Ա Ն Ե Ղ Ա Ն Ա Կ

| | | |
|------------|------------------|-------------|
| Ներկայ | Ներկայ | Ներկայ |
| վագ-է' | խօս-ի'ր (խօս-է') | կարդ-ա' |
| վագ-եց-է'ք | խօս-եց-է'ք | կարդ-աց-է'ք |

Ս Տ Ո Ր Ա Գ Ա Ս Ա Վ Ա Ն Ե Ղ Ա Ն Ա Կ

| | | |
|---------|---------|----------|
| Ներկայ | Ներկայ | Ներկայ |
| վագ-եմ | խօս-իմ | կարդ-ամ |
| վագ-ես | խօս-իս | կարդ-աս |
| վագ-է | խօս-ի | կարդ-այ |
| վագ-ենք | խօս-ինք | կարդ-անք |
| վագ-էք | խօս-իք | կարդ-աք |
| վագ-են | խօս-ին | կարդ-ան |

| | | |
|----------|----------|------------|
| Անկատար | Անկատար | Անկատար |
| վագ-էի | խօս-էի | կարդ-այի |
| վագ-էիր | խօս-էիր | կարդ-այիր |
| վագ-էր | խօս-էր | կարդ-այր |
| վագ-էինք | խօս-էինք | կարդ-այինք |
| վագ-էիք | խօս-էիք | կարդ-այիք |
| վագ-էին | խօս-էին | կարդ-ային |

ԸՂՋԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | |
|--------------|--------------|----------------|
| Ներկայ | Ներկայ | Ներկայ |
| Թող վագ-եմ | Թող խօս-իմ | Թող կարդ-ամ |
| Քող վագ-ես | Քող խօս-իս | Քող կարդ-աս |
| Քող վագ-է | Քող խօս-ի | Քող կարդ-այ |
| Թող վագ-ենք | Թող խօս-ինք | Թող կարդ-անք |
| Քող վագ-էք | Քող խօս-իք | Քող կարդ-աք |
| Քող վագ-են | Քող խօս-ին | Քող կարդ-ան |
| Անկատար | Անկատար | Անկատար |
| Թող վագ-էի | Թող խօս-էի | Թող կարդ-այի |
| Քող վագ-էիր | Քող խօս-էիր | Քող կարդ-այիր |
| Քող վագ-էր | Քող խօս-էր | Քող կարդ-ար |
| Թող վագ-էինք | Թող խօս-էինք | Թող կարդ-այինք |
| Քող վագ-էիք | Քող խօս-էիք | Քող կարդ-այիք |
| Քող վագ-էին | Քող խօս-էին | Քող կարդ-ային |

ԱՆՈՐՈՇ ԵՂԱՆԱԿ

| | | |
|-----------------------|-----------------------|-----------------------|
| Աներեւոյթ | Աներեւոյթ | Աներեւոյթ |
| վագ-ել | խօս-իլ | կարդ-ալ |
| Ներկայ ընդունելութիւն | Ներկայ ընդունելութիւն | Ներկայ ընդունելութիւն |
| վագ-ող | խօս-ող | կարդ-աց-ող |
| Անցեալ ընդունելութիւն | Անցեալ ընդունելութիւն | Անցեալ ընդունելութիւն |
| վագ-ած, | խօս-ած, | կարդ-աց-ած, |
| վագ-եր | խօս-եր | կարդ-աց-եր |
| Ապառնի ընդունելութիւն | Ապառնի ընդունելութիւն | Ապառնի ընդունելութիւն |
| վագ-ելիք, | խօս-ելիք, | կարդ-ալիք, |
| վագ-ելու | խօս-ելու | կարդ-ալու |

ՄԱՆՕԹ.— Ա.) Եթէ Սահմանականի Ներկային «կը»ն վերցնենք եւ տեղը դնենք «պիտի», կ'ունենանք Բացարձակ Ապառնին (կը գրեմ — պիտի գրեմ). Եթէ «կը»ն ջնջենք եւ տեղը բան չդնենք՝ կ'ունենանք Ստորադասականի Ներկան (կը գրեմ — գրեմ). Եթէ «կը»ն տեղ «թող» դնենք՝ կ'ունենանք Ըղձականի Ներկան (կը գրեմ — թող գրեմ):

Եթէ Սահմանականի Անցեալ Անկատարին «կը»ն տեղ «պիտի» դնենք՝ կ'ունենանք Անկատար Ապառնին (կը գրեմ — պիտի գրեմ). Եթէ «կը»ն ջնջենք՝ կ'ունենանք Ստորադասականի Անկատարը (կը գրեմ — գրեմ). Եթէ «կը»ն տեղ «թող» դնենք՝ կ'ունենանք Ըղձականի Անկատարը (կը գրեմ — թող գրեմ):

Բ.) 1. Երբ բայ մը ձայնաւորով սկսի՝ Սահմանականի Ներկային եւ Անցեալ Անկատարին մէջ՝ իր առջեւ դրուող «կը»ն «ը» դիրը կը ջնջենք եւ տեղը կը դնենք ապաթարց մը: Այսպէս. կ'երգեմ = (կը երգեմ), կ'երգէի = (կը երգէի):

2. «Իւ»ով եւ «ո»ով սկսող բայերն ալ «կ'» կ'առնեն (եւ ոչ թէ «կը»): Սահմանականի Ներկային եւ Անցեալ Անկատարին մէջ: Այսպէս. կ'իւրացնեմ, կ'ողորմմ:

3. «Տալ», «լալ» եւ «գալ» բայերը «կու» կ'առնեն (եւ ոչ թէ «կը»): Այսպէս. կու տամ, կու գայի: («կու»ն չենք կցեր բային):

4. Անդիր «ը»ով սկսող բայերը «կը» կ'առնեն (եւ ոչ թէ «կ'»): Այսպէս. կը սկսիմ, կը սկսէի: (կը հնչենք — կ'ըսկսիմ, կ'ըսկսէի):

Գ.) Բայի մը Յարակատարը կազմելու համար՝ այդ բային Անցեալ Ընդունելութիւններուն (-ած, -եր) քով կը դնենք իական բայի Սահմանական Ներկային Ա. ձևը: Այսպէս. «վազ-ած եմ» Յարակատար է, «վազ-եր եմ» Անորոշ Յարակատար:

Բայի մը Գերակատարը կազմելու համար՝ այդ բային Անցեալ Ընդունելութիւններուն (-ած, -եր) քով կը դնենք իական բայի Սահմանական Անցեալ Անկատարին Ա. ձևը: Այսպէս. «վազ-ած էի» Գերակատար է, «վազ-եր էի» Անորոշ Գերակատար:

129.— Բաղադրեալ կը կոչուին այն Ժամանակները, որոնք կազմուած են իական բային օժանդակութեամբ: Այսպէս. «վազեր է», «բռնած եմք», «երթալու էին»:

«ԲԱՂԱԴՐԵԱԼ» ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

Սահմանական Եղանակ

| | | | |
|-------------------|-------------------|------------------|-------------------|
| Յարակատար.— | Ղրկած եմ | Գերակատար.— | Ղրկած էի |
| Ան. | Յարակատար.— | Ղրկեք եմ | Ան. Գերակատար.— |
| | | Ղրկեք էի | |
| | | Կրկին Կատարեալ.— | Ղրկած եղայ |
| Ապառնի Յար.— | Ղրկած պիտի ըլլամ, | Ապ.Գեր. | Ղրկած պիտի ըլլայի |
| Հարկադրական Յար.— | Ղրկելու եմ, | Հարկ. | Գեր.— |
| | Ղրկելու էի | | |
| | Երկբայական Յար.— | Ղրկած ըլլալու եմ | |
| | Երկբ. | Գեր.— | Ղրկած ըլլալու էի |
| Պայմանական Յար.— | Ղրկած կ'ըլլամ, | Պայմ. | Գեր.— |
| | Ղրկած կ'ըլլայի | | |

Պատմական Ներկայ.— Կը զրկեմ եղեր
 Պատմ. Ապ.— Պիտի զրկեմ եղեր
 Պատմ. Անկ. Ապ.— Պիտի զրկեի եղեր
 Պատմ. Յար.— Ղրկած եմ եղեր
 Պատմ. Անորոչ Յար.— Ղրկեր եմ եղեր
 Պատմ. Հարկ. Յար.— Ղրկելու եմ եղեր
 Պատմ. Հարկադրական Գեր.— Ղրկելու էի եղեր, եւն.

Հրամայական Եղանակ

Կատարեալ.— Ղրկա՛ծ եղիր

Ստորոգասական Եղանակ

Յարակատար.— Ղրկած ըլլամ, Գերակատար.— Ղրկած ըլլայի
 Ապառնի.— Ղրկելու ըլլամ, Անկ. Ապառնի.— Ղրկելու ըլլայի
 Պատմական Ապառնի.— Ղրկելու ըլլամ եղեր

Ըղծական Եղանակ

Պատմ. Ներկայ.— Թող զրկեմ եղեր, Պատմ. Անկ.— Թող զրկեի եղեր

Անորոչ Եղանակ

Անցեալ.— Ղրկած ըլլալ

130.— Յարադրեալ կը կոչուին այն բայերը, որոնք երկու անջատ բառէ կազմուած են: Այսպէս. «Տեղի տալ», «կանգ առնել», «խաղի դալ» (խաբուիլ), «մտիկ ընել», եւայլն: (Երկու բառերը միասնաբար կը նկատուին մէկ բայ):

Յարադրեալ բայերը պէտք չէ չփոթել բայերու Բաղադրեալ Ժամանակներուն հետ: Բաղադրեալ Ժամանակները կազմուած կ'ըլլան Անցեալ Ընդունելութենէ մը եւ Էական բայէ մը. Այսպէս. «Սօսեր էինք», «գացած եղայ», մինչ Յարադրեալ բայը կազմուած կ'ըլլայ բայէ մը եւ ուրիշ բառէ մը, որ բայ չէ: Օրինակ.— «Հողին աւանդել», «խօսք տալ», եւայլն:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ի՞նչ կը նշանակէ արմատ, վերջաւորութիւն: Քանի՞ լծորդութիւն կայ. որո՞նք են: Բայ մը քանի՞ եղանակ եւ քանի՞ ժամանակ ունի: Ո՞ր ժամանակները ո՞ր եղանակներուն մէջ կը դնուին: Ի՞նչ է կանոնաւոր բայը: Ի՞նչ է Բաղադրեալ Ժամանակը: Ի՞նչ է Յարադրեալ բայը:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

91.— Կարգով դոց ըսէ՛ք երեք բայերուն ալ խոնարհումը:

92.— Գտէ՛ք հետեւեալ բայերուն Անբերոյթը, լծորդութիւնը, եղանակը, ժամանակը, դէմքը, եւ թիւը.

Օրինակ.— Կը պատմէին — «Պատմել», Ա. լծ., Սահմ., Անց. Անկ., Գ. գէ՛մք, յոգ.:

Կը պատմէին, կ'ազատէի, կը խաղար, սանարեցինք, հագաց, կը մտնէր, կը ժպտիք, կը քափես, հալեցաւ, կը պաշտէի, կը ճաշես, պատմեցին, կը սիրէիր, կ'ըլլայ, բացատրեցինք, կը սահիք, պիտի երթան, կը դողար, պոռացին, հագայ, խնդաց, պիտի ըլլայ, կ'երթայ, կը կապէի, կու տար:

Լսեցէ՛ք, կը կատարէր, կատարէր, կը լսես, լու՛, կը քաքսենք, պիտի քաքսենք, քաքսենք, քոզ քաքսենք, քօքուեր է, կու լայիք, լուա՛, կը լուայ, խաղայի, խաղա՛, կը խաղայ, խաղայ, պիտի խաղայ, քոզ խաղայ, կը խորհէր, մտածէր էք, ըլլար: Գրելու էիր, կարդացեր է եղեր, վնարած պիտի ըլլամ, տեսած կ'ըլլայիք, գրած ըլլալու էք, չեմ ուզեր եղեր, գծած էք եղեր, ըսելու է եղեր, երթալու ըլլային:

93.— Ըսէ՛ք եղանակն ու ժամանակը հետեւեալներուն:

Մարելիք, խնդացած, ծծել, ծոխլ, սակարկող, ստելու, ծածկած, պոռալ, շարժող, ծոխու, գթացած, դարմանելիք:

94.— Չտեսցէ՛ք արմատներն ու մասնիկները Հրահանգ 92-ի բայերուն:

Օրինակ.— Կը պատմէին — կը պատմէին. Գրեր էր — գրեք էր:

95.— Ոոնարհեցէ՛ք հետեւեալ բայերը:

Ծախսել, նայիլ, գթալ, նուիրել, խօսիլ, լուալ:

96.— Մէկական նախադասութիւն կազմեցէ՛ք հետեւեալ յարադրեալ բայերով.

Հոգին աւանդել, տեղի տալ, կծիկը դնել, կախում ունենալ, նկատի առնել, խելիքն բերել, օծիքը ազատել, հաշուի առնել, խաղի գալ, չափը անցընել, խօսք տալ, անձատուր ըլլալ, յոյս դնել, մեղք դնել, հրաժարական տալ, ընդառաջ երթալ, վրայ տալ, ցոյց տալ, լեզու ելլել:

ԴԱՍ 7

ԶԱՐՏՈՒՂԻ, ԱՆԿԱՆՈՆ ԵՒ ՊԱԿԱՍԱԻՈՐ ԲԱՅԵՐ

131.- Բայերը կ'ըլլան կանոնաւոր, գարտուղի, անկանոն կամ պակասաւոր՝ նայած իրենց խոնարհումի պարազաներուն:

132.- Կանոնաւոր կը կոչուին այն բայերը, որոնց արժատները խոնարհումի ատեն կը մնան անփոփոխ, եւ վերջաւորութիւնները կը հետեւին ճիշդ իրենց տիպարներուն խոնարհումի ձեւին:

133.- Զարտուղի են այն բայերը, որոնց արժատները խոնարհումի ատեն կը մնան անփոփոխ, բայց վերջաւորութիւնները կարգ մը ժամանակներու մէջ չեն հետեւիր իրենց տիպարին ձեւերուն: Այսպէս. «Վազ-եւ» բայը, որ տիպարն է Ա. Լծորգութեան բայերուն, Կատարեալին մէջ կ'ըլլայ «վազ-եցի», մինչ «մտ-ն-եւ» բայը կ'ըլլայ «մտ-այ» (եւ ոչ թէ «մտնեցի» կամ «մտեցի»): «Մտնել» բայը զարտուղի է:

ԶԱՐՏՈՒՂԻ ԲԱՅԵՐ.- Առնել, խածնել, գտնել, իջնել, մտնել, հեծնել, տեսնել, լեցնել, ցուցնել, դարձնել, անցնել, բերել, բուսել, նագնիլ, հասնիլ, մեռնիլ, անցնիլ, բուսնիլ, փակչիլ, փախչիլ, դպչիլ, փչիլ, փրթիլ, սկսիլ, ծնիլ, նստիլ, բանալ (բա-ն-ալ), լալ (լա-լ), մնալ (մնա-լ), կեցալ (կե-ն-ալ), բարկանալ, գիտնալ, ունենալ, հասունալ, հեռանալ, եւայլն:

Զարտուղի են նաեւ «ցնել» եւ «ուրիլ» վերջաւորութիւնը ունեցող բայերը:

134.- Անկանոն կը կոչուին այն բայերը, որոնց Աներեւոյթի արժատները փոփոխութիւն կը կրեն կարգ մը ժամանակներու մէջ: Այսպէս. «Զար-ն-եւ» Աներեւոյթ բային արժատը՝ «զար», Կատարեալին մէջ կ'ըլլայ «զարկ» («զարկ-ի», «զարկ-իր», եւայլն): «Զարնել» բայը անկանոն է:

ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐ.- Դնել (դը-ի), գարնել (գարկ-ի), ընել (ըր-ի), տանիլ (տար-ի), տալ (տու-ի), դառնալ (գարձ-այ), իյնալ (ինկ-այ), համբառնալ (համբարձ-այ), ըլլալ (եղ-այ), եւայլն:

135.- Պակասաւոր կը կոչուին այն բայերը, որոնք խոնարհումի բոլոր ժամանակները չունին: Այսպէս. «Կամ» բայը Սահմանականի ներկայ եւ Անցեալ Անկատար միայն ունի, — կամ, կաս, կայ, եւայլն, եւ կայի, կայիր, կար, եւայլն:

Պակասաւոր բայերուն պակասող ժամանակները կը լրացուին, երբ պէտք ըլլայ՝ ուրիշ բայերու միջոցով: Օրինակ. «Կամ» բային որպէս Անցեալ Կատարեալ՝ կրնանք դործածել «գտնուիլ» բային Անցեալ Կատարեալը եւ ըսել՝ «գտնուեցայ», «գտնուեցար», եւայլն:

ՊԱԿԱՍԱԻՈՐ ԲԱՅԵՐ.- Ունիմ (կ'ամբողջացուի «ունենալ» բայով), գիտեմ («գիտնալ» բայով), կամ («գտնուիլ» բայով), եմ («ըլլալ» բայով), գամ («եկայ» բայով), եկայ («գամ» բայով), երթալ («գացի» բայով), գացի («երթալ» բայով), ուտել («կերայ» բայով), կերայ («ուտել» բայով), կրնամ («կարենալ» բայով), կարենալ («կրնամ» բայով):

ՊԱԿԱՍԱԻՈՐ ԲԱՅԵՐՈՒ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ

«Ունիմ», «գիտեմ», «եմ», «կրնամ» բայերը ունին երկուքական հաս Սահմանականի ներկայ եւ Անցեալ Անկատար: Այսպէս.

ՈՒՆԻՄ.- Ներկայ, — «Ունիմ», «ունիս», «ունի», եւայլն, եւ «կ'ունենամ», «կ'ունենաս», «կ'ունենայ», եւայլն: Անցեալ Անկատար, — «Ունէի», «ունէիր», «ունէր», եւայլն, եւ «կ'ունենայի», «կ'ունենար», եւայլն:

ԳԻՏԵՄ.- Ներկայ, — «Գիտեմ», «գիտես», «գիտէ», եւայլն, եւ «կը գիտեմ», «կը գիտես», «կը գիտայ», եւայլն: Անցեալ Անկատար, — «գիտէի», «գիտէիր», «գիտէր», եւայլն, եւ «կը գիտնայի», «կը գիտնար», եւայլն:

ԵՄ.- Ներկայ, — «Եմ», «ես», «է», եւայլն, եւ «կ'ըլլամ», «կ'ըլլաս», «կ'ըլլայ», եւայլն: Անցեալ Անկատար, — «էի», «էիր», «էր», եւայլն, եւ «կ'ըլլայի», «կ'ըլլայիր», «կ'ըլլար», եւայլն:

ԿՐՆԱՄ.- Ներկայ, — «Կրնամ», «կրնաս», «կրնայ», եւայլն, եւ «կը կարեմամ», «կը կարեմաս», «կը կարեմայ», եւայլն: Անցեալ Անկատար, — «կրնայի», «կրնայիր», «կրնար», եւայլն, եւ «կը կարեմայի», «կը կարեմայիր», «կը կարեմար», եւայլն:

«Կրնամ» բային Ապառնին է՝ «պիտի կարեմամ» եւ «պիտի կարեմայի» (եւ ո'չ թէ «պիտի կրնամ» եւ «պիտի կրնայի»):

«Ունիմ», «գիտեմ», «կրնամ» բայերուն Ստորադասական Եղանակն է, - Ունեմամ եւ ունեմայի, գիտեմամ եւ գիտեմայի, կարեմամ եւ կարեմայի:

136.- Այն ժամանակները, ուր երեւան կու դան խոնարհումի զարտուղութիւնները կամ անկանոնութիւնները՝ կը կոչուին Անկանոն ժամանակներ: Անկանոն ժամանակներն են — «Անցեալ Կատարեալը», ընդհանրապէս նաեւ «Հրամայականը», եւ կարգ մը բայերու «Անցեալ» եւ «Ներկայ Ընդունելութիւն»ներն ալ: Միւս ժամանակները կը կոչուին Կանոնաւոր:

ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐ.- Կանոնաւոր = կան., զարտուղի = զարտ., անկանոն = անկան., պակասաւոր = պակս.:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.- Ի՛նչ է տարբերութիւնը կանոնաւոր, անկանոն, զարտուղի եւ պակասաւոր բայերուն: Որո՞նք են պակասաւոր բայերը, եւ ո՞ր բայերով կ'ամբողջացուին: Որո՞նք են անկանոն ժամանակները:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

97.- Գտէ՛ք թէ հետեւեալ բայերէն որո՞նք կանոնաւոր են եւ որո՞նք՝ զարտուղի: Ի՛նչո՞ւ:

Հաւաքել, իջնել, հեռանալ, լողալ, ունեմալ, հասնիլ, փախչիլ, բարգմանել, բուսնիլ, նստիլ, տեղաւորել, ըսել, դպչիլ:

98.- Ըսէ՛ք թէ հետեւեալ բայերը կանոնաւոր, զարտուղի, անկանոն թէ պակասաւոր են:

Մեռնիլ, անցնիլ, պատժել, բուժել, ժպտիլ, դառնալ, հագնիլ, գալ, ցուցնել, պարպել, երթալ, լեցնել, յուզուիլ, ըլլալ, ուտել, դողալ, կարեմալ, համբառնալ, տանիլ, դնել, հրել, ընել:

99.- Ըսէ՛ք Անցեալ Կատարեալը, Հրամայականի Ներկան եւ Անորոշ Եղանակը հետեւեալ բայերուն:

Տալ, իյնալ, դառնալ, զարնել, ունիմ, գիտեմ, հաւատալ, կրնամ, կամ:

100.- Ըսէ՛ք Սահմանականի եւ Ստորադասականի Ներկան եւ Անկատարը հետեւեալ բայերուն:

Ունիմ, գիտեմ, կրնամ, եմ, երթալ, լալ, կզպել:

101.- Գտէ՛ք անկանոն ժամանակները հետեւեալ բայերուն:

Իյնալ, փրթիլ, սկսիլ, փլչիլ, նստիլ, ծնիլ, բարկանալ, անցընել, ուտել, երթալ, գալ, լալ:

ԴԱՍ 8

ԲԱՅ (ՀԱՍՏԱՏԱԿԱՆ, ԺԵՏԱԿԱՆ, ՀԱՐՑԱԿԱՆ)

137.- Բայի մը համար կ'ըսենք թէ ժխտական է՝ երբ իր բնական իմաստին հակառակը ցոյց տայ: Այսպէս. «Վաղեց» բախին ժխտականն է «չվազեց», «եղաւ»ին՝ «չեղաւ»:

138.- Երբ բայ մը հարցական իմաստով (պարոյկով) դործածուի՝ կ'ըսենք թէ հարցական է: Այսպէս. Վազե՞ց, եղա՞ւ:

139.- Բայ մը կրնայ ժխտական-հարցական ըլլալ: Այսպէս. Զվազե՞ց, չեղա՞ւ, պիտի չերթա՞նք:

140.- Երբ բայ մը իր բնական վիճակին մէջ է (այսինքն՝ ո՛չ ժխտական, ո՛չ հարցական, եւ ո՛չ ալ ժխտական-հարցական է)՝ կ'ըսենք թէ հաստատական է: Այսպէս. Վաղեց, եղաւ:

141.- ԱՄՓՈՓԵԼՈՎ.- Բայերը կ'ունենան չորս վիճակ — Հաստատական, ժխտական, Հարցական եւ ժխտական-հարցական:

142.- Բայի մը ժխտականը կազմելու համար հաստատականին առջեւ «չ» կ'աւելցնենք: Այսպէս. էիր — չէիր, գրեցին — չգրեցին:

ԷԱԿԱՆ ԲԱՅ (ԺԵՏԱԿԱՆ)

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

- ՆԵՐԿԱՅ (Ա. Ձեւ) Ձեմ, չես, չէ, չենք, չէք, չեն:
- (Բ. Ձեւ) Ձեմ եււոր, չես եււոր, չեււոր, չենք եււոր, չէք եււոր, չեն եււոր:
- ԱՆՑ. ԱՆԿ. (Ա. Ձեւ) Ձէի, չէիր, չէր, չէինք, չէիք, չէին:
- (Բ. Ձեւ) Ձէի եււոր, չէիր եււոր, չէր եււոր, չէինք եււոր, չէիք եււոր, չէին եււոր:
- ԱՆՑ. ԿԱՏ. Ձեղայ, չեղար, չեղաւ, չեղանք, չեղաք, չեղան:
- ՅԱՐԱԿԱՏԱՐ Եղած չեմ, եղած չես, եղած չէ, եղած չենք, եղած չէք, եղած չեն:
- ԱՆ. ՅԱՐ Ձեմ եղեր, չես եղեր, չէ եղեր, չենք եղեր, չէք եղեր, չեն եղեր:

- ԳԵՐԱԿԱՏԱՐ Եղած չէի, եղած չէիր, եղած չէր, եղած չէինք, եղած չէիք, եղած չէին:
- ԱՆ. ԳԵՐ. Զէի եղեր, չէիր եղեր, չէր եղեր, չէինք եղեր, չէիք եղեր, չէին եղեր:
- ԲԱՅ. ԱՊ. Պիտի չըլամ, պիտի չըլաս, պիտի չըլայ, պիտի չըլանք, պիտի չըլաք, պիտի չըլան:
- ԱՆԿ. ԱՊ. Պիտի չըլայի, պիտի չըլայիր, պիտի չըլար, պիտի չըլայինք, պիտի չըլայիք, պիտի չըլային:

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

ՆԵՐԿԱՅ Մի՛ ըլար, մի՛ ըլաք:

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

ՆԵՐԿԱՅ Զըլամ, չըլաս, չըլայ, չըլանք, չըլաք, չըլան:

ԱՆԿԱՏԱՐ Զըլայի, չըլայիր, չըլար, չըլայինք, չըլայիք, չըլային:

ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

ՆԵՐԿԱՅ Թող չըլամ, թող չըլաս, թող չըլայ, թող չըլանք, թող չըլաք, թող չըլան:

ԱՆԿԱՏԱՐ Թող չըլայի, թող չըլայիր, թող չըլար, թող չըլայինք, թող չըլայիք, թող չըլային:

ԱՆՈՐՈՇ ԵՂԱՆԱԿ

ԱՆԵՐԵՒՈՅԹ՝ Զըլալ.

ՆԵՐԿԱՅ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ՝ Զեղող.

ԱՆՑԵԱԼ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ՝ Զեղած.

ԱՊԱՌՆԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ՝ Զըլալիք, չըլալու:

ՈՒՇԱԴԻՐ ԵՂԷՐ ՀԵՑՆԵՍԱԼ ԿԵՏՐՈՒՆ

Ա.— ԷԱԿԱՆ ԲԱՅԻՆ Սահմանական Եղանակի Ներկայից եւ Անցեալ Անկատարից Բ. ձեւերը չեն հետեւիր կանոնին (այսինքն՝ անոնց ժխտականը կազմելու համար չի բաւեր Հաստատականին վրայ պարզապէս «չ» աւելցնել):

Բ.— Ժխտական Յարակատարն ու Գերակատարը կրնանք կարգաւ երկու ձեւով. Այսպէս. Եղած եմ — եղած չեմ կամ չեմ եղած. Կղած էի — եղած չէի կամ չէի եղած:

Գ.— Հրամայականի Ներկան ալ չի հետեւիր կանոնին: «Եղի՛ր»ը կ'ըլայ մի՛ ըլար, «Եղէ՛ք»ը՝ մի՛ ըլաք:

Դ.— Անցեալ Ընդունելութիւնը որ Հաստատականի մէջ երկու հատ է — «եղած» եւ «եղեր», Ժխտականի մէջ միայն մէկ հատ է՝ «չեղած»:

Ե.— ԱՄՓՈՓԵԼՈՎ՝ բացի Սահմանական Ներկայի եւ Անցեալ Անկատարի Բ. ձեւերէն եւ Հրամայականի Ներկայէն՝ Էական բային միւս բոլոր ժամանակներուն ժխտականը կազմելու համար կը բաւէ Հաստատականին սկիզբը «չ» աւելցնել:

Զ.— ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ. Զչիտթեւ «Զըլար»ը (ապաթարցով՝ ժխտականը «կ'ըլայ»ին) եւ «Զըլար»ը (առանց ապաթարցի՝ ժխտականը «ըլար»ին):

ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐ.— Հաստատական = հաստ., ժխտական = ժխտ., հարցական = հարց.:

143.— Բայ մը լուծելու համար կարգով կ'ըսենք անոր՝

- 1.— Տեսակը (ներգ., էական, եւայլն)
- 2.— Աներեւոյթը (-ել, -իլ, -ալ)
- 3.— Լծորդութիւնը (առաջին, երկրորդ, երրորդ)
- 4.— Կազմը (կանոնաւոր, դարտուղի, անկանոն, պակասաւոր)
- 5.— Վիճակը (Հաստատական, ժխտական, Հարցական, ժխտ-Հարց.)
- 6.— Եղանակը (Սահմ., Հր., Ստոր., Ըղծ., Անորոշ)
- 7.— Ժամանակը (Ներկ., Անց. Անկ., Անց. Կատ., եւայլն)
- 8.— Դէմքը (առաջին, երկրորդ, երրորդ)
- 9.— Թիւը (եղակի, յոգնակի)

144.— Լուծենք հետեւեալ նախադասութեան բայը.

Ես բանատեղծութիւն «կը կարդայի» յաճախ:
Կը կարդայի = Ներգ., «կարդալ», Գ. լծ., կան., հաստ., Սահմ., Անց. Անկ., Ա. դէմք, եղակի:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

102.- Գոց ըսէ՛ք էական բային ժխտականը:

103.- Ժխտականի վերածեցէ՛ք հետեւեալ էական բայերը:

Եղաւ, պիտի ըլլամ, էիր, եղեր է, քոզ ըլլան, եղէ՛ք, ըլլալ, եղած էր, ես, կ'ըլլար, կ'ըլլայ, էր, ըլլային, կ'ըլլային, պիտի ըլլայ, ըլլար, կ'ըլլայիր, էք, կ'ըլլայիք, եղանք, եղած ես, եղած, ըլլալու, եղող, եմք, քոզ ըլլայիր, ըլլանք, եմ, եղայ, քոզ ըլլան, ըլլայ, կ'ըլլաս, եղի՛ր:

104.- Լուծեցէ՛ք հետեւեալ բայերը: (Բայերուն տեսակը երեք է; - Ներգործական (Սեռի խնդիր ունեցող), էական («ըլլալ» բայը, որ ստորոգելի ունի), «թիւ 3» (սեռի խնդիր կամ ստորոգելի) չունեցող, որ հիմակուհիմա պիտի կոչենք «ոչ-ներգործական»):

Կարեց, կը տաշէինք, չեղաւ, նստեցէ՛ք, պիտի ըլլա՞ր, ըլլա՛ր, կ'ըլլար, հաւաքեր եմ, յարգած էի, չըսի՞ք, կերար, կ'եռար, մի՛ գարմանաք, կը կարդայ, կարդա՛, կարդայ, հասայ, գացեր ես, եկո՛ւր:

105.- Գտէ՛ք հետեւեալ դրութեան դիմաւոր բայերը եւ լուծեցէ՛ք դանոնք:

Փ Ա Ն Զ Ո Ւ Ն Ի Ն

Փանջունի շատ ուշ լեզու ելած է, բայց անգամ մը խօսելու սկսել է ետէ՛ ա՛յ բերանը դիւրաւ չէ գոցած:

— Բամպակ քիտեցէ՛ք ականջնիդ, ա՛յս է միակ միջոցը, — ըսած է բծիշկը, որուն զինք տարած էր հայրը:

Հակառակ իր խօսելու մարմանին՝ փոքրիկն փանջունի յաճախ սխալ կը գործածէր բառերը... Օր մը, սեղանի մը վրայ դրած արժէ՛քաւոր անօք մը կ'առնէ ու գետին նետելով ջարդուփշուր կ'ընէ գայն:

Հայրը տղան կանչելով ու անօքին կոտրուածքները ցոյց տալով կը գոչէ.

— Ծօ՛, ի՛նչ ըրեր ես:

— Ծիմեցի, հայրիկ, — կը պատասխանէ փոքրիկ փանջունին միամիտ համոզուով մը:

— Ծօ՛, ի՛նչ շիներ ես, կոտրե՛ր ես...

— Զէ՛, հայրիկ շինեցի, — կը պատասխանէ տղան: **Ե. Օ.**

106.- Զատեցէ՛ք վերի դրութեան նախադասութիւնները. գտէ՛ք տէր-բայիները. գտէ՛ք սեռի խնդիրներն ու ստորոգելիները՝ եթէ կան:

ԴԱՍ 9

ԺԵՏԱԿԱՆԸ (ԿԱՆՈՆԱԻՈՐ ԲԱՅԵՐՈՒ)

145.- Երբ բայերու հաստատականին սկիզբը կցենք «չ» մասնիկը՝ կազմած կ'ըլլանք անոնց ժխտականը: Այսպէս. վագեց — չվագեց, պիտի ուտեմ — պիտի չուտեմ:

146.- Բացարիկ են, Ա.- Սահմանականի ներկան, Բ.- Անցեալ Անկատարը, Գ.- Հրամայականի ներկան, որոնց ժխտականը «չ» դիրին յաւելումով չէ որ կը կազմուի:

Ա.- Սահմանականի ներկային ժխտականը կազմելու համար Աներեւոյթին վերջին դիրը՝ «լ»ը կը վերածենք «ր»ի, եւ բային առջեւ կը դնենք էական բային Սահմանականի ներկայի Ա. ձեւին ժխտականը: (Եզակի Գ. դէմքի «չէ»ն կ'ընենք «չի»): Այսպէս.

| | | | | | |
|-----------|------------|----------|-----------|------------|-------------|
| Զեմ վագեր | Զենք վագեր | Զեմ խօսի | Զենք խօսի | Զեմ կարդար | Զենք կարդար |
| Զես վագեր | Զէք վագեր | Զես խօսի | Զէք խօսի | Զես կարդար | Զէք կարդար |
| Զի վագեր | Զինք վագեր | Զի խօսի | Զինք խօսի | Զի կարդար | Զինք կարդար |

Բ.- Սահմանականի Անցեալ Անկատարին ժխտականը կազմելու համար Աներեւոյթին վերջին դիրը՝ «լ»ը կը վերածենք «ր»ի, եւ բային առջեւ կը դնենք էական բային Սահմանական Անց. Անկատարին Ա. ձեւին ժխտականը: Այսպէս.

| | | |
|-------------|------------|--------------|
| Զէի վագեր | Զէի խօսի | Զէի կարդար |
| Զէինք վագեր | Զէինք խօսի | Զէինք կարդար |

Գ.- Հրամայականի ներկային ժխտականը կազմելու համար կ'ընենք հետեւեալը. Աներեւոյթին «լ»ը «ր»ի փոխելէ ետք՝ բային առջեւ կը դնենք «մի», եզակի մէջ: Յոգնակիին համար՝ «մի» կը դնենք Ստորադասականի ներկային յոգնակի Բ. դէմքին առջեւ: Այսպէս.

Մի՛ վագեր - մի՛ վագէք. Մի՛ խօսի - մի՛ խօսիք. Մի՛ կարդար - մի՛ կարդաք

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա.- Անցեալ Ընդունելութեան «եր»ով ձեւը ժխտական չունի: Այսպէս. հաստատականի մէջ՝ վագած - վագեր, ժխտականի մէջ՝ միայն չվագած:

Բ.- Ա. Լծորդութեան (կանոնաւոր) բայերուն Անորոշ Յարակատարին ու Անորոշ Գերակատարին ժխտականը չի գործածուիր:

Գ.- Երբ բայ մը ձայնաւորով կը սկսի՝ Սահմանակամի Ներկայ եզակի երրորդ դեմքին «չի»ին «ի»ն կը ջնջեմք եւ տեղը ապաքարց կը դնեմք: Այսպէս.

| | | |
|--------------------|--------------------|--------------------|
| Ձեմ ուզեր | Ձեմ այրեր | Ձեմ երթար |
| չես ուզեր | չես այրեր | չես երթար |
| չ'ուզեր (չի ուզեր) | չ'այրեր (չի այրեր) | չ'երթար (չի երթար) |

Գ.- Ձայնաւորով սկսող բայ մը ժխտականի մէջ կ'ունենայ միայն մէկ ապաքարց — ՍԱՀՄ. ԵՂ., ՆԵՐԿԱՅ, Գ. ԴԵՄՓ ԵՁԱ-ԿԻԻՆ ՄԷՁ:

Ե.- Ունիմ եւ կամ բայերը բացառիկ են: Անոնց Սահմանականի Ներկան եւ Անց. Անկատարը ժխտականի վերածելու համար՝ պարզապէս առջեւը կը կցենք «չ» մասնիկը. (Խական բայ չենք գործածեր): Այսպէս.

| | | | |
|----------------|------------------|------------|--------------------|
| Ունիմ - չունիմ | Ունէի - չունէի | Կամ - չկամ | Կայի - չկայի |
| ունիս - չունիս | ունէիր - չունէիր | կաս - չկաս | կայիր - չկայիր |
| ունի - չունի | ունէր - չունէր | կայ - չկայ | կար - չկար (եւայն) |

Զ.- Ունիմ բայը, հակառակ որ ձայնաւորով կը սկսի, ժըխտականի Սահմանական Ներկայ եզակի Գ. Դէմքին մէջ ապաթարց չ'առնեն: Ժխտականի համար առջեւը կցուողը «չի» չէ որ «ի»ն ջնջուի եւ տեղը ապաթարց գրուի: Աւելցուողը «չ» է միայն. ունի, չունի:

Է.- Երբ բայ մը Խական բայի մը հետ գործածուած է («վազեր էր», «չեմ գրեր») գայն կը գրենք «եր»ով: Երբ Խական բայ չկայ հետը՝ կը գրենք «էր»ով (կը վազէր, գրէր, պիտի չերգէր): Այսպէս. օրինակ՝

«Ձ'ուզեր» բայը կը գրենք «եր»ով. ապաթարցը գրուած է «ի» (= «է») Խական բային տեղ. (չ'ուզեր = չի ուզեր): Բայց «չուզէր» բայը կը գրենք «էր»ով, որովհետեւ իրեն ընկերակցող Խական բայ չկայ. ապաթարց ալ չունի:

Այս երկուքը՝ «չ'ուզեր» եւ «չուզէր», կրնանք զանազանել նաեւ իրենց չեչտէն. «չ'ուզեր» = չ'ուզեր, «չուզէր» = չուզէր:

Ը.- Մեր լեզուին մէջ բայերուն բնական շեշտը վերջին վանկին վրայ է: Այսպէս. կը քալէր (= կը քալէ՛ր), չեղաւ (= չեղա՛ւ): Բայց երբ բայի մը ընկերանայ Խական բային ժխտականի մեկը՝ շեշտը կը գրուի այդ ժխտականի Խական բային վրայ, ո՛ւր ալ գտնուի ա՛ն: Այսպէս. կը գրեն (= կը գրե՛ն) — չեն գրեր (= չե՛ն գրեր), կ'իջնայ (= կ'իջնա՛յ) — չ'իջնար (= չ'իջնա՛ր):

Երբ ընկերացող Խական բայը հաստատական է՝ շեշտ չ'առնեն: Այսպէս. Գրեր էին (= գրե՛ր էին), տեսած ես (= տեսա՛ծ ես):

ԿԱՆՈՆԱԻՈՐ ԲԱՅԵՐՈՒ ԻՈՆԱՐՇՈՒՄԸ (ԺԵՑԱԿԱՆ)

Ա. Լծորդութիւն Բ. Լծորդութիւն Գ. Լծորդութիւն

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| ՆԵՐԿԱՅ | | ՆԵՐԿԱՅ | | ՆԵՐԿԱՅ | |
|-----------------|--------|-----------------|--------|-----------------|---------|
| Ձեմ | վագ-եր | Ձեմ | խօս-իր | Ձեմ | կարդ-ար |
| չես | վագ-եր | չես | խօս-իր | չես | կարդ-ար |
| չի | վագ-եր | չի | խօս-իր | չի | կարդ-ար |
| Ձենք | վագ-եր | Ձենք | խօս-իր | Ձենք | կարդ-ար |
| չէք | վագ-եր | չէք | խօս-իր | չէք | կարդ-ար |
| չեն | վագ-եր | չեն | խօս-իր | չեն | կարդ-ար |
| ԱՆՑԵԱԼ Աճկատար | | ԱՆՑԵԱԼ Աճկատար | | ԱՆՑԵԱԼ Աճկատար | |
| Ձէի | վագ-եր | Ձէի | խօս-իր | Ձէի | կարդ-ար |
| չէիր | վագ-եր | չէիր | խօս-իր | չէիր | կարդ-ար |
| չէր | վագ-եր | չէր | խօս-իր | չէր | կարդ-ար |
| Ձէինք | վագ-եր | Ձէինք | խօս-իր | Ձէինք | կարդ-ար |
| չէիք | վագ-եր | չէիք | խօս-իր | չէիք | կարդ-ար |
| չէին | վագ-եր | չէին | խօս-իր | չէին | կարդ-ար |
| Աճցեալ կատարեալ | | Աճցեալ կատարեալ | | Աճցեալ կատարեալ | |
| Ձվագեցի | | Ձխօսեցայ | | Ձկարդացի | |
| չվագեցիր | | չխօսեցար | | չկարդացիր | |
| չվագեց | | չխօսեցաւ | | չկարդաց | |
| Ձվագեցիմք | | Ձխօսեցանք | | Ձկարդացինք | |
| չվագեցիք | | չխօսեցաք | | չկարդացիք | |
| չվագեցին | | չխօսեցան | | չկարդացին | |

| | | |
|---------------------|------------------|------------------|
| Յարակատար | Յարակատար | Յարակատար |
| Չեմ վազ-ած | Չեմ խօս-ած | Չեմ կարդ-աց-ած |
| չես վազ-ած | չես խօս-ած | չես կարդ-աց-ած |
| չէ վազ-ած | չէ խօս-ած | չէ կարդ-աց-ած |
| Չենք վազ-ած | Չենք խօս-ած | Չենք կարդ-աց-ած |
| չէք վազ-ած | չէք խօս-ած | չէք կարդ-աց-ած |
| չեն վազ-ած | չեն խօս-ած | չեն կարդ-աց-ած |
| Անորոշ Յարակատար | Անորոշ Յարակատար | Անորոշ Յարակատար |
| | Չեմ խօս-եր | Չեմ կարդաց-եր |
| | չես խօս-եր | չես կարդաց-եր |
| | չէ խօս-եր | չէ կարդաց-եր |
| (Չի գործածուիր) | Չենք խօս-եր | Չենք կարդաց-եր |
| | չէք խօս-եր | չէք կարդաց-եր |
| Տեղը կը գործածենք | չեն խօս-եր | չեն կարդաց-եր |
| Յարակատարի ժխտականը | չեն խօս-եր | չեն կարդաց-եր |
| Գերակատար | Գերակատար | Գերակատար |
| վազ-ած չէի | խօս-ած չէի | կարդաց-ած չէի |
| վազ-ած չէիր | խօս-ած չէիր | կարդաց-ած չէիր |
| վազ-ած չէր | խօս-ած չէր | կարդաց-ած չէր |
| վազ-ած չէինք | խօս-ած չէինք | կարդաց-ած չէինք |
| վազ-ած չէիք | խօս-ած չէիք | կարդաց-ած չէիք |
| վազ-ած չէին | խօս-ած չէին | կարդաց-ած չէին |
| Անորոշ Գերակատար | Անորոշ Գերակատար | Անորոշ Գերակատար |
| | Չէի խօս-եր | Չէի կարդաց-եր |
| | չէիր խօս-եր | չէիր կարդաց-եր |
| | չէր խօս-եր | չէր կարդաց-եր |
| (Չի գործածուիր) | Չէինք խօս-եր | Չէինք կարդաց-եր |
| | չէիք խօս-եր | չէիք կարդաց-եր |
| Տեղը կը գործածենք | չէին խօս-եր | չէին կարդաց-եր |
| Գերակատարի ժխտականը | չէին խօս-եր | չէին կարդաց-եր |
| Բացարձակ ԱՊԱՌՆԻ | Բացարձակ ԱՊԱՌՆԻ | Բացարձակ ԱՊԱՌՆԻ |
| Պիտի չվագեմ | Պիտի չխօսիմ | Պիտի չկարդամ |
| պիտի չվագես | պիտի չխօսիս | պիտի չկարդաս |
| պիտի չվագե | պիտի չխօսի | պիտի չկարդայ |
| Պիտի չվագեմք | Պիտի չխօսինք | Պիտի չկարդանք |
| պիտի չվագեք | պիտի չխօսիք | պիտի չկարդաք |
| պիտի չվագեն | պիտի չխօսին | պիտի չկարդան |

| | | |
|-------------------|-------------------|-------------------|
| Անկատար Ապառճի | Անկատար Ապառճի | Անկատար Ապառճի |
| Պիտի չվագեի | Պիտի չխօսեի | Պիտի չկարդայի |
| պիտի չվագեիր | պիտի չխօսեիր | պիտի չկարդայիր |
| պիտի չվագեր | պիտի չխօսեր | պիտի չկարդար |
| Պիտի չվագեիք | Պիտի չխօսեիք | Պիտի չկարդայիք |
| պիտի չվագեիք | պիտի չխօսեիք | պիտի չկարդայիք |
| պիտի չվագեին | պիտի չխօսեին | պիտի չկարդային |
| ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ | ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ | ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ |
| Ներկայ | Ներկայ | Ներկայ |
| Մի' վագ-եր | Մի' խօս-եր | Մի' կարդ-ար |
| Մի' վագ-էք | Մի' խօս-էք | Մի' կարդ-աք |
| Ներկայ | Ներկայ | Ներկայ |
| Չվագեմ | Չխօսիմ | Չկարդամ |
| չվագես | չխօսիս | չկարդաս |
| չվագե | չխօսի | չկարդայ |
| Չվագեմք | Չխօսինք | Չկարդանք |
| չվագեք | չխօսիք | չկարդաք |
| չվագեն | չխօսին | չկարդան |
| Անկատար | Անկատար | Անկատար |
| Չվագեի | Չխօսեի | Չկարդայի |
| չվագեիր | չխօսեիր | չկարդայիր |
| չվագեր | չխօսեր | չկարդար |
| Չվագեիք | Չխօսեիք | Չկարդայիք |
| չվագեիք | չխօսեիք | չկարդայիք |
| չվագեին | չխօսեին | չկարդային |
| ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ | ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ | ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ |
| Ներկայ | Ներկայ | Ներկայ |
| Թող չվագեմ | Թող չխօսիմ | Թող չկարդամ |
| թող չվագես | թող չխօսիս | թող չկարդաս |
| թող չվագե | թող չխօսի | թող չկարդայ |
| Թող չվագեմք | Թող չխօսինք | Թող չկարդանք |
| թող չվագեք | թող չխօսիք | թող չկարդաք |
| թող չվագեն | թող չխօսին | թող չկարդան |

| | | |
|-------------|-------------|---------------|
| Անկատար | Անկատար | Անկատար |
| Թող չվագէի | Թող չխօսէի | Թող չկարդայի |
| Քող չվագէիր | Քող չխօսէիր | Քող չկարդայիր |
| Քող չվագէր | Քող չխօսէր | Քող չկարդար |
| Թող չվագէիմ | Թող չխօսէիմ | Թող չկարդայիմ |
| Քող չվագէիք | Քող չխօսէիք | Քող չկարդայիք |
| Քող չվագէին | Քող չխօսէին | Քող չկարդային |

ԱՆՈՐՈՇ ԵՂԱՆԱԿ

| | | |
|----------|-----------------------|-----------|
| | Անբեւոյք | |
| Չվագել | Չխօսիլ | Չկարդալ |
| | Ներկայ Ընդունելութիւն | |
| Չվագող | Չխօսող | Չկարդացող |
| | Անցեալ Ընդունելութիւն | |
| Չվագած | Չխօսած | Չկարդացած |
| | Ապառնի Ընդունելութիւն | |
| Չվագելիք | Չխօսելիք | Չկարդալիք |
| Չվագելու | Չխօսելու | Չկարդալու |

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ.— Ինչպէ՛ս կը կազմենք բայերու ժխտականը: Բացատրեցէ՛ք ապաթարցի գործածութիւնը:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

107.— Խոնարհեցէ՛ք հետեւեալ բայերուն ժխտականը:

Ուզել, ժպտիլ, ուռիլ, դողալ, ունիմ, շտապել, որսալ:

108.— Ըսէ՛ք հետեւեալ բայերուն Սահմանականի Ներկային եւ Անց. Անկատարին նախ Հաստատականը եւ յետոյ ժխտականը:

Ցատկել, հագալ, երգել, այրիլ, աղալ, ունեցալ, «կամ»:

109.— Գտէ՛ք հետեւեալ գրուած բայերը եւ լուծեցէ՛ք դանոնք: Յետոյ գտէ՛ք այդ բայերուն տէր-բայիները:

Պ Ի Պ Ի Ն



... Դրացի մը եկած էր ու քիչ մը խիստ ու ծանր բտերով կը գանգատէր Պիպին ըրած մէկ անտակուրեան համար: Պիպին կեցած էր սենեակին մէկ անկիւնը անշարժ, աչքերը խռոր մը բացած...: Պետրոս բարկացած գռչեց բարձրաձայն.

— Պիպի՛, հոս եկուր. շո՛ւտ...: Ըսէ՛ ինձի, ինչո՛ւ պարոն Ֆաթուհի էջը անկեցիր:

— Պարոն Ֆաթու...ի՞ն:

— Այո՛, էջը:

— Պարոն Ֆաթուհի է՞ջը:

— Այո՛, պարոն Ֆաթուհի է՛ջը: Ինչո՛ւ անկեցիր...

— Բայց ես ամբողջութեամբ չանկեցի՛ր...

— Ի՞նչ, ի՞նչ, հապա ամբողջութեամբ պիտի անկէիր...:

— Բայց արդէն անկը չէ՛ր բաւեր որ...:

Ե. Ե.

110.— Վերի գրութեան մէջէ՛ն դսէ՛ք սեռի խնդիր մը:

111.— Ըսէ՛ք թէ հետեւեալ բայերը երբ ապաթարց ունին՝ ինչո՛ւ ունին, եւ երբ չունին՝ ինչո՛ւ չունին:

Օրինակ.— Չտաւ = Չունի. «Սահմ., Ներկայ, եզ. Գ. դէմք» է:

Չգրեց = Չունի. «Բաղաձայնով կը սկսի՛ Գ.»:

Չ'երթար = Ունի. «Չայնտարով կը սկսի եւ Սահմ. եզ., Ներկայ, եզ. Գ. դէմք» է:

Չտաւ, չգրեց, չ'երթար, չերթա՛ր, չեղաւ, չըլլա՛ր, չ'ըլլար, չունի, չերգեցին, չաղաչեց, չ'ուզեր, չուզե՛ր, չկայ, չքերիք, չաղմկեցինք, չէր, պիտի չորկէի, քող չմտածէ, չհետեւեցան, չ'իյնար, չժշէր, չ'անապարեր, չաշխատէր, չգտանք, չքափէր, չմնայի, չհասաք, չաշխատեցաւ, չանապարէին, չունէր, չ'որսար, պիտի չկլիեմ, չէիր, քող չերթայ, չունի, պիտի չաւարտէր, չկային, չառաւ:

112.— Լուծեցէ՛ք նախորդ հրահանգին բայերը՝ ձեր մտքին մէջ անոնցմով մէկական նախադասութիւն կազմելէ ետք:

ԴԱՍ 10

ԳՈՅԱԿԱՆ ԵՒ ԻՐ ՏԵՍԱԿՆԵՐԸ

147.- Ինչ որ կայ աշխարհի վրայ՝ անուն մը ունի: Քերական- նութեան մէջ այդ անուններուն կ'ըսենք գոյական: Այսպէս. «Մե- լան», «նուագ», «Ժպիտ», «Ձոհրապ», «սէր» բառերը գոյականներ են, որովհետեւ անուններն են գոյութիւն ունեցող բաներու:

148.- Գոյական եւ անուն նոյնն են քերականութեան մէջ:

149.- Գոյականները կրնան ըլլալ Յատուկ եւ Հասարակ:

150.- Յատուկ է այն գոյականը որ բանի մը մասնաւոր (ի- րեն միայն յատուկ) անունն է, եւ կը ծառայէ զայն զանազաներու իր նմաններէն: Այսպէս. Երբ ըսենք «աղջիկ», կը հասկնանք որեւէ աղջիկ եւ ամէն աղջիկ: Բայց երբ ըսենք «Շողիկ», կը հասկնանք աշխարհի բոլոր աղջիկներուն մէջէն մասնաւոր մէկ աղջիկ: «Շո- ղիկ» յատուկ անուն է:

151.- Հասարակ է այն գոյականը, որ բանի մը մասնաւոր անունը չէ, այլ անունն է նոյն տեսակին պատկանող բոլոր բանե- րուն: Այսպէս. «Աղջիկ» հասարակ անունն է, որովհետեւ ամէն աղ- ջիկի կրնանք «աղջիկ» ըսել, բայց «Շողիկ» բառը յատուկ անունն է, որովհետեւ ամէն աղջիկի «Շողիկ» չէնք կրնար ըսել:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.- Կրնան մէկէ աւելի աղջիկներ նոյն անունը ունենալ, պատճառը այն է որ չունինք այնքան մը յատուկ անուններ՝ որ կարելի ըլլայ ամէն աղջիկի տարբեր անուն մը տալ՝ եթէ նոյնիսկ ուզենք:

152.- Յատուկ անունները միշտ կը սկսին գլխադիրով:

153.- Գոյականները կրնան ըլլալ նաեւ նիւթական, վերացա- կան եւ հաւաքական:

154.- Նիւթական կը կոչուին այն գոյականները, որոնք կ'ըմբռնենք մեր հինգ զգայարաններէն որեւէ մէկուն միջոցով: Այսպէս. «Գիրք» նիւթական է (անոր գոյութիւնը կրնանք զգալ

մեր շօշափելիքով կամ տեսանելիքով), «բոյր» նիւթական է (անոր գոյութիւնը կը զգանք մեր հոտոտելիքով), «լոյս» նիւթական է (անոր գոյութիւնը կը զգանք մեր տեսանելիքով), «համ» նիւթա- կան է (զայն կը զգանք մեր ճաշակելիքով):

Նիւթական գոյականները մեր միաբէն եւ հոգիէն դուրս դանտող բաներու անուններն են: Այսպէս. «Ջուր», «երգ», «հոտ», «ճամբայ», «երկիր», «օդանաւ» նիւթական անուններ են:

155.- Վերացական կը կոչուին այն գոյականները, որոնք 1) մտային-հոգեկան բաներու անուններ են, ինչպէս՝ «հաշիւ», «ոխ», կամ 2) գործողութիւնի ցոյց կու տան, ինչպէս «մեկնում», «յեղափոխութիւն» եւ կամ 3) վիճակ ցոյց կու տան, ինչպէս՝ «սով», «տխրութիւն»:

156.- «Թիւն», «անք», «ուժ», «ոյթ» մասնիկներով վերջա- ցող գոյականները վերացական են:

157.- Հաւաքական կը կոչուին այն գոյականները, որոնք իրմբեր կը ներկայացնեն: Այսպէս. «Բանակ», «Ժողովուրդ», «ամբոխ»: (Հուաքական անունները կը նկատուին եղակի՝ թէեւ իմաստով յոգնակի են):

158.- Գոյականին վրայ կարելի է աւելցնել 1) յօդ, 2) Բիւ, 3) հոլով:

159.- Յօդերն են - «ս», «դ», «ն» եւ «ը» գիրերը:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

1) «Ս» յօդը առաջին դէմքի եղակիին համար է: Այսպէս. «Իմ լուսանկարս», «իմ ձիս»: «Դ» յօդը երկրորդ դէմքի եղակիին համար է: Այսպէս. «Քու լուսանկարդ», «Էմ ձիդ»: «Ն» եւ «Ը» յօդերը երրորդ դէմքի եղակիին եւ բոլոր յոգնակիներուն համար են: Այսպէս. «Իր ձիս եւ իր լուսանկարը» կամ «մեր ձիս եւ մեր լուսանկարը», «ձեր ձիս եւ ձեր լուսանկարը», եւայլն:

2) «Ն» եւ «ը» յօդերը նոյնն են, սա տարբերութեամբ որ «ը» յօդը ընդհանրապէս կ'աւելցնենք բաղաձայնով վերջացող բառե- րուն վրայ (չիշը, մարդը), մինչ՝ «ն» յօդը ընդհանրապէս կ'աւել- ցնենք ձայնաւորով վերջացող բառերու վրայ (կատուն, Ատրիշէն):

115.- Ըսէ՛ք թէ հետեւեալ բառերէն որո՛նց վրայ հոլովա-
կերտ մասնիկ աւելցած է, եւ որո՛նց՝ չէ աւելցած: Զատեցէք մաս-
նիկները գծիկով:

Մատիտի, մատանի, սառնարանի, պատանի, հոգի (հոգի),
գինի (գինի), գօտի, մոգի, կարագի, ձագի, բերդի, ձի, Պէյրուք-
ցի, պատի, սիրտի, քնի, Սօսի, ապակի, տապակի, դպրոցէ, քա-
րէ, Մարգարէ, մարգարէ, եթէ, տունէ, անունէ, Հեղինէ, տու-
փերէ, ճամբաներէ, բագէ, շահէ, Շահէ, ձիերէ, Վաչէ, ձիքով,
ծով, քով, դամակով, կով, բով, ափով, գոյներով, հով, կողով,
հանոյքով, շոգի (շոգի):

116.- Յոգնակիի նշանը, յօղը եւ հոլովակերտ մասնիկները
գատեցէք հետեւեալ բառերուն (հոն ուր կան):

ՕՐԻՆԱԿ.- Դաշտերէն = դաշտ-եր-է-ն:

Դաշտերէն, Մարգարէն, մարգարէն, մարդերու, բանջարե-
ղէններէն, աւերներէ, ձուկերունը, շոգիներով, նշնիներուն, Ի-
տալերէնը, գրիչներովդ, հոգիէս, բագէն, ճամակիդ, կողովիս, Ա-
րարները, եկեղեցիին, Մարօն, պատշգամներովը, բուն (բուն),
լուն:

117.- Ըսէ՛ք թէ հետեւեալ բառերէն որո՛նք գոյական են: Ա-
պա որոշեցէ՛ք գոյականներուն տեսակը (հասարակ թէ յատուկ,
եւ նիւթակա՞ն, վերացակա՞ն թէ հաւաքական ըլլալը):

Գիրք, գրիչ, գրել, վագ, վագեց, մուտք, շրքումք, վա-
րունգ, ցելս, վերադարձ, չվերադարձայ, միտք, մտածում, չա-
միչ, գումարում, ուղի, խօսք, խօսուածք, խօսեցէ՛ք, օղ, հրացան,
մոռցան, մոռացում, Յասմիկ, մարգրիտ, յուզում, գալուստ, Գա-
լուստ, յարութիւն, Յարութիւն, մոխիր, խումք, ծառ, ծով, գոյն,
գաղտնիք, վարժութիւն, նախում, նուէր, նուիրեց, ցեց, ծեծ,
պիտի չծեծէր, ճաշկերայք, յանցանք, գոհար, Գոհար, բանակ:

ԴԱՍ 11

Գ Ո Յ Ա Կ Ա Ն (ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ)

163.- Երբ գոյականի մը վրայ հոլովակերտ մասնիկ (ի, է,
ով, ու) չէ աւելցուած՝ կ'ըսենք թէ Ուղղական կամ Հայցական հո-
լով է: Երբ «ի» կամ «ու» աւելցուած է՝ կ'ըսենք թէ Սեռական կամ
Տրական հոլով է. երբ «է» աւելցուած է՝ կ'ըսենք թէ Բացառական
հոլով է. երբ «ով» աւելցուած է՝ Գործիական հոլով է՝ կ'ըսենք:
Այսպէս.

| | ԵԶԱԿԻ | ՅՈԳՆԱԿԻ |
|-----------|---------|------------|
| Ուղղական | { Նկար | Նկար-ներ |
| Հայցական | { » | » |
| Սեռական | { Նկարի | Նկար-ներու |
| Տրական | { » | » |
| Բացառական | Նկարէ | Նկար-ներէ |
| Գործիական | Նկարով | Նկար-ներով |

164.- Հայերէնի հոլովները վեց հատ են: Այն բառերը որոնք
կը հոլովուին «նկար» բառին պէս՝ կ'ըսենք թէ կանոնաւոր հոլո-
վում ունին:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.- Երբ գոյական մը «ի»ով կը վերջանայ՝ եզակի սեռա-
կան-տրականին մէջ կ'ունենայ երկու «ի», Զորի — ջորիի:
Երբ գոյական մը «է»ով կը վերջանայ՝ եզակի բացառականին մէջ կ'ու-
նենայ երկու «է»: Բոպէ — բոպէէ:

165.- Կան գոյականներ, որոնց հոլովումը կը տարբերի «նկար»
բառին հոլովումէն: Կ'ըսենք թէ անոնց հոլովումը անկանոն է:
Այսպէս.

Ա.- Եզակի սեռական-տրականի մէջ «ի»ի տեղ «ու» կ'առնեն
«մարդ», «հայ», «ղար» գոյականները: (Այս ձևով ալ կրնան հո-
լովուիլ հետեւեալ գոյականները — Արջ, էջ, պահ, եւայլն): Այս-
պէս. Մարդ, մարդու, մարդէ, մարդով:

Բ.- «Տղայ» եւ «ճամբայ» գոյականներուն սեռական-տրականը երկու ձեւ ունի: Այսպէս. Տղայ — տղայի կամ տղու, ճամբայ — ճամբայի կամ ճամբու:

Գ.- Բոլոր «թիւն» վերջաւորութիւնը ունեցող գոյականները կը հոլովուին հետեւեալ ձեւով.

| | | | |
|-----------|-------|-------------|--------------------|
| Ուղղ. | Հայց. | Զօրութիւն | Հայրենասիրութիւն |
| Սեռ. | Տր. | Զօրութեան | Հայրենասիրութեան |
| Բացառական | | Զօրութեմէ | Հայրենասիրութեմէ |
| Գործիական | } | Զօրութիւնով | Հայրենասիրութիւնով |
| | | Զօրութեամբ | Հայրենասիրութեամբ |

Դ.- Ժամանակ ցոյց տուող գոյականներու եզակի սեռական-տրականը մէկէ աւելի ձեւ ունի: Այսպէս. Աշուն — աշունի կամ աշնան, Գիշեր — գիշերի կամ գիշերուան:

Այս ձեւով հոլովուող գոյականներն են — Գարուն, ամառ, ձմեռ, Ժամանակ, Ժամ, պահ, ամիս, իրիկուն, օր, տարի, շաբաթ, եւայլն:

Ե.- «Տուն» եւ «շուն» գոյականներուն եզակի սեռական-տրականը երկու ձեւ ունի: Այսպէս. Տուն — տունի կամ տան, Շուն — շունի կամ շան:

Զ.- «Դուռ», «լեռ», «թոռ» գոյականներուն եզակի սեռական-տրականը երկու ձեւ ունի, ինչպէս նաեւ բացառականը: Այսպէս. Լեռ — լեռի կամ լեռան, լեռէ կամ լեռմէ:

Է.- «Հայր», «մայր», «եղբայր» գոյականները ունին հոլովումի մասնաւոր ձեւ: Այսպէս. Հայր — հօր, հօրմէ, հօրմով (կամ հայրով):

Ը.- Մասնաւոր հոլովում մը ունին նաեւ «քոյր», «կին», «ընկեր», «սէր» գոյականները: Այսպէս. Քոյր — քրոջ, քրոջմէ, քրոջմով:

Թ.- «Սէր» եւ «Աստուած» գոյականներն ալ ունին մասնաւոր ձեւ հոլովումի: Այսպէս. Սէր — սիրոյ, սէրէ, սէրով. Աստուած — Աստուծոյ, Աստուծմէ, Աստուծմով:

Հոլովումի ա'յս ձեւն ալ կրնան ունենալ նաեւ «իս» վերջացող երկրանունները: Այսպէս. Ասիա — Ասիոյ, Հունգարիա — Հունգարիոյ (բայց նաեւ՝ Ասիայի, Հունգարիայի):

Ժ.- «Ում» ածանցով վերջացող անուններուն սեռ. — տրականը կրնայ կադմուիլ նաեւ «ան» մասնիկով: Այսպէս. Յարձակում — յարձակումի, կամ յարձակման:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.- Հոլովումի գոյք ձեւերը՝ կարգ մը բառերու պարագային՝ տարբեր են իրենց գործածութեամբ: Այսպէս. երբ «տուն» բառը կը նշանակէ «բնակարան», կրնանք հաւասարապէս ըսել «տունի» կամ «տան», բայց երբ կը նշանակէ «ոտանաւորի տուն», չենք կրնար «տան» ըսել. պէտք է ըսենք «տունի»: Նոյնպէս, կրնանք ըսել «գլուխի» կամ «գլխու» երբ «գլուխ» բառը կը նշանակէ «մարդկային գլուխը». բայց երբ «գիրքի մը գլուխն» է՝ չենք կրնար «գլխու» ըսել: (Փոխարեքական իմաստով գործածուած բառերուն հոլովումն է որ կանոնաւոր է այս պարագային):

166.- ՅՈՒՆԱԿԻԻՆ ՄԷՋ, բոլոր գոյականներն ալ ունին կանոնաւոր հոլովում, այսինքն կը հոլովուին «նկար» բառին պէս: Բացառիկ են «տղայ» եւ «մարդ» գոյականները. յոգնակիի մէջ ունին երկուքական տեսակ հոլովում: Այսպէս.

| | Կանոնաւոր | Անկանոն | Կանոնաւոր | Անկանոն |
|--------|-----------|---------|-----------|-----------|
| Ուղղ.- | Տղաներ | Տղաք | Մարդեր | Մարդիկ |
| Հայց.- | » | » | » | » |
| Սեռ.- | Տղաներու | Տղոց | Մարդերու | Մարդոց |
| Տր.- | » | » | » | » |
| Բցռ.- | Տղաներէ | Տղոցմէ | Մարդերէ | Մարդոցմէ |
| Գործ.- | Տղաներով | Տղոցմով | Մարդերով | Մարդոցմով |

ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐ.- Ուղղական — Ուղղ., Հայցական — Հայց., Սեռական — Սեռ., Տրական — Տր., Բացառական — Բցռ., Գործիական — Գործ.:

167.- Գոյական մը լուծելու համար շարքով կ'ըսենք՝

- 1.- Նիւթակա՞ն, վերացակա՞ն թէ հաւաքակա՞ն ըլլալը.
- 2.- Յատո՞ւկ թէ Հասարակ ըլլալը.
- 3.- Թիւր (եզակի թէ Յոգնակի ըլլալը).
- 4.- Հոլովը
- 5.- Պաշտօնը (Տէր-բայի, Սեռի խնդիր, Ստորագրի ըլլալը, եւայլն):
- 6.- Որո՞ւն վերաբերիլը (Բային՝ եթէ Տէր-բայի կամ Սեռի խնդիր է. Տէր-բայիին՝ եթէ Ստորագրի է, եւայլն):
- 7.- Յօդը (Եթէ ունի):

Լուծենք «Եղբայրս գիրքեր կարգաց» նախադասութիւնը:

- 1.- Կարգաց — Ներք., «կարգալ», Գ. ԼԾ., Կան., Հաստ., Սահմ., Անց. Կաստ. Գ. դէմք, եզ.:
- 2.- Եղբայրս — Նիւթ., Հսրկ. անուն, եզ., Ուղղ. հոլ. Տբ. «կարգաց» բային, «ս» դիմ. յօդ.:
- 3.- Գիրքեր — Նիւթ., Հսրկ. անուն, Յոգ., Հայց. հոլ. Սխ. «կարգաց» բային:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Որո՞նք են հայերէնի հոլովները: Որո՞նք են անկանոն հոլովումի գլխաւոր խումբերը:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

118.- Գտէ՛ք հետեւեալ գրութեան 32 գոյականները, որոշեցէ՛ք անոնց տեսակը եւ ցոյց տուէ՛ք անոնց վրայ աւելցուած յոգնակիի նշանը, հոլովակերտ մասնիկը եւ յօդը՝ եթէ կան:

- Հերի՛ք քանաս, տղա՛ս. արեւը սենեակդ է մտեր, - կ'ըսէր վազգէնին մայրը ամէն առտու՝ զարթուցիչ ժամացոյցի մը պէս ճշապահ:

Ամառ էր, լեռ ելած էին: Վազգէն խոստացած էր իր դասերուն աշխատիլ. բայց թէև անցած էր առաջին ամիսը՝ ինք տակաւին քնացած ու խաղցած էր միայն:

Մայրը կը բարկանար, կ'աղաչէր, սակայն իգ՞ւր: Վազգէնին գլուխին վրայ քա՛ր ալ կոտրէին, կրա՛կ ալ մաղէին, ամպ ալ գոռացնէին՝ աչքերը չէր բացար: Մայրը, ճարահատ, կը ցնցէր ու վերջապէս կ'արթնցնէր զայն:

- Զե՛ս ձգեր քիչ մը քնանամ, - կ'ըսէր վազգէն:
- Հապա դասե՞րդ:
- Օ՛, առեմ կայ, երկա՛ր է արձակուրդը...

Բայց արձակուրդը այնքան ալ երկար չէ՛ր: Վրայ հասաւ դպրոցական վերամուտը: Ու ահա վազգէնը հոգին բերանը կը բերէ իր դասարանին հետեւիլ կարենալու համար: Ու մինչ իր ընկերները վազելով կը յառաջանան՝ ինք կը կաղայ: Խե՛ղճ վազգէնը:

Օգնե՛նք իրեն...:

119.- Հոլովեցէ՛ք հետեւեալ բառերուն եզակին եւ յոգնակին՝ միշտ տալով հոլովներուն անունները:

ԿԱՆՈՆԱՒՈՐ ՀՈՂՈՎՈՒՄՆԵՐ.— Ծաղկաման, գոյն, ոտքս, բառարանք, գօտիս, շոգին, կափարիչը, փոշի, հաւաքածոյ ընկեր, Անգլիա, երեկոյ:

ԱՆԿԱՆՈՆ ՀՈՂՈՎՈՒՄՆԵՐ.— Մարդ, դար, տղայ, աշուն, պահ, միութիւն, ճմեռ, տարի, տուն, դուռ, մայր, կին, ժամ, շուն, լեռ, հայր, քոյր, սէր, Ասիա, ընկեր, Աստուած, տէր, գիշեր, Անգլիա, երեկոյ:

124.- Ըսէ՛ք թէ՛ հետեւեալներէն որո՞նք ուղղական-հայցական են, եւ որո՞նք՝ սեռական-տրական:

Հոր, հօր, մօր, եղբայրդ, մայրք, տիրոջը, պոչը, հօտի, հօտի, Դուրեան, զօրութեան, պասեան, սան, Մարի, տարի, տառի, գարի, քարի, աշնան, շան, մարդերու, եղբօր, արօր, Գոնկօ, քոյր, ջոյ, մարդու, քթու, ճնի, ուրու, արմիհի, երեկոյեան, Արովեան, լեռան, գերան, չուան, դուան, կնոջ, ճշան, շուն, աշուն, հաւաքածոյ, Աստուծոյ, երեկոյ, ճիւղ, տղուն, մեղուն, իրիկուն, մատեան, քաղութեան, ամառան, կարաւան, վան, տանտիրոջդ, բուն, բուն, օրուանը, պարանը, օրրան, քոռան, քամին, գամին, դրամին, Ասիոյ, ընկերի, սիրոյդ, երեկոյք, օրօրոց, մարդոց, գինի (գինի), շոգի (շոգի), ընկերներուդ, խութք, սառի, սարի:

121.- Լուծեցէ՛ք հետեւեալ նախադասութիւնները եւ դժեցէ՛ք անոնց պատկերները:

Առուակներն ու վտակները լոցին: Ատրինէն գարմիկս չէ: Եղնիկներն ու եղբերունները քոյրս կերակրեր էր: Հայրդ պտուղ եւ միս կը գնէր: Կրա՛կ պիտի ըլլան անուխներն ու փայտերը: Ուժ եմ հայրենասիրութիւնն ու հաւատքը:

ԴԱՍ 12

ԴԵՐԱՆՈՒՆ (ԱՆՁՆԱԿԱՆ)

168.- Դերանունները բառեր են, որոնք կը դրուին գոյականներու տեղ, որպէսզի այդ գոյականները շատ չկրկնուին: Այսպէս կ'ըսենք՝ Հեռաձայնեցի քոջս եւ «իրեն» իմացուցի քե՛ «զինք» կը փափաքէի տեսնել, փոխանակ ըսելու՝ «Հեռաձայնեցի քոջս եւ քոջս իմացուցի թէ քոյրս կը փափաքէի տեսնել»: «Իրեն» եւ «զինք» Դերանուններ են. դրուած են «քոջս» եւ «քոյրս» գոյականներուն տեղ:

169.- Այն դերանունները որոնք դրուած են անձի անուններու տեղ՝ կը կոչուին Անձնական դերանուն:

Անձնական դերանուններն են, Ա. դէմք՝ Ես-մենք, Բ. դէմք՝ դու-դուք, Գ. դէմք՝ ինք-իրենք եւ ան-անոնք:

| Ա. ԴԵՄՔ | | Բ. ԴԵՄՔ | |
|---------|--------|---------|--------|
| Ուղղ. — | ԵՍ | ՄԵՆՔ | ԴՈՒՆ |
| Հայց. — | զիս | մեզ | Քեզ |
| Սեռ. — | իմ | մեր | քու |
| Տր. — | ինձի | մեզի | քեզի |
| Բցո. — | ինձմէ | մեզմէ | քեզմէ |
| Գործ. — | ինձմով | մեզմով | քեզմով |

| Գ. ԴԵՄՔ | | | |
|---------|-------|----------|------|
| Ա. Ձեռ | | Բ. Ձեռ | |
| Ուղղ. — | Ինք | Իրենք | Ան |
| Հայց. — | զինք | զիրենք | զայն |
| Սեռ. — | իր | իրենց | անոր |
| Տր. — | իրեն | իրենց | անոր |
| Բցո. — | իրմէ | իրենցմէ | անկէ |
| Գործ. — | իրմով | իրենցմով | անով |

170.- Անձնական դերանուններու Գ. դէմքին Ա. եւ Բ. ձեռները գործածութեամբ տարբեր են իրարմէ: Ա. ձեռը (ինք-իրենք) յատուկ է «մօտ» եղող անձին կամ անձերուն. Բ. ձեռը (ան-անոնք) յատուկ է նախորդէն ետք եկող անձին կամ անձերուն: Այսպէս.

«Ես ըսի Տիրամին որ Արմէնին տայ այս գիրքը» կ'ըլլայ՝ «Ես ըսի իրեն (Տիրանին) որ անոր (Արմէնին) տայ այս գիրքը:

Երկուքն ալ (թէ՛ Տիրանը եւ թէ՛ Արմէնը) Գ. դէմք են, բայց քանի որ «Տիրանը» կու գայ «Արմէնէն» առաջ՝ «Տիրանին» տեղ կը դնենք իրեն (որ Ա. ձեռ է), «Արմէնին» տեղ՝ անոր (որ Բ. ձեռ է):

| | |
|-----------------|--|
| Փոխանակ ըսելու՝ | «Տիրան Տիրանին գիրքը տուա ինձի», |
| կ'ըսենք՝ | «Տիրան իր գիրքը տուա ինձի»: |
| Փոխանակ ըսելու՝ | «Տիրան Արմէնին գիրքը տուա ինձի», |
| կ'ըսենք՝ | «Տիրան անոր գիրքը տուա ինձի»: |
| Փոխանակ ըսելու՝ | «Տիրանը կ'անչեցի որ Արմէնն ալ կանչեմ», |
| կ'ըսենք՝ | «Ձինք կ'անչեցի որ զայն ալ կանչեմ»: |
| Փոխանակ ըսելու՝ | «Տիրան Տիրանին ձեռքը Արմէնին ձեռքին քով դրաւ», |
| կ'ըսենք՝ | «Տիրան իր ձեռքը անոր ձեռքին քով դրաւ»: |

171.- Անձնական դերանուններու Գ. դէմքին Բ. ձեռը կը գործածուի նաեւ կենդանիներու, վայրերու, իրերու անուններուն տեղ: Այսպէս. «Գնեցի պահարան մը եւ անոր (պահարանին) մէջ պահեցի թուղթերս»:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.- Ոմանք կ'ըսեն «ինքը», «զինքը»: Նախընտրելի է չդնել այս յօդերը:

172.- Դերանուն մը լուծելու համար կ'ըսենք անոր՝

- 1.- Տեսակը - (Անձնական, եւայլն)
- 2.- (Դէմքը) - (Ա. Բ. կամ Գ. դէմք ըլլալը, եթէ ունի)
- 3.- Թիւը - (Եզակի կամ յոգնակի ըլլալը)
- 4.- Հոլովը
- 5.- Պաշտօնը - (Տբ., Սխ., Ստորոգելի, եւայլն)
- 6.- Որու վերաբերիլը - (Եթէ Տբ. կամ Սխ. է՝ բային. եթէ Ստորոգելի է՝ Տէր-բայիին):
- 7.- Յօդը - (Եթէ ունի):

ԿրճԱՏՈՒՄՆԵՐ.- Դերանուն — Դեր., Անձնական — Անձ.: (Հոլովական մասնիկ ունեցող բառ մը չենք կրճատեր):

173.- *Լուծենք* - «Ան ձեզ կը փնտռէր» նախադասութիւնը.

1.- Կը փնտռէր = *Ներդ.*, «*փնտռել*», *Ա. Լծ.*, *Կան.*, *Հաստ.*, *Սահմ.*, *Անց.* *Անկ.*, *Գ. դէմք.*, *Եղ.:*

2.- Ան = *Անձ.* *դեր.*, *Գ. դէմք.*, *Եղ.*, *Ուղղ.* *Հոլ.*, *Տբ.* «*կը փնտռէր*» բային:

3.- Ձեզ = *Անձ.* *դեր.*, *Բ. դէմք.*, *Յոդ.*, *Հայց.* *Հոլ.*, *Սխ.* «*կը փնտռէր*» բային:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. - Ի՞նչ է դերանունը. Անձնակա՞նը: Ի՞նչ է տարբերութիւնը *Գ. դէմքի Ա.* եւ *Բ. ձեւերուն:* Ինչպէ՞ս կը լուծենք դերանունը:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

122.- *Գոց ըսէ՛ք անձնական դերանունները՝ տալով Հոլովներուն անունները:* (*Ուղղ. - Ես, հայց. - դիս, սեռ. - իմ, Եւայլն:*)

123.- *Ըսէ՛ք դէմքը, թիւը եւ Հոլովը Հետեւեալներուն:*

Քեզ, իր, անոր, զիս, մեր, ձեզի, ինք, անոնցմով, քու, ինծի, անկէ, ձեզ, մեզմէ, իրմով, իրեմ, անոնց, ինձմէ, մեզ, իրեմց, զիրեմք, անոնք, դուն, զանոնք, գայն, ես, իմ:

124.- *Շեղազիր բառերուն տեղ Անձ. դերանուն դրէք:*

Հանդիպեցայ *Ալեքին* եւ *Ալեքէն* խնդրեցի որ *Ալեքին* գիրքը ինծի տայ: Կանչեցի *Պերճուհին* ու *Պերճուհին* ըսի որ *Ալեքէն* առնէ *Ալեքին* բառարանը եւ տայ *Ալեքին* եղբորը: *Ալեքին* գիրքը եւ *Պերճուհին* գրիչը նոր են: *Ալեքին* ըսի որ *Ալեքին* մատիտները *Ալեքին* ընկերներուն դրկէ: Ես՝ *Ալեքը* եւ *Պերճուհին* հրաւիրեցի մեզի: *Ալեքին* տուի *Պերճուհին* առած ռետինս: *Ալեքով* հպարտացանք *Պերճուհին* առջեւ:

125.- *Լուծեցէ՛ք Հետեւեալ նախադասութիւնները եւ դժեցէ՛ք անոնց պատկերները:*

Զինք եւ քեզ կարօցանք: Իրեմք, դուք եւ մենք չենք մանչնար գանոնք: Ինք բարեկամս ու եղբայրս եղաւ: Սօսին, Պետիկը, Աստղիկն ու քեզ պիտի չմոռնամ: Արեւը, լուսինը, աստղերը կը լուսաւորեն մեզ եւ երկրագունդը: Բժիշկ պիտի ըլլա՞ս:

ԴԱՍ 13

ԲԱՅ (ՏԵՍԱԿՆԵՐԸ)

174.- *Բայի մը տէր-բային ըննելով կրնանք որոշել այդ բային տեսակը:*

Ա. - ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ է այն բայը, որուն տէր-բային ուրիշի մը (*կամ ուրիշներու*) բան մը կ'ընէ: Այսպէս. *Երբ ըսենք՝ «Քոյրս կերակուր կ'եփէ»,* քոյրս՝ որ տէր-բային է, բան մը կ'ընէ «*կերակուր*»ին (*զայն կ'եփէ*): Կ'եփէ ներգործական բայ է. «*կերակուր*»ը, որուն բան մը կ'ընէ տէր-բային՝ սեռի խնդիրն է, թիւ 3-ը:

● Ներգործական է այն բայը, որուն գործողութիւնը՝ տէր-բային կը կատարէ ուրիշի մը վրայ: Այդ «*ուրիշ*»ը սեռի խնդիրն է:

Բ. - ԱՆՑՈՂԱԿԱՆ է այն բայը, որուն տէր-բային պատճառ կ'ըլլայ որ ուրիշ մը բան մը ընէ (*կամ՝ բան մը ըլլայ*): Այսպէս. *Երբ ըսենք՝ «Մայրը կաթ խմցուց մանկիկին»,* կը նշանակէ թէ «*մայրը*», որ տէր-բային է, պատճառ եղաւ որ մանկիկը՝ այսինքն ուրիշ մը, բան մը ընէ՝ *կաթ խմէ:* «*խմցուց*» Անցողական է:

● Անցողական է այն բայը, որուն տէր-բային՝ բային ցոյց տուած գործողութիւնը (*կամ վիճակը*) ուրիշի մը կատարել (*կամ կրել*) կու տայ:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Անցողականը ներգործականին նման՝ կ'ունենայ սեռի խընդիր: Այսպէս. «*Մայրը կաթ խմցուց մանկիկին*» նախադասութեան մէջ, «*կաթ*» բառը սեռի խնդիր է:

Անցողական բայերը կրնան երկու տեսակ կազմութիւն ունենալ: *Ա.* - Կա՛մ կը վերջանան «ցնել» մասնիկով, եւ կամ՝ *Բ.* - չինուած կ'ըլլան՝ «տալ» բային օգնութեամբ: Այսպէս. «*խմցնել*», «*լացնել*», «*բերել տալ*», «*կտրել տալ*»:

«*Տալ*» բայով կազմուած անցողական բայերուն երկու մասերը կ'առնենք միասին եւ զանոնք միասնաբար կը նկատենք մէկ բայ: «*Տալ*»ով կազմուած բայերը *Գ.* լծորդութեան կը պատկանին:

Գ. - ԿՐԱԻՈՐԱԿԱՆ է այն բայը, որուն տէր-բային ուրիշ մը կամ ուրիշներ բան մը կ'ընեն: Այսպէս. *Երբ ըսենք՝ «Զինուորը*

վերաւորուեցաւ», կը նշանակէ թէ՛ ուրիշ մը կամ ուրիշներ բան մը ըրին «զինուոր»ին, որ տէր-բային է, - վերաւորեցին: «Վերաւորուեցաւ» կրաւորական բայ է:

● Կրաւորական է այն բայը, որուն տէր-բային ուրիշներէ իր վրայ կը կրէ բային գործողութիւնը: (Կրաւորական բայերը կը վերջանան «ուի»ով - վերաւորուի: Ներգործական բայերէն շատերը ունին իրենց կրաւորական ձեւը: Այսպէս.- Պատժել - պատժուիլ, տեսնել - տեսնուիլ):

Դ.- ԱՆԴՐԱԴԱՐՁ է այն բայը, որուն տէր-բային ինքնիրենի բան մը կ'ընէ: Այսպէս. Երբ ըսենք՝ «Նղբայրս սանտրուեցաւ», կը նշանակէ թէ տէր-բային («Նղբայրս») ինք-իրեն բան մը ըրաւ՝ ինք իր մազը սանտրեց: «Սանտրուեցաւ» Անդրադարձ բայ է:

● Անդրադարձ է այն բայը որուն տէր-բային ինք իր վրայ կը կատարէ բային գործողութիւնը: (Անդրադարձ բայերն ալ, կրաւորականներուն պէս, կը վերջանան «ուի»ով: Պէտք չէ սակայն շփոթել զանոնք: Մինչ կրաւորական բային տէր-բային ուրիշներ բան մը կ'ըսեն, Անդրադարձին տէր-բային ինք իրեն բան մը կ'ընէ: Ներգործական բային տէր-բային ուրիշներու բան մը կ'ընէ):

Ե.- ՓՈՆԱԴԱՐՁ է այն բայը, որուն տէր-բային եւ ուրիշ մը իրարու նոյն բանը կ'ընեն: Այսպէս. Երբ ըսենք՝ «Հայրս նամակեցեցաւ հօրդ հետ», կը նշանակէ թէ «Հայրս» որ տէր-բային է, նամակ գրեց հօրդ, եւ հայրդ ալ, իր կարգին, նամակ գրեց իմ հօրս: «Նամակեցեցաւ» փոխադարձ է:

Փոխադարձ է նաեւ այն բայը, որուն տէր-բայիները իրարու նոյն բանը կ'ընեն: Այսպէս. Երբ ըսենք՝ «Արամ եւ Միհրան կուրտեցան», կը նշանակէ թէ Արամ կուրտեցաւ Միհրանին հետ, եւ Միհրան՝ Արամին հետ: «Կուրտեցան» փոխադարձ է:

● Փոխադարձ է այն բայը, որուն գործողութիւնը՝ երկու կամ աւելի անձեր (կամ՝ իրեր, կենդանիներ, գոյացութիւններ) իրարու վրայ կը կատարեն:

Զ.- ԶԻԶՈՒՔ է այն բայը, որուն տէր-բային ո՛չ ուրիշի մը բան մը կ'ընէ (Ներգ.), ո՛չ ուրիշէ մը բան մը կ'ըլլայ (Կր.), ո՛չ ինք-իրեն բան մը կ'ընէ (Անգր.) եւ ո՛չ ալ ուրիշի մը կ'ընէ ինչ որ այդ ուրիշը կ'ընէ իրեն (Փոխ.): «Զեզոք» է այն բայը որուն տէր-բային պարզապէս բան մը կ'ըլլայ: Այսպէս. Երբ ըսենք՝ «Փոթորիկը սաստկացաւ», տէր-բային (փոթորիկը), այս նախադասութեան մէջ՝ ո՛չ ուրիշի մը բան մը կ'ընէ, ո՛չ ուրիշէ մը բան մը կ'ըլլայ, ո՛չ ինք-իրեն բան մը կ'ընէ եւ ո՛չ ալ ուրիշի մը կ'ընէ ինչ այդ ուրիշը իրեն կ'ընէ: «Սաստկացաւ» Զեզոք բայ է:

● Զեզոք է այն բայը, որուն ցոյց տուած վիճակը կամ գործողութիւնը կը մնայ տէր-բային վրայ, ուրիշի մը չ'անցնիր: Օր.- Հազաց:

է.- ԷԱԿԱՆԸ «ըլլալ» բայն է:

295.- Հայերէնը ունի եօթը տեսակ բայ՝ Ներգործական, Անցողական, Էական, Կրաւորական, Անդրադարձ, Փոխադարձ, Զեզոք:

Ներգործականը եւ Անցողականը կ'ունենան սեռի խնդիր (թիւ 3), Էականը կ'ունենայ ստորոգելի (թիւ 3): Կրաւորականը, Անդրադարձը, Փոխադարձը եւ Զեզոքը թիւ 3 չեն ունենար:

ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐ.- Փոխադարձ - Փոխ., Անցողական - Անցող., Անդրադարձ - Անդր., Կրաւորական - Կր.:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.- Քանի՛ տեսակ բայ կայ: Բացատրէ՛ զանոնք: Ո՛ր բայերը թիւ 3 ունին: Քանի՛ կազմ ունին անցողականները:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

126.- Ըսէ՛ք թէ հետեւեալ բայերէն որո՞նք կրաւորական են եւ որո՞նք Անդրադարձ՝ զանոնք գործածելէ ետք մէկական նախադասութեան մէջ:

Բռնուիլ, սափրուիլ, «սանտրուիլ», «լուացուիլ», մկրտուիլ, պատժուիլ, «օհառուիլ», հագուիլ, «ածիլուիլ», հասկցուիլ, «հանուիլ», ծափահարուիլ, քարգմանուիլ, պահուրտիլ, ձերբակալուիլ, յարգուիլ, «նետուիլ», «գարդարուիլ», ճգնուիլ, «պատրաստուիլ», նշմարուիլ, պատուելիլ, յիշուիլ, «մաքրուիլ»:

127.- Ինչո՞ւ չափերտուեր են նախորդ հրահանգին բառերէն ոմանք:

128.- Հետեւեալ նախադասութիւններուն ներգործական բայերը վերածեցէ՛ք կրաւորականի:

Օրինակ.- Հսկիչը պատժեց տղաքը - Տղաքը պատժուեցան հսկիչէն:

Հսկիչը պատժեց տղաքը: Բժիշկը խնամեց մեզ: Դեղը կը բուժէ հիւանդները: Փոքորիկը ֆանդեց տուները: Տնօրէնութիւնը դրկեց հրաւիրագիրը: Վահան յարգեց հիւրերը: Հայրս գովեց զիս: Վարպետը յանդիմաներ է աշկերտը: Դոմապանը վռնեց ձեզ:

129.- Գտէ՛ք հետեւեալ բայերուն տեսակը անոնցմով մէկա-
կան նախադասութիւն կազմելէ ետք: Բացատրութիւն տուէ՛ք:

կարդալ, հագալ, լաւիլ, ծաղրել, ծաղրուիլ, իյնալ, խըն-
դալ, խնդացնել, բռնուիլ, բռնել, սահիլ, սահեցնել, պատուելիլ,
լռել, գործակցիլ, ժպտիլ, ծամել, ծիծաղիլ, բարկանալ, քնացնել,
պահուիլ, բացատրել, վախցնել, վախնալ, վագել, վագցնել, մա-
րել, մարիլ, մարեցնել, շինել տալ, շինել, խնդրել, կռուելիլ, ըլ-
լալ, ծախսել, գարմանալ, շարժիլ, մսիլ, վիճիլ, քթակցիլ, լռ-
դալ, յարգուիլ, ծպտուիլ, լալ, լացնել, յարգել, յարգել տալ, գայ-
րանալ, սողալ, մեռնիլ, փել, փլիլ, հրել, հրուիլ, կապտել, լայն-
ցնել, լայննալ, բռիլ, բռցնել, բերել տալ, տանջուիլ, տենչալ:

130.- Մէկական նախադասութիւն կազմեցէ՛ք եօթը տեսակ
բայերէն իւրաքանչիւրով:

131.- Լուծեցէ՛ք հետեւեալ նախադասութիւնները եւ գծե-
ցէ՛ք անոնց պատկերները:

Տեսայ նապաստակներ եւ նագարներ. անոնք տերեւ կ'ու-
տէին: Հօրեղբայրս կ'ածիլուի. ան դէմքը չ'արիւններ: Կերպասները
գոգնոց, տափատ եւ շապիկ պիտի ըլլան: Զինուորներն ու սպանե-
րը վիրաւորուել են: Մ'ազդ կտրել տուի՞ր: Հտպիտը խնդացուց
մեզ: Թող չըզայնանային Զաւէնն ու Արամը: Սուրէնը, Արամ եւ
եղբայրը հաշտուել են:

Վրայ հասան ոստիկաններն ու պահակները, ճերբակալեցին
գողերը եւ բանտարկեցին գանոնք: Գիրքերն ու տետրակները ի՛նք
եւ Շահնուրը պատուել են եղեր: Վաճառականը խօսք տուել է եւ
չէ յարգել խօսքը: Շահանն ու Նուպարը՝ Հրանդն ու Տիրանը նեղը
դրել են: Ի դերեւ ելան յոյսերս, վրայ տուի հարստութիւնս:
Բրինձ, ոսպ, սիսեռ եւ ձաւար ուտելու չենք եղեր: Տիգրիսն ու
Նփրատը գետեր են:

ԴԱՍ 14

ՅԱՏԿԱՅՈՒՅԻՉ ԵՒ ԲՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ

176.- Անուն մը (կամ դերանուն մը) երբ ուղղական հոլով
է՛ կ'ըլլայ տէր-բայի կամ ստորագելի, եւ երբ հայցական հոլով է՛
կ'ըլլայ սեռի խնդիր:

177.- Սեռական-տրական անուն մը սեռական հոլով է՛ երբ
գործածուած է անունի մը հետ, տրական հոլով է՛ երբ գործած-
ուած է բայի մը հետ: Այսպէս.

«Սեղանին ոտքը կտրեցաւ» նախադասութեան մէջ՝ «սեղա-
նին» գոյականը սեռական հոլով է՛ որովհետեւ գործածուած է
«ոտքը» գոյականին հետ. — «սեղանին ոտքը»:

«Հայրս սեղանին մօտեցաւ» նախադասութեան մէջ՝ «սեղա-
նին» գոյականը տրական հոլով է՛ որովհետեւ գործածուած է «մօ-
տեցաւ» բային հետ. — «սեղանին մօտեցաւ»:

178.- Երբ սեռական-տրական անուն մը կապուած է գոյա-
կանի մը՝ կ'ըսենք թէ սեռական հոլով յատկացուցիչ է. երբ կապ-
ուած է բայի մը՝ կ'ըսենք թէ տրական հոլով բնութեան խնդիր է:
Այսպէս. Հեռուեալ նախադասութեան մէջ «աշակերտին» բառը
գործածուած է երկու անգամ: Առաջինը սեռ. հոլով յատկացուցիչ
է, երկրորդը՝ տր. հոլով բխ.:

«Ես» այս աշակերտին «գիրքը» միւս աշակերտին «տուի»:

179.- Այն գոյականը, որուն կապուած է յատկացուցիչը՝ կը
կոչուի յատկացեալ: Այսպէս. Վերի օրինակին մէջ («աշակերտին
դիրքը»), աշակերտին բառը յատկացուցիչ է. գիրքը բառը յատ-
կացեալ է:

Աշակերտին == Նիւթ. հաս. անուն, եզ. սեռ. հոլ. յատկացուցիչ «դիր-
քը» յատկացեալին, «ն» որոշ. յօդ:

180.- Յատկացուցիչ են նաեւ «ենց» մասնիկով կազմուած
Սեռական հոլով անուններն ու մականունները: Այսպէս. Պետրո-
սենց պարտէզը, Աւագեանենց խանութը:

181.- Յատկացուցիչը միշտ սեռական հոլով է. Յատկացեալին հոլովը կախում ունի իր պաշտօնէն: Այսպէս.

«Ջաւէնին պայուսակը կորսուեցաւ» նախադասութեան մէջ՝ «Ջաւէնին» գոյականը յատկացուցիչ է «պայուսակը» յատկացեալին որ ուղղական հոլով է, որովհետեւ տէր-բայի է:

«Ջաւէնին պայուսակը պահեցի ես» նախադասութեան մէջ՝ «պայուսակը» որ դարձեալ յատկացեալ է՝ հայցական հոլով է այս անգամ, որովհետեւ սեռի խնդիր է հիմա:

182.- Բառի մը յատկացեալ ըլլալը կ'ըսենք իր յատկացուցիչը լուծելու ատեն:

183.- Տրական հոլով Բնութեան խնդիր կրնայ ըլլալ նաեւ դերանուն մը: Այսպէս.

Քոյրս «մօրս» նայեցաւ.

Քոյրս «անոր» նայեցաւ. («անոր» դերանունը բխ. է):

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.- 1) Յատկացուցիչը գոյական մըն է՝ կապուած գոյականի մը. Բնութեան խնդիրը՝ գոյական մը կամ դերանուն մըն է՝ կապուած բայի մը:

2) Լուծումի ատեն՝ նախադասութեան մը բայը, տէր-բային, սեռի խնդիրը (կամ ստորագիծին) լուծելէ ետք՝ կը լուծենք բայի՛ն կապուած բառերը, յետոյ՝ տէր-բայիին, ապա՝ սեռի խնդիրին կամ ստորագիծին կապուած բառերը:

ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐ.- Յատկացուցիչ — Յակիչ, Բնութեան խնդիր — Բխ.:

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ.- Անուն մը է՛րբ յատկացուցիչ է եւ է՛րբ բնութեան խնդիր: Անուն մը է՛րբ սեռական է եւ է՛րբ տրական:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

132.- Գտէ՛ք թէ շեղադիր բառերը յատկացուցիչն են թէ բնութեան խնդիր. լուծեցէ՛ք զանոնք յետոյ:

Գրիչիս կոքը կտրեք էր: Գրիչին մի՛ դպիք: Այդ պարտէզին պատերը հին են: Երէկ քաղցիմք մեր պարտէզին պտուղները: Հօրս գործը շատ յաջող էր: Քրտջ պատմեցի դէպքը: Իր աղուն ձախ ձեռքին բքամատը կը ցաւէր: Մարդոց կարծիքները միշտ նոյնը չեն: Բոլոր աղոց ալ պիտի ըսենք իրենց նիշերը: Ընկերներուս գոյգ տետրակներն ալ լեցուեցան: Ասոնք Շողիկին գիրքերն են: Սիրլային մեծ եղբորը հարցուցի:

133.- Հետեւեալ բառերով կազմեցէ՛ք երկուքական նախադասութիւն, այնպէս մը որ առաջինին մէջ ըլլան յատկացուցիչ, երկրորդին՝ բնութեան խնդիր՝ տրական հոլով:

Արեւին, մօրս, ծաղիկներուն, ընկերոջդ, Աստուծոյ, Վարդգէսին, տան, աշակերտներուն, տղոց, եղբորդ, քաղաքին:

Օրինակ.- Արեւին. Արեւին «լոյսը» աչքերս ցուցուց (Յակիչ):
Արեւին «նայեցայ» սեւ ակնոցով. (Բխ.):

134.- Հետեւեալ բառերով կազմեցէ՛ք չորսական նախադասութիւն, այնպէս մը որ առաջինին մէջ ըլլան Տր., երկրորդին մէջ Սխ., երրորդին մէջ՝ Յակիչ, չորրորդին մէջ՝ Բխ. տրական հոլով:

Հակիչ, պահակ, հայր, ոստիկան, մօրաքոյր, բժիշկներ:

135.- Հետեւեալ բառերը մէյ մը ստորոգելի եւ մէյ մը սեռի խնդիր ըրէ՛ք երկուքական նախադասութեան մէջ:

Պարտէզ, ակումբ, հիւանդանոց, գլխարկ, մարդ:

136.- Հետեւեալ գոյգ բառերէն առաջինները ըրէ՛ք յատկացուցիչ, երկրորդները՝ յատկացեալ: Օրինակ.- Վարդ - բոյր, — Վարդին բոյրը:

Վարդ-բոյր, կապար-ծանրութիւն, զինուորներ-զէնքեր, օւռ-փրփուր, ձեռք-մատեր, երկիր-մայրաքաղաք, դպրոց-բակ:

137.- Լուծեցէ՛ք հետեւեալ նախադասութիւնները:

Ձանրապին գնդակը դրկեցի Ջաւէնին: Ձեզի կը նուիրեմ Արամին գրիչը: Անահիտին հօրեղբայրը իրեն կտակեր է դրամները: Ծնողքիդ յոյսն էս: Պիտի քարգմանէիմք Երուսաղիմի պատմութիւնները: Անոր նկարներ եւ գիրքեր պիտի տայիր կէսօրին: Եղբօրս չեն նամակներ եղբօրդ ընկերը եւ Վարուժանին եղբայրը: Ձես մտոցած Արշակը. ան եղբօրդ ընկերն էր:

ԴԱՍ 15

ԲՆՈՒԹԵԱՆ ԽՆԳԻՐ (ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՒՆ)

184.- Բնութեան խնդիր են նաեւ բացառական եւ գործիական հոլով գոյականները (եւ դերանունները)՝ եթէ կապուած են բայի վր: Այսպէս.

- 1) Ես «Պերնէն» գնեցի գիրքը:
- 2) Քոյրս «մատիտով» գրեց նամակը:

Պերնէն — Նիւթ. յաս. անուն, եզ., բոյս. հոլ. բխ. «զնեցի» բային, «ն» սրոշ. յօդ:

Մատիտով — Նիւթ. հաս. անուն, եզ. գործ. հոլ. բխ. «զրեց» բային:

- 1) Ես «իրմէ» գնեցի գիրքը:
- 2) Քոյրս «անով» գրեց նամակը:

Իրմէ — Անձ. դեր., Գ. դէմք, եզ. բոյս. հոլ. բխ. «զնեցի» բային:

Անով — Անձ. դեր., Գ. դէմք, եզ. գործ. հոլ. բխ. «զրեց» բային:

185.- Ուղղական-հայցական հոլով գոյական մը եթէ գտնենք բային վրայ ընելով «ո՛ւր» կամ «ե՛րբ» հարցումը, կ'ըսենք թէ այդ գոյականը հայցական հոլով բնութեան խնդիր է: (Պէտք է մոռնալ թէ սեռի խնդիրն ալ հայցական հոլով է. բայց սեռի խնդիրը կը գտնենք «ի՛նչ» կամ «զո՛ւմ» հարցումով): Այսպէս.

«Անոնք դպրոցը դաս սորվեցան» նախադասութեան մէջ «դաս» եւ «դպրոցը» գոյականները, երկուքն ալ կապուած են բային, երկուքն ալ ուղղական-հայցական հոլով են. բայց քանի որ «դաս» գոյականը կը գտնենք «ի՛նչ» հարցումով («ի՛նչ սորվեցան» — դաս), «դաս»ը հայցական հոլով սեռի խնդիր է. մինչ «դպրոցը» գոյականը հայցական հոլով բնութեան խնդիր է, որովհետեւ զայն կը գտնենք «ո՛ւր» հարցումով («ո՛ւր սորվեցան» — դպրոցը):

«Ես ձմեռը չեմ սիրեր» եւ «Ես ձմեռը չեմ մսիր» նախադասութիւններուն մէջ, առաջին «ձմեռը» հայցական հոլով սխ. է («Ես չեմ սիրեր» ի՛նչը — ձմեռը), մինչ երկրորդ «ձմեռը» հայցական հոլով բխ. է («Ես չեմ մսիր» ե՛րբ — ձմեռը):

186.- Հայց. հոլով Բխ. են նաեւ այն հայցական գոյականները, որոնք կը գտնենք բային վրայ ընելով «որքա՛ն» հարցումը: Այսպէս. Որքա՛ն «մնացիք» հոն — Երկու շաբաթ «մնացինք»:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.— 1) Ուրեմն՝ հայցական հոլով բնութեան խնդիրը կը գտնենք «ո՛ւր», «ե՛րբ» կամ «որքա՛ն» հարցումը ընելով բային վրայ:

2) Նախադասութեան մը թիւ 1-ը, 2-ը եւ 3-ը առնելէ ետք՝ մնացեալ բառերուն մէջ եթէ գոյականներ ու դերանուններ կան ու կապուած են բային՝ Բնութեան խնդիր են:

187.- ԱՄՓՈՓԵԼՈՎ, գոյական մը՝

| | | | | | |
|-------|----|--------|-------------------|-----------|------------------------------------|
| Ուղղ. | է՛ | Երբ է՛ | 1) Տր. | կամ | 2) Ստորագելի |
| Հայց. | » | » | 1) Ս]ս. | («ի՛նչ»), | 2) Բ]ս. («ո՛ւր», «ե՛րբ», «որքա՛ն») |
| Սեռ. | » | » | 1) Յատկացուցիչ | | |
| Տր. | » | » | 1) Բնութեան խնդիր | | |
| Բոյս. | » | » | 1) » | » | |
| Գործ. | » | » | 1) » | » | |

Ուրեմն՝ բնութեան խնդիրը միայն ուղղ. եւ սեռ. չ'ըլլար:

188.- Դերանունն ալ զանազան սլաշտօններ կ'առնէ .-

- Տէր-բայի .- «Ինք» բերաւ ծաղիկները (Ուղղ.)
- Սեռի խնդ. - Մայրը «գինք» կը կանչէր (Հայց.)
- Բն. խնդ. - Անոնք «քեզի» նայեցան (Տր.)
- Բն. խնդ. - «Ինձմէ» իմացաւ լուրը (Բոյս.)
- Բն. խնդ. - «Անով» մի գրադիր բնաւ (Գործ.)

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ի՛նչ է բնութեան խնդիրը: Ի՛նչ հոլով կրնայ ըլլալ: Ինչպէ՛ս կը զանազանք հայց. հոլով բնութեան խնդիրն ու սեռի խնդիրը: Ի՛նչ սլաշտօններ կ'ունենայ գոյական մը, դերանուն մը:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

138.- Գտէ՛ք թէ բնութեա՞ն խնդիր թէ սեռի խնդիր են շեղադիր բառերը՝ ընելով «ո՛ւր», «ե՛րբ», «որքա՛ն», եւ «ի՛նչ» հարցումները. յետոյ լուծեցէ՛ք զանոնք:

Տունը մնացինք: Մեր տունը ներկեցինք: Կօշիկս տունը ներկեցի: Տուն պիտի մեկնիմ: Փողոց մի իջներ դիչերը: Փողոցը կեցեր էին: Փողոցը տեսայ զինք: Բանուարները փողոցը լայնացին:

Բակը կը քնանայի: Բակը գարդարեցի ծաղիկներով: Գրպանս դրի ձեռքս: Գրպան չունիմ ես: Դպրոցը, փողոցը, տունը՝ քաղաքավար եղէք: Վենետիկ գնաց Արփիկը: Ամառը լեռ կ'ելլենք: Շատ կը ֆրտնիմ ամառը: Ամառը ծով կ'երթամ: Ծովը դիտեցինք: Յիսուն քիւլօ կը կշռեմ: Պէյրուքի ամառը կ'ատեմ ես: Պէյրուքի ձմեռը կը սիրե՞ս: Ես ձմեռը հիւանդ կ'ըլլամ: Զինք ձմեռը Հալէպ տեսայ: Այս նամակս, իրիկունը դիւզ պիտի յրկեմ: Զմեռը ամառ կ'ուզենք, ամառը ձմեռ կ'ուզենք: Հինգ քիւլմեթր ֆայեցինք:

139.- Հետեւեալ դոյականներէն իւրաքանչիւրը դործածեցէ՛ք չորսական նախադասութեան մէջ, այնպէս մը որ առաջինին մէջ ըլլայ Տբ., երկրորդին մէջ՝ Ստորոգելի, երրորդին մէջ՝ Սխ., չորրորդին մէջ՝ Հայց. հոլով Բխ. («ո՛ւր», «որքա՛ն» կամ «ե՛րբ» հարցումով):

- Օրինակ.- «Գրպան» ծակեցաւ (Տբ.)
- Այս կտորը «գրպան» պիտի ըլլայ (Ստորոգ.)
- Քոյրս կարեց իր «գրպանը» (Սխ.)
- Զեռնդ «գրպանդ» մի դներ (Բխ.)

Գրպան, տանիք, եկեղեցի, դասարան, տուն, դաշտ, ձմեռը:

140.- Հետեւեալ բառերը դործածեցէ՛ք վեցական նախադասութեան մէջ, այնպէս մը որ շարքով ըլլան սւղղ., հայց., սեռ., տր., բցո., դործ.: — Գրիչ, ծաղիկ, միս:

141.- Զատեցէ՛ք նախադասութիւնները եւ լուծեցէ՛ք:

Գպրոց պիտի երթամ վաղը եւ ընկերոջմէս պիտի առնեմ գիրքերս: Գիշերը արար քնացանք եւ չվախցանք: Հոգաբարձները արօքով արար կը հերկէին առաւօտուն ու կ'երգէին Կոմիտասի երգերը: Մանկիկը քեզի՛ կը ժպտէր մօրը գիրկէն ու քեզ կը կանչէր քաթիկներով: Ամառը գիւղը կը բնակին: Մաքրեցէ՛ք բաժակներն ու պընակները եւ զանոնք պահարանը շարեցէ՛ք: Կատուն միսը տանիքէն քակ ձգեց երէկ: Հայրդ եւ գիս վշտացուցիր այսօր: Ճուտիկներն ու վառեակները հաւ պիտի ըլլան ձմեռը:

ԴԱՍ 16

Ա. Ծ Ա. Կ Ա. Ն

189.- Ածականը բառ մըն է, որ կապուած կ'ըլլայ գոյականին եւ անոր մասին տեղեկութիւն կու տայ: Այսպէս. Երբ ըսենք՝ բարակ մատիտ, չորս մատիտ, այս մատիտը, քու մատիտդ, միւս մատիտը — բարակ, չորս, այս, քու, միւս բառերը «մատիտ» գոյականին մասին տեղեկութիւն կու տան, ածական են:

190.- Ածականները ո՛չ թիւ (եղակի - յորհակի), ո՛չ դէմք, ո՛չ ալ հոլով կ'ունենան: Ածականը անփոփոխ բառ է:

191.- Ածականները հինգ տեսակ են, — Որակական, Թուական, Ցուցական, Ստացական եւ Անորոշ:

192.- ՈՐԱԿԱԿԱՆ է այն ածականը որ դոյականին որակը (տեսակը) ցոյց կու տայ: Զայն կը դտնենք դոյականին վրայ ընելով «ինչպիսի՛» հարցումը: Այսպէս. «Ինչպիսի՛» մատիտ — բայակ: «Բարակ» = Որակ. ած. «մատիտ» դոյականին:

193.- ԹՈՒԱԿԱՆ ածականը դոյականին համբանքը ցոյց կու տայ. զայն կը դտնենք երեք հարցումով — քանի՛, քանի՛երորդ կամ քանիական: «Քանի՛» հարցումով դտնուող Թուական ածականին կ'ըսենք Բացարձակ Թուական ածական. «քանի՛երորդ» հարցումով դտնուողին՝ Դասական Թուական ածական, «քանիական» հարցումով դտնուողին՝ Բաշխական Թուական ածական: Այսպէս. «Քանի՛» մատիտ — չորս. «Չորս» = Բացարձակ Թուակ. ած. «մատիտ» գոյականին. «Քանի՛երորդ» մատիտը — չորրորդ. «Չորրորդ» = Դաս. Թուակ. ած. «մատիտը» դոյականին: «Քանիական» մատիտ — չորսական. «Չորսական» = Բաշխ. Թուակ. ած. «մատիտ» դոյականին:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.- Բացարձակ Թուակ. ածականներուն ընկերացող գոյականները կրնան եղակի ըլլալ: Այսպէս. «Հինգ եղբայր ունիմ» (եւ ոչ թէ՛ եղբայրներ): Բաշխական Թուակ. ածականներէն ետք եղակի դոյական կու դայ: Այսպէս. «Չորսական ոսկի տուի» (եւ ոչ թէ՛ ոսկիներ):

194.- ՅՈՒՑԱԿԱՆ ածականը՝ գոյականը ցոյց տալու կը ծառայէ: Հայերէնի ցուցական ածականներն են — Այս, այդ, այն, եւ ասոնցմէ ծագած՝ աս, սա, ատ եւ ան բառերն ալ: Յուց. ածականը կը գտնենք գոյականին վրայ ընելով «ո՛ր» հարցումը: Այսպէս. «Ո՛ր» մատիտը — այդ. «Այդ» = Յուց. ածական «մատիտը» գոյականին: («Սոյն» բառն ալ ցուցական ածական է):

195.- ՍՏԱՅԱԿԱՆ ածական կը կոչուին անձնական դերանուններու սեռական հոլովները (իմ, մեր. բու, մեր. իր, իրենց. անոր, անոց)՝ երբ կապուած ըլլան գոյականի մը: Ստաց. ածականը կը գտնենք «որո՛ւն» հարցումով: Այսպէս. «Որո՛ւն» մատիտը — իր. «իր» = Ստաց. ած. «մատիտը» գոյականին:

Ստացական ած.ը անունին որո՛ւ վերաբերելը ցոյց կու տայ:

ՄԱՆՕԹՈՒԹԻՒՆ.- Իմ, մեր. բու, մեր. իր, իրենց. անոր, անոց բառերը երբ ստաց. ածական են, այսինքն՝ երբ գոյականի մը հետ դործածուած են, զանոնք լուծելու համար միայն կ'ըսենք անոնց տեսակը եւ որո՛ւ վերաբերելը. զէ՛մքի, թի՛ւի, հոլովի մասին այլեւս չենք խօսիր:

196.- ԱՆՈՐՈՇ ածականը մասնաւոր հարցում մը չունի: Գոյականին մասին անորոշ բան մը կ'ըսէ:

Գլխաւոր Անորոշ ածականներն են, — Միւս, ամբողջ, բոլոր, նոյն, իւրաքանչիւր, որքան, ամէն, մը (մըն), միեւնոյն, ո՛ր, որեւէ, ինչ, այսպիսի, այդպիսի, ինչպիսի, քանի, ուրիշ, տարբեր, քանի մը, մէկ քանի, ոչ մէկ, շատ մը, այսինչ, այնինչ, այդինչ, ասանկ, ատանկ, ո՛րչափ, այսչափ, այնչափ, այսքան, որպիսի, եւայլն:

ՄԱՆՕԹՈՒԹԻՒՆ.- 1) «Առաջին» եւ «վերջին» թուակ. ածականները կարելի է նկատել Անորոշ ածական: Անորոշ ածական կարելի է նկատել նաև «այն» Յուց. ածականը, երբ, օրինակ՝ ըսենք. «Այն անձերը, որոնք հոս էին, գոհ մնացին». հոս «այն»ը ցուցական իմաստ չունի: Մինչ եթէ ըսենք՝ «Այս գլխարկը չէ՛մ ուզեր, այն գլխարկը կ'ուզեմ». հոս «այն»ը ցուցական է:

2) «Ամբողջ» ան. ածականն էտք եզակի գոյական կու գայ. «բոլոր»էն ետք՝ յոգնակի: Այսպէս. Ամբողջ կերակուրը, բոլոր կերակուրները: «Ամէն» ան. ածականը կը նշանակէ «իւրաքանչիւր». կը դործածուի եզակի գոյականի հետ.— «Ամէն անձ»:

197.- Ածական մը լուծելու համար կ'ըսենք անոր տեսակը եւ որո՛ւ վերաբերելը (ո՛ր գոյականին կապուած ըլլալը):

ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐ.- Ածական = Ած., Որակական = Որկ., Թուական = Թուակ., Բացարձակ = Բաց., Դասական = Դաս., Բաշխական = Բաշխ., Յուցական = Յուց., Ստացական = Ստաց.:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.- Ի՛նչ է ածականը: Մի՞շտ ինչի՛ կապուած կ'ըլլայ: Քա՛նի՛ տեսակ ածական կայ: Ո՛ր հարցումներով կը գտնենք զանոնք:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

142.- Հետեւեալ տասը ածականներէն եւ գոյականներէն զտէ՛ք իրարու յարմարող զոյգերը:

Ա.- Լայն, հեռաւոր, եօթը, ծուռ, հիանալի, վախկոտ, չոր, կատաղի, անսպառ, վտանգաւոր: Բ.- Յոյս, գազան, ցամաքաւոր, քիւն, հաց, քանակ, մուկ, տեսարան, կոշիկ, ոսկի, ազգական:

143.- Գտէ՛ք թէ՛ հետեւեալ բառերէն որո՛նք ածական են եւ որո՛նք՝ գոյական:

Գեղեցիկ, լոյս, լուսաւոր, այդ, խելք, խելացի, տգեղ, տգեղութիւն, ոտէկ, երկրորդ, ծոյլ, ծուլութիւն, դոյլ, քոյլ, տկար, բոլոր, ուժեղ, արծաթագոյն, ամբողջ, գոյն, իմ, գունաւոր, տարբեր, հրաշք, հրաշալի, անգութ, որքան, քծրախտ, բախտաւոր, բախտ, ոչ-մէկ, ջուր, ջրային, ներմակ, նարինջ, նարնջագոյն, լւրաքանչիւր, նոյն, անհաւատալի, նեղ, քառակուսի, ուժ, շիշ, քեքեւ, ծածկոց, այնքան, վեց, լին, նկար, իններորդ, աս, շատ մը, մը, հարիւր-հինգ, սոյն, նոյն, քառասուն-չորսական, միւս, շորութիւն:

144.- Նախորդ հրահանգին ածականներուն քով դրէ՛ք մէկական գոյական, գոյականներուն քով՝ մէկական ածական եւ գտէ՛ք ածականներուն տեսակը:

145.- Լուծեցէ՛ք հետեւեալ նախադասութիւնները:

Միւս սեւ կոշիկս ոտքս կը նեղէ: Այդ նոյն սեւագգեստ կինը տեսայ մեր եկեղեցին: Շողիկին տեսրակներն ու գիրքերը գրադարանը չձգե՛ս: Այդքան դրամ չունէր մեր տանտիրոջ կինը: Այս կարմիր ծաղիկները կակաչ չեն: Խելացի աշակերտները կը սիրուին իրենց բոլոր ուսուցիչներէն: Այդ ամբողջ իւրոտ միսը խորոված պիտի ըլլար: Վեցական նոր գիրք կը նուիրէ Շուշանիկին եղբայրը՝ քեզի եւ Արային: Արութիկն ու իր մօրը գարմիկը Հալեպէն Պէյրութ վերադարձեր են երեկոյեան՝ նեպընքաց շոգեկառով:

ԴԱՍ 17

ԱԾԱԿԱՆՆԵՐՈՒ ՓՈՓՈՅՈՒՄԸ

(ԱԾԱԿԱՆ-ԱՆՈՒՆ ԵՒ ԴԵՐԱՆՈՒՆ)

198.- Երբ *ածականի մը զոյականը վերցուի՝* անականը կը դադրի անական ըլլալէ, եւ կրնայ թիւ, յօդ եւ հօլով առնել: Այսպէս. *Եթէ ըսենք՝ «Ուշիմ աշակերտները վարձատրուեցան», «ուշիմ»ը որակական անական է «աշակերտները» զոյականին: Բայց եթէ վերցնենք «աշակերտները» զոյականը եւ ըսենք՝ «Ուշիմները վարձատրուեցան», «ուշիմները» բառը այլևս անական չէ:*

199.- Երբ *ածականի մը զոյականը վերցնենք՝* անականը ի՛նք կ'առնէ վերցուած զոյականին թիւը, հօլովը, պաշտօնը եւ յաճախ՝ յօդը: Այսպէս. *վերի օրինակին առաջին նախադասութեան տէր-բային է «աշակերտները» զոյականը. երկրորդին տէր-բային է «ուշիմները» բառը, որ առած՝ է «աշակերտները» զոյականին թիւը՝ «ներ», յօդը՝ «ը», հօլովը՝ «ուղղական», պաշտօնը՝ «տէր-բայի»:*

200.- Երբ *ածականները զողորին անական ըլլալէ՝* Որակականը եւ Թուականը կը փոխուին անուի, Յուցականը, Անորոշը եւ Ստացականը կը փոխուին դերանունի: Այսպէս.

Մեծ քոչս ժպտեցայ: «Մեծ» — Որակական անական:

Մեծին ժպտեցայ: «Մեծին» — Անուն:

Երկրորդ կարգը յաթեց: «Երկրորդ» — Դաս. Թուակ. անական:

Երկրորդը յաթեց: «Երկրորդը» — Անուն:

Այս գիրքը կ'ուզեմ: «Այս» — Յուցական անական:

Այս կ'ուզեմ: «Այս» — Յուցական դերանուն:

Միւս նկարներուն նայէ: «Միւս» — Անորոշ անական:

Միւսներուն նայէ: «Միւսներուն» — Անորոշ դերանուն:

Աս իմ գիրքս է: «Իմ» — Ստացական անական:

Աս իմս է: «Իմս» — Ստացական դերանուն:

201.- Երբ *որակ. եւ թուակ. անականները անունի վերածուած են՝* զանոնք կը կոչենք անական-անուն:

202.- Ածականները երբ *փոխուին՝* կը լուծենք այսպէս.

(Ես) «մեծին» ժպտեցայ: (Ես) «Այս» կ'ուզեմ:

Մեծին = Ածական-անուն, եզ., տր. հօլ., բխ. «ժպտեցայ» բային, «ն» որոշ. յօդ:

Այս = Յուց. դեր., եզ., հայց. հօլ., սխ. «կ'ուզեմ» բային:

203.- ՅՈՒՅԱԿԱՆ դերանուններն են, — ԱՅՍ, (աս, սա), ասիկա, ԱՅԴ, (ատ), ատիկա, ԱՅՆ, (ան) եւ անիկա: Կը հօլովուին այսպէս.

Ուղղ-Հայց, — ԱՅՍ (աս, սա), ատիկա, սեռ-Տր, — ատոր, բցո, — ասկէ, գործ, — ատով: Յոյնակի՝ Ատոնք, ատոնց, ատոնցմէ, ատոնցմով:

Ուղղ-հայց, — ԱՅԴ (ատ) եւ ատիկա, սեռ-տր, — ատոր, բցո, — ասկէ, գործ, — ատով: Յոյնակի՝ Ատոնք, ատոնց, ատոնցմէ, ատոնցմով:

Ուղղ-հայց, — ԱՅՆ (ան) եւ անիկա, սեռ-տր, — անոր, բցո, — անկէ, գործ, — անով: Յոյնակի՝ Անոնք, անոնց, անոնցմէ, անոնցմով:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

1) Իմ, մեր. քու, ձեր. իր, իրենց. անոր եւ անոնց բառերը՝ Ա) Ստացական անական են՝ երբ զործածուած են զոյականի մը հետ, — Մեր տունը. Բ) Ստացական դերանուն են՝ երբ յօդ (եւ հօլով) առած են, — Մերը զեղեցիկ է. Գ) Անճանական դերանուն են՝ երբ զործածուած են բառի մը հետ որ զոյական չէ, — Մեր մէջ. («մէջ» բառը զոյական չէ):

2) «Որոնք» բառը երբ հարցական իմաստ ունենայ՝ կ'ըլլայ Անորոշ դերանուն: Այսպէս. «Որոնք ըսին այդ բանը»: Այս պարագային «որոնք»ը յօդնակին է «ով»ին:

3) «Մը» անորոշ անականը երբ անորոշ դերանունի վերածուի կ'ըլլայ «մէկը». «քանի մը» անորոշ անականը կ'ըլլայ «մէկ քանին»: Անորոշ դերանուն են նաեւ հետեւեալները — Ամէն ոք, ո՛վ, ո՛վ որ, որո՛նք որ, ինչ որ, որը որ, ամէն ինչ, բիչ մը, մաս մը, ոմանք. եւայլն:

4) «Մարդ» անունը Անորոշ դերանուն կ'ըլլայ, երբ նշանակէ «որեւէ մէկը»: Այսպէս. «Մա՛րդ չի զիմանար»:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

146.- Գտէ՛ք թէ հետեւեալներէն որո՞նք որակական կամ թուական ածական են եւ որո՞նք՝ ածական-անուն:

Անհուն, շքեղ, հիմզերորդը, անանուն, տասնական, սուզ-նոց, խելացիներուն, երերուն, տգէտներուն, լուսեղէն, գով, տգեղ-ներով, ապահով, վախկոտին, քաներորդ, «աղի», սեւի, մեծի, կծծի, վստահելի, ծերի, տկարներուն, բարախուն, տասներորդը:

147.- Շեղազիր ածականներուն դոյականները վերցուցէ՛ք, ըրէ՛ք պէտք եղած փոփոխութիւնները եւ լուծեցէ՛ք:

Օրինակ.- Բոլոր «ստուգները» կերայ — բոլորը կերայ:

Բոլոր պտուղները կերայ: Շատախօս մարդիկը չեն յարգուիր: Թարմ միսին համը տարբեր է: Նոյն բաժակը տար: Ութերորդ գրիչով գրեցի: Չորս հիւրերն ալ տեսա՞ք: Անոնց մուէրը աւելի լուրջ էր: Իւրաքանչիւր տուն մէկ ոսկի կ'արժէ: Նորեկ աշակերտները քող հոս գան: Ճերմակ հաւերուն ջուր չտուի դեռ: Այդ խանութէն գնեցի գօտիս: Այս ոստիկանին տուեր են մամակը: Այս մարդը վաճառական է: Այդ մարդոց մայէ: Դուն այս վնարումը կ'ընդունի՞ս: Ուրիշ տղաք պիտի գան: Իր գիրքը նոր չէ: Վեցերորդ պահարանէն առի շապիկս: Աժբողջ դրամը ծախսեր է: Միւս դանակներով կտրեցէք: Հայրս հասուն խնձորները չի սիրեր:

148.- Գտէ՛ք թէ իմ, մեր, քու, ձեր, իր, իրենց, անոր եւ անոնց բառերը որպէս ստացական ածական, ստացական դերանուն են թէ անձնական դերանուն գործածուած են:

Քու մատիտդ, անոնց հաշիւները, ձերը եւ մերը, անոր քով, իր տունը, իրենցիկները, իրենց մէջ, իրենց որոշումը:

149.- Լուծեցէ՛ք հետեւեալ նախադասութիւնները:

Երկրորդ դասարանն ու երրորդը դպրոց վերադարձան արոյտէն: Վախկոտներն ու տկարները սենեակ հաւաքուեր էին: Ստախօսներէն եւ կեղծատրուներէն վախեցէ՛ք: Վախկոտ շնիկ մըն է աւիկա: Ատոնցմով պահարան մը եւ ինը աքռա շինել պիտի տամ ատաղ-ձագարծին աշկերտին: Այս տունը մարդ չկայ: Ո՛վ ըսաւ այդ բանը քեզի: Միւսները որո՞նք են: Քանի մը տղաք կերեր են ամբողջը:

ԴԱՍ 18

ԱԾԱԿԱՆԸ ՈՐՊԷՍ ՍՏՈՐՈԳԵԼԻ

ԷԱԿԱՆ ԲԱՅՑ ՈՐՊԷՍ ԶԵՁՈՔ

204.- Սորված ենք թէ ստորագելին ուղղական հոլով կ'ըլլայ: Բայց՝ երբ ստորագելի եղող բառը ածական մըն է՝ հոլով չ'ունենար: Այսպէս.

«Հայրս դերմակ է» եւ «Հայրս աշխատատէր է» նախադասութիւններուն մէջ «դերմակ» եւ «աշխատատէր» բառերը ստորագելի են: «Դերմակ» բառը դոյական մըն է, «աշխատատէր» բառը ածական մըն է: Լուծենք երկու ստորագելիները.

Դերմակ = Նիւթ. հաս. անուն, եղ., ուղղ. հոլ., ստորագելի «հայրս» ստորագելին:

Աշխատատէր = Որակ. ած., ստորագելի «հայրս» ստորագելին:

205.- Բաղդաստենք սեռի խնդիրը եւ ստորագելին:

| ՍԵՌԻ ԽՆԴԻՐ | ՍՏՈՐՈԳԵԼԻ |
|---|---|
| 1.- Թիւ 3 է. | 1.- Թիւ 3 է. |
| 2.- Կ'ընկերանայ ներդ. եւ անցող. բայերուն. | 2.- Կ'ընկերանայ էական բային. |
| 3.- Գոյ. կամ դերանուն մըն է. | 3.- Գոյ., դեր. կամ ած. մըն է. |
| 4.- Հայցական է. | 4.- Ուղղ. է՝ եթէ գոյ. կամ դեր. է. հոլով չունի՝ եթէ ած. է. |
| 5.- Կապուած է բային. | 5.- Կապուած է (տէր-բային) ստորագելին. |

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.- 1) Երբ ածական մը ստորագելի է՝ տէր-բային է այն անունը որուն հետ ինք կապ ունի: Այսպէս. երբ ըսենք՝ «Այս աշակերտը աշխատատէր է», կը նշանակէ՝ «Այս աշակերտը աշխատատէր (աշակերտ) է»:

2) Ստորագելի եղող բառը երբ անուն մըն է՝ զայն կը դանենք «ի՛նչ» հարցումով: Երբ ածական մըն է՝ «ինչպէ՞ս» հարցումով. երբ Անձ., Անդր. կամ Փոխ. դերանուն է՝ կը դանուի «ո՛վ» հարցումով: Երբ Ստաց. դերանուն է՝ «որո՞նք» հարցումով: Երբ Անորոշ դերանուն է՝ մասնաւոր հարցում չունի: Յարբերական դերանունը ստորագելի չ'ըլլար:

3) Չլիթեւէ կահան բայը այլ բայերու Բաղադրեալ Ժամանակներուն հետ: Այսպէս. երբ կահան բայի մը ընկերացող բառը Անցեալ Ընդունելութիւն մըն է, օրինակ՝ «վազած է», «վազեր էր», էական բայը եւ իրեն ընկերացող Անցեալ Ընդունելութիւնը կ'առնենք միասին, կը նկատենք մէկ բայ:

Բայց եթէ էական բայի մը ընկերացող բառը Անցեալ Ընդունելութիւն մը չէ, այլ գոյական մը, դերանուն մը, կամ «ածական» մըն է, այդ բառը կ'առնենք առանձին. այդ բառը ստորոգելի է:

206.- Երբ էական բայը նշանակէ պատահիլ, տեղի ունենալ, գտնուիլ, յառաջ գալ, գոյանալ՝ ստորոգելի չ'ունենար: Զայն կը կոչենք «քրպէս Զէզոբ գործածուած» էական բայ: Այսպէս.

Կոիւ «եղաւ» փոզոցը: (եղաւ = Տեղի ունեցաւ)

Գիրքս տունն «է»: (է = Կը գտնուի)

Եղաւ = Որպէս Զէզոբ գործածուած էական բայ, «ըլլալ», Գ. Լծ., սրահ., հաստ., Սահմ., Անց. կատ., Գ. դէմք, Եզ.:

ՅԵՇԵՑՈՒՄ.- Վերի երկու օրինակներուն մէջ «փոզոց» եւ «տուն» բառերը ստորոգելի չեն, այլ՝ ընտելեան խնդիր:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.- Բաղադրեալէ՞ք Սեռի խնդիրն ու Ստորոգելին: էական բայը ե՞րբ էական չէ:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

150.- Գտէ՞ք թէ հետեւեալ նախադասութիւններուն բայերը էական են թէ Զէզոբ: Ապա լուծեցէ՞ք բոլոր բառերը:

Մեր ծնողները մեր մեծագոյն բարեկամներն են: Հրդեհ եղաւ մեր քաղը: Վաչէն եւ իր երեք եղբայրները բժիշկ եւ դեղագործ պիտի ըլլան: Դպրոցը չէր երէկ: Պատասխանիք երկրորդ մասը սխալ չէր: Երկրաշարժ չեղաւ մեր քաղաքը: Լոյս քաղ ըլլայ: Այս ջուրը սառ պիտի ըլլար: Վաղը հարսանիք պիտի ըլլայ մեր տան բակը: Դրամս ու թուղթերս դարակս են:

151.- Լուծեցէ՞ք հետեւեալ նախադասութիւնները:

Դպրոցներն ու խանութները փակ էին: Դպրոցին դուռերը փակուած էին: Այդ բժիշկները առողջ չե՞ն: Միւս վիրաւորները առողջացեր են: Մաքուր ու ներկայանալի չէր անոր զգեստը: Մաքրած էր զգեստներդ: Պատիկները, երէկ, պարտեզը, քիթեռնիկ կը հալածէին գաւազաններով: Այդ եւ այս ձերը չեն: Զորքորդ դասարանը հիմզերորդին տուեր է հանելուկին պատասխանը: Ո՛ւր էնացար գիշերը:

ԴԱՍ 19

ԴԵՐԱՆՈՒՆ (ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ)

207.- Յարաբերական դերանուն է «որ» բառը: Կը հօլովուի այսպէս. (յարաբերական դերանունը դէմք չունի):

| | | |
|---------|--------------|-------------------------|
| Ուղղ. | Որ | Որոնք |
| Հայց. | գոր (կամ որ) | գորոնք (գորս կամ որոնք) |
| Սեռ-Տր. | որու | որոնց |
| Բյու. | որմէ | որոնցմէ |
| Գործ. | որով | որոնցով |

208.- Յարաբերական դերանուն են նաեւ ուր (հայց.) եւ ուրկէ (բցո.) բառերը, երբ նշանակեն «որուն մէջ» եւ «որուն մէջէն»: Այսպէս. երբ ըսենք՝ «Այն պարտեզը, ուր զիս տեսար... (այսինքն՝ որուն մէջ)», կամ՝ «Այն պարտեզը, ուրկէ քաղեցի այս ծաղիկները... (այսինքն՝ որուն մէջէն)», «ուր»ը եւ «ուրկէ»ն կ'ըլլան Յարաբերական դերանուն: «Ուր»ը եւ «ուրկէ»ն Յարաբերական դերանուն չեն՝ երբ հարցական իմաստ ունենան: Այսպէս. «Ո՛ւր էիր», «ուրկէ՛ եկար». (այս պարագային՝ տեղական մակրայ են):

209.- Յարաբերական դերանունը դրուած կ'ըլլայ անունի մը տեղ եւ նախադասութիւն մը կը կապէ ուրիշ նախադասութեան մը: Այսպէս. «Ես տեսայ հայրդ», «որ թերթ կը կարդար». («որ» յարաբերական դերանունը դրուած է «հայրդ» անունին տեղ եւ երկրորդ նախադասութիւնը կը կապէ առաջինին):

210.- Այն բառը, որուն տեղ դրուած է յարաբերական դերանունը, կ'ըլլայ այդ դերանունին յարաբերակալը: Վերի օրինակին մէջ յարաբերակալն է «հայրդ» անունը: (Յարաբերակալը կը գտնուի նախորդ նախադասութեան մէջ):

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Պէտք է միշտ ջանալ որ յարաբերական դերանունի մը եւ իր յարաբերակալին միջեւ անուն մը կամ դերանուն մը չգայ: Նախըն-

տրելի է որ յարաբերական դերանունը անմիջապէս յաջորդէ իր յարաբերեալին: Այսպէս. պէտք է ըսել՝ «Այս գիրքը գնեցի այն գրավաճառէն», «որ ձեր թաղը կը բնակի», եւ ոչ թէ՛ «Այն գրավաճառէն գնեցի այս գիրքը», «որ ձեր թաղը կը բնակի»: (Այս երկրորդ պարագային՝ «որ» յարաբերական դերանունը փոխանակ կատուելու իր յարաբերեալին՝ «գրավաճառէն» բառին հետ, կը կապուի իրեն ամէնէն մօտ դանուող «գիրքը» բառին հետ, որ իր յարաբերեալը չէ, ու խօսքը կը դառնայ անիմաստ («գիրքը» չի կրնար բնակիլ)):

211.- Քննենք «Ես տեսայ հայրդ», «որ քերթ կը կարդար» խօսքին երկրորդ նախադասութիւնը: —

Բայն է «կը կարդար» տէր-բային է՝ «հայրդ»: Բայց «հայրդ» բառը կը գտնուի առաջին նախադասութեան մէջ. երկրորդին մէջ «հայրդ» բառին տեղ դրուած է «որ» յարաբերական դերանունը: Ուրեմն «որ» բառն է երկրորդ նախադասութեան տէր-բային: Լուծեմք.

Որ = Յարաբերական դեր., եղ., Ուղղ. հոլ., Տբ. «կը կարդար» բային. յարաբերեալն է — «հայրդ»:

212.- Հիմա քննենք «Ստացա՞ր նամակը», «որ ես դրկած էի» խօսքին երկրորդ նախադասութիւնը: —

Բայն է «դրկած էի». տէր-բային է՝ «ես». սեռի խնդիրն է «նամակը». բայց «նամակը» բառը կը գտնուի առաջին նախադասութեան մէջ. երկրորդին մէջ «նամակը» բառին տեղ դրուած է «որ» յարաբերական դերանունը. ուրեմն «որ» բառն է երկրորդ նախադասութեան սեռի խնդիրը: Լուծեմք.

Որ = Յարաբերական դեր., եղ., Հայց. հոլ., Սխ. «դրկած էի» բային. յարաբերեալն է — «նամակը»:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.— 1) Պէտք չէ շփոթել «որ» յարաբերական դերանունը «որ» շաղկապին հետ: «Որ» բառը յարաբերական դերանուն է՝ երբ դրուած է անունի մը տեղ. շաղկապ է երբ անունի մը տեղ չէ դրուած. այն ատեն կը նշանակէ «որպէսզի» կամ «թէ»: Այսպէս. «Իրեն ըսի» «որ դրամի պէտք ունիմ» («թէ» դրամի պէտք ունիմ):

2) Յարաբերական դերանուններու սեռ-տրականն է միայն որ կրնայ յօդ առնել.— որուն, որոնցը:

3) Պայման չէ որ յարաբերական դերանուն մը եւ իր յարաբերեալը նոյն հոլովը եւ պաշտօնը ունենան:

213.- Միջանկեալ կը կոչուի այն նախադասութիւնը, որ ուրիշ նախադասութեան մը մէջ մտած է: Օրինակ. Փոխանակ ըսելու՝ «Քոյրս է այն աղջիկը», «որ ջուր կը խմէր», կրնանք առաջին նախադասութիւնը երկուքի բաժնել եւ մէկ մասը գնել երկրորդ նախադասութեանէն ետք: Կ'ըլլայ — Այն աղջիկը, որ ջուր կը խմէր, քոյրս է: «Որ ջուր կը խմէր»ը միջանկեալ է:

Կ'ըձԱՏՈՒՄ.— Յարաբերական = Յար.:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— «Ուր» եւ «ուրիշ» բառերը կ'ըր յար. դեր. են, կ'ըր չեն: Քանի՛ հատ են յար. դերանունները: Ի՞նչ է յարաբերեալը:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

152.- Գտէ՛ք թէ «որ» Յար. դերանունը ուղղակա՞ն է թէ հայցական:

Մեկնեցաւ այն ցամբորդը, «որ Փարիզէն եկած էր»: Պիտի չմտնամ այն բարիքը, «որ դուն ինձի բրբր»: Ծաղիկը, «որ ինձի տուած էիր», դեռ կը պահեմ: Այն մարդը, «որ կ'աշխատի», կը յաջողի: Ես գտայ այն գրիչը, «որ քոյրդ կորսնցուցած էր»: Վերաբերուց, «որ հագած էի», ամեռը անգմէ գնած էի:

153.- Լուծեցէ՛ք՝ գատելէ ետք նախադասութիւնները:

Այն աղջիկը, որ պատշգամը ջուր կը խմէր, մեծ քոյրս է: Կը ցանցնա՞ք այն անձերը, որոնք պաշտօնեայ եղան: Կարդացեր եմ այն բոլոր գիրքերը, գորս ան կարդացեր էր: Ասկէ նշմարեցինք քոչուները, որոնք կ'երգէին: Նամակները, որոնք գրած էիր դուն, պահած եմ տունը: Այն բոլոր բաները, որոնք փափաքած եմ, ունեցած եմ: Այն անձը, որ բարեկամ եւ ընկեր չէ շահած, երջանկութիւն չունի: Փոսը, ուր ինկանք բոլորս, երկու գիւղացիներ փորած էին:

Գրականութիւնը, նկարչութիւնը, երաժշտութիւնը, ֆանդակագործութիւնը, նարտապետութիւնը, պարը՝ արուեստներ են: Կամուրջը, ուրկէ անցանք ինքնաշարժով, հաստատուն քաղաքի մէջ են: Այն անձը, որ անցանք Աղեփսանդրիս գաղիմք եւ վերադարձանք Բաղան:

Համ 20

Գ Ե Ր Ա Ն Ո Ւ Ն

(ԱՆԴՐԱԴԱՐՁ, ՓՈԽԱԴԱՐՁ, ՍՏԱՅԱԿԱՆ)

214.- Անդրադարձ դերանունները կազմուած են կրկնումովը անձնական դերանուններուն: Այսպէս.

Ա. ԳԷՄՔ

| | | |
|-------|-----------------------|----------------------------|
| Ուղղ. | Ես-ինքս | (Չունի) |
| Հայց. | Ես-գիս (կամ ինքզինքս) | Մենք-մեզ (կամ ինքզինքներս) |
| Սեռ. | Ես-իմ | Մենք-մեր |
| Տր. | Ես-ինձի | Մենք-մեզի |
| Բցու. | Ես-ինձմէ | Մենք-մեզմէ |
| Գործ. | Ես-ինձով | Մենք-մեզով |

Բ. ԳԷՄՔ

| | | |
|-------|-------------------------|----------------------------|
| Ուղղ. | Դուք-ինքդ | (Չունի) |
| Հայց. | Դուք-քեզ (կամ ինքզինքդ) | Դուք-ձեզ (կամ ինքզինքներդ) |
| Սեռ. | Դուք-քու | Դուք-ձեր |
| Տր. | Դուք-քեզի | Դուք-ձեզի |
| Բցու. | Դուք-քեզմէ (ինքնիրմէդ) | Դուք-ձեզմէ |
| Գործ. | Դուք-քեզով | Դուք-ձեզով |

Գ. ԳԷՄՔ

| | | |
|-------|---------|--------------------------------|
| Ուղղ. | (Չունի) | (Չունի) |
| Հայց. | Ինքզինք | Իրենք-զիրենք (կամ ինքզինքներն) |
| Սեռ. | Ինքիր | Իրենք-իրենց |
| Տր. | Ինքիրեն | » |
| Բցու. | Ինքիրմէ | Իրենք-իրենցմէ |
| Գործ. | Ինքիրով | Իրենք-իրենցով |

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ.- 1) Անդրադարձ դերանուններու երեք դէմքերն ալ յոգնակի ուղղական չունին: Գ. դէմքը եզակի ուղղական ալ չունի: (Ոմանք Ա. եւ Բ. դէմքի յոգնակի ուղղ. որպէս կը դործածեն «ինքներս» եւ «ինքներդ»):

2) Անդրադարձ դերանունները բաղկացած կ'ըլլան երկուքական բառէ: Այս երկու բառերը միասին կ'առնենք եւ զանոնք կը նկատենք մէկ բառ (եւ ո՛չ թէ երկու). Օրինակ. երբ ըսենք «Դունք-քեզ մի գովեր», «գունք-քեզ»ը սենի խընդերն է. աէր-բային է ուրիշ «գունք» մը, որ լուրեւայն է եւ անձ. դերանուն է:

3) Հայերէնը ունի եօթը տեսակ դերանուն — Անձնական, անդրադարձ, ստացական, փոխադարձ, յարաբերական, ցուցական եւ անորոշ:

215.- Փոխադարձ դերանուն են հետեւեալները: (Փոխադարձը եզակի չունի. չունի նաեւ դէմք եւ յոգնակիի ուղղական):

| | | | |
|----------|-------------|-----------|--------|
| Ուղղական | (Չունի) | Տրական | Իրարու |
| Հայցական | Զիրար, իրար | Բացառական | Իրարմէ |
| Սեռական | Իրարու | Գործիական | Իրարով |

216.- Անձնական դերանուններու սեռական հոլովներուն վրայ (իմ-մեր, քու-ձեր, իր-իրենց, անոր-անոնց) եթէ յօդ աւելցնենք՝ կը վերածուին Ստացական դերանունի: Այսպէս.

Իմս, մերը, քու(կ)դ, ձերը, իրը, իրենցը, անորը, անոնցը՝ ստացական դերանուն են:

217.- Այս ութ դերանունները երբ ստացական են (այսինքն յօդ առած են) այլեւս սեռական հոլով չեն: Զանոնք կը նկատենք ուղղական-հայցական, եւ կը հոլովենք այսպէս.

Ա. ԳԷՄՔ

| | | |
|------------|-------------|---------------|
| | Եզակի | |
| Ուղղ-Հայց. | Իմս (իմինս) | Մերը (մերինը) |
| Սեռ-Տր. | Իմինիս | մերինին |
| Բցու. | Իմինէս | մերինէն |
| Գործ. | Իմինովս | մերինով |

Յոգնակի

| | | |
|------------|------------|-------------|
| Ուղղ-Հայց. | Իմիններս | Մերինները |
| Սեռ-Տր. | Իմիններուս | մերիններուն |
| Բցու. | Իմիններէս | մերիններէն |
| Գործ. | Իմիններովս | մերիններով |

Բ. ԳԷՄՔ

Եզակի

| | | |
|------------|-----------------|---------------|
| Ուղղ-Հայց. | Քուկդ (քուկինդ) | Չերը (ձերինը) |
| Սեռ-Տր. | քուկինիդ | ձերինին |
| Բցու. | քուկինէդ | ձերինէն |
| Գործ. | քուկինովդ | ձերինով |

Յոգնակի

| | | |
|-------------|--------------|-------------|
| Ուղղ-Հայց . | Քուկիմներդ | Ձերիմները |
| Սեռ-Տր . | քուկիմներուդ | ձերիմներուն |
| Բյու . | քուկիմներէդ | ձերիմներէն |
| Գործ . | քուկիմներովդ | ձերիմներով |

Գ. ԴԷՄՔ

Եզակի

| | | |
|-------------|---------------|-------------------|
| Ուղղ-Հայց . | Իրը (իրենիմը) | Իրենցը (իրենցիմը) |
| Սեռ-Տր . | իրենիմին | իրենցիմին |
| Բյու . | իրենիմէն | իրենցիմէն |
| Գործ . | իրենիմով | իրենցիմով |

Յոգնակի

| | | |
|-------------|--------------|---------------|
| Ուղղ-Հայց . | Իրենիմները | Իրենցիմները |
| Սեռ-Տր . | իրենիմներուն | իրենցիմներուն |
| Բյու . | իրենիմներէն | իրենցիմներէն |
| Գործ . | իրենիմներով | իրենցիմներով |

Եզակի

| | | |
|-------------|-----------------|-------------------|
| Ուղղ-Հայց . | Անորը (անորիմը) | Անոնցը (անոնցիմը) |
| Սեռ-Տր . | անորիմին | անոնցիմին |
| Բյու . | անորիմէն | անոնցիմէն |
| Գործ . | անորիմով | անոնցիմով |

Յոգնակի

| | | |
|-------------|--------------|---------------|
| Ուղղ-Հայց . | Անորիմները | Անոնցիմները |
| Սեռ-Տր . | անորիմներուն | անոնցիմներուն |
| Բյու . | անորիմներէն | անոնցիմներէն |
| Գործ . | անորիմներով | անոնցիմներով |

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.- 1) Գ. դէմքը ունի երկու եզակի եւ երկու յոգնակի:
 2) «Մերը», «ձերը», «իրենցը», «անոնցը» կը նկատենք եզակի, որովհետեւ, օրինակ, երբ կ'ըսենք «մերը», թէեւ «մենք» յոգնակի ենք, բայց մերը եզոզ բանը մէկ հաս է:

3) Գործիական հոլովին յօդը՝ «ը» կամ «ն», սովորաբար կը ջնջենք:

ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐ.- Անդրադարձ = անդր., փոխադարձ = փոխ., Ստաց-
 ցական = Ստաց.:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.- Ինչպէ՛ս կազմուած են Անդր. դերանունները: Ի՞նչ չունին փոխ. եւ անդր. դերանունները: Ինչպէ՛ս կը կազմուին ստաց. դերանունները:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

154.- Գտէ՛ք 1) տեսակը, 2) դէմքը, 3) թիւը եւ 4) հոլովը Հեռեւեալ (Անձ., Փոխ., Ստաց. կամ Անդր.) դերանուններուն. (Փոխադարձը դէմք չունի):

Անոնք, գիրար, իմինէս, քեզ, դուռ-քեզ, մերիմներով, իրարմով, զիս, ձերիմին, ինքզինքս, ինձմէ, անկէ, իրարմէ, անոնց, քուկդ, իրար, ձեզի, իր, ինք, դուռ-ինքդ, ինքզինքդ, զինք, իրարու, ես-իմ, իրենք, իրենք-իրենց, ես, Վե՛ր, իրեն, ինքնիրեն, անորը, իրենց, իրենցը, անորիմներուն, զանոնք, անոր, քու, ես-ինքս, ինքզինքս, ձեզ, իրեն, իրեններուն:

155.- Շեղազիր զոյ՛ր բառերէն երկրորդը ջնջեցէ՛ք եւ առաջինը վերածեցէ՛ք պէտք եղած ձեւին. (իմ եղբայրս = իմս):

Քու եղբայրդ աւելի զարգացած է քան իմ եղբայրս: Ահա իմ մատիտներս, ո՛րք են քու մատիտներդ: Մենք մեր դրամէն ծախսեցինք, դուք ալ ծախսեցիք ձեր դրամէն: Անոր գլխարկին գոյնը ձեր գլխարկներուն գոյնէն նուազ համակրելի է: Իր զիրին պէս ազուտը չէ իմ զիրս: Մեր խանութպանը ձեր խանութպանին չափ մարպիկ է: Իրենց դանակներով եւ մեր դանակներով սրեցինք անոնց դանակը: Երէկ քու ոտանաւորդ կարդացի անոր ոտանաւորը կարդալէ առաջ: Իմ շապիկէս գնէ դուռ ալ:

156.- Լուծեցէ՛ք Հեռեւեալները:

Անոնք ձեր հրաւերն ու մերը պիտի չմերժեն: Մերը գեղեցիկ չէր: Մերիմները, որոնք ուժեղ են, պիտի յաղթեն ձերիմներուն: Ընկերոջս եղբայրն ու քոջս տղան նամակ գրեր են իրարու: Յարգեցէ՛ք ձեր ծնողներն ու ինքզինքնիդ: Այս գումարը նկարները ձերն են: Տնտեսը կղպեր էր դպրոցին բոլոր դռները եւ դաշտ գացեր էր մեր ինքնաշարժով: Ծոյլերն ու շատախօսները չեն սիրուիր իրենց ընկերներէն եւ բարեկամներէն: Իրիկուան ձեզի պիտի գային: Վեց ամիս ապրեցանք զիւրերը:

ԴԱՍ 21

Մ Ա Կ Բ Ա Յ

218.- Մակբայը բառ մըն է, որ ընդհանրապէս կապուած կ'ըլլայ բային եւ անոր մասին տեղեկութիւն մը կու տայ: Այսպէս-

- Ձեր շունը մըշտ չի հաջեր: (Ժամանակ ցոյց կու տայ)
- Ձեր շունը մեղմօրէն չի հաջեր: (Որակ, կերպ ցոյց կու տայ)
- Ձեր շունը հոն չի հաջեր: (Տեղ ցոյց կու տայ)
- Ձեր շունը շատ չի հաջեր: (Քանակ ցոյց կու տայ)
- Ձեր շունը զրեթէ չի հաջեր: (Իմաստը կ'եղանակաւորէ)

219.- Մակբայները հինգ տեսակ են — ժամանակական (կը դանուի «ե՛րբ» հարցումը ընելով բային վրայ), Որակական («ինչ-պէ՛ս հարցումով»), Տեղական («ո՛ւր» հարցումով), Քանակական («որքա՛ն» հարցումով), Եղանակաւորիչ (հարցում չունի. բային իմաստը կը ծխտէ, կամ կը հաստատէ, եւ կամ՝ տարակրօսի կ'ենթարկէ):

220.- ԺԱՄԱՆԱԿԱԿԱՆ մակբայ են, — Ե՛րբ, երբեմն, միշտ, արդ, մերթ, յետոյ, նախ, ուշ, կանուխ, արդէն, տակաւին, դեռ, շատոնց, նախապէս, եւայլն:

ՈՐԱԿԱԿԱՆ մակբայ են.- Ինչպէ՛ս, ընդհանրապէս, առանձին, դանդաղօրէն, բարեբախտաբար, յանկարծ, կամաց, իսկոյն, շուտ, արագ, միասին, գէշ, աղէկ, լաւ, ուղղակի, սրտանց, գայրագին, եւայլն: (Որակական են զրեթէ բոլոր «պէս», «բար», «զին», «օրէն» մասնիկներով վերջացող մակբայները):

ՏԵՂԱԿԱՆ մակբայ են, — Ո՛ւր, հոս, հոտ, հոն, ներս, դուրս, մէկդի, ապին, անդին, մօտ, առաջ, ետեւ, վար, վեր, եւայլն:

ՔԱՆԱԿԱԿԱՆ մակբայ են, — Որքա՛ն, շատ, քիչ, աւելի, նուազ, ա՛լ, բաւական, չափազանց, միայն, եւայլն:

ԵՂԱՆԱԿԱՎՈՐԻՉ մակբայ են, — Այո՛, ո՛չ, գրեթէ, անշուշտ, բնաւ, իրա՞ւ, ահա՛, ք-երես, երբեք, արդեօք, գուցէ, հապա, ինչո՛ւ, միթէ, արդարեւ, ամենեւին, եւայլն:

221.- Մակբայները անփոփոխ բառեր են, այսինքն՝ թիւ, յօդ, դէմք կամ հոլով չեն ունենար: Մակբայ մը լուծելու համար կ'ըսենք անոր տեսակը եւ որո՛ւ վերաբրիլը: Այսպէս. լուծենք «Այս մարդը շատ կը խօսի» նախադասութեան «շատ» մակբայը.- Շատ = Քանակական մակբայ «կը խօսի» բային:

222.- Մակբայ մը կրնայ կապուած ըլլալ բայէ գառ նաեւ ամականի մը կամ ուրիշ մակբայի մը: Այսպէս. հետեւեալ երեք նախադասութիւններուն մէջ «շատ» մակբայը կապուած է մէյ մը բային, մէյ մը ամականին եւ մէյ մը՝ ուրիշ մակբայի մը.-

- 1) «Ան շատ կը խօսի» (Շատ = Քան. մկբ. «կը խօսի» բային):
- 2) «Շատ սիրումը դիւր մը զնեց». (Շատ = Քան. մկբ. «սիրումը» ամականին):
- 3) «Շատ երկար կը խօսի». (Շատ = Քան. մկբ. «երկար» մակբային):

ՄԱՆՕԹՈՒԹԻՒՆ

1) Սորված ենք թէ բնութեան խնդիրը կապուած կ'ըլլայ բային: Այս դասին սորվեցանք թէ մակբայն ալ կրնայ կապուած ըլլալ բային: Արդ, ինչպէ՛ս զանազանել բնութեան խնդիրը մակբային...:

Բնութեան խնդիրը դոյական մը կամ զերանուն մըն է:

Մակբայը առանձին տեսակի բառ մըն է, որ ո՛չ թիւ, ո՛չ յօդ, ո՛չ դէմք եւ ո՛չ ալ հոլով կ'ունենայ:

2) Կարգ մը որակական ամականներ երբ կապուած են բայի մը՝ մակբայ կ'ըլլան: Այսպէս. երբ ըսենք «երկար ճամբայ», «երկար» բառը որակական ամական է «ճամբայ» անունին. բայց եթէ ըսենք «երկար կը խօսի ան», «երկար» բառը որակական մակբայ է, որովհետեւ կապուած է «կը խօսի» բային: Հոս «երկար» կը նշանակէ «երկարօրէն»:

3) Մակբայական ասացուած կը կոչուին կարգ մը դրաբարածեւ հոլովեալ բառեր՝ որոնք մակբայ են աշխարհաբարի մէջ: Այսպէս. Բնաւ, զիւրաւ, առեւօք, հարկաւ, իհարկէ, բնաւ երբեք, ըստ կամս, փութով, մեղմիւ, դժուարաւ, իբնէ, վերիվերոյ, մասամբ, դէմ-դիմաց, ամէնուրեք, առայժմ, այսուհետեւ, օրընդմէջ, մերթ ընդ մերթ, ի վերջոյ, առ առաւելն, հիմակուհիմա, եւայլն:

4) Ոմանք մակբայ կը նկատեն նաեւ «այսօր», «երէկ», «վաղը» բառերը:

ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐ.- Մակբայ = Մակբ., Ժամանակական = Ժամ., Տեղական = Տեղ., Քանակական = Քան., Եղանակաւորիչ = Եղիչ.:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.- Ի՞նչ է մակբայը: Քանի՛ տեսակ է: Ո՞ր հարցումով կը դառնուի: Որո՞ւն կապուած կ'ըլլայ: Ինչպէ՛ս կը զանազանենք մակբայը բնութեան խնդիրէն: Ի՞նչ է մակբայական սասցուածը:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

157.- Մէկական յարմար մակբայ դրէ՛ք դծիկներուն տեղ: Ապա լուծեցէ՛ք զանոնք:

Կրիան — կը քալէ: Այս բանախօսը — կը խօսի —: Ծովին ջուրերը — կը գարնուին ափերուն: — հարուստ գրադարան մը ունի այս անձը: — մի՛ գործածեր ուրիշներու վստահութիւնը: — չի կարդար ան: — հետաքրքրական է այս վէպը. գայն — պիտի կարդամ եւ — պիտի փոխանցեմ ընկերներուս: Մեր տունը — է: — արագ կը վազէ այս մարզիկը:

158.- Զատեցէ՛ք նախադասութիւնները, եւ լուծեցէ՛ք:

Ո՛վ որ կանոնաւորաբար կ'աշխատի՝ իր նպատակին կը հասնի շատ ապահովաբար: Շատ քիչ կը խնդայ մեր դրացիին կրտսեր տղան: Երկար ծափահարուեցան յաղթական մարզիկները, որոնք շարք-շարք կ'անցնէին եւ կը բարեւէին մեզ: Անձամբ գացէ՛ք անոնց տունը եւ յտակօրէն բացատրեցէ՛ք անոնց մեր բուն նպատակը: Այսուհետեւ եղբորս ե՛ս պիտի սորվեցնեմ իր դասերը: Մեր նախահայրը գարմանալիօրէն հուժկու անձ մը եղած է: Հիւանդապահը նորէն դեղ կը խմցնէր հիւանդներուն, որոնք անձայն պտուկած էին մեծ սրահը: Այս պուրքիկին զգեստը անմիջապէս միւս պուրքիկին հագցուց պզտիկ քայրս: Այիս միւսակը հագուեցաւ, արագաբար սանտրուեցաւ, անապարանօք մտաւ մաշտանեակ, իսկոյն խմեց կաքը, հապնեպով մածուն կերցուց քայրիկին եւ մեկնեցաւ դպրոց: Գրեթէ ամբողջովին մոռցեր էի ապսպրանքներդ: Ո՛չ, ա՛լ չեմ ուզեր գայն: Ո՛ր պահեր էիր նամակներուդ ծրարը: Ե՛րբ պիտի բացուին գարնան խոտմնալից առաւօտները՝ որոնց կը սպասեմ այնքան կարօտագին:

ԴԱՍ 22

ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ (ՊԱՐՁ ԵՒ ԲԱՐԴ)

— ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՒ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՆԿԱՄՆԵՐ —

223.- Նախադասութեան մը բառերը այդ նախադասութեան անդամներն են:

224.- Բայը (թիւ 1), Տէր-բային (թիւ 2), Սեռի խնդիրը եւ Ստորոգելին (թիւ 3՝ երկուքն ալ) նախադասութեան անհրաժեշտ անդամներն են:

225.- Զէզոք, կրաւորական, անդրադարձ եւ փոխադարձ բայով չի նուած նախադասութիւնները՝ միայն երկու հատ անհրաժեշտ անդամ կ'ունենան — «բայ» եւ «տէր-բայի» (թիւ «3», այսինքն՝ սեռի խնդիր կամ ստորոգելի չեն ունենար):

226.- Հետեւեալ նախադասութիւնները անհրաժեշտ անդամները միայն կը պարունակեն. զանոնք կը կոչենք պարզ նախադասութիւններ:

- Պարոնեան երգիծարան է: («Էական» է բայը)
- Յանցագործները պատժուեցան: («Կրաւորական» է բայը)
- Անոնք քան եւ օշարակ խմեցին: («Ներդ.»: Երկու սիւ. կայ)
- Խնդացի: («Զէզոք» է բայը: Տէր-բային լուեկայն է՝ ես)

227.- Անհրաժեշտ անդամներէն դատ ուրիշ բառեր ալ կը պարունակեն հետեւեալ նախադասութիւնները: Զանոնք կը կոչենք բարդ նախադասութիւններ:

- Պարոնեան մեծ երգիծարան է:
- Այդ յանցագործները պատժուեցան:
- Անոնք քան եւ օշարակ խմեցին մեր տունը:
- Երէկ, հանդէսին որքա՛ն խնդացի (ես):

228.- Այն բառերը, որոնք անհրաժեշտ անդամ (1, 2, կամ 3) չեն՝ կը կոչուին Լրացուցիչ անդամներ: Այսպէս. Վերի նախադասութիւններուն լրացուցիչ անդամներն են՝ «մեծ», «այդ», «մեր», «տունը», «երէկ», «հանդէսին», «որքա՛ն»:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

1) «Եւ» եւ «ու» շաղկապները չեն հաշոււիլը: Չանոնք եթէ աւելցնենք պարզ նախադասութեան մը վրայ՝ այդ նախադասութիւնը կը մնայ պարզ. բարդ չ'ըլլար:

2) Բայը քիւ 1 է. բային կապուած բոլոր լրացուցիչներն ալ կ'ըլլան քիւ 4: Տէր-բային քիւ 2 է. տէր-բային բոլոր լրացուցիչներն ալ կ'ըլլան քիւ 5: Սեռի խնդիրը եւ Ստորոգելին քիւ 3 են. Սեռի խնդիրն եւ Ստորոգելին բոլոր լրացուցիչներն ալ կ'ըլլան քիւ 6, եւ այսպէս շարունակաբար (1-4, 2-5, 3-6, 4-7, 5-8, եւ այլն) միշտ երեքական տարբերութեամբ:

3) Նախադասութեան մը բոլոր անհրաժեշտ անդամներն ալ անպատճառ լրացուցիչ չեն առներ: (Երբ անհրաժեշտ անդամ մը լրացուցիչ չունենայ՝ իր լրացուցիչին թիւը ուրիշի մը չենք տար. այդ թիւը կը նկատենք մեռեալ թիւ):

1) Մեծ քոյրս նոր գիրքեր գնեց այսօր: (Երեքն ալ լրացուցիչ ունին):

5 2 6 3 1 4

2) Քոյրս նոր գիրքեր գնեց այսօր: (Միայն Տէր բային չունի լրացուցիչ):


2 6 3 1 4

3) Մեծ քոյրս նոր գիրքեր գնեց: (Բայը չունի):

5 2 6 3 1

4) Մեծ քոյրս բծիշկ է արդէն: (Ստորոգելին չունի):

5 2 3 1 4



229. - Պատկերները գծենք հետեւեալներուն.

Ա) Պերճին «եղբայրը» նոր «մատիտ» մը «նուիրեց» ինծի:

5 2 6 3 6 1 4

Բ) Արային այդ փոքր «գարմիկը» «հիւանդապահ» «եղեր է» արդէն:



5 5 5 2 3 1 4

Գ) Մեր նոյն «դրացիները» վաղը գիւղ «պիտի երթան» ինքնաշարժով:

5 5 2 4 4 1 4

Դ) Այս անուշիկ «մանչուկը» էւ իր «քոյրիկը» «ծպտեցան»:


5 5 2 5 2 1



230. - Պատկերները գծենք հետեւեալ նախադասութիւններուն, որոնց լրացուցիչ անդամներն ալ ունին լրացուցիչ:

Ա) Այս տղուն քոյրը մեծ եղբորը նամակը շատ արագ կարդաց:

Բ) Այս նոյն տղուն մեծ քոյրը փրայրին եղբորը նամակը երէկ կարդաց ընկերներուն:



ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Որո՞նք են անհրաժեշտ անդամները: Ի՞նչ է պարզ նախադասութիւնը. բարդը:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

159.— Ըսէ՛ք թէ հետեւեալ նախադասութիւններէն որո՞նք պարզ են եւ որոնք բարդ: Տոյց տուէ՛ք լրացուցիչ անդամները:

Քնարիկը եղբայր չունի: Այս ծաղկաւանը նոր է: Տո՛ւնը քնացանձ մեծ է: Տիեզերքը կը բովանդակէ անթիւ աստղեր: Մանկիկը շաքար ու պտուղ կ'ուզէր: Աշակերտները, ուսուցիչներն ու ուսուցչուհիները ծովն ու լեռները դիտեցին: Որտորը աղանձներ սրսացեր էր: Կօշիկներս մաշեցան: Պիտի նուաղէր ան: Մեր խանութպանը ուշ կը բանայ իր խանութը: Ապակիները փայլեցան յանկարծ: Արշամին հայրը զինուոր չէ:

160.— Նախորդ հրահանգին պարզ նախադասութիւնները վերածեցէ՛ք բարդի՝ աւելցնելով լրացուցիչ անդամներ, եւ բարդերը՝ պարզի, ջնջելով լրացուցիչ անդամները:

161.— Ընդգծեցէ՛ք զիմաւոր բայերը, զատեցէ՛ք նախադասութիւնները, դրէ՛ք բառերուն թիւերը. ըսէ՛ք թէ նախադասութիւնները պարզ են թէ բարդ. ապա լուծեցէ՛ք զանոնք եւ գծեցէ՛ք անոնց պատկերը:

Այդ պարտեզը ծախսեցի Ասատուրին եւ ամբողջ դրամը գանձեցի անմիջապէս: Շիշերը, գաւաթներն ու պնակները լուաց, գանձեցի գետեղեց պահարանը եւ իջաւ բակ, ուր հաւաքուած էին իր ընկերներն ու ընկերուհիները եւ կը խօսակցէին: Կը բանայի սնունդը, գոր մայրս մարանը կը պահէր, կ'առնէի չամիչ, ընկայգ եւ նուշ, գաղտագողի կ'երթայի պարտեզ եւ հոն առանձին կ'ուտէի բոլորը: Սեղիկը նորէն ստանաւորներ գրեք է եւ գանձեցի ձօներ է իր մօրը, որ շատ ուսեալ կիւն մըն է: Ալիսին սեւ շնիկն ու ներմակ փիսիկը, որմէ գիրկս տեսար, չափազանց մաքուր եւ սիրուն են: Իրեն բաւական դրամ տուի որ տետրակ, գիրք ու քերթ գնէ եւ գանձեցի խկոյն յանձնէ Աշխէնին, որ գիշերը պիտի մեկնի Գահիրէ:

ԴԱՍ 23

**ՅԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ(*), ԽՆԴԻՐ,
ՅԱՐԱԴՐՈՒԹԵԱՄԲ ԽՆԴԻՐ**

231.— Յարադրութիւնները բառեր են, որոնք կը գործածուին գոյականի մը կամ դերանունի մը հետ եւ անոր մէկ պարագան ցոյց կու տան: Այսպէս. «Մինչեւ ԴՊՐՈՅ գացի» եւ «Գիրքը Քեզի համար պահէր եմ» նախադասութիւններուն մէջ «մինչեւ»ը (մինչեւ «գալոց») եւ «համար»ը («Քեզի» համար)՝ Յարադրութիւններ են:

232.— Յարադրութեան մը ընկերակցող բառը (դոյական կամ դերանուն) կ'ըլլայ խնդիրը այդ յարադրութեան: Այսպէս. երբ ըսենք «Մինչեւ դպրոց», «դպրոց» բառը խնդիրն է «մինչեւ» յարադրութեան: Երբ ըսենք «Քեզի համար», «Քեզի» բառը խնդիրն է «համար» յարադրութեան:

233.— Այն յարադրութիւնը, որ գրուած է իր խնդիրէն առաջ՝ կը կոչուի նախադաս յարադրութիւն («Մինչեւ» դպրոց). այն որ գրուած է իր խնդիրէն ետք՝ կը կոչուի յետադաս յարադրութիւն: («Քեզի» համար):

234.— Հայերէնի գլխաւոր յարադրութիւններն են, — Մինչեւ, համար, մէջ, տակ, վրայ, քով, միջեւ, դէպի, պէս, ըստ, որպէս, իբրեւ, իբր, հետ, հանդէպ, շնորհիւ, քան, բացի, գատ, դէմ, առանց, մասին, շուրջ, ի վեր, ի վար, հանդերձ, ասդին, անդին, վերջ, առաջ, առջեւ, ետք, վեր, վար, ներս, դուրս, մէջտեղ, մօտ, չափ, դիմաց, ներքեւ, փոխարէն, առթիւ, նկատմամբ, միջոցին, վերաբերեալ, փոխանակ, գերդ, ետեւ, յետոյ, տեղ, համեմատ, մէկտեղ, իբուց, ատեն, վերեւ, համաձայն, հակառակ, նման, միջոցաւ, պարագային, բաղդատմամբ, սկսեալ, պատճառաւ, և այլն:

*) Նկատելով որ աշխարհարարի «Նախադրութիւնները» մեծ մասով յետադաս են՝ աւելի յարմար պիտի ըլլար զանոնք կոչել «Յարադրութիւն»: Ըստ Մալխասեան բառարանին՝ Յարադրութիւն = Իրար կից կամ մօտ դնելը:

235.- Յարադրութիւն մը լուծելու համար կ'ըսենք միայն աեսակը: Այսպէս. «Համար» = Յետադաս յարադրութիւն:

236.- Յարադրութիւն մը եւ իր խնդիրը միասին կը կոչուին Յարադրութեամբ խնդիր: Այսպէս. «Մինչեւ դպրոց», «Քեզի համար» Յարադրութեամբ խնդիրներ են:

237.- Յարադրութեամբ խնդիրը կը լուծենք հետեւեալ ձևով.- կ'առնենք յարադրութիւնն ու իր խնդիրը միասնաբար, եւ երկուքին միասին՝ կու տանք միայն մէկ «թիւ», ու կ'ըսենք թէ որո՞ւն կապուած է: Յետոյ առանձինն կը լուծենք նախ յարադրութիւնը եւ ետք՝ իր խնդիրը: Այսպէս.

Ես խնձոր մը պահած էի «Ֆեզի համար»:

2 3 6 1 4

Քեզի համար = Յարադրութեամբ խնդիր «պահած էի» բային:

Համար = Յետադաս յարադրութիւն

Քեզի = Անձ. դեր., Բ. դէմք, եղ., տր. հոլ. խնդիր «համար» յարադրութեան:

238.- Յարադրութեամբ խնդիրը ընդհանրապէս կապուած կ'ըլլայ բայի մը: Կրնայ կապուել նաեւ դոյսականի մը կամ անպականի մը: Այսպէս.

«Մինչեւ դպրոց» ֆալեցիմք երէկ: («Քալեցինք» բային)

«Առանց գրպանի» հագուստ մը ունիմ»: («Հագուստ» անունին)

«Քրոջս չափ» բարի աղջիկ չկայ: («Բարի» անպականին):

239.- «Յարադրութեամբ խնդիր»ին կ'ըսեն նաեւ Պարագայական խնդիր:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.- Սորված էինք թէ սեռական-տրական հոլով գոյական մը եթէ կապուած ըլլար գոյականի մը՝ սեռական հոլով յատկացուցիչ էր (վարդին փուշը), եւ եթէ կապուած ըլլար բայի մը՝ տրական հոլով բնութեան խնդիր էր (վարդին նայեցայ): Բայց եթէ սեռական-տրական գոյական մը կապուած ըլլայ յարադրութեան մը՝ պէտք ունիմք տարբեր միջոցի մը՝ ճշդելու համար այդ գոյականին սեռական թէ տրական ըլլալը: Այդ միջոց հետեւեալն է.- (Առնենք «չուրի պէս» յարադրութեամբ խնդիրը, եւ գտնենք թէ «չուրի» սեռ-տր. գոյականը, որ կապուած է «պէս» յարադրութեան՝ սեռական է թէ տրական): Ա.- կը վերցնենք «չուրի» սեռ-տր. գոյականը, Բ.- Անոր տեղ կը դնենք մէյ մը

սեռական անձնական դերանուն մը (իմ, մեր, բու կամ ձեր) ու մէյ մը տրական անձնական դերանուն մը (ինձի, մեզի, քեզի կամ ձեզի), ապա Գ.- Մեր դրած դերանունը կը կարդաք յարադրութեան հետ միասին, - «իմ պէս» եւ «ինձի պէս»: (Այս պարագային կը գտնենք թէ ճիշդ է «ինձի պէս»ը. չենք կրնար ըսել «իմ պէս»): Ուրեմն, Ե.- Կ'ներկայացնենք, - Քանի որ «չուրի» սեռ-տր. գոյականին տեղ «ինձի» (տրական) դերանունը կը յարմարի, հետեւաբար «չուրի» գոյականը տրական է, եւ ո՛չ թէ սեռական:

240.- Յարադրութեան ընկերացող խնդիրը կրնայ ըլլալ հայց., սեռ., տր., բցո., գործ. հոլով: Միայն ուղղական չ'ըլլար:

ԿՐԾԱՏՈՒՄՆԵՐ.- Յարադրութիւն = Յարադ., նախադաս = նախ., Յետադաս = Յետ., Յարադրութեամբ խնդիր = Յխ.:

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ.- Ի՞նչ է յարադրութեամբ խնդիրը: Ընէ՛ք յարադրութիւնները: Ի՞նչ կ'ըսենք յարադրութիւն մը լուծելու համար: Ի՞նչ է հոլովը յարադրութեան խնդիրին: Ինչպէ՛ս կը ճշդենք սեռ-տր. խնդիրի մը հոլովը:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

162.- Գտէ՛ք թէ հետեւեալ յարադրութեամբ խնդիրներէն ո՛ր բառերը յարադրութիւն են, եւ ո՛ր բառերը՝ խնդիր:

Գիրքին մէջ, մինչեւ մահ, մօրս համար, սեղանին վրայ, ժամացոյցին քով, դէպի քեզ, մերիններուն պէս, ըստ հօրս, որպէս մարդ, իբրեւ հրեշտակ, իրեն հետ, աշխատանքիդ շնորհիւ, բացի ժիրայրէն, անկէ գատ, անոր դէմ, առանց երազի, հայերու մասին, պարտեզին շուրջ, լեռն ի վար, ծովէն անդին, կռիւներէն առաջ, հաշտութենէն ետք, սանդուխէն վար, հոգիէդ ներս, ձմերուկի չափ, լեռան դիմաց, միւսներուն փոխարէն, ծննդեան առթիւ, ձերիններուն նկատմամբ, խօսքի միջոցին, դասերուն վերաբերեալ, ոտքիդ համեմատ, Յունուարէն սկսեալ, յաղթանակի պարագային, անոնց պատմաւաւ, եղբօրս միջոցաւ:

163.- Լուծեցէ՛ք նախորդ հրահանգին խնդիրները: Ապա յարադրութեամբ խնդիրները գործածեցէ՛ք մէկական նախադասութեան մէջ:

164.- Լուծեցէ՛ք հետեւեալ նախադասութիւնները: Գտէ՛ք թէ նախադասութիւնները պա՞րզ են թէ բարդ: Որոշեցէ՛ք անհրաժեշտ եւ լրացուցիչ անդամները:

Մինչեւ լոյս աշխատեցանք միասին: Առանց գրուի գաւազան մը գտայ փողոցէն: Տունը, փողոցին մէջ, միշտ յարգեցէ՛ք ձեր մեծերը: Շուշանի պէս ներմակ ձեռքեր պիտի ունենայ այս աղջնակը: Ընկոյզի չափ խոշոր աղամանդ տեսե՞ր ես բնաւ: Որպէս բարեկամ վարուեցայ անոր հետ: Գիշերը դասախօսութիւն պիտի ըլլայ հոս. եղբորդ հետ կու գաս: Այն սեւ պայուսակը, որ մօրս համար գնած էի Փարիզէն, նախն մէջ, սեղանիս վրայ մտցեր եմ: Վերմակիդ համեմատ երկարէ ոտքերդ եւ չես գղջար ապահովաբար: Ան իբրեւ բարեկամ մօտեցաւ ինձի եւ եղբօրս: Ինչե՛ր կ'ըսէ՛ք նորէն:

«... Տաք օր մըն էր. մայրս յուզումով գրկեց զիս, համբուրեց նակատս ու լացաւ հեծեծագին: Հայրս չհամբուրեց զիս: Այդ լռին եւ խոժոռ մարդը երբեք չէր յայտնէր իր սէրը սովորական գուրգուրանով: Ու ես զգացի թէ որքա՛ն խոր էր անոր վիշտը: Կեանքի դաժմանութիւնը ստիպեր էր զինք որ բռնէր իր միակ մանչ գաւկին ձեռքէն եւ ձգէր անյայտութեան ծովը:

Ես կ'երթայի արդիւնաբերական ֆաղափ մը, ուր կը ձգտէին ամէնէն: Ես կ'երթայի հոն՝ որ հաց ֆարէի մօրս ու ֆոյրերուս համար: Հօրս անակնկալ սնանկութիւնը մեզ վերցուցեր էր մեր նիւթական բարձր դիրքէն եւ նետեր էր չոր փսիաքի վրայ:

Ազատեցի ինքզինքս մօրս խանդավառ գիրկէն, սրբեցի երեսէս անոր շերտ արցունքի կաթիլները եւ կառք մտայ: Կառապանք բարձրացուց իր երկար մտրակը: Նախ կեդրոնի ձին շարժեցաւ, յետոյ միւս երկու ձիերը անոր հետեւեցան: Կառքը ֆոֆոսաց եւ այնպիսի դողդիւն մը արձակեց, որ կարծեցի թէ մեծ տուն մը կը փչէր:

Բաւական հեռացեր էինք. ծնողքս դեռ կանգնած էին նոյն տեղը...» (Շիրվանդատէ):

ԴԱՍ 24

ԲԱՅԱՅԱՅՏԻՉ ԵՒ ԲԱՅԱՅԱՅՏԵԱԼ

241.- Բացայայտիչը բառ մըն է (գոյական մը, դերանուն մը, եւայլն), որ դրուած կ'ըլլայ գոյականի մը կամ դերանունի մը մօտ, եւ ցոյց կու տայ անոր ի՛նչ կամ ո՛վ ըլլալը: Այսպէս. Միջերկրական Ծով, Պետրոս Դուրեան, Աստղիկը՝ ֆոյրս, Քաջն Նազար, Դուք՝ Հայերդ: («Ծով», «Դուրեան», «քոյրս», «Քաջ», «Հայերդ» բառերը Բացայայտիչ են):

Այն բառը որուն ի՛նչ կամ ո՛վ ըլլալը կ'ըսէ Բացայայտիչը՝ կը կոչուի Բացայայտեալ: Այսպէս. վերի օրինակներուն մէջ Բացայայտեալ են «Միջերկրական», «Պետրոս», «Աստղիկ», «Նազար», «Դուք» բառերը:

242.- Չորս կարգի բացայայտիչներ կան: Այսպէս.

- 1) «Բութ»ով կազմուած. «Աստղիկը՝ ֆոյրս, նկարիչ է»:
- 2) Մականուն «Պետրոս Դուրեան ծնաւ 1852-ին»:
- 3) Տիտղոս «Տիգրան քագաւոր է՛րր մեռաւ»:
- 4) Մակդիր «Քաջն Նազարը անմահ է»:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.- Մակդիրը պէտք է շփոթել ամականին հետ: Այսպէս. 1) երբ կ'ըսենք «Մեծն Ներսէս», «Քաջն Անդրանիկ» կամ «Դերմակ Արամը», «Պահակ Մուշեղը», եւայլն, Մեծն, Քաջն, Դերմակ, Պահակ բառերը ամականներ չեն: Զե՛նք հարցնենք՝ ինչպիսի՛ ներսէս, ինչպիսի՛ Մուշեղ. այլ կը հարցընենք.- ո՛ր ներսէսը, ո՛ր Մուշեղը: «Մեծն», «Քաջն», «Դերմակ», «Պահակ» բառերը մակդիրներ են, ուրեմն՝ Բացայայտիչ են:

2) երբ բացայայտիչը մակդիր, տիտղոս կամ մականուն է՝ հոլով եւ թիւ (եզակի-յոգնակի) չ'ունենար: Կը լուծենք այսպէս. «Մեծն Ներսէս». Մեծն = բացայայտիչ «Ներսէս» Բացայայտեալին:

3) երբ բացայայտիչը բութով կազմուած է (այսինքն՝ մակդիր, տիտղոս կամ մականուն չէ), կ'ունենայ բացայայտեալին հոլովը եւ թիւը: Բացայայտեալին հոլովը կախում ունի իր պաշտօնէն: Այսպէս.

- Աստղիկը՝ քոյրս, նկարիչ է: («Աստղիկը» եւ «քոյրս»՝ ուղղ.)
- Աստղիկը՝ քոյրս, շատ կը սիրեմ: («Աստղիկը» եւ «քոյրս»՝ հայց.)
- Աստղիկին՝ քրոջս, ձայնը նուրբ է: («Աստղիկին» եւ «քրոջս»՝ սեռ.)
- Աստղիկին՝ քրոջս, ժպտեցայ: («Աստղիկին» եւ «քրոջս»՝ տր.)
- Աստղիկէն՝ քրոջմէս, ներացայ: («Աստղիկէն» եւ «քրոջմէս»՝ բցո.)
- Աստղիկով՝ քրոջմովս, հպարտացայ: («Աստղիկով» եւ «քրոջմովս»՝ դործ.)

4) Անուն-մականունի պարզային, յաճախ Բացայայտելը (անունը) հոլովելու տեղ՝ կը հոլովենք Բացայայտիչը (մականունը): Այսպէս. փոխանակ ըսելու՝ «Դուրեան Պետրոսէն», կ'ըսենք «Պետրոս Դուրեանէն»:

Երբ մականուն մը յօդ, թիւ կամ հոլով ունենայ՝ կը զարդի Բացայայտիչ ըլլալէ եւ կը վերածուի Բացայայտելի. «Անո՛ւնը» կ'ըլլայ Բացայայտիչ: Այսպէս. Երբ ըսենք — Պետրոս Դուրեան, «Դուրեան» բառը Բացայայտիչն է, «Պետրոս» բառը Բացայայտել է: Բայց երբ ըսենք — «Պետրոս Դուրեանէն», «Պետրոս» Բացայայտիչ է, «Դուրեանէն»՝ Բացայայտել:

243.- «Բուժ»ով կազմուած բացայայտիչը կը լուծենք այսպէս.

Աստղիկը՝ քոյրս, ճաշակաւոր է:

5.- Քոյրս = Նիւթ. հարկ. անուն, եղ., ուղղ. հոլ. բացայայտիչ «Աստղիկը» բացայայտելին, «ս» դիմորոշ յօդ: (Նախադասութեան տէր-բային է «Աստղիկը» եւ ո՛չ թէ «քոյրս» բառը որ բացայայտիչն է):

244.- Բացայայտիչը կրնայ լրացուցիչ ունենալ: Այսպէս.

Աստղիկը՝ մեծ քոյրս, ճաշակաւոր է:

ՄԱՆՈՒԹՈՒԹԻՒՆ

1) Բառի մը Բացայայտելը ըլլալը կ'ըսենք իր Բացայայտիչը լուծելու ատեն:

2) Եթէ ըսենք՝ «Աստղիկը՝ քոյրս, մեզի եկաւ», «Քոյրս» բացայայտիչ է, «Աստղիկը»՝ բացայայտել: Բայց եթէ վրիժենք տեղերը եւ ըսենք՝ «Քոյրս՝ Աստղիկը մեզի եկաւ», «Աստղիկը» բառն է բացայայտիչ, եւ «Քոյրս» բառն է բացայայտել:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

165.- Լուծեցէ՛ք հետեւեալ նախադասութիւնները:

Պարոն Արամը՝ օրիորդ Ալիսին մեծ եղբայրն է: Դերանկաւոր Մարին իրապէս վայելուչ հագուստներ կը կարէ մեզի: Պէյրուքը, Լիբանանի մայրաքաղաքը, շատ նշանաւոր է որպէս նաւահանգիստ: Նամակը քոչոս՝ Գոհարիկին դրկեցի, որպէսզի գայն կարգայ: Մի-նասեանին՝ մեր խմբապետին, բոլոր հրահանգները կը կատարեմ միշտ: Պատասխան չստացայ դեռ Սարեան Պերսէն, որ Հոռոմ է:

ԴԱՍ 25

ԿՈՉԱԿԱՆ, ՇԱՂԿԱՊ, ԶԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆ

245.- Երբ դոյական մը (կամ դերանուն մը) ծառայէ խօսք ուղղելու կամ կանչելու՝ կը կոչուի կոչական: Այսպէս.

Այսօր, ընկերներ՝ր, կեանքիս ամէնէն երջանիկ օրն է:

«Աստղե՛ր, հոգւոյս մէջ ինկէք»:

Մայրի՛կ, կը հաճի՞ս դուռը բանալ:

246.- Կոչականը անկախ բառ մըն է. կապուած չէ ուրիշ բառի մը: Զայն ստորակէտով կը զատենք նախադասութենէն:

247.- Կոչականը պէտք չէ շփոթել տէր-բայիին հետ: Այսպէս. «Մայրի՛կ, կը հաճի՞ս դուռը բանալ» նախադասութեան տէր-բային է «դուռ»ը (լուծեալն տր.) եւ ո՛չ թէ «մայրիկ» բառը:

248.- Կոչականը կը նկատենք ուղղական հոլով: Զայն կը լուծենք այսպէս.

Մայրի՛կ = Նիւթ. հաս. անուն, եղ. ուղղ. հոլ., կոչական:

ՄԱՆՈՒԹՈՒԹԻՒՆ.- 1) Քանի որ կոչականը անկախ բառ մըն է՝ իրեն «թիւ» չենք տար: Զայն կը լուծենք միւս բառերը լուծելէ ետք: Նախադասութեան պատկերը գծելու ատեն՝ կոչականին պատկերը չենք դժեր:

2) Կոչականը սովորաբար չեշտ կամ երկար կ'ունենայ: Կոչականը երբ լրացուցիչ մը ունենայ՝ իր չեշտը (կամ երկարը) կը փոխադրուի այդ լրացուցիչին վրայ: Այսպէս. «Սիրելի՛ մայրիկ...»

249.- Շողկապները բառեր են, որոնք կը ծառայեն իրարու կապելու բառեր կամ նախադասութիւններ: Այսպէս. «Կը սիրեմ տանձն ՈՒ սեխը». «Իրեն ըսի երէկ» թիջ «զինք կը փնտռէի»:

250.- Շողկապները երկու տեսակ են, — Համադասական եւ ստորադասական:

Գլխաւոր համադասական շողկապներն են, — Ու, եւ, ուրեմն, բայց, կամ, ուստի, նաեւ, մանաւանդ, սակայն, ալ, իսկ, գէթ, գոնէ, բայց եւ այնպէս, նոյնիսկ, այլ, թէ՛ ... թէ՛, եւայլն:

Գլխաւոր ստորադասական շողկապներն են, — քէ, քէ. քէեւ, «որ», երբ, քէպտեւ, մինչդեռ, մինչ, քէ որ, մանաւանդ քէ, մանաւանդ որ, երբ որ, որովհետեւ, որպէսզի, քանի որ, ինչպէս որ, որպէս քէ, միայն քէ, մինչեւ որ, պայմանով որ, այսինքն, եւայլն:

251.- Երկու նախադասութիւններ կրարու կապող շողկապը, լուծումի ատեն կ'առնենք ա'յն նախադասութեան հետ, որուն սկիզբը գրուած է: Շողկապ մը լուծելու համար կ'ըսենք անոր տեսակը եւ որո՛ւ կապուած ըլլալը:

ՄԱՆՕԹՈՒԹԻՒՆ.- 1) Շողկապական ասացուած կը կոչուին մէկէ աւելի բառերէ կազմուած շողկապներ: Այսպէս. որքան որ, այլ նաեւ, մինչեւ իսկ, հազիւ թէ, եթէ ոչ, ոչ միայն, ոչ իսկ, իբրեւ թէ, եւայլն:

2) Շողկապներուն սակ «թիւ» չենք զներ: Անոնց պատկերն ալ չենք գծեր:

3) «Ալ» բառը շողկապ է երբ շեշտ չունի: Երբ ունի մակրայ է:

252.- Չայնարկութիւնները բառեր են, որոնք ցաւ, ուրախութիւն, յուզում արտայայտելու կը ծառայեն: Չայնարկութիւնները բացառանշութիւններ են: Այսպէս. Օ՛ֆ, ա՛խ, օ՛խ, վա՛յ, ա՛յ, երանի, օ՛ն, օ՛շտ, մե՛ղք, կեցցե՛ք, ի՛նք, օհօ՛, ո՛հ, օ՛... .

253.- Չայնարկութիւնը թիւ, յօդ, հսլով չ'ունենար: Կապուած չ'ըլլար որեւէ բառի: Չայնարկութիւնը նախադասութեանէն կը պատենք ստորակէտով:

ՄԱՆՕԹՈՒԹԻՒՆ.- 1) Կոչական նման՝ Չայնարկութիւնն ալ «թիւ» չ'ունենար: Պատկեր գծելու ատեն, Չայնարկութիւնն ալ դուրս կը ձգենք:

2) Չայնարկութիւնն ու շողկապը իրենց ներկայութեամբ, պարզ նախադասութիւն մը բարդի չեն վերածեր:

3) Չայնարկութիւնը լուծելու համար պարզապէս կ'ըսենք «Չայնարկութիւն»:

254.- Մեր լեզուին բառերը ութ տեսակ են — Բայ, Գոյական (Անուն), Դերանուն, Ածական, Մակրայ, Յարադրութիւն, Շողկապ, Չայնարկութիւն: Չանոնք կը կոչենք նաեւ Մասունք Բանի (Պօսքի Մասեր):

ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐ.- Կոչական = Կոչ., Շողկապ = Շող., Համադասական = Հմդ., Ստորադասական = Ստր., Չայնարկութիւն = Չայն.:

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ.- Շողկապները քանի՛ տեսակ են. որո՞նք են: Ինչպէ՛ս կը լուծենք շողկապը: Ի՛նչ են Չայնարկութիւնները. որո՞նք են. ինչպէ՛ս կը լուծենք զանոնք: Քանի՛ մասունք բանի ունի մեր լեզուն:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

166.- Չատեցէ՛ք նախադասութիւնները, գտէ՛ք շողկապները եւ ըսէ՛ք անոնց տեսակը: Ապա թիւերը դը՛ք բոլոր բառերուն, լուծեցէ՛ք զանոնք եւ դժեցէ՛ք պատկերը նախադասութիւններուն: Յետոյ ըսէ՛ք թէ անոնք պա՞րզ են թէ բարդ:

«Իմ նախապա՞րհս կ'օրհնէր արդեօք քէ բախտս կ'անիծէր: Վերջին գարնուրի կերպաշարժը քանզի էր այդ քաղաքը, բայց ան գեղեցիկ էր դարձեալ՝ ինչպէս որ գեղեցիկ է գեղուհին՝ նոյնիսկ ցնցոտիներու մէջ: Թանկագին՝ ծննդավայր, ո՛վ գիտէ քէ ե՛րբ պիտի վերադառնամ գիրկը...»: «Օ՛ֆ, ա՛յ անձրացայ անգործութեմէ», ըսաւ ծոյլ մը: Այս է այն, որուն շնորհիւ ձերբակալուեր են բոլոր յանցարարները: Ձեր ներկայութիւնն ու ատուցը հաւասարապէս անբազալի են ատուց համար: Օ՛ն, աշխատեցէ՛ք տղաք, որպէսզի յաջողիք եւ ձեր սիրելիները ուրախացնէք: Քանի որ կը սիրես այդ երօրդ տղան ալ, օգնէ՛ անոր որ վնարէ իր պարտքերը, ինչպէս որ օգնած ես Սեպուհին՝ միւս երօրդ տղուն: Իրմէ վերստին խնդրեր են որ դասախօսէ մեր ակումբը՝ գրականութեան մասին: Ոմանք հագուագիւտ նկարներ նուիրեցին դպրոցին գրադարանին, ուրիշներ նուիրեցին գիրքեր եւ քերթերու հաւաքածոներ, մինչ այդ անձը, որ մեծահարուստ և ունեալ է, դաւեկան մը իսկ չտուաւ: Թաղումը այսօր պիտի չըլլայ, քէեւ մահագոյ դրկուեր է արդէն շատերու: «Դուք-ձեզ ի՛նչ կը կարծէք, խեղճու՛կ մարդիկ», ըսաւ փիլիսոփան այն մարդոց, որոնք շրջապատեր էին զինք: Տէ՛ր, դո՛ւն լուսաւորէ անոր համբան, որովհետեւ չի գիտեր քէ ի՛նչ կ'ընէ: Մարդկային կեանքը, աւա՛ղ, այնքա՛ն վաղանցիկ է, որ մարդ յաճախ չ'գգար քէ ինչպէ՛ս կ'անցնին օրերը եւ չի հաշտուիր այն գաղափարին հետ քէ ինք նախկին պատանին կամ երիտասարդը չէ այլեւս: Առաստը եկաւ. աշխատատեղերը ժպտեցան արեւին, մինչ ծոյլերը անիծեցին զայն: Այս ա՛յս է. ինչո՛ւ կը խօսիս դեռ: Արարները ազնիւ ժողովուրդ են. անոնք ո՛չ միայն ընդունեցին Հայերը, այլ եւ պաշտպանեցին զանոնք եւ անոնց տուին քաղաքացիական անունք: Գաղն վարդան՝ հայ հաւատքին մեծ պաշտպանը, եւ Դաւիթ Պեկ՝ հայ ազատագրութեան քաջ մարտիկը, յաւիտեան պիտի յիշուին:

Գ. ՄԱՍ

(ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԲԱԺԻՆ)

ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՆԵՐ

ԴԱՍ 1

ԼԵԶՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

255.- Լեզուաբանութիւնը այն գիտութիւնն է, որ կ'ուսումնասիրէ լեզուներու կեանքը ընդհանրօրէն, կը քննէ անոնց կրած յաջորդական փոփոխութիւնները իրենց պատմական կեանքին ընթացքին, երեւան կը հանէ այն օրէնքները, որոնց համաձայն տեղի կ'ունենան այդ փոփոխութիւնները, եւ վերջապէս, հիմնուելով այդ օրէնքներուն վրայ, կ'աշխատի մխրճուիլ անձանոթ անցեալին մէջ եւ լուսարանել ըրոյր լեզուներուն, ինչպէս եւ առհասարակ մարդկային խօսութեան ծագումը: (*)

256.- Լեզուաբանութիւնը ունի չորս գլխաւոր ճիւղ.

Ա.- Ձայնաբանութիւն: Այս ճիւղը կը հետաքրքրուի լեզուիս ձայներով (հնչիւններով), անոնց արտադրութեան եղանակով, անոնց կրած փոփոխութիւններով ժամանակի ընթացքին, անոնց փոխադարձ ազդեցութեամբ:

Բ.- Ձեւաբանութիւն: Այս ճիւղը կը հետաքրքրուի լեզուին բառերուն կազմութեամբ, բառերուն իրարու հետ ունեցած առընչութեամբ, բառերուն ձեւերով (հոլովական, եւայլն):

Գ.- Շարահիւսութիւն: Այս ճիւղը կը հետաքրքրուի բառերուն շարքով, անոնց դասաւորումով (այսինքն՝ խօսքերու կազմութեամբ):

*) Տես՝ Հրաչեայ Աճառեան, «Լիակատար Քերականութիւն Հայոց Լեզուի»:

Դ.- Լեզուներու դասակարգութիւն: Այս ճիւղը կը հետաքրքրուի հետեւեալ հարցերով.- Ի՞նչ լեզուներ գոյութիւն ունեցած են անցեալին. ի՞նչ լեզուներ գոյութիւն ունին ներկայիս. կապ կա՞յ այս լեզուներուն միջեւ. եթէ կայ՝ ո՞ր լեզուները կապ ունին իրարու հետ. քանի՞ խումբերու կարելի է բաժնել լեզուները:

257.- Ձեւաբանութիւնը եւ Շարահիւսութիւնը միասին՝ կը կազմեն Քերականութիւնը:

258.- Կենդանի լեզու կը կոչուին այն լեզուները, որոնք ներկայիս կը գործածուին որպէս միայն խօսակցութեան, կամ՝ որպէս խօսակցութեան եւ գիրքերու լեզու: Օրինակ. Հայերէն աշխարհաբարը, Անգլերէնը, եւայլն:

Մեռեալ լեզու կը կոչուին այն հին լեզուները, որոնք այլեւս ո՛չ կը խօսուին եւ ո՛չ ալ կը գործածուին որպէս գրականութեան եւ դասագիրքերու լեզու: Օրինակ. Գրաբարը, Լատիներէնը, եւայլն:

Գրաւոր լեզու կը կոչուի այն լեզուն, որ կը գործածուի որպէս դասագիրքերու եւ գրականութեան լեզու: (Ներկայիս Հայերէնը ունի երկու գրաւոր լեզու — Արեւելահայերէնը՝ Հայաստանի եւ Պարսկաստանի Հայերուն լեզուն, եւ Արեւմտահայերէնը՝ Սփիւռքի մնացեալ Հայերուն լեզուն):

259.- Բարբառ կամ գաւառաբարբառ կը կոչուի ժողովուրդի մը մէկ հատուածին խօսած տեղական լեզուն, որ նմանելով հանդերձ նո՛յն ժողովուրդին ա՛յլ հատուածներուն կողմէ գործածուող խօսելակերպերուն՝ անոնցմէ կը տարբերի առաւել կամ նուազ չափով: Հայերէնի բարբառները թիւով աւելի քան քառասուն են.— Պոլսոյ, Վանի, Թիֆլիսի, Երեւանի, եւայլն, բարբառները:

ԼԵԶՈՒԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔՆԵՐ

260.- Բոլոր այն լեզուները, որոնք ցեղակից են, այսինքն՝ միեւնոյն ծագումը ունին՝ կը կազմեն ընտանիք մը: Լեզուական ընտանիքներու գլխաւորներն են.

Ա.- Հնդեւրոպական ընտանիք, որուն կը պատկանին Սանսքրիտը, Չանդիկ լեզուն, Հնդկերէնը, Պարսկերէնը, Յունարէնը, Լատիներէնը, Գերմաներէնը, Անգլերէնը, Ֆրանսերէնը, Իտալերէնը, Ռուսերէնը, Հայերէնը, եւայլն:

Հայերէնը կը կազմէ անկախ եւ առանձնաշատուկ ճիւղ մը՝ Հնդեւրոպական ընտանիքին մէջ:

Բ.- ՍԵՄԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԸ, որուն կը պատկանին Փիւնիկե-րէնը, Արաբերէնը, Ասորերէնը, Եբրայերէնը, եւայլն:

Գ.- ՈՒՐԱԼ-ԱԼՏԱՅԵԱՆ ԸՆՏԱՆԻՔԸ, որուն կը պատկանին Թրքերէնը, Թաթարերէնը, Մոնղոլերէնը, եւայլն:

Դ.- ՉԻՆԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԸ, որուն կը պատկանին Չինարէնը, Պիրմաներէնը, եւայլն:

Ե.- ԱՓՐԻԿԵԱՆ ԸՆՏԱՆԻՔԸ, որուն կը պատկանին Եգիպտերէնը, Սուտանեան լեզուները, եւայլն...:

ԼԵԶՈՒՆԵՐՈՒ ԿԵԱՆՔԸ

261.- Նոյն ընտանիքին պատկանող բոլոր լեզուները, անցեալին, կազմած են մէկ լեզու, որ նախամայր լեզուն է՝ նախալեզուն: Դարերու ընթացքին այդ նախալեզուն գործածող ժողովուրդին զանազան մասերը ենթարկուել են տարբեր ազդեցութիւններու, եւ այսպէսով յառաջ եկեր են նոյն նախալեզուէն սերած լեզուներ, որ կը կոչենք մայր լեզուներ: Այս մայր լեզուները բաժնուելով իրարմէ եւ ապրելով իրենց ուրոյն կեանքով, իրենց կարգին ծնունդ տուեր են զանազան լեզուներու, որ կը կոչենք նոր լեզուներ: Այս նոր լեզուներն ալ աճելով ու զարգանալով ծնունդ տուեր են բարբառներու եւ ենթաբարբառներու:

Լեզուական ընտանիքի մը պատկերը կրնանք ներկայացնել հետեւեալ ձեւով. 1.- Նախալեզու, 2.- Մայր լեզուներ, 3.- Նոր լեզուներ, 4.- Բարբառներ, 5.- Ենթաբարբառներ: (*)

Ներկայիս իւրաքանչիւր ընտանիքէ կենդանի են նոր լեզուները, եւ սովորաբար բարբառներն ու ենթաբարբառները: Կրօնական արարողութիւններու ատեն կը դործածուին կարգ մը մայր լեզուներ, ինչպէս՝ զրաբարը: Իսկ նախալեզուն ամբողջովին զրկուած է գոյութենէ. Լեզուաբանութիւնը զայն վերականգնել կը փորձէ՝ հնարաւոր չափով:

*) «Երբ նոյն ժառոյտը լին պատկանող եւ տեղական լեզուով խօսող երկու անհատներ իրար չեն հասկնար՝ այնտեղ Բարբառ կայ. իսկ երբ իրար կը հասկնան առանց գծուարութեան՝ այնտեղ ենթաբարբառ կայ»:

ԴԱՍ 2

Հ Ա Յ Ե Ր Է Ն Լ Ե Զ Ո Ւ Ն

262.- Ը — Է. դարերուն (Ք. Ա.) Հայկական Բարձրաւանդակին վրայ բնակող Հայաստան ցեղային միութիւնը իր շուրջ համախմբելէ ետք Արմէն ցեղախումբին պատկանող ժողովրդային խումբերը՝ հեռզհեռէ կը թափանցէ Հայկական լեռնաշխարհին խորերը եւ իրեն կ'ենթարկէ հոն բնակող ուրարտական եւ այլ ցեղերը: Ժամանակի ընթացքին Հայաստանները իրենց մէջ կը ձուլեն այդ բոլոր ցեղերը, եւ այսպէսով կը կազմուի Հայ ժողովուրդը: Հայաստաններու լեզուին տիրապետող ազդեցութեան տակ կը միախառնուին միւս ցեղերուն լեզուները, եւ յառաջ կու գայ Հայերէնը՝ որ կը դառնայ Հայ ժողովուրդին ընդհանուր լեզուն: Այս լեզուն է, որ յետոյ պիտի կոչուի «զրաբար»:

263.- Նախամեսորոպեան շրջանէն մեղի հասած եւ Հայերու վերաբերող զբաւոյր արձանագրութիւնները Հայաստան չեն: Ոմանք կը խորհին թէ Հայերը Մեսորոպէն առաջ (Ե. դար, Ք. Ե.) ունեցած են հայերէն գիրեր, բայց այդ գիրերով արտադրուած գործերը կորուսած են ընկերային եւ քաղաքական վերլիւյրումներու հետեւանքով: Ուրիշներ կը պաշտպանեն այն տեսակէտը թէ հայերէնը առաջին անգամ գրի առնուած է Մեսորոպի օրով: Աւելի ուրիշներ այն տեսակէտէն են թէ Հայերը նախամեսորոպեան շրջանին գործածած են հայկական նշանագրեր. (նշանագիրը իմաստ մը ներկայացնող զծապատկեր մըն է, կամ գիրերու միացում մը): Ամէն պարագայի, սովորութիւն է գրաւոր հայերէնը սկսած նկատել Մեսորոպ Մաշտոցէն:

Ե. դարէն սկսեալ, ուրեմն, հայերէնը կը դառնայ զրական լեզու. դայն կը կոչենք «գիրքերու լեզու», գրաբար: Գրաբարի ժամանակ գոյութիւն ունեցած են նաեւ տեղական բարբառներ, բայց անոնց գործածութիւնը եղած է սահմանափակ՝ բազմաթիւ գրաբարին, որ հասկնալի էր ժողովուրդին բոլոր հատուածներուն համար:

Լեզուական ակնյայտ տարբերութիւններ կան Մեսրոպի՝ օրով, եւ Մեսրոպի եւ իր գործակիցներուն մահէն ետք զրի առնուած հայերէններուն (զրաբարներուն) միջեւ: Առաջինը կը կոչենք Մեսրոպեան հայերէն, երկրորդը՝ Յետ-Մեսրոպեան հայերէն:

2 - Ը դարերուն երեւան կու գան անհատներ, որոնք արուեստականորէն կը փոխեն հայերէնը՝ Յունարէնի նմանողութեամբ, եւ այդ արուեստական հայերէնով կը գրեն, եւ կամ՝ աւելի ճիշդ է ըսել՝ կը քարգլանն փիլիսոփայական գրուածքներ: Այս հայերէնը կը կոչուի Յունարան Հայերէն:

Ե. դարու հայերէնը, որ Մեսրոպի եւ իր անմիջական յաջորդներուն ձեռքով արձանագրուած էր՝ անփոփոխ կը մնայ դարերու ընթացքին՝ որպէս գիրքերու լեզու: Մինչ նոյն լեզուն, ժողովուրդին բերնին մէջ, մէկ կողմէ՝ բնական աճումով, միւս կողմէ՝ օտար ազդեցութիւններու տակ, հետզհետէ կը փոխուի. այնպէս որ այս երկու լեզուները (գիրքերու լեզուն եւ ժողովուրդին լեզուն) որոնք նոյն էին Ե. դարուն, ԺԲ. դարուն մեծապէս տարբեր են իրարմէ: Գիրքերու լեզուն կը կոչուի Գրաբար, ժողովուրդին գործածած այս շրջանի լեզուն՝ Միջին Հայերէն, որ նախ միայն «խօսակցական» լեզու, յետագային կը դառնայ «գրաւոր» լեզու: Կիլիկեան տէրութեան պաշտօնական լեզուն Միջին հայերէնն էր: Ամէն պարագայի, Միջին հայերէնի երեւումովը որպէս գրական լեզու՝ Գրաբարը չի՝ քաշուի հրապարակէն: Կունենանք զուգընթաց երկու գրականութիւններ, — մէկը Գրաբարով, միւսը Միջին Հայերէնով: Բանահիւսութիւնն ալ իր կարգին կը շարունակուի:

Կիլիկեան թագաւորութեան անկումէն յետոյ՝ Միջին հայերէնը, որպէս գրական լեզու, հետզհետէ կը կորսնցնէ իր կարեւորութիւնը: ԺԸ. դարուն կը մնայ Գրաբարը գրեթէ ամբողջովին առանձին՝ որպէս գրական լեզու՝ մինչեւ ԺԹ. դար: ԺԹ. դարու սկիզբը գործածուելու կը սկսի Արդի Հայերէնը (Աշխարհաբարը), որ ծնունդն է զլիսաւորաբար Միջին Հայերէնին, բարբառներու, ի մասնաւորի Պոլսոյ բարբառին՝ Արեւմտահայերէնի պարագային, եւ Երեւանի բարբառին՝ Արեւելահայերէնի պարագային. զրաբարն ալ կ'ունենայ իր կարեւոր ազդեցութիւնը:

264. — ԳՐԱԻՈՐ ՀԱՅԵՐԷՆԸ անցած է երեք շրջաններէ.

1. — Գրաբարը (կամ Հին Հայերէնը), որ գործածուած է Ե. դարէն մինչեւ ԺԹ. դար. (Մեսրոպեան, Յետ-Մեսրոպեան, Յունարան):

2. — Կիլիկեան հայերէնը (կամ Միջին Հայերէնը), որով արտադրուած են բազմաթիւ գիրքեր՝ ԺԲ. դարէն մինչեւ ԺԸ. դար: Այս հայերէնը կը կոչուի նաեւ «Նախնեաց Ռամկորէն»:

3. — Աշխարհաբարը (կամ Արդի Հայերէնը), որ որպէս գրական լեզու ծառայելու սկսած է ԺԸ. դարուն վերջերէն:

Աշխարհաբարը ունի երկու ճիւղ. Ա. — Արեւմտեան աշխարհաբարը (որ կոչուած է նաեւ «Թրքահայերէն») եւ Բ. — Արեւելեան աշխարհաբարը (որ կոչուած է նաեւ «Ռուսահայերէն»):

265. — Ըլլալով անկախ եւ առանձնայատուկ ճիւղ մը Հնդեւրոպական ընտանիքին մէջ, եւ զարգացած ըլլալով ամբողջովին ուրոյն պայմաններու տակ՝ մեր լեզուին կեանքի պատկերը չէր կրնար իւրայատուկ գիծեր չունենալ:

Հայերէն լեզուին պատկերը կրնանք ներկայացնել հետեւեալ ձեւով.

- 1. — Նախալեզու = Հնդեւրոպական նախամայր-լեզուն.
- 2. — Մայր-լեզու = Գրաբարը.
- 3. — Նոր Լեզու = Միջին Հայերէնը.
- 4. — Արդի Լեզու = Աշխարհաբարը.

Հայերէնի Բարբառներն ու Ենթաբարբառները ներկայիս գործածութենէ զազրելու վրայ են գրեթէ ամբողջովին:

ԴԱՍ 3

ՁԱՅՆԱԲԱՆԱԿԱՆ ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա.— ՏԱՌԵՐՈՒՆ ՏԵՍԱԿԸ

266.— Հայերէնի տառերը (գիրերը) եղած են 36 հատ: ԺԱ. դարէն ետք, «օ» եւ «ֆ» տառերը առնուած են Յունարէնէ՝ Թիւր բարձրացնելով 38-ի: Առանձին գիր չէ «և»ը. միացումն է «ե» եւ «ւ» գիրերուն. «և»ը նշանագիր է:

267.— Հայերէն գիրերու սկզբնական ձեւը կոչուած է երկաթագիր, որ գործածուած է մինչեւ ժԱ. դար, երբ արագ եւ շատ գրելու անհրաժեշտութիւնը պատճառ կ'ըլլայ որ փոփոխութիւններ մտցունին գիրերու ձեւին մէջ: Երկաթագիրներուն հին ձեւը կը մնայ եւ կը գործածուի որպէս գլխագիր, խօս նոր ձեւը կը կոչուի բոլորագիր: Բոլորագիրը, իր կարգին, հետզհետէ կը ձեւափոխուի եւ կը վերածուի տպագրութեան մէջ գործածուող հիմնական ձեւին: Միւս կողմէն, ձեռքով գրողներու գրիչին տակ՝ բոլորագիրէն յառաջ կու գայ նոր տեսակի տառ մը՝ նոտր-գիրը, որ հետզհետէ կը կատարելագործուի եւ կը վերածուի ներկայ ձեռագիր տառերուն:

268.— Հայերէնի գլխագիր տառերը կը գործածուին նաեւ որպէս թիւ: Այսպէս. Ա=1, Բ=2, Գ=3, ... Ժ=10, ԺԱ=11, ԺԲ=12, ԺԳ=13, ... Ի=20, ԻԲ=22, ... Լ=30, ԼԳ=36, ... Խ=40, ԽԳ=50, Կ=60, Զ=70, ԶԳ=80, Դ=90, Ը=100, ԸԱ=101, ԸԲ=110, ԸԳ=115, ... Մ=200, Թ=300, ... Ռ=1000, Ս=2000 ... Փ=9000, ԺՌ=10000, ԻՌ=20000, ԼՌ=30000, եւ այլն:

269.— Եթէ գիրերուն քով միջակէտ մը դնենք՝ զանոնք վերածած կ'ըլլանք դասականի. (Ժ = 10, Ժ. = Տասներորդ):

270.— Աշխարհաբարի հնչիւնները (եւ ուրեմն՝ գիրերը) հինգ տեսակ են.— Ձայնաւոր, բաղաձայն, կիսաձայն, անձայն, երկբարբառային:

271.— Ձայնաւոր են այն գիրերը, որոնք կրնան հնչուիլ առանձինն եւ վանկ կազմել՝ առանց ուրիշ գրիի օգնութեան: Ձայնաւորներն են — ա, ե, է, ը, ի, ո, օ (=պարզ ձայնաւորներ) եւ ու (=ou), իւ (=u), էօ (=eu)՝ բաղադրեալ ձայնաւորներ:

272.— Երկբարբառային է գիր մը՝ երբ հնչուի որպէս միացումը երկու հնչիւններու: Այսպէս. «ե» (ելք = եէլք), «ո» (որթ = վորթ), «ի» (իւղ = եուղ):

273.— Անձայն են «յ» գիրը (հսկայ) եւ «ո» գիրը (նուէր). երբ չեն հնչուիր:

274.— Երբ նոյն վանկին մէջ՝ ձայնաւոր մը եւ կիսաձայն մը (Պէյ-բութ), կամ երկու կիսաձայններ (բայն) միասնաբար որպէս մէկ ձայն հնչուին՝ կը կազմեն երկբարբառ մը: Այսպէս. «էյ», «ոյ», «իյ», «այ», «յա», «իա», «եա», «եայ», «եօ», եւ այլն:

275.— Կիսաձայն են այն գիրերը որոնք ձայնաւորի մը հետ միանալով կը կազմեն Երկբարբառներ եւ Բաղադրեալ ձայնաւորներ: Այսպէս. «ե» (արգեօք), «է» (իօթենի), «ի» (աիւն), «ո» (մութ), «օ» (իօթենի), «յ» (կայան), «ւ» (տուն):

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ ՁԱՅՆԱՌՈՐԵՐՈՒ ՄԱՍԻՆ

«ե»ը ձայնաւոր է՝ երբ հնչուի որպէս «է» (ճեղք), կիսաձայն է՝ երբ հնչուի որպէս «եք» (եօթը). երկբարբառային է երբ հնչուի «եէ» (երկու):

«է»ն ձայնաւոր է՝ երբ հնչուի որպէս «է» (մէկ), կիսաձայն է «էօ» բաղադրեալ ձայնաւորին մէջ (էօֆ):

«ի»ն ձայնաւոր է՝ երբ հնչուի որպէս «ի» (միս), կիսաձայն է «իւ» (=«u») բաղադրեալ ձայնաւորին մէջ (հիւր), երկբարբառային է «իւ»ին մէջ երբ «իւ»ն հնչուի «եու» (իւղ):

«ո»ն ձայնաւոր է՝ երբ հնչուի որպէս «օ» (զորք). կիսաձայն է «ու» (=«ou») բաղադրեալ ձայնաւորին մէջ (ջուր). անձայն է «ու» (=վ) բաղաձայնին մէջ (նուաք), երկբարբառային է՝ երբ հնչուի որպէս «վո» (ուտք):

«օ»ն ձայնաւոր է երբ հնչուի որպէս «օ» (մօտ), կիսաձայն է «էօ» բաղադրեալ ձայնաւորին մէջ (էօֆ):

«Ա»ը եւ «ը» միշտ ձայնաւորներ են:

Բաղադրեալ ձայնաւորներն՝ «իւ»ն ձայնաւոր է՝ երբ հնչուի որպէս «u» (րիւր), երկբարբառային է՝ երբ հնչուի որպէս «եու» (իւրացնել):

276.- Բաղաձայն են այն հնչյունները, որոնք առանց ձայնա-
ւորի մը միանալու չեն կրնար արտասանուիլ եւ վանկ կազմել: Բա-
ղաձայններն են — ք, գ, դ, զ, փ, ժ, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ֆ,
ւ, յ, (երբ կը հնչուի որպէս «հ»), ն, շ, չ, պ, ջ, ո, ս, վ, տ, ր,
ց, լ (երբ հնչուի որպէս «լ»), փ, ք, փ:

277.- Բաղաձայնները կարելի է երեք խումբի բաժնել (նախ-
կին՝ բուն) հնչումներուն համաձայն. նուրբ, միջակ, քաւ:

Նուրբ - կ տ պ ճ ծ զ ժ
Միջակ - գ դ ը զ ձ - -
Քաւ - ք փ փ չ ջ ո շ

Անա կորգ մը բաղաձայններու նախկին հնչումը. — ք =
կ համ գհ, փ = ահ կամ գհ, Փ = պհ, ճ = աժ, Ղ = դժ, Չ = թշ,
Մ = ազ. Չ = գզ, Յ = թս կամ տս, Ռ = րր.

Արեւմտահայերէնի մէջ, միջակներուն եւ թաւերուն հնչում-
ները նոյնացած են (պրիթէ), այնպէս որ, իրականութեան մէջ՝ ու-
նինք երկու՛ն աստիճան միայն: Աւելին՝ նուրբերն ու միջակները ի-
րենց հնչումները փոխանակած են իրարու հետ: Արեւմտահայերէնի
աստիճանակարգումը կարելի է ներկայացնել այսպէս.

Ա. — կ, տ, պ, ն, ծ
Բ. — գ-փ, դ-թ, բ-փ, ջ-չ, ձ-ց

278.- Բաղաձայնները կարելի է նաեւ խումբերու բաժնել ըստ
անոնց հնչումի կերպին, այսինքն՝ նայած թէ շրթունքի՞, ակունե-
րո՞ւ, լեզուի՞, քիմքի՞, կոկորդի՞ թէ ունգերու միջոցով կ'արտա-
բերուին: Այսպէս. Շրթնային են. — պ, բ, փ, վ, լ (=վ), մ, փ: Ա-
տամնային են. — տ, դ, ք: Ատամնային-սուլաձայն են. — ծ, ձ, ց,
ս, գ: Լեզուային են. — ր, ն, ն, լ: Քմային-չջական են. — ջ, ֆ, չ,
շ, ժ: Կոկորդային են. — կ, ք, գ, դ, խ, հ, յ (=հ):

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

167.- Հայկական թուանշաններով գրեցէ՛ք հետեւեալ թիւե-
րը. — 17, 26, 450, 209, 600, 690, 733, 115, 466, 1004, 6840, 8358,
4004, 5555, 2052, 20639, 75457, 66666, 90001, 946, 77070, 39264,
1960, 100000, 20020, 969887:

168.- Սովորական թուանշանով ներկայացուցէ՛ք հետեւեալ-
ները. — ԾԸ, ՌԽԹ, ՂԷ, ՌՄՀԶ, ՉԳ, ԻԴ, ՃԱ, ՅԺԲ, ՎՆ, ՔԼԵ,
ԺՌ, ԺՌՅ, ԻՌԾ, ԿՌԿԹ, ՎՃԺ, ՂՌՆԽԴ, ՌՉԷ, ՃՌ, ՅՌՅԹ, ԼՌՁ,
ՔՄԶԸ, ԿՌ, ՌԿ, ԼԶ, ՌՌՈԶ:

169.- Ըսէ՛ք հետեւեալ բառերուն իւրաքանչիւր գիրին տես-
կը (ձայնաւո՞ր, կիսաձա՞յն, բաղաձա՞յն, անձա՞յն թէ երկբարբա-
ռային ըլլալը):

Ջերմ, երեկոյ, բայ, խնձորենի, աւագուտֆ, չուան, սենեակ,
սայլ, յիշողութիւն, մէգ, ֆիզաւոր, քէյաման, արդեօֆ, իւրա-
ցնել, հիւր, մորմոֆ, ոսֆ, հուևտ, սիւն, իտալիա, հովիւ, մեքե-
նայ, օրացոյց, ովասիս, ընծայ, էակ, ազնուութիւն, եօթը, յետոյ,
դրուագ, որդեակ, խայտաճֆ, ֆիւաղ, Քէօշկերեան, թուղթ, էօժե-
նի, խոյ, եռամսեայ, իւրոտ, լոյս, որոտում, նուագ, էօ՛ֆ, ջոլիք,
կայան, այսպէս, մատեան, իյնալ, Սոնիա, ռազմամաւ, ջրհոր,
բնոյթ, վէգ:

170.- Գտէ՛ք նախորդ հրահանգին երկբարբառները եւ բա-
ղալրեալ ձայնաւորները:

171.- Ըսէ՛ք թէ հետեւեալ բաղաձայնները նո՞ւրբ, միջա՞կ
թէ թաւ են. —

կ, ֆ, գ, փ, պ, բ, դ, տ, ք, չ, ջ, ֆ, ծ, ձ, ց, ժ, շ, ս, գ:

172.- Գտէ՛ք թէ հետեւեալ բաղաձայնները շրթնայի՞ն, ա-
տամնայի՞ն, ատամնային-սուլաձա՞յն, լեզուայի՞ն, քմային-չջա-
կա՞ն թէ կոկորդային են. —

ձ, կ, դ, հ, լ, չ, ֆ, ն, շ, ո, ժ, գ, բ, գ, յ, ց, պ, բ, ձ,
ք, դ, ծ, տ, փ, մ, խ, լ, ջ, ջ, վ, ս, փ:

173.- Հետեւեալ բառերուն միջակ բաղաձայնները վերածե-
ցէ՛ք համապատասխան թաւերու՝ կազմելով տարբեր բառեր:

Բակ, դի, որդ, դաւ, գայլ, գամել, բոր, դայլ, երբ, անձաւ,
դիւ, ձախ, բերդ, բուռ, դեր, դուր:

ՁԱՅՆԱԲԱՆԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ (ՇԱՐ.)

Բ.- ՏԱՌԵՐՈՒ ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆԸ

279.- Գործածութեամբ եւ այլազան աղեցութիւններու հետեւանքով՝ կարգ մը տառեր, ժամանակի ընթացքին իրարու տեղ զրուած են զանազան բառերու մէջ: Այսպէս. «Ջիղ» եղած է «ջլապինդ» (փոխանակ ըլլալու «ջղապինդ», «լ» գերը փոխարինած է «ղ»ը): Իրար փոխարինող տառերը կը կոչուին լծորդ տառեր:

Ահա քանի մը գոյգ լծորդ տառերու.

Ղ — լ (աղ — ան-աղ-ի — ան-լի), խ — կ (խումբ — ախումբ — ակումբ), խ — չ (խոյ — ասխակապ), դ — ձ (խեղդ — հեղձամահ), լ — դ (արեւ — արեգակ), ժ — դ (ոյժ — առոյժ — առոյգ), դ — կ (գլոր-իւ — կլոր-իւ), ե — ու (կեր-ա-կեր — կեր-ա-կուր), ծ — թ (ծոյլ — քոյլ), ա — ո (առու — քոտկել), դ — տ (այդ — ատոր), դ — վ (գեր — վեր), կ — մ (մեղկ — մեղմ), ջ — թ (չուրջ — շուրջ), ծ — տ (ծածանիւ — տատանիւ), ճ — թ (զուարճ — զուարթ), ճ — ծ (ճանչ(նաւ) — ծան(օթ)), եւայլն:

Գ.- ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԻՒՆ

280.- Տառադարձել՝ կը նշանակէ օտար բառերը հայերէնով զրել: Անցեալին, օտար բառերը հայերէնով զրելու ատեն, զանոնք ընդհանրապէս ենթարկած են ձայնական փոփոխութիւններու՝ հայերէնի օրէնքներուն, եւ՝ թէ՛ հայերէնի եւ թէ՛ օտար զիրերու այդ շրջանի հնչումներուն համաձայն: Օրինակ.

Յունարէն métaxa՝ եղած է «մետաքս», zephyros՝ եղած է «գեփիւս», chartouarios՝ եղած է «քարաուղար», spongos՝ եղած է «սպունգ», եւայլն:

281.- Անցեալին, օրինակ՝ հին յունարէնէ յատուկ անուն մը փոխ առնելու ատեն՝ զայն տառադարձած են հայերէնի: Այսպէս. «Կէօրկ(իոս)» եղած է Գէորգ:

Յետագային, ժամանակակից օտար լեզուի մը (օրինակ՝ ֆրանսերէն, անգլերէն) յատուկ անունները հայերէնով զրելու պարագային ալ՝ փոխանակ անուններուն ժամանակակից հնչումները եւ ձեւը պահելու նաեւ հայերէնի մէջ՝ սովորաբար առած են անոնց սկզբնական հնագոյն ձեւերը եւ զանոնք տառադարձած ու գործածած են հայերէնի մէջ: Օրինակ. փոխանակ ըսելու (կամ գրելու) Ժագ եւ Լուի (ֆրանսացիի մը պարագային), կամ՝ ձէգ եւ Լուիս (անգլիացիի մը պարագային)՝ ըսած են (եւ գրած) Յակոբ եւ Լուիզիկոս երկուքի՛ն ալ պարագային, առանց նկատի առնելու թէ ֆրանսացիին կամ անգլիացիին ինչպէ՛ս կը կոչեն իրենքզիրենք:

282.- Ահա կարգ մը տեղեկութիւններ տառադարձութեան մասին.

1) «Օ» ձայնը նոր օտար բառերու սկիզբն ու վերջը կ'ըլլայ «օ», մէջը՝ «ո»: Այսպէս. Օկիւսդ, Պուալօ, Նապէլ:

2) Հին «աւ» (=au) հնչումին համարժէք «օ» ձայնը զրուած է «օ»ով՝ թէ՛ հին, թէ՛ նոր բառերու մէջ: Այսպէս. Օզոսոս, Բօլ: («Օ» գերին որդեգրումէն առաջ՝ «օ» (=au) հնչումը կը տառադարձուէր որպէս աւ կամ ուլ: Այսպէս. Պաւլոս (Պօլոս), Կովկաս):

3) Հին օտար բառերու մէջ p, c, k, t դիրերը տառադարձուած են որպէս պ, կ, տ, իսկ b, g, d՝ որպէս ք, գ, դ: Այսպէս. Պետրոս, Կովկաս, Էւայլն: Նոր բառերու մէջ՝ p, c, k, t (ֆրանսերէն հնչումով) ձայնները կը զրուին ք, գ, դ, (եւ երբեմն՝ փ, ֆ, ք), իսկ b, g, d՝ պ, կ, տ: Այսպէս. Բարիզ, Պոնաբարդ, Վիէթոր, Էւայլն:

4) Հին տառադարձութեամբ՝ բառասկիզբի կիսաձայն «ի» հնչումը զրուած է «յ»ով: Այսպէս. Յովսէփ, յասմիկ: Նոր բառերու մէջ՝ բառասկիզբի կիսաձայն «ի»ն կը զրուի «ե»ով, իսկ երկու ձայնաւորներու միջեւ «յ»ով: Այսպէս. Եորկի, ՍաՅոնարա:

5) Հին տառադարձութեամբ (ֆրանսերէնի) «լ» հնչումը սովորաբար եղած է «ղ», իսկ նոր օտար բառերու մէջ՝ «լ»: Այսպէս. Երուսաղէմ, Էկեղեցի, բայց՝ Ֆլոպէր:

6) Հին եւ նոր օտար բառերու մէջ ֆրանսերէնի th և ch(=k) հնչումներուն համարժէք տառերը կը զրուին ք և ֆ, իսկ ph(=ֆ), որ նախապէս զրուած է «փ»ով, այժմ կը զրուի «ֆ»ով: Այսպէս. Թովմաս, Քրիստոս, քոսո. Ստեփանոս (հին ձեւ) և Սղեֆան (նոր):

283.- Ներկայիս ձգտում կայ օտար բառերը հայերէնով գրելու ատեն՝ պահելու անոնց ժամանակակից հնչումներն ու ձևերը:

284.- Հին տառագարծութեան օրէնքներուն համաձայն, անցեալին հայերէնի վերածուած բառերը սովորաբար կը պահենք անփոփոխ՝ իրենց հին ձևով եւ ուղղագրութեամբ:

285.- Նոր սովորութեան հետեւելու պարագային՝ նախընտարելի է, բաղաձայններու առիթով՝ գործածել համապատասխան թաւերը՝ առանց նկատի առնելու թէ ինչպէս կ'ուղղագրուին այդ ձայները իրենց բնիկ լեզուներուն մէջ:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

174.- Ցոյց տուէ՛ք հետեւեալ բառերուն արմատներուն մէջ գտնուող լծորդ տառերը:

Լուալ - լոգնալ: Հով - հոգի: Յորդ - յորձանք: Ճիւղ - ընձիւղ: Ծոյլ - քոյլ: Խեղդել - հեղձամահ: Տաղ - տող: Ծուր - քիւր: Լի - յի: Կեղտ - կեղծ - կարծիք: Մօտ - մատչելի: Խոււք - ակոււք: Խուփ - խափանել - կափարիչ: Մկրտել - մկրտել: Տոյժել - տուգանք: Խայտալ - կայքել: Ջիղ - ջլախտ: Ծիղ - ծիլ: Մուտ - մուծել: Կեր - կերակուր: Բարձր - բարձրաբերձ: Առու - (առոգ) - ռոտգել: Սերմ - զարմ: Փրքիլ - պրծիլ: Խայտալ - կայտառ: Աղտ - եղծել: Կաք - (հաւ)կիք - (այգե)կուքք: Ինծի - ինձմէ: Խառն - խառնիխուռն: Խաչ - խոչ(ընդոտ): Խար(ոյկ) - խոր(ով-ել): Կոր - կեռ: Հեւ(ալ) - հոգ(ի): Շեղ - շիլ: Փալ(փիլի) - փողփող(իլ):

175.- Գտէ՛ք հետեւեալներուն Անգլերէնը կամ Ֆրանսերէնը եւ ցոյց տուէ՛ք իրարու համապատասխանող տառերը:

Ջեփիւռ, փիւնիկ, բարբարոս, եքեր, մեղեղի, ովկիանոս, կեդրոն, եկեղեցի, սաղմոս, կառք, հեքանոս, կով, դուռ, տիտան, կլիմայ, մետաղ, կաքողիկոս, կատու, հերետիկոս, տաղանդ, գող, դուռ, մաւ, հատ, մարտիրոս, կաք, գործ, մեղր, սառանայ, հոնտոր, քառ, փարոս, տպիլ (տիպ-ել), փաղանգ:

Յովսէփ, Գրիգոր, Յասմիկ, Մարգարիտ, Միքայէլ, Յովակիմ, Գասպար, Ստեփան, Աբրահամ, Գեորգ, Սաւուղ, Եղիսաբէք, Պետրոս, Ողիմպոս, Աքեմք, Կեսար, Յուդա, Պղատոն, Յուլիոս, Եզովրոս, Ապոզոն, Եգիպտոս:

ԴԱՍ 5

ՉԵՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ա.- ԲԱՌԵՐՈՒ ԾԱԳՈՒՄԸ

286.- Հայերէնը աշխարհի հարուստ լեզուներէն մէկն է: Հայերէնի բառերուն թիւը 200.000-էն աւելի է: Հայերէնի բառապաշարին մաս կը կազմեն հայ ժողովուրդին՝ դարերու ընթացքին ստեղծած կամ գործածած բոլոր բառերը: Այսինքն՝

Ա.- Հիմնական հայերէն բառեր, որոնք իրենց հնչիւնային կազմով, դարերու ընթացքին մնացած են անփոփոխ, կամ փոխուած են աննշան չափով: Օրինակ. Հայր, մայր, քաղ, ջուր, ծանր, քեքել, վագել, եւայլն:

Բ.- Գրաբարեան բառեր, որոնք գործածուած են միայն գրաբարի մէջ: Օրինակ. Բահուանդ (=սպարանջան), գքեմ (սայթաքիլ), եւայլն:

Գ.- Միջին հայերէնի բառեր, որոնք մեծ մասով գործածուած են միայն Միջին Հայերէնի մէջ: Օրինակ. Պայլ (իշխան, դեսպան), սուլեր (կօշիկ - soulier), պարոն, մարաջախտ, եւայլն:

Դ.- Բարբառային բառեր, որոնք գործածուած են կամ կը գործածուին բարբառի մէջ: Օրինակ. Ոտրբերդի բարբառ՝ Ապլիօ (խենդուկ), դոդ (կարկանդակ հանդերձեղէն), եւայլն:

Ե.- Նոր հայերէն բառեր, որոնք ստեղծուել են կամ գործածուել են նոր ժամանակներու մէջ: Օրինակ. Հեծանիւ, հեռախօս, եւայլն:

Զ.- Փոխառեալ բառեր, որոնք առնուած են ուրիշ լեզուներէ:

Փոխառեալ բառերը երկու դասակարգի կը պատկանին. 1) Հեռուոր անցեալին առնուած բառեր. օրինակ. գաի (պարսկերէնէ), քատրոն (յունարէնէ), մկրատ (արաբերէնէ), եւայլն. 2) Նոր ժամանակներու մէջ առնուած բառեր. օրինակ. մեքոտ, քառչուկ, փիփիական, եւայլն:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

176.- Որոշեցէ՛ք թէ հետեւեալ բառերէն որո՛նք հիմնական հայերէն բառեր են, որո՛նք՝ զրարարեան, միջին հայերէն, բարբառային, նոր հայերէն, կամ նոր փոխառեալ:

Մայր, շոգեկառք, ֆիզիքական, միս, սուր, հեռախօս, ընկալուչ, մեքոտ, նաւ, ընչացք, հեռագիր, աստղ, ալֆով, դուխ, կով, գոգ, պարոն, օդ, միսքիք, արմուկ, տոամ, մշմել (ծծելով ուտել), կին, բառուանդ, կամիտէ, դոդ, դուստր, մարաջախտ, հեծանիւ, կրամ, գքեմ, մզմզալ (պաղէն ցաւիլ), դրամատիրութիւն, ձայնասփիւռ, ցայել (մաքուր ջուրով լուալ), իտէալ, քառչուկ, հայր, ինքնաշարժ, հանրակառք, կիքառ, ամեռ, ալիւր, մեքք, վերելակ, ձայնասփիւռ, ուղղաքիռ, սուգանաւ, քեքեւ, գլխահարկ, քար, քիւօ, սնտուկ, մուկետիկ, գահ, շանքարգել, ծանր, հոգեբոյժ, պայլ, կարաւան, մկրատ, վագել, նաքք, մեծ, ալծ, լոյս, նայլըն, վեց, օդանաւորդ, կաք, բինկ-բունկ, օփերա, աղիւս, պալէ:

177.- Ըսէ՛ք հետեւեալ բառերուն ծագումը.

Մետաղ, ամիս, գինի, Աստուած, սնտուկ, մատուռ, ծիտ, եռալ, քաղաք, քատրոն, սպունգ, նարինջ, սրինգ, կանոն, այծ, կտաւ, ազգ, գոյն, ափսէ, ուղտ, աղք, տուն, դրօշ, կայսր, կարասի, բաղնիք, հիւլէ, եօքը, գագաք, գաւաք, եղբայր, յսպոպ, տանջել, լոգնալ, ոչխար, հայիոյել, ստամոքս, քանն, հոգի, դեկ, շապիկ, կզգի, խմել, երանգ, կիրակի, ծանր, քշնամի, բու, բոսոր, պատրիարք, ծեփել, նոպայ, մեռնիլ, սելս, կմախք, մեծ, նշան, կառք, աքսոր, կատու, խանութ, մարմար, սատան, ծափ, բուրմ, պելս, հայդուկ, քրոնիկ, աղաղակ, ռուպ:

ԴԱՍ 6

ՁԵԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ (ՇԱՐ.)

Բ.- ԲԱՌԵՐՈՒ ԿԱԶՄԸ

289.- Արմատ (կամ պարզ) կը կոչուին այն բառերը, որոնց վրայ ուրիշ բառ, կամ մասնիկ չէ աւելցուած: Այսպէս. «ես», «մեծ», «օդ», «աղ», եւայլն:

290.- Ժամանակի ընթացքին, այս արմատ (կամ պարզ) բառերէն ծագած են նոր բառեր: Նոր բառերը յառաջ եկած են հետեւեալ հինգ ձեւափոխութիւններով. 1) Ձայնափոխութիւն, 2) Ածանցում, 3) Բարդում, 4) Հոլովում, 5) Բայակերտում:

1.- ՁԱՅՆԱՓՈՒՆՈՒԹԻՒՆԸ բառերու հնչիւններուն (գիրերուն) փոխուիլն է: Այսպէս. Մեղկ — մեղմ (կ-մ), մօտ — մատչիլ (օ-ա), հողի — շողի (հ-շ), նայիլ — հայելի (ն-հ), եւայլն:

Կան բառեր, որոնք պարզ կ'երեւին, բայց իրենց կազմին մէջ ունին դուրսէն մուտ դործած գիրեր՝ յաւելուածներ, որոնք այլեւս անբաժան մասը դարձած են այդ բառերուն: Այսպէս. գ-այր(անալ), բ-ողոր, մ-ողոր, հ-արբ(իլ), յ-արդ(արուիլ):

2.- ԱԾԱՆՑՈՒՄ, որ մասնիկներու յաւելումն է պարզ բառերու վրայ: Այսպէս. ցելս-ցելսոտ (Տես էջ 27-33):

Ա.- Ածանցումի (եւ բարդումի) ատեն՝ մասնիկը (կամ բառը) կ'աւելցնենք բառին ուղղական ձեւին վրայ: Այսպէս. ծով-ծովային: Կան սակայն կարգ մը բառեր, որոնց կազմութեան համար գործածուած են արմատներուն հոլովուած զրարար ձեւերը: Այսպէս. Կեանք-կեանս-կեանսառու (հայց.), կայսր-կայսեր-կայսերական (սեռ.), եւայլն:

Բ.- Ածանցումի (եւ բարդումի) ատեն՝ երբ արմատը բայարմատ մըն է, մասնիկը (կամ բառը) կ'աւելցնենք բայարմատին վրայ՝ առանց անկէ զատելու իր միջաձայնը՝ եթէ ունի (միջաձայնը այն գիրը կամ գիրերու խումբն է, որ մտած կ'ըլլայ բայի մը արմատին եւ մասնիկին միջեւ — մօտ-եմ-ալ, մօտ-եց-այ). Այսպէս. Մօտ-եց-ում, եւ ոչ թէ «մօտ-ում», մեղմ-աց-ում, դարման-ալի:

Գ.- Ածանցումի մասնիկներն ալ կրնան ըլլալ պարզ կամ բարդ: Այսպէս. Պարզ են՝ ֆ (ջանք), ու (հասաւ), չ (չաստուած). բարդ են՝ եղէն (եղ-էն), ութիւն (ոյթ-իւն), ենի (ի-ան-ի), ծու (ած-ոյ):

Դ.- Յաճախ մասնիկը արմատին միացած կ'ըլլայ յօդակապով: Այսպէս. Հոմանիչ, ենթակայ, ուղտապան: Առանց յօդակապի միացած են, օրինակ՝ տհաս, մակղիւր, պարտիզպան:

Ե.- Նախադաս անանցական մասնիկներ.- Ս (ս-քօղեղ), բազ (բաղ-դատեղ), դեր (դեր-անուն), շար (շար-ունակ), շաղ (շաղ-կապ), ներ (ներ-մուծեղ), պար (պար-փակեղ), տրամ (տրամ-արանեղ), յար (յար-աղբութիւն), տար (տար-օրինակ), հոմ (հոմ-անիչ), վեր (վեր-աղարձ), անդր (Անդր-կովկաս), ընդ (ընդ-միջեղ), եւայլն: (Կարգ մը բառերու մէջ ընդ մասնիկին «դ»ն ինկած է (ընամանի = ընդ-տանի): (Տե՛ս՝ նաեւ էջ 31):

Յետադաս անանցական մասնիկներ.- Ած (ման-ած), ալ (սետր-ակ), անկ (ատ-անկ), ալար (օլտ-ակար), այ (ակամ-այ), կոտ (վախ-կոտ), անակ (չըջ-անակ), նակ (կոչ-նակ), ալի (յան-կարծ-ակի), ելի (ըմպ-ելի), ելիք (ուտ-ելիք), էն (նոր-էն), անոյշ (ջր-անոյշ), եստ (դով-եստ), ոյ (հաճ-ոյ), կեկ (լայն-կեկ), ոյք (դահ-ոյք), եւայլն:

Զ.- Մասնիկները (ածանցները) անցեալին եղած են բառեր, որոնք մաշած են յաճախակի գործածութեամբ:

Է.- Համանիչ նկատուող մասնիկները կրնան իմաստի տարբեր երանդներ տալ բառին՝ ըստ գործածութեան: Այսպէս. «ային» եւ «ական» մասնիկները համանիչ են, բայց «ժողովրդային» եւ «ժողովրդական» բառերը հոմանիչ չեն. «ժողովրդային» կը նշանակէ «ժողովուրդին յատուկ», մինչ «ժողովրդական» կը նշանակէ «մարդամօտ, ժողովուրդէն սիրուած»:

Ը.- Կարգ մը պարզաներու՝ նոյն արմատը տարբեր իմաստով գործածուած կրնայ ըլլալ երկու բառերու մէջ: Օրինակ. «Քաղաքային» եւ «քաղաքական», «ընկերային» եւ «ընկերական» բառերը հոմանիչ չեն, որովհետեւ «քաղաքային» բառը կապ ունի «քաղաք» բառին հետ, իսկ «քաղաքական» բառին մէջ «քաղաք»ը գործածուած է «քաղաքականութիւն» իմաստով: «Ընկերային» բառը կապ ունի «ընկերութիւն» բառին հետ, իսկ «ընկերական»ը «ընկեր» բառին հետ:

Չ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

178.- Զատեցէ՛ք յաւելուածները. ըսէ՛ք արմատին իմաստը: Ակումբ, հօր, մուր, գայրանալ, հեղուկ, յեղեղուկ, բոդոք, շոքոք(որք), նպար, շոքի, հոգի, անօքի, հմուտ, յառաջ, հլու, գարդ, յարդարանք, հարբիլ, հետք, «աշակերտ», «եքանգ», «աշխարհ»:

179.- Գտէ՛ք արմատներն ու անոնց դրաբար հոլովը: Հօրու, անուանել, օրէնդիք, դրանիկ, ձերբակալել, աստեղագարդ, կայսերական, մօրուսաւոր, հարսանեկան, աշնամուտ, կենսաւէտ, աուրջէք, միութեանական, դիցուհի, հիմաուրց, արեւակից, մօրեանական, գեղջուկ:

180.- Գտէ՛ք թէ որո՞նք միջածանց ունին հետեւեալներէն: Մօտեցում, անչափելի, իմացական, փակում, գարգացում, գրկանք, հիանալի, ամփոփում, մերձեցալի, արբեցում:

181.- Գտէ՛ք՝ մասնիկները բա՞րդ են թէ պարզ: Տգեղ, աղի, մայրենի, չկամութիւն, վանք, հատու, չտես, ցարդ, ոսկեղէն, տմարդի, խնձորենի, շինծու, անարի:

182.- Ստուգարանցէ՛ք հետեւեալ բառերը (Տե՛ս էջ 27-33): Իշապան, մակդիր, ընտանի, «ընկերասէր», բաղդատութիւն, ամբողջ (համ-բ-ողջ), հակագոյեցութիւն, առաջնակարգ, ամէն (համ-այն), յանկարծակիօրէն, մտածկոտ, հանդէպ (համ-դէպ), ստորագրել, ընդհանրական, ծաղկանոյշ, հանդիպում, առնչութիւն, «ընկալագիր», յառաջացում, հասունկեկ, հակընդդէմ, մակարոյժ, «ընկրկիլ», գարտուղութիւն, գերբնական, ապակեղրուցում, մարդկայնական:

183.- Գտէ՛ք թէ հետեւեալ բառերուն արմատները իրենց բո՞ւն իմաստով գործածուած են թէ այլ իմաստով:

Թագաւոր, քագուհի, ագատամիտ, ագատատենչ, ընկերային, ընկերասէր, ընկերական, ֆաղափալար, ֆաղափային, ֆաղափական, բախտաւոր, դժբախտ, գրականագէտ, անուս, ուսնալ, անդադար, գեղջուկ, վարչապետ:

ԴԱՍ 7

ՉԵԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ (ՇԱՐ.)

3.- ԲԱՐԳՈՒՄԸ մէկէ աւելի բառերու միացումն է կազմելու համար նոր բառեր :

Ա.- Բարդումները կարելի է բաժնել երկու խումբի՝ ըստ իրենց կազմութեան, — 1) Իսկական եւ 2) ոչ-իսկական :

1) Իսկական կը կոչուին յօդակապով կազմուած բարդումները : Այսպէս. ֆաջ-ա-սիրտ, ծաղկ-ե-փունջ, չորենաւ (= չորի-ա-նաւ) :

2) Ոչ-իսկական կը կոչուին առանց յօդակապի կազմուած բարդումները : Այսպէս. ա.- Կցումով՝ այդչափ (այդ-չափ), փոխ-տնօրէն. բ.- շողկապով՝ երթեւեկ (երթ-ե-եկ), առաւծախ (առ-ու-ծախ). դ.- կապով՝ հեւիհեւ (հեւ-ի-հեւ), գոյնզգոյն (զոյն-զ-գոյն) :

Բ.- 1) Կան կարգ մը բարդումներ, որոնց յօդակապը ինկած կամ զեղչուած է : Այսպէս. «Լրտես» (փոխանակ՝ «լր-ա-տես»ի), «ընկերվարական» (փոխանակ՝ «ընկեր-ա-վարական»ի) :

2) Երբ բարդ բառի մը երկրորդ մասը ձայնաւորով սկսի՝ յօդակապը կը զեղչենք : Այսպէս. «Ներկաման» (փոխանակ՝ «ներկ-ա-աման»ի) :

3) Բարդումի այս երկու վերջին պարագաներն ալ կը նկատենք իսկական բարդում :

Գ.- Կրկնաւոր կը կոչուին այն բարդումները, որոնք կազմուած են նոյն արմատին կրկնումովը : Այսպէս. «Գունդազուց» = կրկնաւոր, իսկական. «Թրթիւ» (թիւ-թիւ) = կրկնաւոր, ոչ-իսկական, «Այլեւայլ» = կրկնաւոր, ոչ-իսկական :

Կրկնաւոր բարդումներու մէջ նշմարելի են ձայնական այլազան փոփոխութիւններ : Այսպէս. «Չափչփել» (= չափ-չափ-ել. ինկած է «ա» զիրը), «Թրթոալ» (= քիւ-քիւ-ալ. ինկած են երկու

«ի»ները և առաջին «ա»ն վերածուած է «բ»ի), «բարբախել» (= բախ-բախ-ել. կորսուած է առաջին «խ»ն), «յարմար» (= յար-յար. երկրորդ «յ»ն փոխուած է «մ»ի), «ճեփ-ճերմակ» (= ճերմակ-ճերմակ. առաջին «ճերմակ»ը եղած է «ճեփ»), «աղջամուղջ» (= աղջ-ա-մ-աղջ. «ա»ը եղած է «ու»), «թթու» (= քու-քու. ինկած է «ու»ն), եւ այլն :

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.- Երբ կրկնուող արմատին վերջին զիրը «ո» է, առաջին մասին մէջ սովորաբար կը վերածուի «բ»ի : Այսպէս. «Գիւ-գիւ» կ'ըլլայ՝ գրգիւ, «Թիւ-թիւ» կ'ըլլայ՝ քրքիւ, (բայց «չար-չար-ել» կը մնայ չարչարել) :

Դ.- Երբ բարդումը իսկական է՝ բառին բաղկացուցիչ մասերէն առաջինը, սովորաբար, լրացուցիչն է երկրորդին. երկրորդը հիմնական մասն է բառին : Առաջինը կը կոչուի որոշիչ, երկրորդը՝ հիմ : Այսպէս. «Գայլաշուն» կը նշանակէ՝ «շուն մը, որ գայլի տեսակէն է», մինչ «շնագայլ» կը նշանակէ՝ «գայլ մը, որ շունի տեսակէն է» : (Գայլաշուն բառին հիմն է «շուն» բառը, որոշիչն է՝ «գայլ» բառը. շնագայլ բառին հիմն է «գայլ» բառը, որոշիչն է՝ «շուն» բառը) :

Բարդ բառերու մէջ որոշիչը կրնայ ըլլալ հիմին անկանը (չար-ա-միտ = չար միտք ունեցող), յատկացուցիչը (գիր-ա-կապ = վերքի կապ), սեռի խնդիրը (կրակ-ա-պաշտ = կրակը պաշտող), բնութեան խնդիր (լեռ-ա-բնակ = լեռը բնակող, — սիւն-ա-գարդ = սիւներով զարդարուած), մակբայը (արազ-ա-վազ = արագ վազող), եւ այլն :

Երբ բարդումը ոչ-իսկական է՝ բաղկացուցիչ մասերը կրնան համադրաւ ըլլալ : Այսպէս. Առ-ու-տուր, զոյն-զ-գոյն :

Երբ բարդումը կրկնաւոր է՝ բաղկացուցիչ մասերը համադրաւ կ'ըլլան : Այսպէս. Մեծ-ա-մեծ, մէջ-ի-մէջ, քով-քովի :

Ե.- ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ (տես նաեւ էջ 27-33).- Ստուգաբանութեան մասին ունեցած մեր դիտելիքներուն վրայ պէտք է տեսլցնել հետեւեալները .

1.- Բարդումները կրնան ըլլալ 1) իսկական, 2) ոչ-իսկական, 3) իսկական-կրկնաւոր, 4) ոչ-իսկական-կրկնաւոր :

2.- Ստուգաբանելու առեն կը ճշգրենք արմատներուն տեսակը՝ դոյական, ածական, մակրայ, բայարմատ, եւայն, ըլլալը, եւ քերականական պաշտօնը որոշելին (սխ., բխ., յատկացուցիչ, եւայն) եթէ բառը բարդ է:

Ստուգաբանեմք հետեւեալ բառերը.

- | | |
|--|---|
| ՄԱՐԳԱՍԻՐՈՒԹԻՒՆ | ԳՈՅՆԶԳՈՅՆ |
| 1.- Մարդ-ա-սիր-ութիւն | 1.- Գոյն-դ-դոյն |
| 2.- Մարդ-ա-սէր-ութիւն | 2.- Գոյն-դ-դոյն |
| 3.- Մարդ = անուն, սխ. ա = յօդակապ սէր = բայարմատ ութիւն = յետ. մասնիկ | 3.- Գոյն = անուն, համադ. դ = կապ դոյն = անուն |
| 4.- Բարդածանց, իսկական. | 4.- Բարդ, ոչ-իսկական, կրկնաւոր. |

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

184.- Ստուգաբանել՝ք հետեւեալ բառերը:

Քաջասիրտ, եռուզեռ, գերադաս, քառակուսի, փախտա-
կան, տարբադպարւմ, հաշուեցոյց, ձուածեւ, աղջամուղջ, աս-
տանդական, սովամահ, յամբընքաց, դաշտաբնակ, վերելք, ձեռ-
նակապ, անտառապահութիւն, ընդյատակեայ, շոգեշարժ, չաստ-
ուածուիի, նեղմտօրէն, աստեղագարդ, կենսաբաշխ, տարօրինակ,
ցտեսութիւն, հեղեղատ, յարմարագոյն, շնչասպառ, հոգեցունց,
ապառիկ, անյողողող, կաշեգործարան, գոհունակութիւն, անհա-
նայ, պարաբնակ, ծովափնեայ, երկակեցաղ, ջախջախիչ, ընդդի-
մադիր, լրտես, դպրոց, գեղջկական, կօշկակար, քարուքանդ, ինք-
նամոռաց, ջրհոր, ներածում, խմբովին, մարդամօտ, լիառատ,
դիրքագրիւն, քննադատ, նպարեղէն, անդրաշխարհային, անքա-
ցատրելի, ձկնորս, բարեկամաբար, վարդագոյն, գետնափոր, մա-
կերեւութական, մօրու, աւերորդապաշտ, կառնաբակապ, հրավառ,
նամակատուն, երկնեանգ, քարսիրտ, փոխ-նախագահ, «էջմիա-
ծին», «սիրամարգ», մարդավայել, անկեղանոց, մատենագրական,
ասուլիս, բազմակի, յարափոփոխ, սփօղիի, սիրատրոփ, ջարդու-
փշուր, ակամայ, քաջարի, մատենագրարանապետ, ընդվզիլ, ծած-
կոյթ, հայագրի, աստուածավայ:

ԴԱՍ 8

ՁԵՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ (ՇԱՐ.)

4.- ՀՈՒՈՎՈՒՄը անուններու եւ դերանուններու՝ նախադա-
սութեան մէջ սենեցած պաշտօնին համեմատ՝ նոր ձեւ եւ դիրք
ստանալն է: Հայերէնը ունի վեց հորով (Տէ՛ս էջ 83-85):

Ա.- Անունի մը յոյնակին կազմելու համար կողակիին վրայ
կ'աւելցնենք «եր» (եթէ բառը միավանկ է կամ մէկուկէս վանկնոց
է. Օրինակ. Ջուր - ջուրեր, վաղը - վաղրեր) եւ «ներ» (եթէ բա-
ռը բազմավանկ է. Օրինակ. մկրատներ):

Բ.- Երբ բազմավանկ բառ մը բարդ է եւ իր վերջին վանկը
անուն մըն է (ծո-վա-հարս)՝ դոյն յոյնակի վերածելու համար
սովորաբար կ'աւելցնենք «եր» (եւ ո՛չ թէ «ներ».- ծովահարներ):
Իսկ եթէ վերջին վանկը բայարմատ մըն է՝ կ'աւելցնենք «ներ».-
«Հեռա-տես-ներ»:

ՇԱՆԹՈՒՆԻՒՆ.- Որպէս բայարմատ գործածուած անունները պէտք չէ
անուն նկատել: Այսպէս. «Հայրենասէր» բառին մէջ՝ «սէր»ը սիրել լային ար-
մատն է եւ կը նշանակէ «սիրող», մինչ «վերակապ» բառին մէջ «կապ»ը կապել
լային արմատը չէ, այլ պարզապէս կապ անունն է. «վերակապ» կը նշանակէ
«վերբի կապ» (եւ ոչ թէ «վերք կապող»):

Գ.- Կան կարգ մը բարդ բառեր, որոնց վերջին վանկը անուն
մըն է, բայց գործածուած է իր բուն իմաստէն տարբեր իմաստով
մը. օրինակ, «գինեւուն» բառին «տուն» բառը այլեւս չի նշանակեր
«բնակելիք տեղ»: Այսպիսի բառերուն յոյնակին կը կազմենք «ներ»
մասնիկով.- Գինե-տուն-ներ:

Դ.- Երբ բարդ բառը ածական է եւ դոյականաբար կը գոր-
ծածուի՝ «ներ» մասնիկը կ'առնէ: Այսպէս. Ծակաչքներ:

Ե.- Կարճ անուններուն յոյնակին՝ երբ ս, դ, ն եւ ը (իմ,
քու, իր՝ նշանակող) յօգերը առած են՝ կարելի է կազմել նիս, նիդ,
նին մասնիկներով: Այսպէս. գլուխս — գլուխնիս (=մեր գլուխը),
պատիւդ — պատիւնիդ (=ձեր պատիւը): Ձանոնք կը հորովենք հե-
տեւեալ ձեւով — Պատիւնիս, պատիւնուս, պատիւնէս, պատիւով-
նիս: (Նախընտրելի է խուսափիլ այս ձեւերէն):

Զ.- Անուններու կամ որպէս անուն դործածուած բառերու սեռական հօլովները երբեմն կը նկատենք ուղղական, եւ զանոնք կը հօլովենք վերստին: Այսպէս. Միաքինս, միաքինիս, միաքինէս, միաքինովս, Միաքիններս, միաքիններուս, եւայլն: Այս պարագային, անունները կը կոչենք ստացական անուն:

5.- ԲԱՅԱԿԵՐՏՈՒՄը բայեր կազմելու ձևակերպութիւնն է: Այսպէս. Հեռաձայն - հեռաձայնել:

Ա.- Բայ մը կը բաղկանայ երկու մասէ — Արմատ եւ Վերջաւորութիւն: Այսպէս. Վազ-ել, ըս-ինք, մօտ-եմալ, զարմ-ացաւ:

Բ.- Կան բայեր, որոնց վերջաւորութիւնն ալ, իր կարգին՝ կազմուած կ'ըլլայ երկու մասէ: Այսպէս. «Մօտ-ենալ» բային վերջաւորութիւնը՝ եմալ, կազմուած է երկու մասէ՝ «են-ալ»: «Են»ը կը կոչուի միջածանց, «ալ»ը՝ լծորդ:

Միջածանցը այն ածանցն է, որ մտած կ'ըլլայ բայի մը արմատին եւ լծորդին միջեւ: Լծորդը բային դէմքը, թիւը, ժամանակը ցոյց տուող մասնիկն է:

Գ.- Ամէն բայ անպատճառ միջածանց չ'ունենար ամէն ժամանակի մէջ: Այսպէս. Վազ-ել (վերջաւորութիւնը կազմուած է միայն «ել» լծորդէն), ըս-եմք (վերջաւորութիւնը կազմուած է միայն «ենք» լծորդէն):

ԳՒԼԱՒՈՐ ՄԻՋԱԾԱՆՑՆԵՐՆ ԵՆ

| | |
|-----------------|--------------------|
| Աներեւոյթի մէջ | Կատարելի մէջ |
| ԵՆ (արբ-եմ-ալ) | ԵՅ (արբ-եց-այ) |
| ԱՆ (զայր-ան-ալ) | ԱՅ (զայր-աց-այ) |
| Ն (յիր-ն-ալ) | Յ (յիր-ց-այ) |
| Ն (կեց-ն-ել) | ՈՒՅ (կեց-ուց-ի) |
| ՅՆ (կեր-ցն-ել) | ՅՈՒՅ (կեր-ցուց-ի) |
| ՈՒ (խօս-ու-իլ) | ՈՒԵՅ (խօս-ուեց-այ) |
| Չ (յպ-չ-իլ) | — (յպ-այ) |

Դ.- Կանոնաւոր բայերու Աներեւոյթը միջածանց չ'ունենար: Այսպէս. Վազ-ել, Նայ-իլ, Կարդ-ալ: Զարտուղի բայերուն Աներեւոյթը միջածանց կ'ունենայ: Այսպէս. հեծնել, փախչիլ, հեռանալ, մօտեմալ: Այս միջածանցները կը կորսուին ոչ-կանոնաւոր ժամանակներուն մէջ. Այսպէս. հեծ-ն-ել — հեծ-այ, փախ-չ-իլ — փախ-այ, կամ կը փոխուին այլ միջածանցի. — հեռ-ան-ալ — հեռ-աց-այ:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.- 1.- Մտանել (մտան-ել), կանգնիլ (կանգուն-իլ) եւ շարք մը այլ բայերու «ն» դիրք, որ արմատական է՝ չլիսթել «ն» միջածանցին հետ: Այսպէս. «մտանել» կ'ըլլայ «մտայ» (տանց «ն»ի), մինչ՝ «մտանել» կ'ըլլայ «մտանցի» («ն»ով): «Մտանել» կանոնաւոր բայ է:

2.- Կան բանի մը բայեր ալ — բերել, ըսել, ծնիլ, սկսիլ, փրթիլ, լալ, մնալ, պրծիլ — որոնք զարտուղի են բայց միջածանց չունին:

3.- Կան բանի մը բայեր ալ — հանգչիլ, կառչիլ, մերսնչել, խրտչիլ — որոնց «չ» միջածանցը չի կորսուիր ոչ-կանոնաւոր ժամանակներուն մէջ. հանգչիլ — հանգչեցայ:

Ե.- Կան կարգ մը բայեր, որոնց արմատներուն վրայ զուրսէն դիրեր աւելցած են, մաս կազմած են անոնց եւ կը մնան բոլոր ժամանակներուն մէջ: Այսպէս. կտար-տ-ել, վազ-ուրբտ-ել, պազ-շտկ-իլ, եւայլն:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

185.- Յօդակին կազմեցէ՛ք հետեւեալ բառերուն:

Զերմ, գորագունդ, նամակատուփ, սիրամարգ, փիւխարան, գրատուն, գրչատուփ, հոգեբոյժ, ջրակոյտ, միտմիտ, նախագահ, տարելից, արկղ, կրակ, սառնակոյտ, ջերմաչափ, տարեդարձ, «անտուն», ժամկոչ, այցեստմս, տանտիկին, ժամագործ, սրբավայր, նաւավար, մարտանաւ, գրագիր, վարձապետ, հրագէն, ծակաչֆ, լանջֆ, վերջալոյս, երէցկիւն, գառլիքափ, ծովաբոյս, հօրաբոյս, շատախօս, բքամատ, վանահայր, նաւապետ, արուեստագէտ, նարավեպ, տան-տէր, կալուածատէր, շոգեմալ, գանձ, տագր, դասապահ, անտառապահ, կառաշար:

186.- Որոչեցէ՛ք հետեւեալ բայերուն մէջ զուրսէն մտած գիրերը:

Կտրտել (կտրել), արշտկել (արել), կտրտել (կտրել), պատտել (պատռել), ցատկրտել (ցատկել), պաղշտկիլ (պաղիլ), հրմշտկել (հրել), պահուրտիլ (պահուիլ), ֆերուրտիլ (ֆերուիլ), վագուրտել (վագել), կուրտիլ (կուրիլ), պոռչտալ (պոռալ), ֆաշկրտել (ֆաշել), թոչտիլ (թոիլ), կոխկրտել (կոխել), խառնշտկել (խառնել), մատչիլ (մօտ-իլ):

187. — Գծիկներով զատեցէ՛ք հետեւեալ բայերուն արմատը, միջածանցը (եթէ կայ) եւ լծորդը (եթէ կայ) :

Ջարմանալ, հասկցայ, մատնել, մտնել, հագացի, դողաց, յարգուիլ, բերի, յարգուեցայ, խրտչիլ, խրտչեցայ, ապշեցայ, ապշուցայ, մտցնել, բարկանալ, մտցուցի, կեցուցի, կեճալ, բռնել, փակաւ, կարդալ, յռանք, կարդացիր, ծնաւ, կերցնել, բռնուիլ, շողաց, կեցնել, բարկացուցին, փակչիլ, դպաւ, կռչիլ, մատնեցի, հեծաք, դպչիլ, հանգչիլ, կը խրտչէր, կը ծնին, պիտի լողար, դուրսցնել, մօտենալ, բռնուեցայ, սկսիլ, բող յածնէ, կը մեծնար, մեծցան, հանգչեցանք, կը փրթին, լացաւ, կու լաս, մնալ, մնաց, պրծաւ, ճչաց, պռաւ, գիրցայ, կը նիհարնայ, կը հեծնեն, պիտի փախչէին :

188. — Մտուգարանեցէ՛ք հետեւեալ բառերը :

Բազմանդամ, պահուրտուք, ուտոստուն, կուսակցութիւն, մեկուսի, բնդմիջել, գայրացկոտ, անիմաց, տարականոն, կարեւիլ, կարեկցանք, տկարութիւն, անբնդմէջ, պարգամտօրէն, ահուդող, բաժնետուս, օրհնացիք, մուրացկանուի, ննջարան, սենեկապետ, յարձանապտոյտ, քաղցրաբարոյ, կենսաբանական, գգտնել, բողոքականական, գրակալ, միացեալ, նորանոր, մակերեսայնութիւն, ծեփծեփում, դիւրամատչելի, վատասերող, զարմացական, անդրադարձ, քաշկրտել, գլխատում, յօրինումք, ընթացիկ, նախընթացիկ, քախանցիկ, առաջնորդ, պատուած, ընդունելի, գգայնիկ, բուսակեր, բանագնաց, բարեկեցիկ, ընձեռել, ջլատիչ, ոսկեգօծ, առանձնատէր, սիւնակեաց, ահարկու, հեռահաս, օրէնսդիր, միակամի, հաշատուր, աղջիկ, հայրայրքել, փոքրկայնայգ, ծաղկաւէտ, հաւաքածոյ, ինքնել, խուռներամ, աննախնայ, յանձնագատտան, արեւակից, գրպարտանք, ջրարբի, բացօթեայ, սովալուիկ, դիցուի, անպարար, չունեւոր, ստանձնել, ընկողմանիլ, բացայայտեալ, տարբից, քուլքերան, գաղիվար, գեղջկական, կոյրգկուրայն, սեփ-սեւ, դիւցազներգակ, անցիկապաշտ, բարախիւն, ընկալագիր, շնագայլ, սակաւախօս, դասապահ, անտառապահ, կառաշար, տողաշար, մատենաշար, վիրակապ, հագեղրայր, ապօրինի, վարդագոյն, մեծագոյն, ներհայեցողութիւն, տարեվնար :

Գ. ՄԱՍ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԼՈՒԾՈՒՄ

ԴԱՍ 1

ԽՆԴԻՐՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

291. — Խնդիրը անուն մը կամ գերանուն մըն է, որ նախադասութեան մէջ անդամին լրացուցիչն է :

292. — Հայերէնը ունի չորս տեսակ խնդիր. — Սեռի խնդիր (որ անհրաժեշտ լրացուցիչն է ներգործական եւ անցորդական բայերուն), բնութեան խնդիր (այսինքն՝ բային կապուած խնդիրը), յարադրութեամբ խնդիր (որ կապուած կ'ըլլայ յարադրութենէ մը եւ իր խնդիրէն), եւ լոկ՝ խնդիր :

293. — Միայն «խնդիր» կը կոչուին այն անուն կամ գերանուն լրացուցիչները, որոնք կապուած են բացի բայէ՝ միւս մասունք բանիներէն որեւէ մէկուն, այսինքն՝ ածականներուն, անուններուն, գերանուններուն, մակրայններուն, յարադրութիւններուն կամ ձայնարկութիւններուն. (Շաղկապները լրացուցիչ չեն առներ) :

Ուրեմն՝ այս «խնդիր»ները կրնան ըլլալ «ածականի խնդիր», «անունի խնդիր», «գերանունի խնդիր», «մակրայնի խնդիր», «յարադրութեան խնդիր» կամ «ձայնարկութեան խնդիր»՝ նայած թէ ի՞նչ բառի կապուած են : Այսպէս .

«Ինքնիրմով» ուրախ մարդ մըն է : Ինքնիրմով = խնդիր «ուրախ» ածականին «ճերգերէն» երկրորդ սիրեցի : Երգերէն = խնդիր՝ «եքլորդը» անունին «Տղոցմէ» ոմանք չեկան : Տղոցմէ = խնդիր՝ «ոմանք» գերանունին «Քեզմէ» աւելի լսուցա՞յ : Քեզմէ = խնդիր՝ «աւելի» մակրայնի Մինչև «տուն» գնաց : Տուն = խնդիր՝ «մինչև» յարադրութեան Վա՛յ «ծոյլերուն», բնաւ : Մոյլերուն = խնդիր՝ «վա՛յ» ձայնարկութեան :

294.- Ածականի, անունի, դերանունի, մակբայի, յարադրութեան եւ ձայնարկութեան խնդիրները կրնան ըլլալ՝ հայց., սեռ., տր., բցս. կամ գործիական հոլով. միայն «ուղղական» չեն ըլլար:

295.- Գործիական հոլով Բնութեան խնդիր մը կը գտնուի «ինչով» հարցումով: Այսպէս. «Ան գրիչով գրեց նամակը» նախադասութեան մէջ՝ «գրիչով» բառը կը պատասխանէ «ինչով» հարցումին. - «ինչով» գրեց, - «գրիչով»:

Բայց եթէ գործիական հոլով Բնութեան խնդիր մը գտնուի «ինչպէ՛ս» հարցումով, կ'ըսենք թէ «մակբայի ուժ ունի»: Այսպէս. «Ան խնամքով գրեց նամակը» նախադասութեան մէջ՝ «խնամքով» բառը, որ գործիական հոլով անուն մըն է եւ կապուած է բային, կը պատասխանէ «ինչպէ՛ս» հարցումին. կը հարցնենք՝ «ինչպէ՛ս» գրեց, - «խնամքով» (եւ ո՛չ թէ «ինչով»): Լուծենք «խնամքով» բառը.

խնամքով = վերայ. հորկ. անուն, եղ., գործ. հոլ. բխ. «գրեց» բային. մակբայի ուժ ունի:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

189.- Լուծեցէ՛ք եւ պատկերները գծեցէ՛ք:

Հոգիով ազնիւ աղջիկ մըն է Անայիսը՝ վարդգէսին զարմուհին, որ այս տարի աւարտական դասարանն է՝ քոջս պէս: «Բեզմէ խելացի չէ անիկա», ըսաւ Սեպուհ ինձի՝ Շահնուրին մեկնումէն ետք: Պարոն տնօրէնը սիրով «նկատի առաւ» մեր խնդրանքները եւ հանայժով խօսեցաւ մեզի հետ: Գաւազանով զարկեր է ընկերոջը ստիճան, բայց յետոյ զղջացեր է եւ անամբ, մեծ խնամքով, դարմաներ է վերքը: Աճցան մը եւ մուրօ մը բերաւ իր սենեակէն եւ անցնումով շտկեց գամերէն անոնք, որոնք ծուռ էին: Մեզմէ ուշ կ'արթննայ առաւօտուն եւ մեզմէ շատ կանուխ կը պատկի գիշերները: Իրենց դրամով հպարտ անձերէ չեմ՝ ախորժած բնաւ եւ չեմ ալ ախորժիր ներկայիս: Ամիսներ ապրեր են այդ խոնար ու մուք քաւայրներուն մէջ՝ մահուան վախով դողաւար: Վա՛յ հպարտներուն, անոնք իսկապէս երջանիկ պիտի չըլլան երբեք: «Ես կ'երթամ դէպի աղբիւրը լոյսին»: Բաւական գեղեցիկ եւ ընդարձակ բնակարան մը շինել պիտի տանք այս տարեվերջին՝ ձեր նախորդ տարուան տան դիմացը: Աշակերտներէն ո՛չ-մէկը հոս կ'ըլլայ այս ժամուս:

ԴԱՍ 2

ԱԾԱԿԱՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

296.- Արձակ զրութիւններու մէջ՝ սովորաբար, բոլոր ածականներն ալ կը զրուին անունէն առաջ: Ոտանաւորներու մէջ կրնան զրուիլ նաեւ անունէն ետք:

Երբ անուն մը մէկէ աւելի ածական ունենայ, ընդհանրապէս՝ ցուցական ածականը կը զրուի անորոշէն առաջ, անորոշը՝ թուականէն, եւ թուականը՝ որակականէն: Այսպէս. «Այս միւս շորս պտղատու ծառերը...»:

297.- Երբ Որակական ածական մը գոյականի մը լրացուցիչն է՝ վերադիր կը կոչուի: Այսպէս. «Գորշ» երկինք. - Գորշ-վերադիր «երկինք» գոյականին:

298.- Ածականներէն որակականը և թուականը կը վերածուին ածական-անունի, իսկ անորոշը, ցուցականը եւ ստացականը՝ «դեղանուն»ի երբ գործածուին առանց գոյականի:

299.- Երբ ածական մը ստորոգելի է՝ կրնայ գոյական մը շունենալ: Այսպէս. «Ան ընթերցատէր է» նախադասութեան մէջ «ընթերցատէր» բառը ածական է՝ հակառակ որ գոյականի մը չէ կապուած. (Իր գոյականը այն բանն է՝ որուն տեղ զրուած է «ան» գերանունը, այսինքն՝ աէր-բային):

300.- Սորված ենք թէ ածական մը միշտ կապուած կ'ըլլայ գոյականի մը: Ածականը երբեմն կրնայ կապուած ըլլալ նաեւ անորոշ դերանունի մը: Այսպէս. «Այդ բոլորը կարգացեր եմ» նախադասութեան մէջ «այդ»ը ցուց. ածականն է «բոլորը» գերանունին:

301.- Որակական ածականները երբ գործածուին բայի մը հետ՝ կ'ըլլան որակական մակբայ: Այսպէս. երբ ըսենք՝ «Այս աղուոր աղան աղուոր կ'երկէ», առաջին «աղուորը» որակ. ածականն է, երկրորդը՝ որակ. մակբայ:

302.- Կարգ մը ածականներ կը միանան «մը» անորոշ ածականին եւ միասին կը դործածուին որպէս մակերայ: Այսպէս. «Բաւական մը կերաւ»: Բաւական մը = Բանակ. մակերայ:

303.- Այսչափ, այդչափ, այնչափ, ասանկ, առանկ, անանկ, այսքան, այդքան, այնքան, որքան, որչափ, ինչքան, նայնքան, նայնչափ անորոշ ածականները երբ դործածուին բայի մը հետ՝ կ'ըլլան մակերայ: Այսպէս. եթէ ըսենք՝ «Այսքան դրամ», «այսքան»ը անորոշ ածական է. բայց եթէ ըսենք՝ «Այսքան ուզեց», «այսքան»ը քանակական մակերայ է:

304.- «ՄԸ» անորոշ ածականը, երբ իրմէ ետք եմ, ես, է, ենք, էք, են, կամ էի, էիր, էր, էինք, էիք, էին բայերէն մէկը դայ՝ կ'ըլլայ «մըն»: Այսպէս. Յոյս մըն է: (Այս «ն» զիրը յօդ չենք նկատեր:)

305.- «Մէկ» բառը Բացարձակ թուական ածական է՝ երբ համրանք յոյց կու տայ: Այսպէս. «Ես մէկ գիրք ունիմ, դուն՝ երկու»: Բայց երբ ըսենք՝ «Ձոհրապի մէկ պատմութեան մէջ հանդիպեցայ այս բանին», «մէկ» բառը «1» չի նշանակեր, այլ՝ «մը», այսինքն՝ արեւել-մէկ: «Մէկ» բառը հոս Անորոշ ածական է:

306.- Երբ («որեւէ-մէկ» նշանակող) «մէկ» բառը հորիմուկ կամ առանց զոյականի դործածուի՝ կ'ըլլայ Անորոշ գերանուն: Այսպէս. «Մէկը ըսաւ ստիկա»: Բայց երբ «մէկը» բառը նշանակէ «1-ը», այսինքն՝ թիւ 1-ը, կ'ըլլայ ածական-անուն: Այսպէս. «Կանաչով գրուած «մէկ»ը ընջէ»:

307.- Որակական ածականը կրնայ երեք տեսակ լրացուցիչ առնել. Ա.- Մակըրայներ («Շատ հարուստ» մարդ մը), Բ.- Յարադուրեքամբ խնդիրներ («Անոր չափ հարուստ մարդ մը»), Գ.- Խնդիրներ («Եղբորմէկ հարուստ» մարդ մը, «Խոզով հարուստ» մարդ մը):

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

190.- Կարգացէ՛ք հետեւեալ երկու տուները (առնուած Սիւլիւի «Տեսիլքներ» քերթուածէն), գտէ՛ք ածականները եւ որոշե՛ցէ՛ք թէ իրենց զոյականէն առաջ թէ ետք դրուած են:

Հոն, անիւնին տակ կ'երեսան շէնքեր փարքամ, եւ պարսկերէն եւ ցարեմներ կուռ, ոսկեգէտ-ձերմակ ձիով կտրիններու ձեւեր տարտամ՝ Աչխա առջեւ կը քեւածեն ամպերու պէս:

Ու կը տեսնեմ հէ՛ք կիներու քափօք մ'անքաւ. Սեւ լաչակով կու գան, կ'անցնին: Վա՛խ, քշուտներ... Անօրի ես ու խոշտանգուած, մերկ ու ծարաւ. Արիւն-արցունք լարով կ'իյնան հոն կիսամեռ...

191.- Լուծեցէ՛ք հետեւեալները.

Բաւական դրամ ու ժամանակ վառնեցին աստի՛ իրենց երեք գաւակներէն իւրաքանչիւրին համար: Վարչականները, այդ գիշեր, ժողովին՝ բաւական մը վիճաբաներ եւ այդ հարցին շուրջ: Իրարու օճիքէն բռններ եւ եւ իրարու նայեր եւ երկարօրէն՝ ոխերիմ քշումիներու պէս: Երէ ասոնց կարծիքը ատոնց ըսէի նայնուրեքամբ՝ ապահովաբար կոխ կ'ըլլար իրենց միջեւ: Երէ այդքան գիրք կարդացեր ես մէկ տարիէն, իրապէս գնահատելի գործ մը կատարեր ես, ըստ ինծի: Այդքան քող չուէր որպէսզի՛ զինք յետոյ այդքան չարհամարիէին իր ծանօթներն ու բարեկամներն անգամ: «Այսքանը ա՛յ չափազանցութիւն է», ըսաւ ան իր խօսակիցին՝ բարբիս առջեւ: Որքա՛ն պիտի ուզէի որ ինծի ըսէիր քէ որքա՛ն դրամ ունիս դրամատուրը. եւ որքանը ենչուն ոսկի է: Խելացին խելացի բաներ կ'ըսէ, որովհետեւ խելացի կը մտածէ: Մե՛նք՝ դպրոցականներս, այդ բարբը գիտենք հիմա շնորհիւ օրիսրդ Աշխէնին, որ տարիներով մեր ուսուցչուհին ու մեր բոյրն ու խորհրդատուն եղած է: Անոր չափ ուշիմ աշակերտ չէ ունեցած մեր դպրոցը, որ շատ նշանաւոր է իր ուշիմ աշակերտներով: Ֆուրպալի խոււքին խմբապետը այս տարի եւս ինք՝ Արան է: Մէկը չկար տուրը կէտօրին: Այդ երկու տղոցմէ այն մէկը, որ սեւ աչքեր ունի, գարմիկս է, միւսը՝ ընկերս: Մէկ պատմութեամբ կարդացեր է ամբողջ գիրքէն: Իր մէկ նախնի մէջ այդպէս արտայայտուեր է Մկրտիչ Պէշիկաշա՛նանը: Ինչո՛ւ յստակ չես գրեր մէկերդ: Այս լուրը մէկու մը ըսի՞ր ասկէ առաջ: Փոխնի-փոխ գործածեցէ՛ք այդ մէկ գիրքը եւ տարեվերջին ինծի վերադարձուցէ՛ք գայն, որպէսզի յաջորդ տարի ուրիշներ ալ օգտուին ատկէ: Տասը գրէ վեցին տակ, եւ ինը՝ քառասուն-երեքին: Տասը պատուիրանները միշտ միտքս են:

ԴԱՍ 3

ԳՈՅԱԿԱՆԸ ԻՐԻՆԻ ԱԾԱԿԱՆ

308.- Գոյականները կրնան ածականաբար դործածուիլ: Այսպէս. Երբ ըսենք՝ ոսկի մատանի, «ոսկի» գոյականը դործածուած է որպէս ածական. «Ինչպիսի՛ մատանի» — ոսկի:

309.- Երբեմն «մը» բառը կ'ընկերանայ գոյականի մը, եւ երկուքը միասին կը կազմեն ածական մը: Այսպէս. «Գաւաթ մը» ջուր: Գաւաթ մը = Ածականաբար դործածուած անուն, կը վերաբերի «ջուր» գոյականին:

310.- Կրնայ նոյն գոյականը կրկնուիլ, միանալ դժիկով եւ կազմել ածական մը: Այսպէս. «խումբ-խումբ» մարդիկ:

311.- Ժամանակ ցոյց տուող գոյականները ածական կ'ըլլան երբ դործածուած են գոյականի հետ: Այսպէս. «Կիրակի» առաւօտ, «Զմեռ» գիշեր մը:

312.- Գոյականներու սեռական հոլովը կրնայ ածականաբար դործածուիլ: Այսպէս. «Աչակերտի» պայուսակ. (ինչի՛, այսինքն՝ ինչպիսի՛ պայուսակ — աշակերտի): Բայց եթէ ըսենք «Աչակերտին պայուսակը», աշակերտին բառը յատկացուցիչ է: (Որո՛ւն պայուսակը — աշակերտին):

313.- Գոյականներու սեռականը կրնայ ստորոգելի ալ ըլլալ: Այսպէս. «Այս շիկը ու՛թ օրուան է», (հոս՝ «օրուան»ը ածականի ու՛թ ունի):

314.- Գոյականներու Բացատրական եւ Գործիական հոլովներն ալ կրնան ածականաբար դործածուիլ: Այսպէս. «Կուէ՛» արձան, «միտով՛» կերակուր:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

192.- Լուծեցէ՛ք հետեւեալ նախադասութիւնները:
Երկաթէ կամք բայց քար սիրա ունի: Ափ մը հող բերաւ: Մարգիկները խումբ-խումբ կեցան: Արծաթ գօտիս ինը ոսկի կ'արժէ: Շաքար իրիկուն հիւրեր ունեցան: Սափրիչիս մկրատը սափրիչի մկրատ չէր: Քաջախը չարս տարուան է: Երկու ժամուան գործ է աս: Կաւտով չամիչ չ'ուտեր:

ԴԱՍ 4

ՅԱՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

315.- Երբ Յարադրութիւն մը հոլովուի՝ դործածուած կ'ըլլայ որպէս գոյական: Այսպէս. «Ջուրին մէջէն անցաւ»: («Մէջէն» = Գոյականաբար դործածուած յարադրութիւն, կը. բցո. հոլ. բի. «անցաւ» բային, «ն» զիմ. յօդ):

Երբ Յարադրութիւն մը որպէս գոյական դործածուած է՝ իր խնդիրը (եթէ «խնդիր» ունի) կ'ըլլայ յատկացուցիչ՝ եթէ անուն է, ստացական ածական՝ եթէ սեռական հոլով անձնական դերանուն է:

316.- Երբ Յարադրութիւն մը տը. սխ. կամ ստորոգ. եղած է՝ այլեւս յարադրութիւն չէ, այլ անուն է: Այսպէս.

Այս տուփին տակը (= տակի մասը) մաշեր է:

317.- Սեռ-տրական հոլով յարադրութիւնները՝ երբ կապուած ըլլան գոյականի մը՝ ածականի ուժ կ'ունենան: Այսպէս. «Մէջի դրամը», «քովի խանութը». Մէջի = Ածականաբար դործածուած յարադր.՝ կը վերաբերի «դրամը» գոյականին:

318.- Երբ Յարադրութիւն մը առանց խնդրի դործածուած է եւ կապուած է բային՝ մակրայի կը վերածուի: Այսպէս. «Վար իջիր շուտով». («Վար» = Տեղ. Մակր. «իջիր» բային): Բայց՝ «Սեղանէն վար իջիր շուտով» նախադասութեան մէջ՝ «վար» բառը յարադրութիւն է, որովհետեւ «խնդիր» ունի՝ «սեղանէն» բառը:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

193.- Լուծեցէ՛ք հետեւեալ նախադասութիւնները:
Կամուրջին տակ կեցէ՛ք մինչեւ վերադարձաւ: Կամուրջին տակէն պիտի անցնի եւ անտառին քովէն պիտի դառնայ դէպի աջ: Քովս նստէ՛ քիչ մը: Այդ ինքնաշարժին մէջն էինք երբ մեր քովէն անցաք: Հայու դիմագիծ չունէր բնաւ: Իրը ձեռքի պայուսակ էր: Զիէն վար իջաւ կամաց մը եւ կանգնեցաւ դէմս: Վարը քող չնստէ՛ր այդքան: Քովիններս անհամեմատօրէն աւելի գեղեցիկ եւ առողջ էին: Քովի խանութը փոքր չէ՞: Ոտքիս տակը կը ցաւեր:

ԴԱՍ 5

ՅՕԴԵՐՈՒ ՄԱՍԻՆ

319.- Հայերէնի յօդերը՝ ս, դ, ն, ը, — կ'ըլլան «դիմորոջ» կամ «որոշիչ» ըստ իրենց կատարած դերին: (Հայերէնը «անորոջ» յօդ չունի):

«Ս» եւ «դ» յօդերը միշտ դիմորոջ են, «դէմք» ցոյց կու տան:

«Ն» եւ «ը» յօդերը դիմորոջ են՝ երբ այն բառը, որուն կցուած են՝ ունի ստաց. ածական կամ յատկացուցիչ: Օրինակ՝ «Իր դիրքը», «տղուն գօտին»: Որոշիչ են՝ երբ այն բառը, որուն կցուած են՝ ստաց. ածական կամ յատկացուցիչ չունի: Օրինակ՝ «Այս» դիրքը, «միւս» գօտին:

320.- «Ս» եւ «դ» դիմորոջ յօդերը կրնան ըլլալ ստացական, եւ անձնական: «Ս» յօդը կրնայ ըլլալ նաեւ ցուցական:

«Ս» եւ «դ» (ինչպէս նաեւ «ը» եւ «ն») դիմորոջ յօդերը ստացական են՝ երբ այն բառը, որուն կցուած են՝ ունի ստաց. ածական կամ յատկացուցիչ: Անձնական են՝ երբ գործածուած են «անձնական դերանունի» իմաստով: Այսպէս՝ «Հայերդ աշխատասէր էք», կը նշանակէ՝ «դուք աշխատասէր էք»:

«Ս» յօդը ցուցական է երբ կը նշանակէ «այս»: Այսպէս՝ «Քաղաքիս մէջ», կը նշանակէ՝ «Այս քաղաքին մէջ»:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

194.- Գտէ՛ք թէ յօդերը որոշի՞չ, ստացակա՞ն, անձնակա՞ն թէ ցուցական են: Ապա լուծեցէ՛ք բառերը:

Քաղաքիս մեծագոյն դպրոցներն են անոնք: Ափիս մէջի վերքը չբուժուեցաւ ցարդ: Դո՛ւ՛ք՝ ծերերդ, ինչո՛ւ չէ՛ք հասկնար այս: Երկրիս շրջագիծը 40.000 ֆիլովեթր է: Փոք մը կերակուրի համար ոչ-մֆի կը ծախեմ արժանապատուութիւնս: Մեզի՛ ուսանողներու չտրուեցան նման դիւրութիւններ: Աշխարհիս վրայ առողջութիւնն ու միտքի հանգիստն են ամենաթանկագին բաները:

ԴԱՍ 6

ՅՕԴԵՐՈՒ ՄԱՍԻՆ (ՇԱՐ.)

321.- Երբ յատուկ անուն մը տէր-բայի է՝ որոշիչ յօդ կ'ունենայ սովորաբար: Այսպէս՝ «Սօսին մեկնեցաւ», «Եկաւ Խաչիկը», «Եկարսը նշանաւոր է», «Գերմանիան պարտուեցաւ»:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Երբ նախադասութեան մը սեռի խնդիրն ալ նոյն որոշիչ յօդը ունեցող անձնանուն մըն է՝ կարելի է ջնջել տէր-բայիին յօդը: Այսպէս՝ «Անդրանիկ կը սիրէ Ժիրայրը», «Ժիրայր կը սիրէ Անդրանիկը»:

Տէր-բայի եղող անձնանուն մը երբ ձայնաւորով վերջացած է՝ վրան որոշիչ յօդ կ'աւելցնենք սովորաբար՝ մանաւանդ երբ յաջորդ բառը սկսի ձայնաւորով: Այսպէս՝ կ'ըսենք՝ «Մարին ինկաւ» եւ ո՛չ թէ՝ «Մարի ինկաւ», բայց կրնանք հաւասարապէս ըսել՝ «Միհրան ինկաւ» եւ «Միհրանը ինկաւ»:

Տէր-բայի եղող անձնանուն մը երբ դրուած է իր բայէն ետք՝ որոշիչ յօդ կ'առնէ: Այսպէս՝ «Եկաւ Սոնիկը»:

322.- Որպէս տէր-բայի գործածուած յատուկ անունները որոշիչ յօդ կ'առնեն երբ ունին ածական կամ յատկացուցիչ: Այսպէս՝ «Զօրեղ Գերմանիան պարտուեցաւ», «Հոմերոսի Յունաստանը չի մոռցուիր»:

323.- Երբ յատուկ անուն մը հայցական հօլով բնութեան խնդիր է՝ որոշիչ յօդ չ'առնէր: Այսպէս՝ կ'ըսենք՝ «Ան Հալեպ էր» (եւ ոչ թէ՝ «Հալեպն էր»): Բայց եթէ հասարակ անուն մըն է հայցական հօլով բնութեան խնդիր եղող բառը՝ կ'առնէ որոշիչ յօդ: Այսպէս՝ «Ան տունն էր»:

324.- Երբ անուն մը սեռի խնդիր է՝ յօդ կ'առնէ: Այսպէս՝ «Ես կարգացի զիրքը»: Յօդ չ'առնէր երբ բառը գործածուած է անորոջ իմաստով: Այսպէս՝ «Ես գիրք կարգացի». (կը նշանակէ՝ «որեւէ» զիրք):

325.- Յատկացուցիչը սովորաբար որոշիչ յօդ կ'ունենայ: Այսպէս. կ'ըսենք՝ «Անայիսին մայրը», «մտավաճառին դանակը», եւ ոչ թէ՛ «Անայիսի մայրը», «մտավաճառի դանակը»:

Երբ յատկացուցիչը հեղինակի անուն կամ տեղանուն է՝ կըրնանք այդ յօդը չդնել: Այսպէս. կ'ըսենք՝ Սիպիլի քերթուածները, Արփիարեանի «Կարմիր ժամուցը», Եգիպտոսի քաղաքները:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

1) Սովորաբար կ'ըսենք «Զոհրապի գիրքերը» (առանց յօդի) երբ մտքի մէջ ունինք Գրիգոր Զոհրապը. բայց կ'ըսենք՝ «Զոհրապին գիրքերը (յօդով) երբ «Զոհրապը» հեղինակ մը չէ:

2) Չմոռնալ որ երբ յատկացուցիչը առանց յօդի գործածուի՝ կ'ըլլայ անձան: Այսպէս. երբ ըսենք՝ «Մտավաճառի դանակը կըրտուեցաւ», հոս՝ «մտավաճառի» բառը յատկացուցիչ չէ. անձան է:

3) Երբ երեք կամ ավելի՝ նոյն ձեւի հօլովում ունեցող սեռական-տրական անուններ իրարու յաջորդեն՝ կրնանք անոնցմէ առաջինն յօդը ջնջել: Այսպէս. կրնանք ըսել՝ «Պետրոսի տետրակին կողքին վրայ գրեցի», փոխանակ ըսելու՝ «Պետրոսին տետրակին կողքին վրայ...»:

326.- Տրական եւ բացառական հօլով բնութեան խնդիր եղող անունները որոշիչ յօդ կ'առնեն սովորաբար: Այսպէս. «Զոհրապին ըսի», «աշակերտներէն առի»: Յօդ չեն առներ երբ բառը որոշիչ իմաստով գործածուած չէ: Այսպէս. «Աշակերտներէ առի»:

327.- Գոյականներու գործիական հօլովները որոշիչ յօդ չեն առներ թէ՛ եղակիի մէջ եւ թէ՛ յօդակիի: Այսպէս. կ'ըսենք՝ «Աջ ձեռքով բռնեց», «Իր վկայականներով հպարտացաւ»:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Անկանոն հօլովում ունեցող անուններ կրնան որոշիչ յօդ չառնել՝ գործիականէն դատ՝ եղակի սեռականին եւ տրականին մէջ ալ: Այսպէս. «Իր քրոջ որդին» (եւ ոչ թէ՛ «քրջը»), «Առանց իր օգնութեան» (եւ ոչ թէ՛ «օղնութեանը»):

328.- Յուցական անձան ունեցող անունները որոշիչ յօդ կ'ունենան ընդհանրապէս, բացի գործիականէն եւ հօլովական այն պարագաներէն, ուր յօդ չ'առնեն անունը: Այսպէս. Այս մարդը, այդ պատիւն, բայց՝ այդ տան, սա կնոջ:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

195.- Յօդ աւելցուցէ՛ք անուններուն վրայ՝ հօն ուր պէտք է. բացատրութիւն տուէք թէ ինչո՞ւ կ'աւելցնէք եւ ինչո՞ւ չէք աւելցնէք: Այդ լուծեցէ՛ք բոլոր բառերը՝ զանեղէ կտք անոնց անհրաժեշտ թէ լրացուցիչ անդամ ըլլալը:

Այս մարդու եւ միւս կնոջ դէմք հայու դէմքի չեն նմանիր: Բարեկամի վարմունք չէր իր այդ բարեկամի վարմունք: Սունայի ապարանջանը Աշխէնի եւ Անահիտի ապարանջաններէ գեղեցիկ է: Պետրոսեանի տուի Երուսաղիմի գիրքեր: Տուփի կարով յեցուեցաւ այս տուփի կափարիչ: Սեդա կը սիրէ Մարի: Պատիկ Պելինիա բնդարանկ գաղութներու տէր էր: Պելինիա չ'մասնակցեցաւ ժողովի: Չեր բակի մէջ ընկալալի ծառեր կա՞ն: Այս մարդ տուն չէ: Այդ շէնք տուն չէ: Այս նկարի մէջի քաղաք Պէյրութ է: Շուշանիկի եղբայրներու կիներ Պէյրութ են: Շողիկի յաջողութեան եւ յազքանակի գաղտնիք իր յարատեւ ջանքի մէջ է: Նեղոսի ջուրեր յորդեր են: Սուրբնի տետրակի կողքի վրայ գրուած էին Արշակի անունի առաջին երկու գիրքեր: Լեւոնի փափաքներ Երուանդի ըսի՞ր: Շահնուրէ եւ պատահական անցորդներէ իմացայ մեր բինկ-բունկի խումբի յազքանակի լուր: Առանց իր դրամի եւ բարոյական օգնութեան պիտի չ'յաջողէին իր հօրաքրոջ եւ քեռիի տղաք իրենց նիգերու մէջ: Իր բնտանիքի պատուի համար ամէնայն յօժարութեամբ համակերպեցաւ այդքան աշխատանքի: Իր դրամով հպարտ այս բժիշկի տղաք նախատեր են իրենց դրացի կօշկակարի տղաք, որովհետեւ կօշկակարի տղաք են անունք: Անոր եղբոր որդիներ եւ քեռիի աղջիկներ Պէյրութ դարձեր էին Փարիզէ: Այն քաղաք, որ ես կ'երազէի, Դամասկոս էր: Արփիկի միւս քոյրեր ուսուցչուհի եղեր են Դամասկոս. 1954-ի:

196.- Լուծեցէ՛ք հետեւեալ նախադասութիւնները:

Համոզիչ կը խօսի ընկեր Վահրամը: Համոզիչ պատասխան մըն էր իրը: Պատասխանը համոզիչ չէ՞ր: «Արծիւի աչք բայց չղջիկի քեւեր կ'ունենան ծերերը», ըսած է Թէֆէեան: Աշխարհ մարդուս չի մնար: Նկարագրով այդչափ ալ վստահելի անձեր չեն:

ԲԱՅԵՐՈՒ ՄԱՍԻՆ

329.- Միադէմ կը կոչուին այն բայերը, որոնց միայն Գ. ղէմքը կը գործածուի: Այսպէս.- Պէտք է, հարկ է, հնար է, ամօք է, կարելի է, կ'ըսուի (թէ), կ'ըսեն (թէ), կը պատմեն (թէ), կը թուի (թէ), կ'երեւայ (թէ), եւայլն:

Լուծենք հետեւեալ նախադասութեան բայը.

Ասիկա իրապէս «ամօք է» ձեզի համար:

2 4 1 4

1. Ամօք է = Միադէմ չէզոք բայ, «ամօթ ըլլալ», Գ. լծորդ., պակասաւոր, հաստ., Սահմ. եղ. ներկայ, Գ. ղէմք եղ.:

330.- Կան միադէմ բայեր, որոնք որոշ տէր-բայի մը չեն ունենար. զանոնք կը կոչենք «միադէմ, տէր-բայիէ զուրկ բայեր»: Այսպէս. Կ'անձրեւէ, կը ձիւնէ, կը փայլատակէ, մեղք է, կարծես (թէ), եւայլն:

Լուծենք հետեւեալ նախադասութեան բայը.

(—) Երկարօրէն ձիւնեց նարէն գիշերը:

2 4 1 4 4

Ձիւնեց = Տէր-բայիէ զուրկ միադէմ բայ, չէզոք, «ձիւնել», Ա. լծորդ., կանոն., հաստ., Սահմ. Անց. Կատ., Գ. ղէմք, եղ.:

331.- Միադէմ տէր-բայիէ զուրկ բայեր են նաեւ Չէզոք բայէ կազմուած կրաւորականի ձեւ ունեցող կարգ մը բայեր: Այսպէս. «Կ'ապրուի», «չ'երթցուիր», եւայլն:

332.- Երբեմն ներդրածական բայերը կրնան գործածուիլ առանց Սեռի խնդիրի, որպէս չէզոք. Այսպէս. «Տուն դացի», «կերայ արագօրէն» ու «գարձայ դպրոց» խօսքին երկրորդ նախադասութեան մէջ սեռի խնդիր չկայ, հակառակ որ «կերայ» բայը ներդրածական

է. (հոս շեշտը «ուտելու» գործողութեան վրայ է եւ ո'չ թէ «կեր-ւած» բանին, այսինքն՝ սեռի խնդիրին):

333.- Կարգ մը Չէզոք բայեր ալ՝ կրնան որպէս ներդրածական գործածուիլ եւ Սեռի խնդիր առնել: Այսպէս. «Ոտը բուն մը քնացանք», «Փախի՛ր մը փախան». («Քուն» և «փախիլ» սեռի խնդիր են):

334.- Բացի էական բայէն՝ Ստորոգելի կրնան առնել նաեւ կարգ մը ներդրածական, (Անցողական), Չէզոք եւ Կրաւորական բայեր: Այսպէս. «Քեզ նախագահ պիտի ընտրենք», «Սառը ջուր դարձաւ», «Տիգրան քաղաւոր հռչակուեցաւ» նախադասութիւններուն մէջ «նախագահ», «ջուր», «թաղաւոր» բառերը ստորոգելի են:

335.- Ստորոգելին՝ երբ ներդ. կամ Անց. բայով կազմուած նախադասութեան մը մէջ է՝ Սեռի խնդիրին կը վերաբերի: Երբ (էական), Չէզոք կամ Կրաւորական բայով կազմուած նախադասութեան մը մէջ է՝ կը վերաբերի Տէր-բայիին:

336.- Կան կարգ մը ներդրածական բայեր (աղաչել, նայիլ, խնայել, սկսիլ, զարնել, յաղթել, սպասել, մեղքնալ, եւայլն) որոնք կրնան բացառարար Տրակա՛ն հոլով Սեռի խնդիր առնել (եւ ո'չ թէ չայցական): Այսպէս. կ'ըսենք՝ «Քեզի կ'աղաչեմ», (եւ ո'չ թէ՛ «Քեզ կ'աղաչեմ»), «Քնարիկին մեղքցայ» (եւ ոչ թէ՛ «Քնարիկը մեղքցայ»):

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.- «Ոնայել» եւ «զարնել» բայերը կրնան նաեւ չայցական հոլով Սեռի խնդիր առնել. այն ատեն տարբեր նշանակութիւն կ'ունենան: Այսպէս. երբ ըսենք՝ «Դրամ» խնայեցի ես, (դրամ = հայց. Սխ.). բայց եթէ ըսենք՝ «Եղբորդ» խնայեցի ես, (եղբորդ = Տր. Սխ.). առաջինին մէջ «խնայել» կը նշանակէ «մէկ կողմ դնել», մինչ երկրորդին մէջ՝ «մեղքնալ»: Նոյնպէս, երբ ըսենք՝ «Այս քոչուրը զարկի ես», «զարնել» կը նշանակէ «սպաննել», մինչ երբ ըսենք՝ Այս թռչունին զարկի ես, «զարնել» կը նշանակէ «հարուածել»:

337.- Կարգ մը պարադաներու մէջ, եթէ մէկէ աւելի եղակի տէր-բայիներ իրարու մօտիկ իմաստ ունենան, կամ յաճախ իրարու հետ գործածուող բառեր ըլլան՝ կարելի է բայը եղակի ձգել: Այսպէս. «Ահ ու սարսափ տիրեց», «Հրդեհ ու երկրաշարժ եղաւ» (փոխանակ ըսելու «տիրեցին», «եղան»):

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

197.- *Ձատեցէ՛ք նախադասութիւնները. միադէմ եւ միադէմ տէր-բայիէ զուրկ բայերը սրուցէ՛ք:*

Կ'ըսուի թէ այս ամեն օգը ցուրտ պիտի ըլլայ: Պէտք է որ ամէն անձ իր պարտքերը վճարէ նիշդ ատենին: Այս ամեն չճիւնեց ամենեւին: Այդ տաքին փողոց չէր ելլցուեր: Մե՛ղք է իրեն. այդքան խիստ մի վարուիք հետը: Ամէն պտուղի կուտ չ'ուտուիր: Երբ այսքան փայլատակէ՛ սովորաբար կը ձիւնէ: Կերակուրը ձեռքով չեն ուտեր: Կը բուի թէ պիտի պարտուի նորէն: Կը պատմեն թէ անցեալին յարգելի մէկը եղած է ան: Երկաթը տաք-տաք կը ծեծեն: Կարծես թէ բան մը պիտի ըսէք բեգի: Հետը չ'ապրուիր: Կ'երեւայ թէ պիտի չշարունակէ իր ուսումը:

198.- *Գտէ՛ք թէ բայերէն որո՛նք ներդարձական են, որո՛նք՝ չէզոք, որո՛նք՝ որպէս չէզոք դորձածուած ներդարձական, եւ որո՛նք՝ որպէս ներդարձական դորձածուած չէզոք:*

Ինչո՛ւ չես խօսիր: Բա՛ն չխօսեցաւ: Գացի, տեսայ, յաղթեցի: Հայկական պար մը պարեցինք: Շատ պարեցի՞ք: Երգեցինք, պարեցինք, խօսեցանք, նուագեցինք մինչեւ կէս-գիշեր: Վաքսուն տարի ապրեցաւ: Հարուստի կեանք ապրեցանք հոն: Քո՛ւն մը քնացանք գիշերը...: Արիւն լացինք բոլորս: Դաշնակ կը նուագե՞ս: Փախի՛ր մը փախեր են...: Այնքա՛ն մը նուագեր են որ ա՛յ դրացիները բողբոջ են:

199.- *Հուծեցէ՛ք հետեւեալ նախադասութիւնները:*

Ան քեզ մարդ պիտի ընէ: Միհրանը պահակ դրինք դռան առջեւ: Այս մարդը Սեդրակ կը կոչուի: Կաթը մածուն դարձաւ: Ան ձեր դպրոցին տնօրէն նշանակուեր է: Զիրենք հայ կը կարծէի: Զինք նախագահ պիտի ընտրենք: Ժողովուրդը Տիգրանին որդին քագաւոր հռչակեց: Ասիկա քեզի յանցանք պիտի նկատուի: Այս կերպարը տափատ ձեւէ: Զիրենք մարդ հաշուեցինք: Անահիտը քոյրդ կարծեր են: Պէյրուսի թեմին առաջնորդ պիտի կարգուէր: Զեռքդ իդ կը հատի: Քահանայ ձեռնադրեր են Արշաւր: Ինծի վիճակուեցաւ ատենապետութիւնը:

ԴԱՍ 8

ԴԵՐԲԱՅՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

338.- *Անդէմ (Անորոշ Եղանակի) բայերը կը կոչուին Դերբայ, Երբ զորձածուած են անջատաբար՝ որպէս առանձին բառ: Այսպէս. «Ան արդուկուած զլեստ չունէր»:*

339.- *Աներեւոյթ դերբայը («ել», «իլ», «ալ») միշտ զորձածուած կ'ըլլայ որպէս «անուն». ներկայ դերբայը («ող»)՝ որպէս «ածական» կամ որպէս «անուն»: Անցեալ դերբայը («ած.» («եր»)ով ձեւը դերբայ չ'ըլլար))՝ որպէս «ածական», «անուն» կամ «մակբայ»: Ապառնի դերբայը («լիք»)՝ որպէս «ածական» կամ «անուն», («լու»)՝ որպէս «ածական» միայն: Այսպէս.*

- Աներեւոյթ Դերբ. -- Ես կը սիրեմ «կարգալը»: (Գոյ.)
- Ներկայ դերբ. -- Միշտ «լուող» մարդոցմէ զգուշացէ՛ք: (Ած.)
- Միշտ «լուողներէն» զգուշացէ՛ք: (Գոյ.)
- Անցեալ դերբ. -- «Բացուած» տուփը գոցէ՛: (Ած.)
- «Բացուածը» գոցէ՛: (Գոյ.)
- Զեռքը «բացած» մօտեցաւ: (Մակբ.)
- Ապառնի դերբ. -- («լիք») «Կարգալիք» գիրքս նոր է: (Ած.)
- «Կարգալիքս» նոր է: (Գոյ.)
- («լու») «Կարգալու» գիրք չունիմ: (Ած.)

340.- *Երբ Դերբայները զորձածուած են իբր անուն՝ կրնան հոլովուիլ, յօդ առնել: Այսպէս.*

| | | | |
|-----------|-------------|-------------|----------------|
| Ուղղ-Հայ. | Վագել | Խօսիլ | Կարգալ |
| Սեռ-Տր. | վագելու | խօսելու | կարգալու |
| Բցո. | վագելէ | խօսելէ | կարգալէ |
| Գործ. | վագելով | խօսելով | կարգալով |
| Ուղղ-Հայ. | Վագողը | Խօսածը | Կարգացածը |
| Սեռ-Տր. | վագողին | խօսածին | կարգացածին |
| Բցո. | վագողէն | խօսածէն | կարգացածէն |
| Գործ. | վագողով | խօսածով | կարգացածով |
| Ուղղ-Հայ. | Վագողները | Խօսածները | Կարգացածները |
| Սեռ-Տր. | վագողներուն | խօսածներուն | կարգացածներուն |
| Բցո. | վագողներէն | խօսածներէն | կարգացածներէն |
| Գործ. | վագողներով | խօսածներով | կարգացածներով |

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.- 1) Աներեւոյթ գերբայներուն յոչնակին («խօսիչներս», «խօսիչներուս», եւայլն) հազուադէպօրէն կը դործածուի:

2) Անցեալ ընդունելութիւնը (-ած, -եր) եւ Ազատնի ընդունելութիւնը («լու» ձեւը միայն) երբ դործածուած են էական բայի մը հետ՝ կ'առնուին այդ էական բային հետ միասին, եւ միասնաբար կը կազմեն մէկ բայ: Այսպէս. «Երդած է», «կարգալու էր»- այս պարագային «երգած», «կարգալու» բառերը «ընդունելութիւն» են եւ ո՛չ թէ «գերբայ»: Գերբայ են երբ դործածուին որպէս անջատ բառ: Այսպէս. «Այդ երգած երգ սիրուն էր», «Կարգալու գերք չուռէի»: Այդ պարագային էական բայի մը կապուած չեն ըլլար:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

200.- Գտէ՛ք թէ հետեւեալ նախադասութիւններուն անդէմ բայերը ե՛րբ գերբայ են եւ ե՛րբ՝ ընդունելութիւն:

Հանդէսը վերջացած էր: Վերջացած խնդիրով մը չ'արժէր այդքան գրադի: Այդ դեղերը խմելու էիք առանց առարկելու: Խմելու դեղ չունէիք: Յաջողելու համար մարդ աշխատելու է: Նեղացած էր եւ բարկացած կը խօսէր: Յուսալու չէր երբ յաջողելու հաւանականութիւն չկար բնաւ:

201.- Գտէ՛ք գերբայները, բռնէ՛ք անոնց ի՛նչ գերբայ ըլլալը եւ ո՛ր բառին կապուած ըլլալը:

Որպէսզի ուշիմ ըլլալդ հասկցաւի՝ ջանա՛ երբեմն լսել. այսպէտով անտեղի բաներ ըսելէ կ'ազատիս գոնէ չափով մը: Հիւանդ չըլլալու համար, մտն առտուները լաւ հագուած ելէք փողոց: Քու ըսածդ իմ ըսածներէս տարբեր չէ: Ատենապետ ըլլալ ըզմալէս ետք՝ պարզապէս հասարակ խորհրդակալի ըլլալս գիտ խնդրեցաւու չափ կը ջղայնացնէ: Տուած խրատներս օգնելու էին բեգի: Իր կարածները հագնուելիք բաներ չէին: Հաջող շունը խամրող չ'ըլլար: «Ռիչ խօսողները յաճախ ըսելիք չունեցողներն են», յուզուած ըսաւ եղբայրս իր գարմացած խօսակիցին: Այսպէս ծնրադրած աղօթելդ տեսնելով կ'ուրախանամ: Հասկցողները քող բացատրեն իրենց հասկցածը չհասկցողներուն:

ԴԱՍ 9

Գ Ե Ր Բ Ա Յ Ն Ե Ր (ՇԱՐ.)

341.- Որպէս անուն դործածուած գերբայները կրնան անունի մը առած բոլոր պաշտօնները առնել, այսինքն՝ ըլլալ տէր-բայի, սեռի խնդիր, ստորոգելի, բնութեան խնդիր, խնդիր, եւայլն: Այսպէս. «Ճամբորդելը հանելի է» նախադասութեան տէր-բային է ² «Ճամբորդելը» ³ աներեւոյթ ¹ գերբայը. «Ես կը սիրեմ փամբորդելը» ² նախադասութեան մէջ ¹ «Ճամբորդելը» ³ գերբայը սեռի խնդիր է. «Ճամբորդելէ չեմ յօգնիր» նախադասութեան մէջ «Ճամբորդելէ» գերբայը բնութեան խնդիր է: Կը լուծենք այսպէս.

2.- Ճամբորդելը = Զկօք, որպէս անուն դործածուած Աներեւոյթ գերբայ, եզ., ուղղ. հու. տէր-բայի «է» բային, «ը» որոշ. յօդ:

342.- Ներկ. եւ Անցող. գերբայները կրնան սեռի խնդիր առնել, էական գերբայը՝ ստորոգելի: Այսպէս. «Ես կը փափաքեմ» ² գիրք ¹ կարգալ» նախադասութեան մէջ «կը փափաքեմ» բային սեռի ⁶ խնդիրն է ³ «կարգալ» գերբայը, որ իր կարգին (որովհետեւ «կարգալ» բայը ներդործական է) ունի սեռի խնդիր մը՝ «լիրք» անունը: «Գիրքը» «կարգալ» սեռի խնդիրին սեռի խնդիրն է:

«Ես կը փափաքեմ բժիշկ ըլլալ» նախադասութեան մէջ՝ «կը ² փափաքեմ» ¹ բային սեռի ⁶ խնդիրն է ³ «ըլլալ» գերբայը, որ (որովհետեւ էական գերբայ է) ունի ստորոգելի մը՝ «բժիշկ» անունը:

«Ես պիտի փափաքեմ մարդ ըլլալդ տեսնել» նախադասութեան սեռի խնդիրն է ² «տեսնել» ¹ ներդործական գերբայը, որուն սեռի խնդիրն է ⁹ «ըլլալ» ⁶ էական գերբայը. «ըլլալդ» ³ գերբային ստորոգելին է «մարդ» անունը: Լուծենք.

Ըլլալդ = Էական, որպէս Անուն գործածուած Աներեւոյթ Դերբ., եզ., հայց. հոլ. Սխ. «տեսնել» զերբային, «դ» դիմ. յօդ:

Մարդ = Նիւթ. հարկ. Անուն, եզ., ուղղ. հոլ. Ստորոգելի «ըլլալդ» զերբային(*):

343.- Դերբայները կրնան լրացուցիչ առնել: Այսպէս. «Պէջրութ զրկուած գիրքերը լաւ կազմուած հատորներ էին» նախադասութեան մէջ «զրկուած» եւ «կազմուած» զերբայները թէեւ գործածուած են որպէս անական, բայց իրենց բնոյթով զերբայ են (այսինքն՝ բայ). «Պէջրութ»ը բնութեան խնդիր է «զրկուած» զերբային, «լաւ»ը որակական մակբայ է «կազմուած» զերբային:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

1) Կարգ մը պարագաներու տակ, օրինակ՝ երբ անուն զերբայ մը խնդիր առած է, զերբայը նկատի կ'առնենք որպէս անուն եւ ո՛չ թէ որպէս «բայ», որովհետեւ բայը «լու խնդիր» չ'ունենար: Այսպէս. «Աշակերտներէն յաջողածները թող հոս մնան» նախադասութեան մէջ՝ «յաջողածները» զերբայը, որ գործածուած է որպէս անուն՝ ունի «աշակերտներէն» խնդիրը: Լուծենք խնդիրը. Աշակերտներէն = Նիւթ. հարկ. անուն, եզ., բաց. հոլով խնդիր «յաջողածները» անունին (եւ ո՛չ թէ «զերբայ»ին), «ը» սրոշ. յօդ:

2) Ածական կամ մակբայ կողմ զերբայները կը լուծենք այսպէս. Օրինակ՝ «Յուզուած ըստ գարմացած մարդուն». «Յուզուած» = Կրու., որպէս մակբայ գործածուած անց. զերբայ, կը վերաբերի «ըստ» բային: «Զարմացած» = Զէզ., որպէս անական գործածուած անց. զերբայ, կը վերաբերի «մարդուն» անունին:

344.- Դերբայ մը կրնայ տէր-բայի ունենալ: Այսպէս. «Տղաքը մեկնեցան զանգալը չհնչած» նախադասութեան մէջ «մեկնեցան» բային տէր-բային է «տղաքը». «չհնչած» զերբային տէր-բային է «զանգալը» անունը:

345.- Կարգ մը պարագաներու մէջ զերբայի մը տէր-բային կրնայ սեռական հօրով բառ մը ըլլալ: Այսպէս. «Մարդու մը մօտեկալը տեսայ» նախադասութեան մէջ՝ «մօտենալը» զերբային տէր-բային է «մարդու» սեռական անունը:

*) Որովհետեւ «ըլլալդ» զերբայը տէր-բայի չունի՝ ստորոգելիին համար կ'ըսենք թէ զերբայի՛ն կապուած է:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

1) «Լու» վերջացող Ապրանի զերբայը («ուտելու»), որ միշտ անտական է, չչփոթել Աներեւոյթ զերբային Սեռ-տրականին հետ («ուտելու»), որ միշտ գոյական է:

2) Երբ զերբայ մը գործածուած ըլլայ «համար» յարադրութեան հետ՝ երբեմն «համար»ը կը զեղչենք: Այսպէս. «Գնաց ճաշելու» (= ճաշելու համար): Ճաշելու = Խնդիր՝ «համար» զեղչեալ յարադրութեան:

3) Աներեւոյթ զերբային գործիական հօրովը երբ բային կապուած ըլլայ՝ մակբայի ուժ կ'ունենայ: Այսպէս. «Պատալով կը խօսէր»:

4) Երբ պարզ նախադասութեան մը տէր-բային, սեռի խնդիրը կամ ստորոգելին ներգործ., անցող. կամ էական զերբայներ ըլլան եւ իրենց կարգին տէր-բայի, սեռի խնդիր կամ ստորոգելի ունենան՝ այդ պարզ նախադասութիւնը կը մնայ պարզ, բարդ չ'ըլլար: Օրինակ, պարզ է այս նախադասութիւնը՝ «Մարդ ըլլալդ եւ յարգուիլդ կ'ուղեմ տեսնել ես»:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

202.- Զատեցէ՛ք նախադասութիւնները եւ լուծեցէ՛ք: Որոշեցէ՛ք անհրաժեշտ եւ լրացուցիչ անդամները:

Որքա՛ն պիտի վաւիաբէի ուսանիլ: Բժիշկ ըլլալ չեմ ուզեր: Բերաւ այն ուտելիքները, որոնք մեզի գրկել խոստացած էր: Դաս տրվիլդ կ'ուրախացնէ հայրդ: Մոտցայ ըսելիքներս ու չըսելիքներս եւ առանց բարեւելու, շփոթած, անցայ անոնց առջեւէն. կարծես թէ նախակրթարանը նոր աւարտած, անխորձ աշակերտ մը ըլլայի: Գերմանիան խախտ քրքրեց ժողովը գնածներս եւ երբ վազելով վերադարձայ հուն՝ անելու համար գնունք. աւ՛ղ, արդէն անհետացեր էին անկէ: Գահիրէ մեկնիլ որոշեր է. եւ մարդու բան չըսած՝ անցազիրը պատրաստել տուեր է եւ օդանաւի տուձ մը գնելով առանց այլեւայլի մեկնել է: Անոնցմէ ստացած պատասխաններս քեզի խեղճ փոխանցելու խեղճութիւն չէր: Առանցմէ ունեց տուած այդ նուէրներդ մոտցուելիք բաներ չեն: Ապագային ուսուցիչ կամ սգգային գարծիչ ըլլալու խոստումդ լսելու եկեր եմ: Երագիս մէջ նկատեալ բարեւ ծամող եւ գնունք գիտարեւամբ կլլող հրէշ մը տեսայ:

203.- Լուծեցէ՛ք Հր. 70-ի, 200-ի եւ 201-ի զերբայները եւ անոնց լրացուցիչները (եթէ տեսնես):

Ե. Մ Ա Ս

ՇԱՐԱՀԻՍՈՒԹԻՒՆ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄ

ԴԱՍ 1

ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ ԵՒ ԽՕՄՔ

346.- Նախադասութիւնը մէկ դիմաւոր բայ պարունակող բառերու շարք մըն է, ուր իմաստ մը (դատում մը, մտածում մը, նկարագրութիւն մը, զգացում մը) կ'արտայայտուի: Պայման չէ որ նախադասութեան մը իմաստը ամբողջացած, լրիւ ըլլայ: Այսպէս. «Անոր հայրը ջգայնացաւ» եւ «իրեմ ըսաւ» «որ անմիջապէս տուն մեկնի» խօսքին Բ. նախադասութիւնը առանձինն առնուած լրիւ չէ. Գ. նախադասութիւնն է որ կ'ամբողջացնէ անոր իմաստը. («Իրեն ըսաւ» ի'նչ, - «որ անմիջապէս տուն երթայ»):

347.- Խօսքը նախադասութիւններու շարք մըն է՝ ուր լրիւ իմաստ մը կ'արտայայտուի: Այսպէս. Վերի օրինակին երեք նախադասութիւնները միասին կը կազմեն խօսք մը:

348.- «Խօսք» կը կոչուի նաեւ անջատ նախադասութիւն մը, երբ ան անմիջականօրէն չէ կապուած ա՛յլ նախադասութեան մը եւ կ'արտայայտէ լրիւ իմաստ մը: Այսպէս. «Տարին ունի չորս եղանակ»:

349.- Ամփոփելով, — Խօսքը նախադասութիւն մը կամ նախադասութիւններու շարք մըն է՝ ուր լրիւ իմաստ մը կ'արտայայտուի:

350.- Պարզ կը կոչուի այն խօսքը, որ կազմուած է մէկ նախադասութենէ: Բարդ կը կոչուի այն խօսքը, որ կազմուած է մէկէ

աւելի նախադասութիւններէ: Այսպէս. Հետեւեալ վեց խօսք պարունակող պարբերութեան առաջին խօսքը պարզ է. երկրորդը նոյնպէս: Երրորդն ու չորրորդը բարդ են, (երրորդը ունի չորս նախադասութիւն, չորրորդը՝ երեք): Հինգերորդ եւ վեցերորդ խօսքերը պարզ են. —

1.- (Ատոու մը նաւակայք գնաց Յուսէփին լուացուելիք լաթերը առնելու համար). 2.- (Մեր նաւավարը անդին կը խոկար): 3.- («Սուրբիկ զարմանքով տեսաւ» «Թէ Յուսէփ իր ծիծաղիտ դէմքով չէր գիմաւորեր զինք», «տեսաւ» «որ անոր անկողինը ուսած էր»): 4.- («Կամաց մը մօտեցաւ», «վեր առաւ վերմակը» եւ «ահալին կոծ մը արձակեց»): 5.- (Մեր նաւավարը վեր ցատկեց): 6.- (Սուրբիկ անկողինին սնարին վերեւը՝ Յուսէփին անշարժ մարմինին մօտ կեցած կու լար...):

351.- Խօսքերը իրարմէ զատուած կ'ըլլան սովորաբար վերջակէտով կամ միջակէտով:

352.- Նախադասութեան մը անդամներէն ոմանք կընան ղեղչուած ըլլալ: Այսպէս. «Ինք կը սիրէ նարինջը», «ե՛ս ալ կը սիրեմ» խօսքին երկրորդ նախադասութեան մէջ ղեղչուած է «նարինջ» բառը, որ սեռի խնդիրն է:

Եթէ ըսենք՝ «Ինք կը սիրէ նարինջը», «ե՛ս ալ», երկրորդ նախադասութենէն ղեղչած կ'ըլլանք «կը սիրեմ» բայը եւ «նարինջը» սեռի խնդիրը:

353.- Ձեզեալ անդամ ունեցող նախադասութիւն մը կը կոչուի գեղջեալ նախադասութիւն:

354.- Նախադասութիւն մը, իր կազմին նայելով՝ կընայ ըլլալ 1.- Պարզ, 2.- Ձեղջեալ պարզ, 3.- Բարդ, 4.- Ձեղջեալ բարդ:

Ա.- Պարզ է երբ բողկացած է միայն անհրաժեշտ անդամներէ. (Անհրաժեշտ անդամներն են բայը, տէր-բային, սեռի խնդիրը եւ ստորոգելին): Այսպէս. Պարզ են հետեւեալ նախադասութիւնները, «Արեւը ծաղկեցաւ», «Եզրայրս եւ Երուսնդը քաջ են», «Քեզ եւ Հրանդը կը փնտռէին անոնք»:

Բ.- Ձեղջեալ պարզ է նախադասութիւն մը երբ պարզ է եւ ունի ղեղջեալ անդամ: Այսպէս. «Կանչեց աշակերտները», «որոնք դաս չէին սորվիր» եւ «պատժեց» խօսքին առաջին նախադասութիւնը գեղջեալ պարզ է (գեղջուած է «ան» սէր-բային), երկրորդը

պարզ է (միայն անհրաժեշտ անդամներ կը շփանդակէ), երբորդը գեղջեալ պարզ է (ղեղջուած է «զանոնք» սեռի խնդիրը, որ դրուած պէտք է ըլլար «աշակերտները» բառին տեղ) :

Գ. — Բարդ է նախադասութիւն մը երբ լրացուցիչ անդամ ունի : Այսպէս . «Ան կանչեց այն բոլոր աշակերտները», «որոնք դաս չէին սորվիր» եւ «պատժեց զատ խստօրէն» խօսքին առաջին եւ երբորդ նախադասութիւնները բարդ են :

Դ. — Զեղչեալ բարդ է երբ բարդ է եւ գեղջեալ անդամ ունի : Այսպէս . «կանչեց այն բոլոր աշակերտները», «որոնք դաս չէին սորվիր» եւ «պատժեց զատ խստօրէն» խօսքին առաջին եւ երբորդ նախադասութիւնները գեղջեալ բարդ են . առաջինին տէր-բային («ան») եւ երբորդին սեռի խնդիրները («զանոնք») գեղջուած են :

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

1) Շաղկապը եւ ձայնարկութիւնը իրենց ներկայութեամբ պարզ նախադասութիւն մը բարդի չեն վերածեր :

2) Պարզ կը նկատուի նաեւ այն նախադասութիւնը, որուն տէր-բային, սեռի խնդիրը կամ ստորագելին՝ ներգործական, անցողական կամ էական դերբայներ են, եւ իրենց կարգին ունին տէր-բայի, սեռի խնդիր կամ ստորագելի : Այսպէս . «Բոյրս կը ծրագրէ հարուստ գնել», «երաժիշտ ըլլալը կ'ուրախացնէ զիս» նախադասութիւնները պարզ են, — «հագուստ» բառը սեռի խնդիրն է «գնել» սեռի խնդիրին, եւ «երաժիշտ» բառը ստորագելին է «ըլլալը» տէր-բային :

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

204. — Երկուքական եւ երեքական նախադասութիւն պարու-նակալ խօսքեր ըսէ՛ք :

205. — Զատեցէ՛ք հետեւեալ խօսքերուն նախադասութիւնները՝ աւելցնելով գեղջեալ բառերը :

Բոյրս տուն գնաց, եղբայրս՝ դպրոց : Երկու շնիկ ունիմ . մէկը սեւ է, միւսը՝ ներմակ : Մենք բանաստեղծութիւն կը սիրենք, իրենք՝ ալ : Առիւծը խորատակեր է գառագետին դուռը եւ փախեր է : Տուն գացեր է, կերեր, խմեր, հանգստացեր ու եկեր է : Եթէ դուք գրադարան ունիք, մե՛նք ալ ունինք : Ո՛ւր էիր երէկ դուն . — տա՛նը :

Դուրեա՞նը աւելի կը սիրես քէ Մեծաբեկը . . . : Մարդիկ առանց օդի չեն կրնար ապրիլ . ձուկերը կրնա՞ն : Կանչեցի զինք եւ յանդի-մանեցի մինչեւ որ լացաւ : Դաշտերն ալ, ինչպէս անտառները, կա-նաչութեամբ ծածկուեցան : Ինք այդ նամբէն անցեր է . դուն ալ անցա՞ր :

206. — Ըսէ՛ք նախորդ հրահանգին նախադասութիւններուն, ինչպէս նաեւ հետեւեալներուն կազմը՝ ցոյց տալով անհրաժեշտ եւ լրացուցիչ անդամները :

Հիւանդը մերժեց խմել քեզը : Նուէրը մերժելը անբաղա-վարութիւն էր : Անընդհատ ձիւներ է երէկ : Հաւատալը թեզ պիտի փրկէ : Եթէ գիրք կարդալ կ'ուզես՝ սենեակդ գնա՛ : Օդանաւորը ըլ-լալ փափաքիլը հետաքրքրական է : Դրամ, դիրք, կալուած ունե-նալը բա՛ն չի փոխեր : Առողջ եւ լուստես ըլլալը է կարեւորը : Կի-րակի օրերն ալ աշխատիլը չի զարմացներ մեզ . առաջնութիւն շա-հիլ ուզելը գիտեմք : Ճամբորդե՛լ, աշխարհնե՛ր տեսնել, մարդիկ, սովորոյքներ, ու քաղաքակրթութիւններ նանչնա՛լ, զարգանալ կ'երագէին զարմիկս ու զարմուհիս : Հրանդին մօտեմալը չգտցի : Նոյն բաները կրկնելէ պէտք է գուշանալ : Այս մարդը խօսիլ չի գիտեր, ո՛չ ալ՝ զգալ, ո՛չ ալ՝ երագել :

207. — Ընդգծեցէ՛ք զիմաստը բայերը, աւելցուցէ՛ք գեղջեալ բառերը, գտնեցէ՛ք նախադասութիւնները, ապա՝ խօսքերը : Յետոյ սրուցեցէ՛ք նախադասութիւններուն եւ խօսքերուն կազմը :

«Ազգայնականութիւնը այն զգացումն է, որ իրարու կը կապէ մարդկային անջատ բազմութիւններ, որոնք մեկը անհրաժեշտ նախա-պայման չէ եղած սովորաբար այդ գաղափարին զարգացման հա-մար : Անհրաժեշտ եղողը ազգայնականութեան համար՝ հաւաքական գիտակցութիւն մըն է, բնկերութեան մը մէջ հաւաքաբար ապրելու կամքը» :

«Այդ ոտանաւորին մէջ ներկայ են լուրջ մտահոգութիւնները եւ զգալի՝ գանձիկ յտակօրէն արտայայտելու նիգերը . բայց կը պակսի խտացեալ, անկեղծ, ջղային, իրակա՛ն բանաստեղծութիւնը, որ խարխալու մէջ սակայն, որ լոկ որոնում չէ՛, այլ նաեւ՝ կիրք» :

ԴԱՍ 2

«ՍՏՈՐՈԳԵԼԻ» ԵՒ «ԵՆԹԱԿԱՅ»

355.— Նախադասութիւն մը, «տրամաբանօրէն» կը բաղկանայ երկու մասէ, — Ստորոգելի եւ Ենթակայ:

«Ստորոգելին» բայն է իր լրացուցիչներով միասին: «Ենթակայն» տէր-բային է ի՛ր լրացուցիչներով միասին: Այսպէս. «Այդ նոր կողովը հինգ քիւօ կարմիր խնձոր կը պարունակէ» նախադասութեան Ենթակայն է՝ «Այդ նոր կողովը», Ստորոգելին է՝ «հինգ քիւօ կարմիր խնձոր կը պարունակէ»:

«Ան լաւ դերձակ էր» նախադասութեան Ենթակայն է՝ «ան», Ստորոգելին է՝ «լաւ դերձակ էր»:

«Պարտէզին մէջ բարձրաձայն կը խօսակցէին» նախադասութեան Ենթակայն է «(անոնք)» լռելեայն դերանունը, Ստորոգելին է՝ «Պարտէզին մէջ բարձրաձայն կը խօսակցէին»:

ՄԱՆՕԹՈՒԹԻՒՆ.— 1) Էական բայով կազմուած նախադասութեան մը մէջ՝ տրամաբանական լուծումի ատեն՝ թիւ 3-ը (ստորոգելին) նկատի կ'ունենանք բային հետ եւ ո՛չ թէ տէր-բային: Քերականական լուծումի ատեն ստորոգեալին, այսինքն՝ տէր-բային:

2) Չգիտեմ «Ենթակայ» եւ «ստորոգելի» բառերուն քերականական եւ տրամաբանական իմաստները:

356.— Հայերէնի մէջ կանոնն այն է, որ նախադասութեան ենթական դրուի ստորոգելիէն առաջ: Այսպէս. «Գիրքին հեղինակը բնաւ չխօսեցաւ երէկ» նախադասութեան մէջ ենթական՝ «ղիրքին հեղինակը», դրուած է ստորոգելիէն՝ «բնաւ չխօսեցաւ երէկ»էն առաջ:

357.— Երբ փոխուի այս շարքը, առաւել կամ նուազ չափով կը փոխուի նաեւ նախադասութեան իմաստի շեշտը: Այսպէս. Երբ շրջենք վերի նախադասութեան շարքը եւ ըսենք՝ «Բնաւ չխօսեցաւ երէկ գիրքին հեղինակը», հոս իմաստի շեշտը ստորոգելիին՝ «բնաւ չխօսեցաւ երէկ»ին վրայ է:

358.— Երբ նախադասութեան մը ենթական ստորոգելիէն առաջ դրուած է, կ'ըսենք թէ այդ նախադասութիւնը սովորական շարադասութիւն (բառերու շարք) ունի: Երբ ստորոգելի'ն դրուած է ենթակայէն առաջ՝ կ'ըսենք թէ շրջուած շարադասութիւն ունի:

Երբ ենթական կամ ստորոգելին դեղչուած ըլլան՝ նախադասութեան շարադասութիւնը կը նկատենք սովորական: (Տէր-բայիէ զուրկ բայերով կազմուած նախադասութիւնները ենթակայ չեն ունենար):

359.— Հայերէնի շարադասութիւնը շատ ճկուն է. պարտադիր կարգ չունի: Առանց նախադասութեան հիմնական միտքը փոխելու՝ իմաստի շեշտին համաձայն կարելի է նոյն նախադասութիւնը արտայայտել տարբեր շարուածքներով: Այսպէս. «Ինք առաւօտուն կարգաց նամակը» նախադասութիւնը կարելի է արտայայտել հետեւեալ շարադասութիւններով.

- 1) Ինք առաւօտուն կարգաց նամակը.
- 2) Նամակը կարգաց ինք առաւօտուն.
- 3) Նամակը առաւօտուն կարգաց ինք.
- 4) Նամակը ինք առաւօտուն կարգաց.
- 5) Առաւօտուն կարգաց ինք նամակը. Եւայլն:

360.— Կարելի է՝ առանց շարադասութիւնը փոխելու՝ պարզապէս բառերուն առողանական նշանը բառէ-բառ փոխադրելով փոխել նախադասութեան իմաստի շեշտը: Այսպէս.

- 1) Ինք առաւօտուն կարգաց նամակը.
- 2) Ինք առաւօտուն կարգաց նամակը. Եւայլն:
- 1) Ի՞նք առաւօտուն կարգաց նամակը.
- 2) Ինք առաւօտուն՞ կարգաց նամակը. Եւայլն:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

208.— Չատեցէ՛ք Հրահանգ 206-ի նախադասութիւններուն ենթական եւ ստորոգելին: Ապա ըսէ՛ք թէ այդ նախադասութիւններուն շարադասութիւնը սովորական է թէ՛ շրջուած:

209.— Նոյնը ըրէ՛ք Հրահանգ 207-ի եւ 205-ի նախադասութիւններուն ալ:

ԴԱՍ 3

ՆԱԽԱԳԱՍՈՒԹԵԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

361.- Քերականական լուծումը բառերու լուծումն է, Տրամաբանական լուծումը՝ նախադասութիւններու, խօսքերու :

362.- Ինչպէս բառերը, նախադասութիւններն ալ կապուած կ'ըլլան իրարու, կ'ունենան զանազան սալաձոններ, իրարու իմաստ կ'ամբողջացնեն, եւայլն : Նախադասութիւնները կրնան ըլլալ — 1) Անկախ, 2) Գլխաւոր, 3) Ստորադաս՝ նայած իրենց իրարու հետ ունեցած յարաբերութեան :

Ա.- Անկախ կը կոչուի այն նախադասութիւնը, որ անմիջական կապ չունի ուրիշ նախադասութեան մը հետ, եւ ինքնին լրիւ իմաստ մը կ'արտայայտէ : Այսպէս. «Գիշերը ձեզի պիտի գամ» : (Անկախ նախադասութիւն մը ընդհանրապէս վերջակէտով կամ միջակէտով կ'աւարտի, եւ կը սկսի նոր-առոյց մը, եւ կամ՝ վերջակէտէ մը կամ միջակէտէ մը ետք) :

Բ.- Գլխաւոր է այն նախադասութիւնը, որուն իմաստը կ'ընդարձակուի, կը բացատրուի, կամ կ'ամբողջացուի ուրիշ նախադասութիւններով : Այսպէս. եթէ ըսենք «Գիշերը ձեզի պիտի գամ եթէ անձրեւ չգայ», երկրորդ նախադասութիւնը կ'ամբողջացնէ առաջինին իմաստը : Առաջինը գլխաւորն է. երկրորդը՝ «եթէ անձրեւ չգայ», որ կ'ամբողջացնէ առաջինին իմաստը՝ անոր ստորադասն է :

Գ.- Ստորադաս կը կոչուի այն նախադասութիւնը, որ ուրիշ նախադասութեան մը (այսինքն՝ գլխաւորին) իմաստը կ'ընդարձակէ, կը բացատրէ կամ կ'ամբողջացնէ :

363.- Երբ նոյն տեսակի նախադասութիւններ իրարու յաջորդեն նոյն խօսքին մէջ՝ կը կոչուին համադաս : Այսպէս .

«Մայրս շուկայ գնաց այսօր», «զնումներ բրաւ» եւ «կէսօրին զարձաւ տուն» խօսքին երեք նախադասութիւնները, որոնք առանձինն առնուած անկախ են, հոս եղած են անկախ-համադաս :

«Իրմէ խնդրեցի» «որ շուկայ երթայ» եւ «ծաղիկ գնէ» խօսքին վերջին երկու նախադասութիւնները, որոնք ստորադասներն են «Իրմէ խնդրեցի» նախադասութեան՝ ստորադաս-համադաս են :

364.- Երբ ստորադաս նախադասութիւն մը զրուած ըլլայ իր Գլխաւորէն ետք՝ կը կոչուի յետադաս-ստորադաս : Այսպէս. «Գիշերը ձեզի պիտի գամ եթէ անձրեւ չգայ» խօսքին մէջ՝ «եթէ անձրեւ չգայ» նախադասութիւնը յետադաս-ստորադաս է :

Երբ ստորադասը զրուած ըլլայ Գլխաւորէն առաջ՝ կը կոչուի նախադաս-ստորադաս : Այսպէս. «եթէ անձրեւ չգայ» գիշերը ձեզի պիտի գամ» խօսքին մէջ՝ «եթէ անձրեւ չգայ» նախադասութիւնը նախադաս-ստորադաս է :

365.- Կրնայ պատահիլ որ Գլխաւոր նախադասութիւն մը կիսուի, եւ ստորադասը մտնէ անոր մասերուն միջեւ : Այսպէս. «Զեր պարտէզէն փրցուցեր եմ այն ծաղիկը, որ սեղանիս վրայ տեսար» խօսքին պարունակած երկու նախադասութիւններէն առաջինը (Գլխաւորը) կրնանք կիսել եւ մէկ մասը գնել երկրորդ (ստորադաս) նախադասութեանէն ետք : Այսպէս. «Այն ծաղիկը, (որ սեղանիս վրայ տեսար), ձեր պարտէզէն փրցուցեր եմ» : Այս պարագային, ստորադասը կը կոչուի Միջանկեալ-ստորադաս :

Միջանկեալ-ստորադաս նախադասութիւն մը Գլխաւորէն անջատուած կ'ըլլայ երկու ստորակէտով, կամ ստորակէտով մը եւ բութով մը, կամ բութով մը եւ ստորակէտով մը, կամ երկու բութով, եւ կամ երկու զծիկներով :

366.- Համադաս նախադասութիւններ իրարու կապուած կրնան ըլլալ 1) Ստորակէտով, միջակէտով, 2) Համադասական շաղկապով : Այսպէս. «Բոլորն ալ ներկայ եղան ժողովին», «կարծիքներ փոխանակեցին» եւ «որոշումներ առին». «ինք միա՛յն լուեց» :

367.- Գլխաւորն ու իր ստորադասը իրարու կապուած կրնան ըլլալ 1) Յարաբերական դերանունով, 2) Ստորադասական շաղկապով, 3) Անորոշ դերանունով, 4) Բուքով : Այսպէս. 1) «Տեսայ մանկիկ մը որ կու թաւ» 2) «Կ'երթամ գարոց եթէ հետս գան վահանն ու Շահնուրը» 3) «Քոյրս կարգացեր է ինչոր եւ կարգացեր եմ» 4) «եթէ անձրեւ չգայ՝ ձեզի պիտի գամ» :

368.- Ստորադաս նախադասութիւնները, ընդհանրապէս Յարաբերական գերանունով մը, ստորադասական շաղկապով մը, անորոշ գերանունով մը կամ բութով մը կը սկսին եւ կը կապուին իրենց Գլխաւորին : Գլխաւորը առնցմէ եւ սրեւէ մէկով չ'սկսիր :

369.- Երբ ստորագրաս նախադասութիւն մը չհակերտող կամ զծիկով սկսի, այդ չհակերտը կամ դծիկն է որ զինք կը կապէ իր Գլխաւորին: Այսպէս. Հայրս ըսաւ. «Այս դաւազանը ձեռքդ չտեսնեմ»: Կամ. Հայրս ըսաւ, — Այս դաւազանը ձեռքդ չտեսնեմ:

370.- Եթէ Գլխաւորը մէկէ աւելի ստորագրաս ունենայ, յաճախ, բացի առաջինէն՝ միւս ստորագրասները Գլխաւորին կապող բառերը կը զեղչենք: Այսպէս. 1) Ես զնեցի բառարան մը, «որ» կաշնկազմ է եւ (որ) նկարներ կը պարունակէ. 2) Օղնէ իրեն «եթէ կը սիրես զինք» ու «(եթէ) չես ուզեր իր ձայնդ իր»:

371.- Երբեմն Գլխաւորին եւ ստորագրասին միջեւ եղող կապը կը զեղչենք: Այսպէս. Երբ ըսենք «Կը յիշեմ, ամառ զիշեր մըն էր», կը նշանակէ՝ «Կը յիշեմ թէ ամառ զիշեր մըն էր»: «Պիտի չգայ՝ կը խորհիմ» կը նշանակէ՝ «Կը խորհիմ որ պիտի չգայ»:

372.- Երբ ըսենք «Պիտի մեկնիմ՝ ուզես թէ ոչ», կը նշանակէ՝ «Պիտի մեկնիմ եթէ ուզես, եւ եթէ չուզես»: «Ոչ»ը, «այո»ն, ա՛յլ մակրայներ եւ բառեր կրնան մէկական ստորագրաս զեղչեալ նախադասութիւն ըլլալ: Այսպէս. «Պիտի դա՞ս վազը»: — Հա՛րկաւ (= Հա՛րկաւ պիտի դամ վազը:)

ԿԱՐՅԻՈՐ ՅԻՇՅՑՈՒՄՆԵՐ.-

Ա.- «ՈՐ» բառը կրնայ ըլլալ 1) Անորոշ անական (Երբ գործածուած է անունի մը հետ. — «Ո՛ր գիրքը կ'ուզես»: Այս պարագային հարցական իմաստ կ'ունենայ), 2) Անորոշ դերանուն (Երբ անունը վերցուած է «որ» բառին քովէն եւ վրան աւելցուած է յօդ մը: Այսպէս. «Ո՛րը կ'ուզես», այսինքն «որ զիրքը»), 3) Յարաբերական դերանուն (Երբ գրուած է անունի մը տեղ. — «Կարգացի գիրքը, որ դուն ինծի տուած էիր». «որ» բառը գրուած է «զիրք» անունին տեղ), 4) Ստորագրասական շաղկապ (Երբ «որ» բառը «թէ» եւ «որպէսզի» նշանակէ: Այսպէս. «Իրեն ըսի որ անմիջապէս մեկնի (որպէսզի մեկնի)», «Իրեն ըսի որ չեմ կրնար դալ (թէ չեմ կրնար դալ)»):

Բ.- «ԵՐԲ» բառը կրնայ ըլլալ 1) Մակրայ (Եթէ հարցական իմաստ ունենայ. — «Ե՛րբ մեզի պիտի գաս»), 2) Յարաբերական դերանուն (Եթէ նախորդ նախադասութեան մաս կազմող եւ իրմէ անմիջապէս առաջ գտնուող անունի մը տեղ գրուած ըլլայ: Այսպէս. «Ես դաս կը սորվէի ճիշդ այն պահուն՝ երբ քոյրս կը քնանար»:

(«Երբ»ը գրուած է «պահուն» բառին տեղ), 3) Ստորագրասական շաղկապ (Եթէ ո՛չ հարցական է եւ ո՛չ ալ անունի մը տեղ գրուած է. — «Ձինք շատ կը սիրէի երբ փոքր էի»):

Գ.- «ՈՐ» Յարաբերական դերանունը (եղակի ուղղական)՝ կրնայ գործածուիլ նաեւ 1) Եգակի հայցականի (զոր), 2) յոգնակի ուղղականի (որոնք), 3) յոգնակի հայցականի (զորոնք, զորս) տեղ, հաւասարապէս:

«Որոնք»ը («որ»ին յոգնակին) որ ուղղ. հօլով է՝ կրնայ գործածուիլ նաեւ յոգնակի հայցականին տեղ:

Դ.- «Ուր» եւ «ուրկէ» բառերը տեղական մակրայ են՝ երբ հարցական են (Ո՛ւր կը բնակիք). յարաբերական դերանուն են՝ երբ հարցական չեն (Այն տունը, ուր կը բնակիք...):

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

210.- Զատեցէ՛ք նախադասութիւնները, ամբողջացուցէ՛ք զեղչեալները եւ ապա քերականորէն լուծեցէ՛ք բոլոր բառերը:

«Ե՛րբ տեսաք դուք գանձք, եւ ո՛ւր», հարցուց միւս խորագոյրս: Անընդհատ պտուղ կ'ուզէինք ուտել՝ երբ գիւղը ըլլայինք: Սալբին ու ես դեռ կը յիշեմ այն աղուոր օրերը, երբ աշակերտ էինք նախակրթարանը: Արմէն կ'ուզէ իրենց երթալս, մինչ ինք չ'ուզեր մեզի գալ: Ըսի իրեն թէ ո՛ր տղոցմէ իմացած էի Կիրակի օր հանդէս ըլլալը: Ըսէ՛ք թէ ո՛րը կը նախընտրէք այս երկուքէն, ա՞յս, ա՞յդ: Նամակ ստացեր է երբօրմէն, որ Ափրիկէ կը գտնուի: Բանակին հրամանատարը կը մեռներ այն վայրկեանին, երբ եկած էին իրեն տեղեկացներու իր նախագահ ընտրուիլը: «Ինք դրամապաշտ է, ես՝ չեմ», ըսեր է անոր՝ Պարոն Մարգարին ձեր քաղք բնակող եղբայրը: Ուշ տուն զրկուեցան այն չորս աշակերտները, որոնք ընդհանուր հերքապահը պատժած էր: Այն պարտէզը ուրկէ Ալեքին քոյրը փաղեր է այս ծաղիկները, Արմինէնցն է:

211.- Որոշեցէ՛ք նախորդ հրահանգին նախադասութիւններուն ենթական, ստորուղիին եւ կազմը: Ապա՝ տեսակը: Յետոյ՝ անոնց շարադասութեան սովորական թէ շրջուած ըլլալը:

212.- Քերականորէն լուծեցէ՛ք Հրահանգ 152-ի եւ 153-ի յարաբերական դերանունները:

213.- Որոշեցէ՛ք դիմաւոր բայերը, դատեցէ՛ք նախադասութիւնները եւ ըսէ՛ք թէ գլխաւոր են թէ ստորագրաս՝ ճշգրիտ ետք թէ ի՛նչ են նախադասութիւններուն միջեւ գտնուող կապերը:

Շուկայ գացի *որպէսզի* քերք գնեմ: *Եթէ* կ'ուզես յարգուիլ՝ յարգէ: Մայրս չ'արտօներ որ միևնաչափ երթամ: «Քեզ կարօտ-
ցայ», գրած էր փոքր բոլոր ինծի: Բանախօսը ըստ. «Օտար լեզու
մը լաւ սարվելու համար անհրաժեշտ է իր մայրենի լեզուն լաւ գիտ-
նալ»: Գ. Զոհրապ գրած է *թէ* երգը անհրաժեշտ է մարդուն երի-
տասարդ մնալուն համար: *Մինչ* ինք կը խաղար՝ մենք կ'աշխա-
տէինք: *Երբ* գգաս գլուխիդ ցաւիլը՝ փոզոց մի՛ ելլեր: Կու գամ հան-
դէսի *պայմանաւ* որ եղբայրդ չզայ: Քոյրդ ալ գիտէ *ինչ* որ դո՛ւն
գիտես: Չեմ խորհիր որ յաջողի: Կարդացի այն գիրքը, որ դո՛ւն
յանձնարարած էիր կարդալ: Քանի որ համաձայնիլը անկարելի էր՝
Քեզի կը մնար խօսակցութիւնը չշարունակել: Գայրոցին տնտեսը ա-
սիկա՛ գնեք է, *որովհետեւ* աւելի դրամ չունէր. եւ դուն հսն չէիր
իրեն դրամ տալու համար: Ազբահաւաքին տաւի այն կօշիկներս,
որոնք ուրիշ կը ցաւցնէին եւ այլեւս չէի կրնար հագնիլ:

214.- *Չատեցէ՛ք նախադասութիւնները, որոչեցէ՛ք անոնց
ենթական, ստորագելին, կազմը եւ տեսակը: Ճշդեցէ՛ք իւրաքան-
չիւր ստորագասի գլխատոր:*

Չուարք էր անոր սրինգին ձայնը, ուրախ էր պարիս եղանա-
կը, աշխոյժ էր պարը: Կր փայտի ղէպի այդ գիւղը, ուր կը խոր-
հէին ուտելիք գտնել: Այդ հսկայ մարդը, որ սարսափն էր բարբիսն,
այնքան նիհարցեր է, որ անհամաշէլի դարձեր է: Քաղաքին միակ
պանդոկը, ուր իջեւանեցանք, արդիական շէնք մըն էր: Ժողովէն
ետք Արմիկին հայրը գնաց խանութ, իսկ միւսները՝ ակումբ, որ-
պէսզի առնուած որոշումները տեղեկացնեն իրենց նախագահին, որ
ակումբն էր այդ ժամուն: Տիկին Լուսինն ու իր ամուսինը պատըշ-
գամը կեցած կը դիտէին վարը՝ պարտէզին մէջ վազվզող իրենց ման-
չուկը, որ վեր կը նայէր ու կը ժպտէր: Չենք մտնար ինչ որ իրենք
չեն մտնար, եւ յանախ կը յիշեմք՝ ինչ որ իրենք չեն ուզեր յիշել:
Օգնէ՛ իրեն եթէ կը սիրես գինի եւ չես ուզեր ձայնակալը: Տոմս պիտի
չգնէ եւ հանդէսին պիտի չգայ՝ կը խորհիմ: «Ծով կու գա՞ս մեզի
հետ», հարցուցին Արմիկն ու Սեդիկը. այն՝ պատասխանեց Քնա-
րիկը: Հրամանատարին օգնականը պատմեց թէ ինչպէս անակնկալի
բերեր են թշնամի բանակը, եւ գայն պաշարեր ու գերի առեր են:
Սիլվան, որ դասարանին առաջինն էր միշտ, այս տարի վկայուեր է
համալսարանէն պատույ յիշատակութեամբ եւ գալ տարի ուսուց-
չութիւն պիտի ընէ՝ եթէ իրեն լաւ գործ մը առաջարկուի:

ԴԱՍ 4

**ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ
(ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ)**

373.- *Ստորագաս նախադասութիւն մը կրնայ, իր կարգին,
ինք ալ ստորագաս ունենալ: Այսպէս. «Տեսայ մարդ մը», «ար
զրկած էր կատու մը», «որուն աչքերը կանաչ էին» խօսքին երկրորդ
նախադասութիւնը ստորագասն է առաջինին (անոր կապուած է
«ար» յարտերական զերանունով, որ զբուած է առաջին նախադա-
սութեան մէջ գտնուող «մարդ» անունին տեղ): Երրորդ նախադա-
սութիւնը ստորագասն է երկրորդին (անոր կապուած է «որուն»
յարտերական զերանունով, որ զբուած է երկրորդ նախադասու-
թեան «կատու» անունին տեղ):*

374.- *Այն ստորագաս նախադասութիւնը, որ իր կարգին
ստորագաս ունի՝ կը կոչուի ստորագաս-գլխատոր: Այսպէս. «Կերի
օրինակին մէջ» = «Տեսայ մարդ մը» = Անկախ գլխատոր. «որ զրկած
էր կատու մը» = Յետագաս-ստորագաս-գլխատոր. «որուն աչքերը
կանաչ էին» = Յետագաս-ստորագաս:*

375.- *Կրնայ պատահիլ որ Գլխատոր մը ունենայ մէկէ տեղի
Միջանկեպ ստորագասներ: Այսպէս. (Այն մարդը, [ար զրկած էր
կատուն] եւ [ար] գայն կը շոյէր), մեր զրոյցին է):*

376.- *Երբեմն կը պատահի որ Գլխատորը երեք (կամ աւելի)
մասերու բաժնուած ըլլայ եւ ստորագաս նախադասութիւններ
մտած ըլլան այդ մասերուն միջեւ: Այսպէս. «Պրն. Միհրանին քոյ-
րը, (որ մեր դրացուհին է), եւ անոր ամուսնացած աղջիկը, (ար
իրենց հետ կ'ապրի), մեզի եկած էին երկէ»: Գլխատորն է. - «Պրն.
Միհրանին քոյրը եւ անոր ամուսնացած աղջիկը մեզի եկած էին
երկէ»:*

377.- *Կրնայ պատահիլ, որ ստորագաս նախադասութիւն մը
կրտուի եւ մասերուն միջեւ մանկ իր Գլխատորը, որ այս պարագա-
քին կ'ըլլայ՝ Միջանկեպ-գլխատոր: Այսպէս. «Այս պաւարտը,
(ըստ հայրս), անգամ մըն ալ ձեռքդ չտեսնեմ»:*

ՄԱՆՕԹՈՒԹԻՒՆ.— Միջանկեալ նախադասութիւնները զատելու համար կը գործածենք անկիւնաւոր փակագիծ [] . Միջանկերը կը զտանք կոր փակագիծս () :

378.— Երբ անջատ նախադասութիւն մը հարցական է՝ պէտք է ենթադրել թէ ստորադաս նախադասութիւն մըն է եւ իր Գլխաւորը զեղջուած է: Այսպէս. «Պտոյտի պիտի զա՞ս մեզի հետ», կը նշանակէ՝ կը հարցնեմ. «Պտոյտի պիտի զա՞ս մեզի հետ»:

379.— ԱՄՓՈՓԵԼՈՎ. նախադասութիւնները կ'ըլլան.

Ա.— Անկախ (1.— Անկախ, 2.— Անկախ—համադաս, 3.— Անկախ—գլխաւոր, 4.— Անկախ—միջանկեալ):

Բ.— Գլխաւոր (1.— Անկախ—գլխաւոր, 2.— Համադաս—գլխաւոր, 3.— Միջանկեալ—գլխաւոր, եւայլն):

Գ.— Ստորադաս (1.— Յետադաս—ստորադաս, 2.— Նախադաս—ստորադաս, 3.— Յետադաս—համադաս—ստորադաս, 4.— Նախադաս—համադաս—ստորադաս, 5.— Յետադաս—ստորադաս—գլխաւոր, 6.— Նախադաս—ստորադաս—գլխաւոր, 7.— Միջանկեալ—ստորադաս, 8.— Միջանկեալ—համադաս—ստորադաս, 9.— Միջանկեալ—ստորադաս—գլխաւոր, եւայլն):

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

215.— Փակագիծներով զատեցէ՛ք նախադասութիւնները, որոշեցէ՛ք անոնց 1) տեսակը, 2) ենթական, 3) ստորոգելին, 4) կազմը: Ճշգրեցէ՛ք իւրաքանչիւր ստորադասի գլխաւորը:

Խնդրեցի Շողիկէն որ մեզի գայ, որպէսզի միասին շուկայ երթանք: Հատերն իսկ, որոնք քաջ կենդանիներ չեն, երբեմն կը յարձակին մարդոց վրայ՝ եթէ շատ ջղայնանան: Այսօր, փողոցը, Ալիսը տեսեր է կին մը, որ մէկ ձեռքը գաւազան մը ունի եղեր, եւ միւս ձեռքը՝ հովանոց մը: Այդ կապոյտ տափաստով տղաքը վագեցին վեր, ու գիրքերս, որոնք սեղանիս վրայ էին, առին եւ իջան բակ: Հրայրին ուսուցիչ եղբայրը դիմեր է հօրս որ իրեն արտօնէ օգտագործել մեր տան գրադարանին գիրքերը, որոնցմէ շատեր իրապէս հագուազիւտ են: Հեռաձայնեց եւ իմացուց թէ իր միւս եղ-

բայրը, որ Եւրոպա գացեր եւ բժիշկ եղեր էր, վերադարձեր է, եւ կը փափաքի տեսակցիլ ինծի հետ նիւրի մը մասին որ զիս շատ կը հետաքրքրէ եղեր: Բոլոր յոյսերս, որոնք փայփայած էի տարիներով եւ պահած սրտիս խորը, ցնդեցան իսպառ՝ զիս ձգելով այնպիսի շփոթ վիճակի մը մէջ՝ ուրկէ դուրս գալը անհուճօրէն դժուար կը թուի ինծի: Համաձայն ըլլամ թէ ոչ՝ պիտի տանի զիս, որովհետեւ այդպէս որոշեր է եւ ինծի կը մնայ միայն հնազանդիլ: Երբ ժողովի կ'երթայի՝ հանդիպեցայ Աւետիսին, որ մեզի կու գար, ու միասին տուն վերադարձանք, որովհետեւ իրմէ անդեկացայ թէ ժողովը յետաձգուեր է եւ պիտի գումարուի յաջորդ օրը: Սպան հրամայեց որ անոնք շուտով մեկնին բանակատեղի, հագուին պատշաճ կերպով, առնեն իրենց զէնքերն ու սուրերը եւ միանան երկրորդ գումարտակին, որ արդէն նամբայ էր է: Քանի որ զինք շատ կարօտեցեր էի՝ գացի մինչեւ իրենց տունը՝ զինք տեսնելու համար՝ հակառակ անհանգիստ ըլլալու: Ուրախացանք որ հաշտուեր էք ի վերջոյ, եւ եկանք որ յայտնեմք մեր շնորհաւորութիւնները: Քու այս ըրածդ, — զրեցի իրեն նամակիս մէջ, — զիս շատ ուրախացուց, որովհետեւ այդ արարքիդ մէջ տեսայ քու ազնիւ հոգիդ: Հրաւիրեցի զինք որ երգէ հանդեսին, բայց ինք մերժեց առարկելով թէ պաղ առած է եւ չի կրնար այդ վիճակով ներկայանալ հանրութեան: Երկու անձանօրներ բացեր են տուփը, եւ մէջի ապարանջանը, որ իմս էր, օղերը, որոնք քրոջս կը պատկանէին, եւ ոսկի խաչը, որ ե՛ս նուիրեր էի փոքր եղբօրս, գողցեր են: Ինչ որ մեզ կը զարմացնէ՝ այդ տղուն այդպէս յառաջդիմելն է՝ երբ մա՛րդ այդ բանին չէր սպասեր: Այս փողկապներն ու շապիկը նուէրներն են անոնց, որոնք ամէնէն ետքը եկան եւ ամէնէն առաջ մեկնեցան:

ԴԱՍ 5

ՆԱԽԱԳԱՍՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ

380.— Նախադատութիւններն ալ՝ բառերու նման, կ'առնեն զանազան պաշտօններ: Կրնան ըլլալ տէր-բայի, սեռի խնդիր, ստորագելի, յատկացուցիչ, յարադրութեամբ խնդիր, եւ այլն:

381.— Ստորագաս նախադատութիւնը փոխարինած կ'ըլլայ իր Գլխաւորին անդամներէն մէկը, իր Գլխաւորին անդամներէն մէկուն տեղ զբաւած կ'ըլլայ եւ անոր ընտրելը կ'առնենայ:

382.— Կարելի է նախադատութեան մը մէկ անդամը անջատել եւ զայն արտադատել ասանձին նախադատութեամբ մը: Այսպէս. Փոխանակ բանալ «Ես սենիմ խոշոր գնդակ մը», կրնանք բանել՝ «Ես սենիմ գնդակ մը, որ խոշոր է»: «Որ խոշոր է» նախադատութիւնը զբաւած է «խոշոր» բառին տեղ. եւ քանի որ «խոշոր» բառը անպահանջ է՝ «որ խոշոր է» նախադատութիւնն ալ անպահանջ է իր Գլխաւորին՝ «Ես սենիմ գնդակ մը» նախադատութեան:

383.— Ստորագաս նախադատութեան մը պաշտօնը կ'որոշուի երբ ճշգրտի թէ իր Գլխաւորին ո՞ր անդամն է որ փոխարինած է ինք: Այս ճշգրտութիւնը համար՝ պէտք է նախ ճշգրտել Ստորագասը Գլխաւորին ո՞ր բառին կապուած է: Այսպէս. երբ բաներ՝ «Ան չի սիրեր աչի պարտէզը, որ աւազան չունի», «որ» յարաբերական գերանունը, (որ զբաւած է «պարտէզը» բառին տեղ), Բ. նախադատութիւնը կը կապէ «պարտէզ»ին. եւ քանի որ «պարտէզը» բառը անուն մըն է՝ ճանաչարար «որ աւազան չունի» նախադատութիւնն ալ անունի յրացուցիչ մըն է, այսինքն՝ անպահանջ, յատկացուցիչ կամ բացայայտիչ է: Գտնելու համար թէ ո՞րն է՝ յարմարող գերբայի մը կը վերածենք Ստորագաս նախադատութեան բայը, եւ Ստորագաս նախադատութեան մնացած բառերը կը միխառնենք Գլխաւորին հետ՝ կազմելով աւելի ընդարձակ նախադատութիւն մը: Այսպէս. «Ան չի սիրեր աչի պարտէզը, որ աւազան չունի» կ'ըլլայ՝ «Ան չի սիրեր աւազան չունեցող պարտէզը»: «Չունեցող» զերբայը անպահանջ է «պարտէզ» անունին (ինչպիսի՛ պարտէզ — աւազան չունեցող). որքան «որ աւազան չունի» Ստորագաս նախադատութիւնն ալ անպահանջ է իր Գլխաւորին:

384.— Ստորագաս նախադատութիւն մը երբ կապուած է իր Գլխաւորին մէջ զանուող անունի մը՝ կրնայ ըլլալ անպահանջ, յատկացուցիչ կամ բացայայտիչ. երբ կապուած է բային՝ կրնայ ըլլալ տէր-բայի, սեռի խնդիր, յարադրութեամբ խնդիր, բնութեան խնդիր. երբ կապուած է ա՛յլ տեսակի բառի մը՝ կրնայ ըլլալ խնդիր, ստորագելի, եւ այլն: Այսպէս.

«ԱՆՈՒՆԻ» ՄԸ ԿԱՊՈՒԱԾ ՍՏՈՐԱԳԱՍ ՆԱԽԱԳԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ.

- ԱՅՈՒՎԱՆ. Երեւի տուիճք «տուն» մը, որ հինգ յարկ ունի: Երեւի տուիճք հինգ յարկ ունեցող «տուն» մը:
- ՅԱՏԿԱՅՈՒՅԻԶ. Ասիկա զործն է աչի «անձին», որ այդ աթոռը չիներ է: Ասիկա այդ աթոռը չիող «անձին» զործն է:
- ԲԱՅԱՅԱՅՏԻԶ. Անոճ հետեւեցան «Գէորգին», որ իրենց պետն է: Անոճ հետեւեցան «Գէորգին»՝ իրենց պետին:

«ԲԱՅԻ» ՄԸ ԿԱՊՈՒԱԾ ՍՏՈՐԱԳԱՍ ՆԱԽԱԳԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ.

- ՏԵՐ-ԲԱՅԻ. Թող ջուր «խմէ» ո՞վ որ ծարացեր է: Թող ջուր «խմէ» ծարացողը:
- Միշտ ճիշդ «չէ» ինչ որ դուն կը խորհն: Միշտ ճիշդ «չէ» քու խորհածդ:
- ՍԵՌԻ-ԽՆԴԻՐ. Ուսուցիչը «ըսաւ» թէ դո՛ւ է ինձմէ: Ուսուցիչը «ըսաւ» ինձմէ՞ դո՛ւ ըլլաւ:
- ՅԱՐ. ԽՆԴԻՐ. Ես շատ «կը կարդամ», որ զարդանամ: Ես շատ «կը կարդամ» զարդանալու համար:
- ԲՆ. ԽՆԴԻՐ. Անո՛նց «գիւնեցէ՛ք», որոնք չեն մերժեր: Գիւնեցէ՛ք չմերժողներուն:

ԱՅԼ ԲԱՌԵՐՈՒ ԿԱՊՈՒԱԾ ՍՏՈՐԱԳԱՍ ՆԱԽԱԳԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ.

- ԽՆԴԻՐ. Ան «աւելի» զբամ ունի՝ քան ինչ որ կը կարծէի: Ան կարծածէս «աւելի» զբամ ունի:
- ՍՏՈՐԱԳԵԼԻ. Քու խորհածդ «այն» չէ՛ ինչ որ ես կը խորհիմ: Քու խորհածդ ի՞մ խորհածս չէ:

ՆԱԽՈՒԹՈՒԹԻՒՆ

Որպէսզի Գլխաւոր մը Սեռի խնդիր Ստորագաս մը ունենայ՝ իր բայը պէտք է ըլլայ ներգործական կամ Անգործական. որպէսզի Ստորագելի Ստորագաս մը ունենայ՝ իր բայը պէտք է ըլլայ էական:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

216.- Հետեւեալ նախադասութիւններուն շեղադիր բառերը վերածեցէ՛ք Ստորագաս նախադասութիւններու: Օրինակ. Ես չուզեցի իր մեկնելը = Ես չուզեցի որ ինք մեկնի:

Ես չուզեցի իր մեկնելը: Կը ճանչնա՞ս այդ կարմիր ինքնաշարժ ունեցող մարդը: Ո՛ր է հոս քնացող տղան: Ես շատ կը յարգեմ Պրն. Ժիրայրը՝ մեր տեսուչը: Յարգեցէ՛ք յարգելիները: Ես չեմ ապրիր ուտելու համար: Իր փափաքածը ձեր փափաքածը չէ: Հետաքրքրական չէր երէկ պատմածդ: Ոստիկանը իմացուց մեզի աւազակին ձերբակալուած ըլլալը: Չուզողները քող մեկնին ասկէ: Դրամը տուի Ալիսին՝ քրոջդ: Գիրքը պիտի գնէ զրամ գտնելու պարագային: Իր խաղալու ստենը ես կ'աշխատէի: Ա՛յս է շինածդ: Յուսացածիս չափ յաջող չէ այդ գործը: Մօրս եփածը միշտ համեղ կ'ըլլայ: Իր ըրածներէն չնեղացայ բնաւ: Իմ երթալու համար դիտողութիւն ըրին անոնք: Ան ուրախացաւ իմ տուածներովս: Պատասխանելէ առաջ քովս եկար: Երջողներուն ձայնը մինչեւ հոս կը հասնէր: Պատմածներէդ հասկցայ քաւ քաջ ըլլալդ: Թող խօսին քեզերը: Հայրս չ'ուտեր թթու նաբինջները: Ատոնք այստեղ բնակողներուն զիրքերն են: Անոր ատենապետ ընտրուելը անհաւանական է: Գուն ահնկալածէս նուազ նարպիկ ես եղեր: Իր հոս գալ ուղելը գրած էր ինձի: Գեռ չէ կարդացեր իրեն տուած գիրքերս: Քու չլալը շատ գարնանալի էր: Հայրս կանաչ ինքնաշարժ մը պիտի գնէ:

217.- Հետեւեալ զոյգ նախադասութիւններէն ստորագասները միախառնեցէ՛ք իրենց զլխաւորներուն եւ գտնո՞ք վերածեցէ՛ք մէկ նախադասութեան: Այսպէս. «Մենք Արփիկը նախընտրեցինք, որովհետեւ աշխատասէր է», կ'ըլլայ՝ «Մենք Արփիկը նախընտրեցինք աշխատասէր ըլլալուն համար»:

Անոր խօսուածքէն յայտնի էր՝ որ նշմարութիւնը չէր ըսեր: Շուշանիկը այնքան վայցաւ որ մարեցաւ: Մենք սիրեցինք ձայնը անոր՝ որ «Կառնկ»ը երգեց: Ես գիմք սիրեցի այնպէս՝ ինչպէս պիտի սիրէի եղբայր մը: Պարոն Արշակը, որ մեր դպրոցին տնտեսն է, սիրուած է բոլորէն: Այնքան միայն գիտեմք՝ որքան անհրաժեշտ է: Հասկցանք ըսածները միայն անո՛նց, որոնք դանդաղ խօսեցան: Տղաքը պտոյտի գացին հուն՝ ուր որոշած էին: Ան այնպիսի մէկն է որ ամէն բան կրնայ ընել: Պիտի ծախսենք այդ հողը եթէ առնող

գտնենք: Ո՛վ որ ծարաւ է՝ քող խմէ: Մտանք այն սենեակը, ուր մեզ առաջնորդեց հսկիչը: Ուսուցիչը կարգաց շարադրութիւնները անոնց, որոնք ներկայ էին: Միշտ միշտ չէ ինչ որ անոնք կ'ըսեն: Շուտով պարզուեցաւ թէ ի՛նք էր պատասխանատուն: Տո՛ւս տրուեցաւ անո՛նց, որոնք դրամ ունէին: Մեր դասարանին մարդիկները, որոնք մեր դպրոցին պատիւը բարձր պահողներն են, դարձեալ յարգեցին: Մըցանակ ստացան միայն անոնք, որոնք 80-էն վեր միջին ունէին: Շահանքն ունին շուն մը, որուն պաշը կտրուած է: Քու ուզածդ այն չէ ինչ որ ես կ'ուզեմ: Ուսուցիչը գոհ էր անոնցմէ, որոնք շատ կ'աշխատէին: Երբ քոջս տղան մեզի եկաւ՝ մարդ չկար տունը: Ես քեզ կը սիրեմ այնքան՝ որքան դուն՝ գիս: Ժողովին մէջ քննուեցաւ հարցը անոնց, որոնք դիմում ըրած էին: Պատմեցի ինչ որ գիտէի: Խօսէ այնչափ մը, որ չանճարացնես ուրիշները: Ատուած խելք տուեր է՝ որ գործածես: Արշաւախումբին անդամները գիւղ հասան երբ դեռ արեւը չէր ծագած: Բան չըսաւ՝ հակառակ որ ըսելիք ունէր: Ե՛ս ալ կու գամ երբ հրաւիրուիմ: Ընկերս ըսաւ. «Կեանքը գեղեցիկ է»: Բուն դատարարութիւն ա՛յն է՝ որ գիտակցորէն չարութիւն կ'ընէ: Գոհարիկն ալ պիտի գայ երբ գործերը աւարտէ:

Քոյրս չպատասխանեց որովհետեւ բարկացած էր: Են կը յարգեմ անոնք, որոնք նշմարութիւն են: Եթէ կ'ուզես յաջողիլ՝ պէտք է յարատեւես: Սխալ չէր ինչ որ ան կ'ըսէր: Այս արձանը ձեռակերտն է անոր, որ քովս կեցած էր քիչ առաջ: Ինչ որ դո՛ւն կրնաս ընել՝ ե՛ս ալ կրնամ: Հաշեցին անոնք, որոնք անօրի էին: Մեր դրացին ըսաւ թէ գիւղ պիտի մեկնի: Ես քիչ կ'ուտեմ որ չգիրնամ: Քու ունեցածդ այնքան է՝ որքան իմ ունեցածս: Ան նուազ խելացի է՝ քան ինչ որ կը խորհէի: Հարցուր անոր, որ կանուխ կու գայ:

218.- Որոշեցէ՛ք նախորդ երկու հրահանգներուն ստորագաս նախադասութիւններուն պաշտօնները:

ԴԱՍ 6

ԼՈՒԾՈՒՄ (ՏՐԱՄԱՐԱՆԱԿԱՆ)

385.- Տրամաբանական լուծումը կը կատարենք խօսք առ խօսք:

386.- Խօսք մը տրամաբանական լուծումի ենթարկել՝ կը նշանակէ կատարել հետեւեալ գործողութիւնները, շարքով:


Ա.- Ընդգծել դիւմաւք բայերը:

Բ.- Ձատել նախադասութիւնները փակագիծով, և թուագրել:


Գ.- Աւելցնել՝ եթէ կան, գեղջուած բառերը:

Դ.- Իւրաքանչիւր նախադասութիւն ներկայացնել փոքր գիծով մը. իւրաքանչիւր գիծի վերեւ գնել իր քիւր. ստորադաս նախադասութիւններուն ներքեւ գնել իրենց գլխաւորին քիւր: Այսպէս.

(Արան գնաց), ([ան] դրամ առաւ) (որ [ան] քերթ գնե շուկային):



Ե.- Իւրաքանչիւր նախադասութեան տակ գրել իր տեսակը. ստորադաս նախադասութիւններուն տակ նաեւ իրենց պաշտօնը:



Զ.- Ճշգրէլ իւրաքանչիւր նախադասութեան ենթական, ստորագիծին ու կազմը: (Երբ Գլխաւոր նախադասութեան մը տէր-բային իր ստորադաս նախադասութիւնն է, այդ ստորադաս նախադասութիւնը կը գնենք որպէս ենթակայ):

1.- Ենթ.- Արան
Ստ.- Գնաց
Կազմ.- Պարզ

2.- Ենթ.- (Ան)
Ստ.- Դրամ առաւ
Կազմ.- Չեղջեալ պարզ

3.- Ենթ.- (Ան)
Ստ.- Որ թերթ գնէ շուկայէն
Կազմ.- Չեղջեալ բարդ

ՏՐԱՄԱՐԱՆԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԻ ԵՆԹԱՐԿԵՆՔ ԱՅՍ ԽՕՍՔԸ.

Նոյն արեւը ծագեցաւ եւ իր փառագայրները տարածեց դաշտերուն վրայ, որոնք ծածկուած էին անտառներով եւ կը հասնէին մինչեւ հորիզոն՝ պարզելով գեղեցիկ տեսարան մը:

Ա.- Դիմաւոր բայերն են — ծագեցաւ, տարածեց, ծածկուած էին, կը հասնէին. («պարզելով»ը դերբայ է. չի հաշոււի): (*)

Բ.- Քանի որ չորս բայ կայ, ուրեմն այս խօսքին մէջ կայ չորս նախադասութիւն. դանձնք կը գտանք փակագիծով: Կ'ունենանք՝ 1.- (Նոյն արեւը ծագեցաւ) եւ 2.- (իւր փառագայրները տարածեց դաշտերուն վրայ), 3.- (որոնք ծածկուած էին անտառներով) եւ 4.- (կը հասնէին մինչեւ հորիզոն՝ պարզելով գեղեցիկ տեսարան մը):

1) Համադասական չափազանքները փակագիծէն դուրս կը ձգենք. ստորադասականները կը գնենք փակագիծէն ներս՝ ստորադաս նախադասութեան հետ:

2) Երբ համադասական չափազանք մը՝ ստորադասական չափազանք մը, յարաբերական կամ անորոշ գերանունի մը հետ գործածուած ըլլայ՝ համադասական չափազանքը չենք հաշուեր: Այսպէս. «եւ եթէ» կը նկատենք ստորադասական չափազանք, «բայց որոնք»ին յարաբերական գերանունը միայն նկատի կ'ունենք:

Գ.- Լուեղայն է «տարածեց» բային տէր-բային՝ ան: Չեղջուած է «կը հասնէին» բային առջեւ գտնուող «որոնք» յարաբերական գերանունը: Կ'աւելցնենք դանձնք: Կ'ունենանք՝

*) Ուշադիր ըլլալ մասն Յարագրեալ բայերուն, որոնք մէկէ տեղի բառ կազմուած կ'ըլլան՝ բայց կը նկատուին մէկ բայ: Այսպէս. Շինել տալ, կախում ունենալ, պայման դնել, իրաւունք տալ, եւայլն: (Տալ բային ընկերացող բառերը Անբերելոյք մըն է՝ կը ստացուի Անցողական բայ մը. երբ Անբերելոյք մը չէ՝ ասոյք մը):

1. (նոյն արեւը ծագեցաւ) եւ 2. ([ան] իւ նառագայթները
սարածեց դաւեսեռուն վրայ), 3. (որոնք ծածկուած էին անտառներով)
եւ, 4. ([որոնք] կը հասնէին մինչեւ հորիզոն՝ պարզելով գեղեցիկ
սեսարան մը):

| | | | | |
|-----|---|---|---|---|
| Գ.— | 1 | 2 | 3 | 4 |
| | | | 2 | 2 |

Ե.— «Թիւ 1» նախադասութիւնը համադրաւ անկախ է: (Յա-
րաբերական կամ անորոշ դերանունով, եւ կամ ստորադասական
չաղկապով չէ սկսած. եւ արդէն իր իմաստը կախում չունի՝ միւս
նախադասութիւններէն): «Թիւ 2»ը համադրաւ գլխաւոր է. (Հա-
մադաս է որովհետեւ նախորդ նախադասութեան կապուած է «եւ»
համադասական շաղկապով. գլխաւոր է՝ որովհետեւ «թիւ 3»ը իր
ստորադասն է): «Թիւ 3»ը ստորադրաւ է, (կը սկսի յարաբերական
դերանունով): «Թիւ 4»ն ալ ստորադրաւ է, (կը սկսի «որոնք» զեղչ-
եալ յարաբերական դերանունով. «եւ»ը չ'աղղեր): («Թիւ 3»ին
կապը՝ «որոնք»ը, դրուած է «դաշտերուն» բառին տեղ, որ կը
դնուի «թիւ 2»ին մէջ. ուրեմն «թիւ 3»ը ստորադասն է «թիւ 2»ին:
«Թիւ 4»ին «որոնք»ն ալ դրուած է «դաշտերուն» բառին տեղ. ու-
րեմն՝ «թիւ 4»ն ալ ստորադասն է «թիւ 2»ին. «թիւ 2»ը գլխաւոր
է): «Որոնք»ները իրենց պատկանած նախադասութիւնները կը կա-
պեն «դաշտերուն» անունին, հետեւաբար այդ նախադասութիւններն
ալ անունի՝ լրացուցիչ են, այսինքն՝ ածական, յատկացուցիչ կամ
բացայայտիչ են: Բայց ո՛ր մէկը...: Միաձուլէնք Գլխաւորն ու Ստո-
րադասները, Ստորադասներուն բայերը յարմարող դերբայներու
վերածելէ ետք: Կ'ունենանք. «Ան իր ճառագայթները տարածեց
անտառներով ծածկուած «դաշտերուն» վրայ»: Ինչպիսի՛ դաշտ —
«անտառներով ծածկուած» դաշտ: Երրորդ նախադասութիւնը ա-
ծականն է իր Գլխաւորին՝ Բ.—ին: Չորրորդն ալ ածական է. «Ան
իր ճառագայթները տարածեց՝ գեղեցիկ տեսարան մը պարզելով՝
մինչեւ հորիզոն հասնող «դաշտերուն» վրայ»: Կ'ունենանք.

| | | | |
|------|------|-------|------|
| 1 | 2 | 3 | 4 |
| Համ. | Համ. | 2 | 2 |
| Անկ. | Գլխ. | Յետ. | Յետ. |
| | | Ստոր. | Ստ. |
| | | Համ. | Համ. |
| | | Ած. | Ած. |

2.— Ճշգրտե՛ք ենթականերն ու ստորադիւիները եւ կազմը.

| | | | |
|-----------|-------------|-----------|------------------|
| 1.— Ենթ.— | Նոյն արեւը | 2.— Ենթ.— | (Ան) |
| Ստորագ.— | Ծագեցաւ. | Ստորագ.— | Իր... վրայ |
| Կազմ.— | Բարդ | Կազմ.— | Չեղչեալ բարդ |
| 3.— Ենթ.— | Որոնք | 4.— Ենթ.— | (Որոնք) |
| Ստորագ.— | Ծածկուած... | Ստորագ.— | Կը հասնէին...մը: |
| | անտառներով | | |
| Կազմ.— | Բարդ | Կազմ.— | Չեղչեալ բարդ |

ԼՈՒԾԵՆՔ «ՄԻՋԱՆԿԵԱԼ ՍՏՈՐԱԳԱՍ» ՈՒՆԵՅՈՂ ԽՕՍՔ ՄԸ.

Սուրէնը, «որ մեր տան բժիշկն էր», մեռեր է:

1 2 1
(Սուրէնը, [որ մեր տան բժիշկն էր], մեռեր է):

| | | |
|------|-----------|------|
| 1 | 2 | 1 |
| Անկ. | 1 | Անկ. |
| Գլխ. | Միջ. | Գլխ. |
| | Ստոր. | |
| | Բացայտիչ. | |

| | | | |
|-----------|---------|-----------|-------------------|
| 1.— Ենթ.— | Սուրէնը | 2.— Ենթ.— | Որ |
| Ստ.— | Մեռեր է | Ստ.— | Մեր տան բժիշկն էր |
| Կազմ.— | Պարզ | Կազմ.— | Բարդ |

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ.— 1) Միջանկեալ նախադասութիւնները կը զատենք ան-
կիւնտար փակողիծով:

2) Երբ նախադասութիւն մը բաժնուած է մասերու՝
մասերը զոյգ եւ կարճ դիժերով կը ներկայացնենք:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

219.— Գտէ՛ք պաշտօնները Հրահանգ 215-ի ստորադասներուն:

220. — *Տրամաբանական լուծումը բրէք Հեռեւեալներուն:*

Ինք լաւ գիտէր թէ դուն եւ եղբայրդ կարգացեր էիք այն գիրքերը, որոնք տրուեր էին ձեզի: Այս այն տունն է, որ շիներ է վարպետ Անտոնը, եւ ծախսեր է վաչէեց: Իմացուեցաւ թէ դուն եւ Արմէնը ուզած էք պարտէրներդ չվնարել Արմէնին, եւ ան դատ բացեր է քեզի դէմ, ինչպէս նաեւ՝ Արմէնին դէմ: Ամբողջովին՝ վերակառուցուեր էր ինչ որ քանդուեր էր պատերազմի ատեն եւ այդպէս մնացեր էր մինչեւ 1950: Ով որ խելք ունի՝ անտառ կ'երթայ եւ կը հաւաքէ այն սփանչելի ծաղիկներէն, որոնք ծածկեր են գետինը: Այն երէտան, որ կարսուած էր եւ մեռած կը կարծուէր, գտնուեր է, եւ այս մեծ ուրախութիւն պատճառներ է անոր ծնողքին: Շեշտեց կը հասկցուի թէ Պէյրութցի չես եւ նոր եկեր ես հաս: Գացէ՛ք միւս սենեակը, ուր մարդ չկայ, եւ խօսակցեցէ՛ք որքան որ կ'ուզէք: Ձեր ուսուցիչը ուզեր է առնել տետրակը անոր, որուն գիրը լաւագոյնն է դասարանին, եւ զայն ցոյց տալ միւսներուն: Ան դիմեց իր մօրը, որ իր միակ պաշտպանն է եւ զինք հասկցող միակ անձը: Աշխատասէր են, ուրեմն հաւանական է որ յաջողին: Որովհետեւ ես քննադատ կը սիրեմ, իսկ ինք՝ պարտիր, յանախ վէն կ'ունենանք: Ես որքան ուզեցի օգնել իրեն, որ դպրոց երթայ, սակայն ինք չուզեց որ օգնեմ իրեն, որովհետեւ իր եղբայրը, որ հեռատես մէկը չէ, զինք համագեր է ըսելով թէ նախընտրելի է որ առեւտրականի մը քով գործի մտնէ եւ դրամ շահի, քան թէ ուսումնական ըլլայ եւ ազատ մնայ: Օգնենք մեր ընկերներուն, որոնք մեր եղբայրներն են: Ես, որ եղբայրդ եմ, ինք, որ հայրդ է, եւ Ալիսը, որ քու մեծ քոյրդ է, կը խնդրենք քեզմէ որ աւելի ուշադիր ըլլաս դասերուդ: Ինք եւ ես այն չենք ինչ որ էինք անցեալին: Ինք չի մոռնար թէ իրեն շատ օգնած եմ անցեալին՝ երբ նոյնիսկ ե՛ս պէտք ունէի օգնողի, եւ ամէն Կաղանդի ազուրը նուէր մը կը դրկէ ինծի: Թէեւ ինք չ'ուզեր որ քեզ քաջալերեմ, բայց եւ այնպէս պիտի ջանամ որ դուն յաջողիս: Գնաց, լացաւ, եկաւ: Այսպէս է, եւ պիտի մնա՛յ ինչպէս որ է, ու ես վրստահ եմ թէ ի՛նք քեզ պիտի փոխէ եւ ո՛չ թէ դուն՝ զինք: Անոր եղբայրդ այնպիսի մէկն է, որ շուտով կը յաջողի: Գրիչը յանձնեցի այն անձին, որ անոր տէրն էր: Գրեցէ՛ք ինչ որ կրնաք: Մեր ունեցածն ալ այնքան է՝ որքան որ է ձերը: Այս այսպէս է՝ ուզես թէ չուզես: Հասէ՛ք անո՛նց, որոնք յառաջադէմ են: «Կ'ուզեմ որ հո՛ն տանին զիս», կը հառաչէի: Եթէ այդ մարդը, որ ձեր տունն էր, չի փափաքիր որ իրեն բացատրեմ խնդիրը, ես ոչինչ կրնամ ընել: Մենք

կը պարծենանք այն հայերով, որոնք քաջաբար անցեր են մեր պատմութեան փորձանուտ կամուրջէն, առանց ընկրկելու, կուրծք տալով դժուարութիւններուն: Ան զիս կանչեց երբ դասը դեռ չէր վերջացած եւ ուսուցիչը կը դասախօսէր տակաւին: Գրեցի ճիշդ այնպէս՝ ինչպէս ինք պահանջած էր, բայց մայրս գոհ չմնաց ու խնդրեց որ վերստին գրեմ: Այս դարձեալ ձայնն է անոնց, որ երէկ կ'երգէին ու մեզ անհանգիստ կ'ընէին: Պիտի դրկե՞ս ինծի այն ճկարները, որոնք խոստացած էին: Այս հարցը, ինչպէս որ դուն ալ կը խորհիս՝ բաւական բարդ է, եւ կրնայ աւելի՛ բարդանալ: Հասկցա՞ր ըսածս թէ՛ ոչ: Ազօրքը, եթէ անկեղծ է, հոգին կը զօրացնէ եւ զայն կը դարձնէ պատրաստ դիմագրաւելու այնպիսի դժուարութիւններ, որոնք առաջ զայն պիտի սարսափեցնէին: Հետեւեցան ժիրայրին, որ իրենց պետն է, ու սինեմա գացին՝ փոխանակ գրադարան երթալու: Յանախ սխալ է ինչ որ այդ մարդը կ'ըսէ կեանքի մասին: Աւելի շահեցանք քան ինչ որ կը յուսայինք: Քու ուզածդ այն չէ՛ ինչ որ ես կ'ուզեմ: Հետեւեցէ՛ք անո՛նց, որոնք ազնիւ են ու քաջ, եւ չեն վախնար պատասխանատուութիւն ստանձնելէ:

Քարեկամութիւնը անխորտակելի ուժ է, եւ եթէ կ'ուզես անխորտակելի ըլլալ՝ իսկական քարեկամներ շահէ: «Ներքանիկ ըլլալու բազմաթիւ կերպեր չկա՛ն», ըսաւ մայրս, «միայն մէ՛կ կերպ կայ՝ որ ուրիշները երջանկացնելն է, ուրիշներու երջանկութեամբ երջանկանալն է»: Փորձէ՛, եթէ կրնաս, այդ ձեւն ալ, եւ ինծի տեղեկացուր փորձիդ արդիւնքը, եթէ անպատեհութիւն մը չտեսնեն: Այս գիրքերը, որոնք հագուագիւտ հեղինակութիւններ են, պիտի տամ անոնց, որոնք, ըստ ինծի՝ կարողութիւնը ունին զանոնք հասկնալու եւ կրնան գնահատել անոնց արժէքը:

221. — *Լուծեցէ՛ք «Մեր Կատուն (էջ 4), «Մեր Միութիւնը» (էջ 9), Հրահանգ 39-ը, 70-ը, 77-ը, «Փանջունին» (էջ 70), «Պիպին» (էջ 77), Հրահանգ 118-ը, 158-ը, 161-ը, 164-ը:*

ԴԱՍ 7

ԿԷՏԱԴՐՈՒԹԵԱՆ ՆՇԱՆՆԵՐ

387.- *ՍՏՈՐԱԿԷՏԸ* (,) կը գնենք *գլխաւորաբար՝*

Ա.- *Համապաշտօն բառերու միջեւ: Այսպէս. «Քեզ, զինք, Արմէնը եւ Սոնան միայն հրաւիրած էի»:*

Բ.- *Նոյն տէր-բային ունեցող Համազասն հախազասութիւններու միջեւ. «Բժիշկը եկաւ», «Քննեց մեզ», «կարգ մը դեղեր յանձնարարեց» ու «մեկնեցաւ»:*

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Ստորակէտ չենք դնել Համապաշտօն բառերու կամ նոյն տէր-բային ունեցող համադաս նախադասութիւններու միջեւ, երբ անոնք միացած են «ու», «եւ» կամ այլ շաղկապներով: Այսպէս. «Աստղիկն ու Սոնան գացին» եւ «ա՛լ ետ չեկան»:

«Ու», «եւ» շաղկապներէն առաջ ստորակէտ կը դնենք 1) երբ ուղեմէ գոյց տալ քէ բառի մը սրուած լրացուցիչ մը միայն իրեն կը պատկանի, եւ չի՛ պատկանիր յաջորդ համապաշտօն բառին ալ: Այսպէս. կլոր «սեղան» մը, եւ «աթոռ» մը ունիմ. (եթէ ստորակէտ չդրուի՝ կլոր ածականը կրնայ պատկանիլ նաեւ «աթոռ»ին). 2) երբ իրարու յաջորդեն շաղկապով միացած այնպիսի նախադասութիւններ, որոնք արդէն կը պարունակեն նոյն շաղկապները, եւ կամ երկար են: Այսպէս. «Տղաքն ու աղջիկները հաւաքեցին իրենց գիրքերն ու տետրակները», Ո՛ր «գրին գանոնք այս պաշտօնակիւն մէջ»: 3) երբ «և» եւ «ու» շաղկապները իրարու կապեն տարբեր տէր-բայիներ ունեցող համադաս նախադասութիւններ: Այսպէս. «Արփիւնէն ա՛լ յուսահատած էր», և «ասիկա նորութիւն չէր քոյրը համար»:

Գ.- *Իրարմէ գատելու համար երկար նախադասութեան մը մասերը: Այսպէս. «Առանձին, ծուռին սակ նստած, ձեռքը գիրք մը, ժամերէ ի վեր խորատուգուած էր ընթերցումի մէջ, մոռցած ժամ ու շրջապատ»:*

Դ.- *Գլխաւոր եւ ստորագաս նախադասութիւններու միջեւ՝ էթէ ստորագասը նախագաս է. եթէ աշխատիս, կը յաջողիս:*

Ե.- *Միջանկեալ նախադասութիւններու եւ բառերու սկիզբն ու վերջը: Այսպէս. «Դրամը, որ զրկած էիր, ստացանք». «Այս յաջողութիւնդ, տղա՛ս, զիս ուրախացուց»:*

Զ.- *Տարբեր տէր-բայի ունեցող Համազաս Անկախ կարճ նախադասութիւններու միջեւ: Այսպէս. «Ինք չխօսեցաւ, և՛ս ալ»:*

Է.- *Համազաս նախադասութիւններու միջեւ երբ կապուած են սակայն, բայց. իսկ շաղկապներով: Այսպէս. «Քոյրս այս ուղեց», իսկ «մայրս՝ այդ եւ այն»:*

Ը.- *Չտկերատուր ստորագաս նախադասութեանէ մը ետք՝ երբ Գլխաւորը յետագաս է. «Մարեցանք խնդալէ», բաւ ա՛ն:*

Թ.- *Չայնարկութիւններէն, կոչականներէն, բութով գատուած բացայայտութիւններէն ետք: Այսպէս. «Օ՛ն, վաղեցէք»: «Ընկերներ՛ր, հաւատացէ՛ք անոր խօսքին»: «Քոյրդ՝ Գոհարը, անմասն աղջիկ է»:*

Ժ.- *Յարարերական գերանունով սկսող նախադասութեանէ մը առաջ: Այսպէս. Տեսայ Սիլվան, որ կը խնդար:*

388.- *ԲՈՒԹ* (') կը գնենք *գլխաւորաբար՝*

Ա.- *Երբ զեղչեալ բառեր կան: Այսպէս. ես իմս տուի իրեն, ինք՝ իրը. (տուաւ ինձի):*

Բ.- *Իրարմէ գատելու բառեր, որոնք իրարու չեն վերաբերիր թէեւ գրուած են իրարու քով: Այսպէս. Իր՝ քեզի տուած քուղքը (=Քեզի տուած իր քուղքը):*

Գ.- *Բացայայտեալին եւ Բացայայտիչին միջեւ: Այսպէս. «Ռաֆֆիկը՝ Ալեքիս եղբայրը, շատ խելացի տղայ մըն է»:*

Դ.- *Շարք, բացատրութիւն ցոյց տուող բառերէն ետք: Այսպէս. «Երկու բան զիտեմ. առաջին՝ կեանքը զեղեցիկ է, երկրորդ՝ կ'ուղեմ ապրիլ»:*

Ե.- *Միջանկեալ նախադասութիւններու սկիզբը (կամ վերջն ալ): Այսպէս. «Դրամը՝ որ զրկած էիր, ստացանք»:*

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

222.- Ստորակէտ գրէ՛ք ուր սր պէտք է :

Մինչ ինք կը հանգչէր ես կը գրէի դասերս : Փարձեցի գինք համոզել բայց չյաջողեցայ : Քոյրս չգնաց ես ալ չզացի : Հագուստը որ հագած էիր երէկ գիշեր ու՞ր էր չէ՞ : Ակամայ առանց անդրադառնալու քրածիս գլուխս ծռած աչքերս արցունքով լի մօտեցայ իրեն : «Զաւէնը քիչ առաջ հոս էր» քսաւ ինձի : Ստացանք նամակը գոր դուն դրկած էիր : «Խեղճ մարդեր դուք-ձեզ ի՛նչ կը կարծէք» քսաւ փիլիսոփան : Պատրաստ քայլ առաջ օն... : Շահէն՝ քու շատ սիրելի ընկերդ դարձեալ ձախողներ է : Հիւանդը գիշերն իսկ մեռաւ եւ մարդ անակնկալի չեկաւ : Լաքակազմ գիրք մը եւ գրիչ մը գնեցի : Սեդայէն Աշխէնէն քեզմէ եւ Արսիկէն չէինք ակնկալեր նման բան մը : Ո՛չ եկաւ ո՛չ տեսաւ ո՛չ ալ հետաքրքրուեցաւ : Որտղները մեկնեցան առտուն եւ դարձան գիշերը : Մեծերն ու պատիկները հիւանդներն ու առողջները առին իրենց վերմակներն ու բարձերը մահակալներուն վրայէն ու խոււրով իջան պարտէզ :

223.- Բութ եւ ստորակէտ գրէ՛ք ուր սր պէտք է :

Տիգրանին հայրենասիրութեան մասին գրած շարադրութիւնը յաջող էր : Շողիկը ներմակ հագուած էր Սիլվան դեղին : Տիկին Քնարը Արտաշէսին քոյրը շատ ուսեալ է : Պատասխանը որ տուիր խելացի չէր : Գիրքը առնելով սեղանին վրայէն տղան դուրս վագեց : Ան պատասխանեց միշտ աչքերը պատուհանէն դուրս բակի ծառին ուղղած : Միտքդ պահէ հետեւեալները :— մէկ աշխարհը միայն քուկդ չէ երկու աշխարհը միայն ուրիշներունն ալ չէ :

389.- ՄԻՋԱԿԷՏ (.) կը գնենք գլխաւորաբար՝

Ա.- Չակերտուած ստորագաս խօսքէ մը առաջ՝ երբ յետագաս է : Այսպէս . Նկարիչը քսաւ . «Մի շարժիր սր կարենամ նկարել» :

Բ.- Ստորագաս (կարճ) սեռի խնդիր նախագասութենէ մը առաջ՝ երբ նոյնիսկ չակերտով չէ սկսած : Այսպէս . Ծերուկը պոռոց . Դո՛ւրս ելիր :

Գ.- Համազաս անկախ նախագասութիւններու միջեւ՝ երբ անոնցմէ գէթ ոմանք երկար են եւ կը պարունակեն ստորակէտեր :

Այսպէս . «Օղնեցի իրեն կարողութեանս սահմանին մէջ, առանց հաշիւի, առանց կանց առնելու որեւէ զոհողութեան առջեւ» . «բայց ինք շնորհակալութիւն իսկ չյայտնեց» :

Դ.- Բայտարական նախագասութիւններու սկիզբը : Այսպէս . Ահա միակ երազս . ուսանի՛լ :

Ե.- Համազաս անկախ նախագասութիւններու միջեւ, ի մասնաւորի երբ տարբեր են անոնց տէր-բայիները : Այսպէս . «Ես ներեցի իրեն . ինք չներեց քեզի :

Զ.- Կրճատուած բառերու քով : Այսպէս . Մեծ . Տիար (= Մեծախարհ), Ս . Մեքսիկո, Ժ . դասարան :

390.- ՎԵՐՋԱԿԷՏ (.) կը գնենք գլխաւորաբար՝ երբ խօսք մը վերջանայ :

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

224.- Միջակէտ, բութ, ստորակէտ եւ վերջակէտ գրէ՛ք ուր սր պէտք է :

Մենք ժողովի գացինք գիշերը եղբայրս չուգեց գալ : Պրն Սիւնը մեր ուսուցիչը նոր գրիչ մը գներ է ես ալ պիտի գնեմ : Օդը գով էր երէկ գիշեր հոս մի՛շտ գով կ'ըլլան գիշերները : Հոգ Տէր Դ քահանայ Աւագանը որ Ս Սահակ եկեղեցիին հովիւն է պատ Թաղական հորհուրդին նամակ մը գրեք է եւ առաջարկեր է որ Պրն Աւետիսին մեր ժամկոչին ամսականը աւելցնեն անոնք մերժեք են ասոր վրայ ժամկոչը գործը ձգեք է առանց նոր գործ մը գտած ըլլալու : Ան ըսեք է ա՛յ կը բարէ : Ուզածս մեծ բան մը չէ հինգ ոսկի երկուքը քեզմէ երեքը վարդգէսէն դո՛ւն ըսէ շա՞տ է : Ծովը որ խաղաղ կ'ըլլայ սովորաբար ալեկոծ է : Ակնոցս մոռցեք եմ տունը սեղանիս վրայ կաղամարին քով վագէ՛ Շողիկ եւ ինձի բեր գայն հոս կը սպասեմ քեզի :

391.- ԿԱՆՄԱՆ ԿԷՏ (...) կը գնենք գլխաւորաբար՝

Ա.- Երբ ընդհատենք խօսքը : Այսպէս . Պիտի գայի, բայց...

Բ.- Երբ չուզենք ամբողջացնել մեր խօսքը՝ մեր ըսել ուզածը հասկցնելով հանդերձ . Եթէ անգամ մըն ալ կրկնե՛ս... :

Գ.- Անակնկալ բառէ մը կամ գաղափարէ մը առաջ : Այսպէս . Որոշեց խստիւ յանդիմանել գայն, եւ երբ հանդիպեցաւ անոր... ժպտեցաւ միայն :

Դ.— Երկար դադար մը ցոյց տալու համար: Այսպէս. «Այն ատեն... ես... քսա՛ճ էի... իրեն», շնչաց մահամերձ ծերունին:

Ե.— Խօսքի մը վերջաւորութեան՝ տարակույս յայտնելու համար. «Անշուշտ եքէ յաջողիս դասերուդ մէջ...»

Զ.— Երբ զազաւար մը կէս ձգենք եւ անցնինք ուրիշի մը: Այսպէս. Ժամը 4-էն ի վեր կը սպասեմ քեզի, ... բայց ինչո՛ւ հետդ չէ եղբայրդ:

Է.— Հեղինական խօսքի մը վերջը. Ինք խելացի՛ է եղեր...:

Ը.— Տատամսում նշանակելու համար. «Երբա՞մ քէ ոչ...»:

392.— ԲԱԶՄԱԿԷՏ (...) կը գնենք երբ ցոյց տալ ուղենք թէ մէջբերուած խօսք մը կամ հատուած մը ամբողջական չէ եւ առնուած է աւելի բնորոշակ գրութենէ մը. «... Աղէկ օրեր ու գէշ օրեր ունէր այդ տոպրակը. տիրոջը պէս ֆակատագիր մը յարափոփոխ»: (Գ. Զոհրապ, «Ճիւղին Պարտքը»):

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.— Այս կանոնները բացարձակ չեն: Վերոյիշեալ եւ այլ նշաններ կրնան ի հարկին գործածուիլ իրարու տեղ: Բայց կանոնները լաւապէս սորվելէ եւ գտնուի հիշող գործածելու ի վիճակի բլլալէ ետք միայն կարելի է շեղումներ կատարել ընդհանուր կանոններէն:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

225.— Դրէ՛ք պէտք եղող կէտերը՝ լուծելէ հաք Հրահանդ 35-ը, 36-ը, 37-ը, 38-ը եւ 39-ը:

Աղուոր նուէրի մը կը սպասէի եւ տուփին մէջէն ելաւ կաւիճի կտոր մը երեւակայէ վիճակս ջղայնութեմէս պիտի լայի: Եքէ դարձեալ գործես նոյն սխալը: Ինք բանէ լուր չունի եղեր խեղճը: Գլուխս վիզս կռնակս քեւերս սկսած էին ցաւիլ: Պիտի չերթայի բայց: Բնականաբար եքէ այդքան դրամ ունենաւ մէկ շաբաթէն: Զիս տուն տարէք տուն տարէք հծծեց վիրաւորը աչքերը գոց հազու լսելի ձայնով մը եւ մարեցաւ: Չկրցանք որոշել ընդունի՞՞նք հրաւերը քէ ոչ: Չեմ գիտեր ա՞յս առնեմ ա՞յդ քէ միւսը: Ան լսաւ այս դուն չլսեցիր: Աշակերտները դպրոց եկան իրենց դասերը լաւ պատրաստած ուրախ ու կայտառ դէմքերով: Ճանչցայ քէ՛ վահանը քէ՛ Սուրէնը եւ քէ՛ Անահիտը որոնք չէի տեսած տարիներով անոնք ալ զիս ֆանչցան: Իր մօրը այդ որոշումը լսելով ան ուրախութեմէն վեր ցատկեց եւ սկսաւ պարել: Բոլորը ապշեցան հողը ոսկի դարձեր էր:

ԴԱՍ 8

Ա Յ Լ Ն Շ Ա Ն Ն Ե Ր

(ԱՌՈԳԱՆԱԿԱՆ ԵՒ ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ)

393.— Հայերէն յօդոյն բառերը, իրնէ, անդիր ՇԵՇՏ մը լուսնեան սովորաբար իրենց վերջին վանկին վրայ: Այսպէս. Կը սօսին (=կը խօսին), դանակ (=դանակ), Այս անդիր շէշտը կը լուսնի բնական շէշտ: (Բացառիկ են. Հարկաւ, բնակա՛նաբար, ֆանի՛երորդ, իհա՛րկէ, հւայլն):

394.— Երբ ուղենք բառ մը շուրջի բառերէն աւելի՛ շէշտել՝ վերջին վանկին վրայ կը գնենք շէշտ (՛) մը: Այսպէս. Ես ջո՛ւր խմեցի: Այս գրուող շէշտը կը կոչուի յատուկ շէշտ:

395.— Յատուկ շէշտ կ'ունենան միշտ 1) Բայերու Հրամայա՛կանները. Գնա՛, երգէ՛, մտէ՛ք. 2) Հետեւեալ զոյգ զործածուող շաղկապները. Կա՛մ... կա՛մ, ե՛ւ... ե՛ւ, քէ՛... քէ՛, ո՛չ... ո՛չ, եւ ա՛լ (= այլուս), ո՛ր, ո՛ւր, ո՛վ, ի՛նչ, որո՛նք, հւայլն, 3) Կոչականները, ձայնարկութիւններէն սմանք (օ՛ն...), հւայլն:

396.— Յատուկ շէշտը կը գրուի վերջին ձայնաւորին վրայ՝ բացի երբ բառը կոչական է: Ձայնաւորներէն «ը» շէշտ չ'առնէր: Այսպէս. Հա՛ւր (եւ ոչ թէ՛ հաւր՛), բայց՝ «Տ՛ղաս, գի՛ս մտիկ ըրէ՛» (Թէ՛եւ կրնանք «տղա՛ս» ալ ըսել): (Շէշտի մասին տես էջ 73):

397.— Կան կարգ մը բառեր, որոնք իրնէ հարցական են իրենց իմաստով. անոնց վրայ, սովորաբար շէշտ կը գնենք եւ ոչ թէ՛ պարոյկ: Այսպէս. Քանի՛, ի՛նչ, ո՛վ, որո՛նք, ո՛ր, ե՛րբ, հւայլն: (Իմաստով իրարմէ տարբեր են հետեւեալները. «Ո՛վ ըսաւ» եւ «Ո՞վ ըսաւ», «Քանի՛ ոսկի տուաւ» եւ «Քանի՞ ոսկի տուաւ»: Երբ պարոյկ կայ՝ խօսքը յաճախ կրկնումն է եղած հարցումի մը, հարցումի մը տրուած հարցական պատասխան մըն է: Այսպէս. «Ինչո՛ւ գացիր»: — «Ինչո՞ւ գացի...»: — «Այո՛, ինչո՛ւ գացիր»):

398.— ՊԱՐՈՅԿԸ հարցումի նշանն է, որ կը գրուի հարցական բառին վերջին ձայնաւորին վրայ. Հասա՞ւ, ի՞նք...:

399.- Երբեմն նոյն ձայնաւորին վրայ երկու պարոյկ կը ղնենք՝ երբ մեր հարցումը՝ հարցումէ աւելի տարակոյսի արտայայտութիւն է: Այսպէս. Պիտի վնարե՞ս այդ գումարը:

400.- Փակազրծի մէջ պարոյկ կը ղնենք բառէ մը կամ նախադասութենէ մը ետք՝ երբ ուղենք անոնց իմաստին, ըստ մեզի անհիշող ըլլալը մատնանշել: Այսպէս. Ճշմարտախօս է եղեր ինք(°)...

401.- ԵՐԿԱՐԸ կը զրուի այն բառերուն վրայ, որոնք կ'ուզենք երկար հնչել՝ խօսքին իմաստին համեմատ: Այսպէս. Պայքարի՛ր, յաղթե՛ր... ահա կեա՛նք:

Ա.- Երկար կ'ունենան յուզում, զարմանք, վախ յայտնող բառերը: Այսպէս. Ա՛խ, աւա՛ղ, է՛հ...

Բ.- Կանչելու ծառայող կոչականները: Այսպէս. «Մայրե՛կ, գուռը կը բանա՞ս»:

Գ.- Երկարը կրնայ հեղնական իմաստ ալ տալ: Այսպէս. Ինք բանէ՛ լուր չունի արդէն...

402.- ՉԱԿԵՐՏԻ մէջ կ'առնենք 1) Ուղղակի խօսքերը: Այսպէս. «Ե՛ս պիտի գամ», ըստ ան: 2) Երկերու անունները: Այսպէս. Սիամանթոյի «Գիւտին Փառքը»: 3) Օտար բառերը, որոնք չեն հայացուած: Այսպէս. «Ճանթասթիք» տեսարան մը պարզուեցաւ. (Այս պարագային բառը կրնանք ընդգծել կամ շեղազրել՝ փոխանակ չակերտելու): 4) Հեզմանք արտայայտող բառերը, մակդերները: Այսպէս. Ա՛յս անգամ ալ «չսխալեցաւ»: «Չաստուածուհի» Անահիտն էր անցնողը: 5) Այն բառերը, որոնց վրայ ուշադրութիւն հրաւիրել կ'ուզենք: Այսպէս. Ես «հիմ» դրած էի եւ ոչ թէ «հին»: «Աչք» բառը «չ»ով է:

403.- ՄԵԾ ԳԾԻԿ (—) կը ղնենք գլխաւորաբար 1) Խօսակցութեան մէջ, հարց ու պատասխանի առեւ: — Ո՛ւր էիք երէկ: — Տունն էի, 2) Միջանկեալ խօսքի մը սկիզբն ու վերջը: Այսպէս. Բոլոր արուեստներն ալ — եթէ անշուշտ ի վիճակի ըլլանք անոնց խորքին թափանցելու — կրնան նոր հորիզոններ բանալ մեր հոգիին առջեւ. 3) Թուումներէ առաջ կամ վերջ: Այսպէս. Ահա քէ ինչի՛ պէտք ունինք — մելանի, քուղքի, գիրքի: Կամ՝ Մելան, քուղք, գիրք — ասո՛նք են մեր կարիքները: 4) Թիւեր կցելու. 50—100, Ե.—ժԱ. գրուի:

404.- ԿԵՏ ԳԻԾ (—) կը ղնենք 1) Թիւերէ ետք՝ երբ շարք, թուում ցոյց կու տան: Այսպէս. 1.—, 9.—, Գ.—, ԺԲ.—: 2) Թատրեր-գութիւններու մէջ՝ դերակատարներու անուններուն քով: Այսպէս.

ՍՈՒՐԷՆ.— Քիչ ետք հո՛ս կ'ըլլայ հայրս: Կը սպասե՞ս:

ԵԳՈՒԱՐԳ.— (Մտածելով) Աւելի լաւ կ'ըլլայ որ քի՛չ ետք դամ:

ՍՈՒՐԷՆ.— Դո՛ւն դիտես: (Կ'ընկերանայ անոր մինչեւ դուռ):

405.- ԳԾԻԿ (—) կը ղնենք գլխաւորաբար 1) Կցելու բառեր. Այսպէս. Քիչ-քիչ, փոխ-վարչապետ, 2) Գիրեր կցելու թուանշանի մը. 10-էն, 1999-էն ետք. 3) Տարբեր տեսակի դիրքեր բառին կցելու. Հայաստան-ի, foot-ball-ը:

406.- ՓԱԿԱԳԻԾԸ () կը գործածենք զատելու բառեր կամ խօսքեր, որոնք իբր ծանօթութիւն աւելցուած են: Այսպէս. «Իրիկունը» բանաստեղծութիւնը (Տես էջ 116) համակ երաժշտութիւն է:

407.- ԱՍՏՂԱՆԻՇԸ (*) կը ղնենք բառի մը քով, որուն հետ կապ ունեցող ծանօթագրութիւն մը կայ դրուած: Կշին տակը, կամ գիրքին մէջ տեղ մը, սովորաբար վերջաւորութեան (Տես էջ 123):

408.- ԵՌԱՍՏՂ (***) կը գործածենք զատելու համար զրու-թեան մը այն հատուածը, ուր նոր դրուող մը, մտածումի նոր շղթայ մը կը սկսի:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

226.- Յատուկ շեշտ դրէ՛ք հետեւեալներուն վրայ: Վագեցէֆ. կաղամար. կը խնդայ. խնդա. հարկաւ. անշուշտ. գուցէ. կամ ես. կամ դուն. եւ դուն, եւ ան. այո. ոչ. գուցէ. Աղջիկս, մի ահապարեք: Աղջիկս. ալ. ինչ. որսնիք. օն. քալէ. մարդերը. փոխ-վարիչ. բնակամարտ, հեւիհեւ. շառաւ, չ'ուզեր:

227.- Լուծեցէ՛ք Հրահանգ 41-ը եւ 42-ը: Չակերտ դրէ՛ք հետեւեալ խօսքերուն մէջ՝ ուր որ պէտք է: Դրէ՛ք զծիկներն ու գեծերն ալ:

Չ'երգիք բառը սպարաց կ'ուզէ: Ափը ք ով չէ: Ինք նորէ՛ն գիտցեր է դասը... Եւ ուսուցիչը նորէ՛ն կողմնակցութիւն ըրեր է: 1954 էն ի վեր foot-ball ի սիրահար եմ ես. ըստ Արան: Չորս հիւնգ ոսկի միայն ունի: Ե ժե. դարերը կը կոչուին Միջին Դար:

Զ. ՄԱՍ

Ո Ի Ղ Ղ Ա Գ Բ Ո Ի Թ Ի Ի Ն

(ԿԱՆՈՆՆԵՐ ԵՒ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ)

« Ա » Գ Ի Բ Ը

412.- Հայերէնի բառերը կը վերջանան «այ»ով (եւ ո՛չ թէ «ա»ով): Այսպէս. Ծառայ, կը զոգայ: Բացառիկ են.

Ա.- Հեռեւեալ բառերը.- հիմա, ահա, հապա, ապա, ասիկա, սա, ատիկա, անիկա, մամա, պապա, եւայլն:

Բ.- Յատուկ անունները: Այսպէս. Արա, էյեռա, Ասիա:

Գ.- Գ. լծորդուքեան բայերուն հրամայականի եզակին: Այսպէս. կարգալ — կարդա՛, էտալ — լուա՛:

Դ.- «Ա» ձայնով վերջացող օտար բառերը: Այսպէս. Նորա, ստոա, ադա, եւայլն:

1) Անձայն «յ»ով վերջացող բառերուն «յ»ն կը ջնջենք բաղաձայն մը աւելցնելէ առաջ: Այսպէս. Վկայ — վկան:

2) «Ա»ով վերջացող բառերուն վրայ «յ» մը կ'աւելցնենք ձայնաւոր մը աւելցնելէ առաջ: Այսպէս. Սոնա — Սոնային:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

228.- Ուղղագրութիւնը սորվեցէ՛ք հեռեւեալ բառերուն:

Ապագայ, հապա, Խոպիւս, հոյա. Սոնա, գնա՛, Եղիս, մանանայ, հիմա, կու գայ, ասիկա, մամա, քահանայ, խաղա՛, մոտա, կը խաղայ, Ովկիանիա, ապա, ատիկա, Արաբիա, Սահարա, պաշտօնեայ, պարագայ, ներկայ, Լեւա, պողոտայ, վրայ, պապա, տամա, ահա, անիկա, ջանա՛, ընծայ, արքայ, կրիայ, ադա, մեքենայ, փաշա, Ամերիկա, Սառա, անխնայ, եռամեսայ, չկայ, բացակայ, կը դողայ, կ'երթայ, շղթայ:

229.- Բացատրութիւն տուէք նախորդ հրահանգին բառերուն ուղղագրութեան մասին:

Օրինակ.- Ապագայ — «յ» ունի. «ա»ով չեն վերջանար բառերը:

Հապա — «յ» չունի. բացատրութիւն է.

230.- Զատուած գիրերը միացուցէ՛ք բառերուն՝ ընելով պէտք եղած փոփոխութիւնը եւ տարով բացատրութիւն:

Սոնա-ին, ադա-ներ, օսլայ-ով, տղայ-ներ, շուկայ-էն, Արա-էն, Սառա-ով, ընծայ-դ, փաշա-ին, Սիլվա-ն, մոտա-ի, փեսայ-ները, պապա-ս, արքայ-էն, Սեդա-ին, ստոա-ով, վկայ-ս, հինա-ի, Անգլիա-էն, վրայ-դ, Աննա-ին, սատանայ-ով, նուպայ-ն, լուբիա-ն:

Վ, Ի, ՈՒ

410.- «Վը» ձայնը զրեւու համար երեք գիր ունինք.- «վ», «ւ», «ու»:

Ա.- «Ու»ն «վը» կը հնչուի երբ իրմէ առաջ՝ բաղաձայն, եւ իրմէ հոք ձայնաւոր գիր բլլայ: Այսպէս. նուէր = (նվէր):

Բ.- «Վ» կը զրուի բառերուն սկիզբը. «ւ» կը զրուի բառերուն մէջն ու վերջը: Այսպէս. Վարունդ, աւաղ, կաւ:

Բառերուն մէջը եւ վերջը «ւ»ի տեղ «վ» կը զրուի՝

1) «Ո» գիրէն հոք: Այսպէս. Որովայն, ապահով:

2) Երբ բար ամանցեալ կամ բարդ է եւ բառին երկրորդ մասը «վ» գիրով կը սկսի: Այսպէս. Անվախ = ան-վախ, նաւավար = նաւ-ա-վար:

Գ.- Հայերէնի մէջ «ու»ով սկսող բառ չկայ:

Դ.- ԱՄՓՈՓԵԼՈՎ.- «Վը» ձայնը բաղաձայններէ հա՛մ կը զրուի «ու»ով, «ու»էն հա՛մ՝ «վ»ով, միւս ձայնաւորներէն հա՛մ՝ «ւ»ով: (Բացառիկ է «սորվիլ» բառը):

Ե.- Բառերուն սկիզբը «վո» ձայնը կը զրուի միայն «ու» գիրով (եւ ո՛չ թէ «վո»ով): Այսպէս. Ուր, ոսկի: Բացառիկ է «վոհ-մակ» բառը:

231.- Ուղղադրութիւնը սորվեցէ՛ք հետեւեալ բառերուն:

Թուական, վարդանեան, գաւազան, ցաւ, ովկիանոս, հով, անվաւեր, քաղաքավար, կը սորվէր, որովայն, վոհմակ, նուարդ, վերք, հովիւ, բոյլտուրիւն, առագաստանաւ, Ովսաննա, խոռվ, անվերջ, ծովահէն, նաւավար, քաշուիլ, արեւածագ, նուագ, գովասանք, երեւան, անվախօրէն, լուսավառ, շարքուան, քիւ, ժողովրդային, բոքով, հորվում, բուրաւտ, հեւք, ազնուութիւն:

« Գ » Գ Ի Ր Ը

411.- Ա) Եթէ «ք» զիրը մաս կազմէ բառի մը արմատին՝ կ'ըսենք թէ արմատական է. եթէ մաս չկազմէ արմատին՝ այլ աւելցուած ըլլայ վրան՝ կ'ըսենք թէ ոչ-արմատական է. Այսպէս.

Մուտք (= մուտ՝ «մտնել» բային արմատը, առաւել՝ «ք») բառին «ք»ն աւելցուած է զուրտէն, ուրեմն ոչ-արմատական է: Մինչ, օրինակ, «ցամաք» բառին «ք»ն արմատական է, որովհետեւ կարելի է զայն անջատել բառէն: «Յամա», առանց «ք»ի իմաստ չունի:

Բ) Ոչ-արմատական «ք»ն կը ջնջուի՝ ամանցումի եւ բարբոսումի ատեն. արմատական «ք»ն չի ջնջուիր: Այսպէս. «Ձեռք» կ'ըլլայ ձեռային (եւ ոչ թէ ձեռքային), մինչ՝ «ցամաք» կ'ըլլայ ցամաքային:

Երբ ամանցումի կամ բարբոսումի ատեն «քը» ձայնը ջնջուի՝ «ք» է: Այսպէս. Միտք — մտ-ուոր, վերք — վիր-ա-բոյժ: Երբ չջնջուի՝ «գ» է (կամ՝ արմատական «ք»): Արմատական «ք» ունեցող բառերը բազմաթիւ չեն. դիտարկենք են — քաղաք, տաք, ցամաք, փափաք, շաք, քանաք, բուք, քուք, քոք, քոզոք, սլաք, եւայլն: (Արմատական «ք»էն առաջ ձայնաւոր կու գայ, ոչ-արմատականէն՝ բազմաձայն):

232.- Սորվեցէ՛ք ուղղադրութիւնը:

Մեղք, վտանգ, տաք, վանք, ջանք, ժանգ, անէծք, աչք, բարք, փառք, շէնք, ցամաք, լայնք, կառք, հեռք, բուք, քաղաք, ձագ, վարունգ, եղունգ, սրունք, թուք, վեգ, լորձունք, քագ, սագ, չուք, մէք, նենգ, մէքք. ոտք, կարագ, գէնք, հոգ, թոք, մոք, թանաք, արագ, ոունգ, բողոք, ծալք, խելք, կրօնք, էք, էգ, այգ,

սուգ, հիմք, ուրագ, սէգ, նիգ, քիւք, սլաք, կարգ, հաւատք, դուք, օրէնք, միրգ, պէտք, հինգ, կառք:

« Ը » Գ Ի Ր Ը

412.- «Ը» ձայնը ընդհանրապէս չի գրուիր: Այսպէս. կ'ըսենք — մըտածում՝ կը գրենք — մտածում (առանց «ը»ի), կ'ըսենք — ըսեալնի՝ կը գրենք — սեանչելի (առանց «ը»ի):

«Ը» գիրը կը գրենք.

Ա.- Բառին սկիզբը՝ երբ երկրորդ զիրը «ն» կամ «մ» է: Այսպէս. ընտրել, ընկեր, ըմբոստ, ըմբռնել:

Բ.- Բառին սկիզբը՝ երբ «ը» ձայնը յառաջ եկած է «ու»էն կամ «ի»էն: Այսպէս. ըղձալ (=իղձ-ալ), ըմպել (=ումպ-ել):

Գ.- Բառին սկիզբը եւ մէջը՝ եթէ բառը միավանկ է, եւ իր միակ ձայնաւորը «ը»ն է: Այսպէս. ըստ, մըն, կը:

Դ.- Ամանցեալ եւ բարբոսումի մէջը՝ երբ բառին երկրորդ մասը «ը»ով կը սկսի: Այսպէս. Անընկեր (ան-ընկեր), արաղընթաց (արաղ-ընթաց):

Ե(*).- Բառերուն մէջը «ու»էն ետք՝ երբ «ու»ին յաջորդող զիրը ձայնաւոր չէ եւ մենք կ'ուզենք որ «ու»ն հնչուի «վը»: Այսպէս. պահուրախ, վազուրնէ:

Զ.- Տողադարձի ատեն. Այսպէս. վը-նաս, ըզ-զալ:

Է.- «Ըսել», «ըլլալ», «անցընել», «պտտուիլ» բառերուն մէջ:

Ը.- Բառերուն վերջը: Այսպէս. լոյսը, արձանները, (յօդ):

233.- Ուղղադրութիւնը սորվեցէ՛ք հետեւեալ բառերուն:

Ջրոյց, դրամ, սփռիւմ, ընկերութիւն, վաղուրնէ, ընդհանուր, շարքուան, անընդունելի, արձանները, լոյսերը, պարտէ՛, շշուկ, պահուրտիլ, արագընթաց, կուրտիլ, ընթերցանութիւն, կը լուսցուիք, կը մրափէ, ըղձանք, պատուրիլ, սեանչելի, չըսաւ, կ'անցընէր, կ'անցնէր, մըն, ըմբոստ, չչափուցաւ, շրջապատ, մըմունջ, կրքութիւն, գագաւում, հիմախուրնէ, հաշուրիլ, ըստ ինծի, ստացագիր, ազնուութիւն, կ'ըլլանք:

*) «ու»ն որպէսզի «վը» հնչուի, իրմէ ետք ձայնաւոր մը կ'ուզէ:

Է Ե Ե

413.- 1) Բառերուն վերջաւորութեան մի՛շտ «է» կու գայ (եւ ընաւ «ե») : Այսպէս . Մարդարէ , Վահէ , կը վաղէ , եւայլն :

2) Բառերուն սկիզբը եւ մէջը՝ ձայնաւոր զիրէ առաջ «է» կու գայ : Այսպէս . էակ , գործունէութիւն , զրկէիր :

Ուշադիր պէտք է ըլլալ «եա» եւ «եօ» երկրարրաոններուն , որոնց մէջ «ե»ը միացած կը հնչուի յաջորդ «ա» եւ «օ» ձայնաւորներուն հետ : Այսպէս . կը գրենք — սեն-եակ , արդ-եօք , բայց՝ է-ակ , պաշտօ-նէ-ութիւն :

3) Երկու արմատական բաղաձայնէ առաջ «ե» կու գայ : Այսպէս . Ներկ , ուղեբճ , խնդ , փեղկ , եւայլն :

4) «է» զիրը բարդումի եւ ածանցումի առեն ընդհանրապէս կը փոխուի «ի»ի : Այսպէս . նուէր — նուիրատու , պէտք — պիտանի , (բայց՝ գէշ-գէշութիւն , աղէկ-աղէկութիւն) : «ե»ը կը մնայ անփոփոխ : Այսպէս . Ներկ — ներկաման :

5) «եա»ն կը փոխուի «է»ի , «եա»ը՝ «ե»ի՝ ածանցումի եւ բարդումի առեն : Այսպէս . Պաշտօնեայ — պաշտօնէութիւն , մատեան — մատենագիր :

6) «եր» կամ «ներ» կ'աւելցնենք անունի մը վրայ զայն յող-նակի ընելու համար : Այսպէս . Տուփեր , գրամներ :

7) «լ» , «հ» , «զ» , «մ» , «ն» զիրերէն առաջ «ե» կու գայ (եւ ոչ թէ «է») . բացառիկ են՝ գէմ եւ վէմ բառերը , ու նաեւ օտար յատուկ անունները : Այսպէս . Երուսաղէմ , Դանիէլ , եւայլն :

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ . — «է» պարունակող գոց վանկ մը(*) երբ բարդումի կամ ածանցումի առեն փոխուի բաց վանկի՝ սովորաբար «է»ն կ'ըլլայ «ե» : Այսպէս . Գմ-բէթ — գմ-բե-թա-ձե : Հոլովումի առեն «է»ն «ե»ի չի փոխուի : Այսպէս . Գմ-բէ-թի , գմ-բէ-թէ , գմ-բէ-թով :

*) Գոց է այն վանկը որուն վերջին զիրը բաղաձայն է .- եր-կիր , աղ-բատ : Բաց է այն վանկը որուն վերջին զիրը ձայնաւոր է .- բա-ղե-ցի , մի-նակ :

234.- Սորվեցէ՛ք ուղղագրութիւնը եւ տուէք բացատրութիւն :

Պառուէր , մերձ , հեզ , կէզ , դէզ , դէմք , նետ , բեմ , վեմ , տէր , վսեմ , Վաչէ , եթէ , պաշտօնէութիւն , հոգեակ , փեղկ , պեմք , անվերջ , գմբէր , գմբէրածն , մատենագիր , ձուկեր , մարգարէ , գործունէութիւն , կը գովէին , սրդեակ , օրէնք , ջերմ , օքեակ , աղէտ , աղետալի , չափէ՛ , կը մերժէինք , ուղեբճ , քրիստոնեայ , կեղծաւորներ , մեղմաբար , խեղութիւն , ուրեմն , արդեօք , բերդ , ամէն , ամէնէն , ամենամեծ , մերք , պարտէզ , հրաւէր , աւերել , կը բերէ , մեխան , յաղթել , վեհ , մեղք , ցեղ , սեմ , ձեռք , մեռաւ , դէմ , երուսաղէմ , սեղմ , Աբել , գեր , հրդեհ , բել , կեղեւ , Ռաֆայէլ , թեմ , կեռ , Արմէն , Արմենակ :

Յ Ե Է

414.- Բառին սկիզբը «յ» կու գայ «զ» բաղաձայնէն առաջ . միւս բաղաձայններէն առաջ «հ» կու գայ : Այսպէս . Յղկէլ , յղանալ , բայց՝ հպասակ , հսկայ : Բացառիկ է «յստակ» բառը :

Բառերուն սկիզբը «յ»ն կը հնչուի «հը» , մէջը՝ «եր» : Այսպէս . Յատակ , այս : (Ուշադրութիւն ընել այն ածանցեալ կամ բարդ բառերուն , որոնց երկրորդ մասը «յ»ով սկսող բառ մըն է : Այսպէս՝ Անյայտ = անյայտ) :

Օ Ե Ը

415.- Ա) Երկու արմատական բաղաձայնէ առաջ «օ» կու գայ (եւ ոչ թէ «օ») : Այսպէս . Գորգ , հորք , բողի , եւայլն :

Բ) Բառին սկիզբը «օ» ձայնը կը զրուի «օ»ով՝ բացի երբ երկրորդ զիրը «վ» է : Այսպէս . Օրէնք , Ովասիս :

Գ) Բառերուն վերջաւորութեան «օ» ձայնը կը զրուի «ոյ» : Այսպէս . Երկեղ , յետոյ : Բացառիկ են .-

- 1.- «Այո՛» (տանց «յ»ի) եւ «ծօ՛» («օ»ով) բառերը .
- 2.- Յատուկ անունները : Այսպէս . Պետօ , Քոնկօ :
- 3.- Օտար բառերը : Այսպէս . Օթօ , սոյօ , զերօ , մեթրօ :

Դ) «Օ»ով վերջացող բառի մը վրայ երբ ձայնաւոր գիր աւելցուի՝ «օ»ն կը փոխուի «ոյ»ի: Այսպէս. Պետոյին, Քոնկոյէն, բայց՝ Պետօն, Քոնկօն:

235.- Ուղղագրութիւնը սորվեցէ՛ք հետեւեալ բառերուն:

Յետոյ, յղկել, հսկայ, յղացում, հրել, յտակօրէն, անյայտ, բազմայարկ, յաւէտ, հմուտ, հրդեհ, հմայիչ, յղփաճալ, հնարք, հնդկահաւ, հոետար, հոչակաւար, հրահանգ, անհատ, փորձ, ձորձ, մորթ, հորթ, բողկ, օղակ, ովկիանոս, երեկոյ, այժ՛, հաւաքածոյ, ծօ՛, Մարօ, սրսորդ, դշտոյ, Պեպօ, օրօր, անգոյ, օթօ, համաժոյ, յորդ, նողկալ, գօրք, կսկորդ, տպածոյ, ուտիօ, քերթ, սիրոյ, Աստուծոյ, Հիւկօ, Ովսաննա, հեգաբարոյ, անհաճոյ, Համօ, Մեքսիֆօ, գերօ, յղել, գորգ, սոլօ, օձիֆ:

Ն Ե Ի Գ

416.- «Ն»էն ետք ընդհանրապէս «ը» կու գայ (և ոչ թէ («թ»): Այսպէս. Անդունդ, տենդ, Անդրանիկ, Եւայլն: Բացառիկ են.

Ա.- Ընթրել, ընթանալ, ընթեռնուլ, շանթ, կանթ, քաղանթ, կանթեղ, Եւայլն, իրենց ածանցումներով և բարդումներով:

Բ.- Այն ածանցեալ բառերը, որոնց առաջին մասին վերջին գիրն է «ն», և երկրորդ մասին առաջին գիրն է «թ»: Այսպէս. Անթիւ = անթիւ:

Գ.- «Ենթ» մասնիկով կազմուած բառերը: Այսպէս. Ենթաւալ — ենթ-ա-սալ, ենթադրել — ենթ-ա-դրել:

Ն Ե Ի Է

417.- Բառին վերջը՝ «ն» գիրէն առաջ «է» կու գայ (և ոչ թէ «ե»): Այսպէս. Փոխարէն, ապաւէն, Եւայլն: Բացառիկ են.

Ա.- Ատեն, իրեն, ցորեն, գեհեն, բառերը:

Բ.- «Բ», «Վ», «Կ» գիրերուն անունները — բեն, մեն, կեն:

Գ.- Բայերու յոգնակի Գ. դէմքը — կը վարեն, պիտի ըսեն:

Ն Ե Ի Գ

418.- Բառին վերջը՝ «ն» գիրէն վերջ «զ» կու գայ: Այսպէս. Ժանզ, դանզ, յանզ, Եւայլն: Բացառիկ են.

Ա.- «Մենք», «ինք», «զինք», «իրենք», «անոնք»:

Բ.- Բայերուն յոգնակիի Ա. դէմքին վերջաւորութիւնները: Այսպէս. կը վազէիմք, մանեմք:

Գ.- «Անք», «ունք» մասնիկները: Այսպէս. տառապանք, թիկունք:

Դ.- Ոչ-արմատական «ք»ով վերջացող բառերը: Այսպէս. Ջանք, լայնք:

236.- Ուղղագրութիւնը սորվեցէ՛ք. բացատրութիւն տուէ՛ք:

Անդունդ, տենդ, ընթերցում, ընդօրինակեց, երթակայ, ընթացք. աղամանդեայ, անթիւ, խենդ, անթացուպ, նախընթարիֆ, կանթ, սանդ, անթառամ, շանթարգել, կ'ենթադրէր, ընդհանուր, սնունդ, երթամնայ, չ'ընդմիջեր, կանթեղ, հանդ, գնդակ, անդ, մի՛ ընդհատեր:

Փոխարէն, ատեն, նորէն, ապաւէն, ցորեն, բեն, կ'ըսեն, իրեն, քէն, ծովահէն, կեն, պիտի չընեն, կորէն, երկաթեղէն, ժպաւէն, Արմէն, Կայէն, շէն, Սուրէն, պատնէն, կը պատժեն, կը ծրագրեն, շահէն, պարէն, կը պարեն, անգէն, մեն, տնօրէն, գեհեն:

Ժանգ, ցանք, մեմք. քշնամանք, ջանք, կը քափէք, կեանք. գանգ, ենք, հանք, յանգ, անոնք, շրթունք, վտանք, բարձունք, իրենք, կը նետենք, ակունք, յանցանք, նենք, արձագանք, հինք, կը հաշուէիմք, սրինք, երանք, մանգաղ, անգոյ, խանգարել, գանգատ, գանգուր, հանգոյց, հանգրուան, կը հանգստանանք, քիկունք:

Ռ Ե Ի Բ

419.- Ա) «Ռ»ով և «Բ»ով սկսող բառերը փոքրաթիւ են. Ռետին, ռամիկ, ռունգ, ռահ, ռուպ, ռիշտ, ռոշնական, ռումք, ռոնիկ, ռազմ, բոպէ:

Բ) «Ն»էն առաջ «ռ» կու գայ: Այսպէս. Սունել, Ղոնապան, կունակ: Բացառիկ են՝ Չարնել, երնէկ, դարնանային, երնել, վարնոց, վերնալ, կորնչիլ, կորնթարդ, վրնջել, Եւայլն:

Գ) Բացի «ն»-ից՝ միւս բաղաձայններէն առաջ «ր» կու գայ: Այսպէս՝ Արշաւ, Երբուզարձ, Լեայլն: Բացառիկ են՝

1.- «Ուռձանայ», «Նոչակ», «յուսթի», «խոկար», «ուսկան», «խոպոտ», «պառկիր», Լեայլն:

2.- Այն անանցեալ եւ բարդ բառերը որոնց առաջին մասը կը վերջանայ «ո»ով եւ երկրորդ մասը կը սկսի բաղաձայնով մը: Այսպէս՝ Ձեռք (= ձեռ-ք), առնասարակ (= առ-հասարակ), թռչել (թռ-չել):

Դ) Երբ անանցումի կամ բարդումի առեն «ն» գիրը վերջուի «ո»ին քովէն՝ «ո»ն ընդհանրապէս կը փոխուի «ր»ի: Այսպէս՝ Ընթեանուլ = ընթեքցում, դառնալ = դարձայ, դուռ(ն) — դռնուզան, բայց՝ գրացի:

Ե) «Ձ»էն առաջ «ո» կու գայ (եւ ոչ թէ «ր»): Այսպէս՝ Նոչակ, խոչափող, թռչել:

237.- Ուղղագրութիւնը սորվեցէ՛ք հետեւեալ բառերուն:

Խառն, բեռնակիր, կր բռնեն, կ'արքնայ, մոռնալ, առտնին, կռնակ, մի՛ գարնիւ, խոպոտ, ամառնային, առնէտ, ոտտին, բոպէ, երնէ՛կ, արշաւ, գարնանային, երնել, չ'ուռնանար, ուսմիկ, հոչա-կաւոր, փառք, դոնապան, պառկեցէ՛ք, դրացի, արջ, ուսեգ, վար-նոց, երթուղարձ, վերնալ, դառնալ, եղեռն, կր մեռնէր, ոռւմբ, ուզմ, կ'առնէք, ուսւյ, բռնի, վրնջել, ձեռք, կորնթարդ, առնա-կան, յուրքի, ընթեռնուլ, խոկացեր են, դռնակ, ուռկան, առհա-սարակ, թռչիլ, ընթերցարան, սառնարան, համբարանալ, սոնակ, կր սպաննայ, չ'ուռնար, ոռչնական, խոռուիլ, չի մոնջեր, խոչա-փոյ, կառչիլ, ոստի:

«Ձ» Գ Ի Ր Ը

420.- Բառերուն սկիզբը «ջ» կու գայ ընդհանրապէս (եւ ոչ թէ «չ»): Այսպէս՝ Ձերձ, ջուր, ջորի: Բացառիկ են՝

Ա.- «Ձ» միասական մասնիկով սկսող բառերը: Այսպէս՝ Ա-սու — չառաւ, աես — չտես:

Բ.- Չար, չափ, չեչ, չղջիկ, չմուշկ, չոր, չորս, չու, չուան, չամիչ, չիր, չակերտ, Լեայլն:

Փ Ե Ի Ա

421.- «Ա»էն վերջ ընդհանրապէս «փ» կու գայ (եւ ոչ թէ «բ»): Այսպէս՝ Փափ, խափանել, Լեայլն: Բացառիկ են՝

Ա.- Խաբել, բարախել, դարիր, Լեայլն:

Բ.- Աբար մասնիկով կազմուած բառերը: Այսպէս՝ մեղ-մարար, հայրաբար:

Գ.- Օտար բառերը: Այսպէս՝ Աբգար, Աբրահամ, արբայ, չարաթ, Լեայլն:

Ուշադիր եղէ՛ք 1) «Բան» բառին: Այսպէս՝ Փաստ-ա-բան, վիճ-ա-բան-ի: 2) Այն բառերուն, որոնց բ. մասը «բ»ով կը սկսի: Այսպէս՝ պողարներ:

238.- Ուղղագրութիւնը սորվեցէ՛ք հետեւեալ բառերուն:

Ջնջել, ջերմ, չունի, ջուր, չակերտ, ջորի, չար, չափ, չքնաղ, չեչուտ, ջահ, ջանասէր, ջաղանցք, չղջիկ, չնչին, ջիղ, չմշկել, չոր, չորջ, ջամբել, չուան, ջուրակ, ջատուկ, ջուլիր, ջլատել, ջուլիակ, չէզոք, չորժոտանի, չուել, չտես, ջով, ջնարակ, ջատագովել, ջախ-ջախել, ջաղբ, չքաւոր, չ'երրար, չորրորդ, չնաչխարճիկ, չամիչ, չիր:

Կափարիչ, սարսափ, չխաբեցիմք, տրամբանել, խափանիչ, չարաք, Աբրահամ, չափ, Աբար, բնականաբար, բափառական, կը բարախէր, ծափ, արբայ, բափէ՛, մրափել, մասնաւորաբար, Աբ-գար, լափել, փաստարան, չեն վիճարանիր, տեղատարափ, խար-չափ, խարխափել, բափանցիկ, խուսափիլ, կլափ, յափրանալ, յա-փշտակել, սափրիչ, վարկաբեկում, յարաբերական, սափոր:

Յ Ե Ի Ձ

422.- Բառին սկիզբը, «ն» գիրէն առաջ «յ» կու գայ (եւ ոչ թէ «ձ»): Այսպէս՝ Յնցուղ, ցնցատի, ցնդիլ:

Ա.- Բայերու մասնիկներուն մէջ «յր» ձայնը կը զբուի «յ»ով (եւ ոչ թէ «ձ»ով): Այսպէս՝ Կարգաց, Երգեցիմ: (Պէտք է ուշադիր ըլլալ դարձաւ, եւ համբարձաւ բայերուն, որոնց մէջ «ձ» գիրը արմատական է):

Բ. — «Ա», «Ի», «Ո» զիրերէն յետոյ «յ» կը գրուի (եւ ոչ թէ «ձ»): Այսպէս. քացախ, ցից, բոց, եւայլն:

Գ. — Ածանցներուն մէջ «յ» կ'ըլլայ (եւ ոչ թէ «ձ»): Այսպէս. Հիւանդանոց, փեսացու, մօտեցաւ, եւայլն:

Ղ Ե Ի Ր

423. — «Ղ» եւ «ը» զիրերէն ետք կու գայ «ջ» (եւ ոչ թէ «չ»): Այսպէս. Աղջիկ, Վերջ: Բացառիկ են՝ զեղջ եւ փարջ:

239. — Ուղղագրութիւնը սորվեցէ՛ք հետեւեալ բառերուն:

Յնցուղ, կը հասցնեն, ցնդած, հաց, բարձրացնել, Համբարձում, քացախ, ցից, բոց, կացին, ծոց, օձ, փեսացու, հայեցի. խից, մատոնց, կից, մտաբերեց, մացառ, քաց, բաց, յետամնաց, չիրականցաւ, իմացուց, բարեւեցէ՛ք, դեղձ, հեղձուցիչ, ցնցուերէր, խոց, քուրջ, գեղջ, ցնցոտի, կամուրջ, ողջ, շուրջ, գղջալ, գաղջ, արջ, ամբողջ, փարջ, շեղջ. վերջ, աղջամուղջ, քլջել, աղջիկ, եղջիւր, առողջ:

ՈՅ Ե Ի Գ

424. — «Ոյ»-էն վերջ «յ» կու գայ (եւ ոչ թէ «ք»): Այսպէս. Սոսյգ, պատրոյց: Բացառիկ են. ոչ-արմատական «ք»ով վերջացող բառերը. — գոյք (=յոյք-ք), հանոյք (=հաճոյք-ք), եւայլն:

ԿՐԿՆՈՒՈՂ ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐ

425. — Ա) Երբ բաղաձայն մը կրկնուի բառին մէջը կամ վերջը՝ երկու զիրերը կը հնչենք միացած՝ որպէս մէկ երկար գիր: Այսպէս. Կծծի, փաքքել, տարը:

Բ) Երբ բաղաձայն մը բառին սկիզբը կրկնուի՝ երկու զիրերը կը հնչենք զատ-զատ: Այսպէս. Ծծել, թթու, (բացի երբ կրկնուող բաղաձայններուն յաջորդէ բաղաձայն մը — սննդեղէն):

Գ) Պտրտիլ բառը կը գրենք «ը»ով: Եթէ «ը» չընենք կը կարգացուի պտ-տիլ՝ երկու վանկ:

Դ) Յիսուն կը գրուի մէկ «ս»ով՝ կը հնչուի «յիսուն»:

240. — Սորվեցէ՛ք ուղղագրութիւնը հետեւեալ բառերուն:

Ստոյգ, պիտոյք, հանոյք, առոյգ, պատրոյգ, կոտտալ, տտիպ, փաքքոց, քքու, դդում, տառ, տարք, պտրտիլ, յիսունբարդ, կեցցէ՛ք, գոյք, սպունգ, կահոյք, սգաւոր, սեմ, սփիւռք, գոյք, գահոյք, մրրիկ, անդորր, բերրի, անհիւք, ասպարէզ, փքքիլ, գգուանք, կկու, գգուել, ծծուն, ան-շշուկ, ցցուեցաւ, մոյնք, սովա-լլուկ, կ'արքննայ, բբուկ, հծծել:

241. — Ուղղագրութիւնը սորվեցէ՛ք Հրահանգ 61-ի եւ 63-ի բառերուն. ինչպէս նաեւ հետեւեալներուն:

Բարեբաստիկ-փաստաբան, բախտ-բաղդատել, առու-արու, առանձին-առանց-արանց, գնել-ֆննել, գնահատել-ֆննադատել, ապաքարց-վերադարձ, անհետ-անյայտ, դիւրին-քիւրիմացութիւն, քքու-դդում, գուարք-գարդ, խաբել-խափանել, խօսիլ-խօստանալ, հինգ-յիսուն, հիւսիս-Յիսուս, ծայրայեղ-փառահեղ, ձմեռ-ձմերուկ, յանդիմանել-հանդիպիլ, շնչել-շշնչել, վնարել-վնառել, հեղուկ-յեղյեղուկ, տեղանք-տանջանք, օդ-բացօթեայ, ուղղել-ուղարկել, ոչինչ-ջինջ, արագիլ-առաքել, աղոտ-աղօտ, միջեմինչեւ, ծծուն քուրք-ծծումք, ցանց-սանձ, աչառու-աջակից, մանգաղ-քաղել, երէկ-երեք, սեռ-սերունդ-սերիլ-սեռային-երկսեռ, երեք-երեսուն-երրորդ-եռոտանի-եռամիս-երբեակ, դուռ-դոնապան-դրացի-դուկից-դրանիկ, ձեռք-ձեռագործ-ձեռային-ձեռնոց-ձերբակալել:

Գոհարիկ, Քնարիկ, Սիրվարդ, Շաքէ, Յասմիկ, Սեղա, Սալքի, Հոփսիմէ, Զեփիւռ, Արփի, Սիլվա, Աշխէն, Զապէլ, Սաքեմիկ, Շոդիկ, Նուարդ, Մարգարիտ, Անգինէ, Փերուզ, Սօսի, Միսաք, Յովսէփ, Յովհաննէս, Պօղոս, Միքայէլ, Սարգիս, Ստեփան, Վարդգէս, Տիգրան, Մովսէս, Յակոբ, Ռուբէն, Պարգու, Սեդրակ, Վազգէն, Յովակ, Հրանդ, Թորգոմ, Զոհրապ, Աբրահամ, Անդրանիկ, Արմէն, Արմենակ, Բաբգէն, Արտաւադ, Սերոբ, Զաւէն, Գարեգին, Գեորգ, Գրիգոր, Եղուարդ, Գասպար, Ադամ, Գորգէն, Խաչիկ:

ՑԱՆԿ ՆԻՒԹԵՐՈՒ

(ՄԻՋԻՆ ԲԱԺԻՆ)

Ա. ՄԱՍ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

| | |
|--|----|
| Ա. - Լեզու, հօսք, Նախադասութիւն, Բառ | 3 |
| Բ. - Ձայն, Գիր, Գիրերուն անունները | 6 |
| Գ. - Գլխագիրներու Գործածութիւնը | 8 |
| Դ. - Ձայնաւոր, Բաղաձայն, Վանկ, (Անգիր «ը») | 11 |
| Ե. - Տողադարձ | 15 |
| Զ. - Կէտադրութեան Նշաններ | 18 |
| Է. - Ապարարց եւ այլ նշաններ | 22 |
| Ը. - Առոգանութեան Նշաններ | 25 |
| Թ. - Բառերու կազմութիւնը | 27 |
| Ժ. - Ածանցներ, Բառերու ընտանիք, Ստուգաբանութիւն | 31 |
| ԺԱ. - Բառերու Նշանակութիւնը (Հոմանիշ, Հականիշ, Եւայլն) | 34 |

Բ. ՄԱՍ

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄ

| | |
|---|----|
| Ա. - Բայ, Նախադասութիւն | 38 |
| Բ. - Տէր-բայի | 41 |
| Գ. - Սեռի խնդիր | 46 |
| Դ. - Էական բայ | 50 |
| Ե. - Ստորագելի եւ Սեռի խնդիր | 53 |
| Զ. - Բայ (Արմատ, Մասնիկ, Խոնարհում) | 56 |
| Է. - Ջարտուղի, Անկանոն եւ Պակասաւոր Բայեր | 64 |

| | |
|--|-----|
| Ը. - Բայ (Հաստատական, Ժխտական, Հարցական) | 67 |
| Թ. - Ժխտականը կանոնաւոր Բայերու | 71 |
| Ժ. - Գոյական եւ իր տեսակները, (ըլի եւ յօդ) | 78 |
| ԺԱ. - Գոյական (հոլով) | 83 |
| ԺԲ. - Դերանուն (Անճանական) | 88 |
| ԺԳ. - Բայ (տեսակները) | 91 |
| ԺԴ. - Յատկացուցիչ եւ Բնութեան խնդիր | 95 |
| ԺԵ. - Բնութեան խնդիր (Շարունակութիւն) | 98 |
| ԺԶ. - Ածական | 101 |
| ԺԷ. - Ածականներու Փոփոխումը, (ածական-անուն) (Յուցական եւ Անորոշ դերանուն) | 104 |
| ԺԸ. - Ածականը որպէս Ստորագելի, (Էականը որպէս Ձէզոք) | 107 |
| ԺԹ. - Դերանուն (Յարաբերական) | 109 |
| Ի. - Դերանուն (Անդրադարձ, Փոխադարձ, Ստացական) | 112 |
| ԻԱ. - Մակբայ (եւ իր տեսակները) | 116 |
| ԻԲ. - Նախադասութիւն (Պարզ, բարդ) | 119 |
| ԻԳ. - Յարադրութիւն, խնդիր, Յարադրութեամբ խնդիր | 123 |
| ԻԴ. - Բացայայտիչ եւ Բացայայտեալ | 127 |
| ԻԵ. - Կոչական, Շողկապ, Չայնարկութիւն | 129 |

Գ. ՄԱՍ

ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՆԵՐ

(ԲԱՐՉՐԱԳՈՅՆ ԲԱԺԻՆ)

| | |
|---|-----|
| Ա. - Լեզուաբանութիւն | 132 |
| Բ. - Հայերէն Լեզուն | 135 |
| Գ. - Չայնաբանական Ծանօթութիւններ | 138 |
| Դ. - Չայնաբանական Ծանօթութիւններ (Չարունակութիւն) | 142 |
| Ե. - Չեւաբանութիւն (Բառերու ծագումը) | 145 |
| Զ. - Չեւաբանութիւն (Բառերու կազմը) | 149 |
| Է. - Չեւաբանութիւն (Բարդում եւ Ստուգաբանութիւն) | 152 |
| Ը. - Չեւաբանութիւն (Հարկում եւ Բայակերտում) | 155 |

Գ. ՄԱՍ

ՔԵՐԱՎԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԼՈՒԾՈՒՄ

| | |
|--|-----|
| Ա. — Խնդիրներու Մասին | 159 |
| Բ. — Ածականներու Մասին | 161 |
| Գ. — Գոյականը իբրև Ածական | 164 |
| Դ. — Յարադրութիւններու Մասին | 165 |
| Ե. — Յօդերու Մասին | 166 |
| Զ. — Յօդերու Մասին (շարունակութիւն) | 167 |
| Է. — Բայերու Մասին (Միադէմ, տէր-բայիէ գուրկ, Եւայլն) | 170 |
| Ը. — Գերբայներու Մասին | 173 |
| Թ. — Գերբայներու Մասին (շարունակութիւն) | 175 |

Ե. ՄԱՍ

ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄ

| | |
|--|-----|
| Ա. — Նախադասութիւն եւ Խօսք | 178 |
| Բ. — «Ստորոգելի» եւ «Ենթակայ» | 182 |
| Գ. — Նախադասութեան Տեսակները | 184 |
| Դ. — Նախադասութեան Տեսակները (շարունակութիւն) | 189 |
| Ե. — Նախադասութիւններուն պաշտօնները | 192 |
| Զ. — Լուծում (տրամաբանական) | 196 |
| Է. — Կէտադրութեան Նշաններ | 202 |
| Ը. — Այլ նշաններ (շեշտ, պարօյլ, երկար, չափերտ, Եւայլն) | 207 |

Զ. ՄԱՍ

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Ռեզոլուցիան կանոններու և Հրահանգներ

210-221

